ԵՐԵՔ ԱՐ ՍՏՐԱՏԵԳԻԱ ՍՊԸ

Գործարար և ներդրումային խորհրդատվություն

« ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (ՀԳՏՏԶՀ)

և ՀԳՏՏԶՀ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ»

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ: «ԵՐԵՔ ԱՐ ՍՏՐԱՏԵԳԻԱ» ՍՊԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների բաժին...	6
1. Ամփոփ բաժին...	8
2. Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի (ՀԳՏՏԶՀ) և ՀԳՏՏԶՀ ծրագրերի գնահատման մեթոդաբանություն...	14
2.1 Հետազոտության նպատակը և շրջանակները...	14
2.2 Հետազոտության խնդիրները...	15
2.2.1 Խնդիր/բաժին 1. ՀԳՏՏԶՀ-ի ներդրումների սոցիալական արդյունավետության գնահատում, արժեքային շղթայի բազմապատկիչի ինդեքսի հաշվարկ (VCMI) ընդհանուր գործողությունների և յուրաքանչյուր ընկերության համար...	15
2.2.2 Խնդիր/բաժին 2. ՀԳՏՏԶՀ-ի ընդհանուր գործունեության գնահատում...	18
2.3Առաջնային և երկրորդային տվյալների հավաքագրում և վերլուծություն...	19
3. Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի (ՀԳՏՏԶՀ) ներդրումների սոցիալական արդյունավետության գնահատում...	23
3.1 ՀԳՏՏԶՀ-ի նպատակները և իրականացրած ծրագրերի նկարագրությունը...	23
3.2 ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ընկերությունների և իրականացրած ներդրումային ծրագրերի համառոտ նկարագիրը...	27
3.2.1 ՀԳՏՏԶՀ-ի կողմից ֆինանսավորված ներդրումային ծրագրերի համառոտ նկարագիրը և անմիջական արդյունքները...	27
3.2.2 ՀԳՏՏԶՀ-ի տեխնիկական աջակցության ծրագրերի համառոտ նկարագիրը և անմիջական արդյունքները...	44
3.3 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը հաճախորդ ընկերությունների մակարդակում...	48
3.3.1 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում հաճախորդ ընկերությունների հասույթի փոփոխությունը...	48
3.3.2 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը տեղական շուկայում իրացման վրա...	55
3.3.3 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը արտահանման ծավալների վրա...	59
3.3.4 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը ֆերմերներից գնումների ծավալի, արժեքի և տեսականու վրա...	61
3.3.4.1 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը հաճախորդ ընկերության ֆերմերներից գնումների ծավալի և արժեքի վրա...	61
3.3.4.2 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը հաճախորդ ընկերության ֆերմերներից գնումների տեսականու վրա...	66

3.3.4.3 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը հաճախորդ ընկերության ֆերմերներից գնումների տեսականու վրա..	68
3.3.5 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում հաճախորդ ընկերությունում աշխատողների թվի և աշխատավարձերի փոփոխությունը..	71
3.3.5.1 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում հաճախորդ ընկերությունում ստեղծված նոր աշխատանքային հաստիքները...	71
3.3.5.2 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը հաճախորդ ընկերությունների կողմից վճարվող աշխատավարձերի վրա...	79
3.4 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը ֆերմերային տնտեսության մակարդակում..	85
3.4.1 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ֆերմերների թվի վրա..	85
3.4.2 Հաճախորդ ընկերությունների կողմից գյուղատնտեսական մթերքի մթերման կազմակերպումը..	86
3.4.3 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը ֆերմերների եկամտի վրա...............	93
3.4.4 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը ֆերմերների ակտիվների ընդլայնման վրա և հետագայում ներդրումներ կատարելու մտադրության վրա.......................................	100
3.5 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը բնակչության սոցիալական բարեկեցության վրա..	109
3.5.1 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում նոր աշխատատեղերի ստեղծում........	109
3.5.2 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա...	116
3.5.3 ՀԳՏՏԶՀ-ի ծրագրերի սոցիալական արդյունավետության գնահատում արժեքային շղթայի բազմապատկչի (Value Chain Multiplier Index/VCMI) ինդեքսի հիման վրա..	120
3.5.4 ՀԳՏՏԶՀ-ի ծրագրերի ազդեցության սուբյեկտիվ գնահատումը շահառուների կողմից....................	122
3.6 ՀԳՏՏԶՀ-ի կողմից 2013 թ.-ին ֆինանսավորված ծրագրերի ազդեցության պոտենցիալի գնահատում..	125
3.6.1 ՀԳՏՏԶՀ-ի կողմից 2013 թ.-ին ֆինանսավորված ծրագրերի ազդեցության պոտենցիալը ֆերմերներից գնումների ծավալի, արժեքի և տեսականու վրա..	127
3.6.2 ՀԳՏՏԶՀ-ի կողմից 2013 թ.-ին ֆինանսավորված ծրագրերի ազդեցությունը ֆերմերային տնտեսության մակարդակում..	129
3.6.3 ՀԳՏՏԶՀ-ի կողմից 2013 թ.-ին ֆինանսավորված ծրագրերի ազդեցության պոտենցիալը ֆերմերային տնտեսության եկամտիվրա...	132
3.6.4 Ֆերմերային տնտեսությունների առկա ակտիվները և ընդլայնման հեռանկարները......................	139
3.6.5 Ֆերմերային տնտեսություններում զբաղվածների թիվը և եկամուտները...	144

4.Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի (ՀԳՏՏԶՀ) ընդհանուր գործունեության գնահատում	**146**
4.1. ՀԳՏՏԶՀ-ի գործունեության արտադրողականության (Efficiency) գնահատում...................................	146
4.1.1 Որքանո՞վ արդյունավետ են կառավարվում ներդրանքները (Inputs) և ռեսուրսները, դրանց առկայությունը և օգտագործումը...	146
4.1.2 Որքանո՞վ են արդյունավետ իրականացվում գործողությունները..	150
4.1.3 Որքա՞ն արդյունավետ են ձեռք բերվում /նվաճվում/ կարճաժամկետ արդյունքները (Outputs).......	158
4.1.4 Որքանո՞վ են գործընկերները ներգրավված և աջակցում (ներդրումը)..	159
4.2. ՀԳՏՏԶՀ-ի գործունեության արդյունավետության (Effectiveness) գնահատում......................................	161
4.2.1 Որքանո՞վ են գործողությունները/գործունեությունը նպաստում ակնկալվող արդյունքին (Outcomes)...	161
4.2.2 Հաշվի առնելով Ծրագրի բաղադրիչի/ ՀԳՏՏԶՀ-ի գործունեության միջանկյալ արդյունքները՝ որքանո՞վ է հավանական Ծրագրի/ ՀԳՏՏԶՀ-ի նպատակի իրականացումը..	163
4.3 ՀԳՏՏԶՀ-ի գործունեության Ազդեցության (Impact) գնահատում..	166
4.3.1 Ո՞րն է Ծրագրի բաղադրիչի/ ՀԳՏՏԶՀ-ի գործունեության ուղղակի ազդեցությունը (հիմնական նպատակի մակարդակում)...	166
4.3.2 Ո՞ր դեպքում ՀԳՏՏԶՀ-ի գործունեությունը կարող է ունենալ որևէ անուղղակի (դրական կամ բացասական) ազդեցություն..	168
4.4 ՀԳՏՏԶՀ-ի գործունեության Կայունության (Sustainability) գնահատում..	170
4.4.1 Որո՞նք են ՀԳՏՏԶՀ-ի ֆինանսական/տնտեսական կայունության հիմքերը Ծրագրի ավարտից հետո..	170
4.4.2 Թիրախային խմբերի և համապատասխան շահառուների կողմից Ծրագրի բաղադրիչը որքանո՞վ է դառնում սեփականություն (սեփականության աստիճանը)..	172
4.4.3 Որքանո՞վ է քաղաքականության միջավայրն աջակցում գործողությունների իրականացմանը.....	173
4.4.4. Որքանո՞վ է Ծրագիրը նպաստել կողմերի կարողությունների զարգացմանը..................................	174
5. Քաղված դասեր և առաջարկություններ..	**175**
Հավելվածներ	
Հավելված 1: ՀԳՏՏԶՀ-ի ներդրումների սոցիալական արդյունավետության գնահատման հիմնական չափորոշիչները..	
Հավելված 2: VCMI գործակցի հաշվարկը...	
Հավելված 3: ՀԳՏՏԶՀ-ի գործունեության գնահատման արդյունքները..	

Հավելված 4։ ՀԳՏՏԶՀ-ի գործունեության գնահատման արդյունքները...	

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՀՌԾ – Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր

ԱՔՌԱ – Արմենիան Քրեդիթ Ռեփորթինգ Ասոսիեյշն

ԳԶՄՀ – Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ

ԳԿԶՌ – Գյուղի և գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարություն

ԳՖԿ – «Գյուղական ֆինանսավորման կառույց-ծրագրի իրականացման գրասենյակ պետական հիմնարկ»

ԵՄ – Եվրոպական միություն

ԽԵԿ - Խոշոր եղջերավոր կենդանի

ԽՍՀՄ - Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն

ԾԻԳ - «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ»

ԿԶԾ – Կայուն զարգացման ծրագիր

ՀԽ - Հոգաբարձուների խորհուրդ

ՀԳՏՏԶՀ – Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամ

ՀԸ – Համախորդ ընկերություն

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՀՆԱ - Համախառն ներքին արդյունք

ՀՏ – Հիմնադրամի տնօրեն

ՄԱԶԾ – ՄԱԿ-ի զարգացման ծրագիր

ՄԵԿ – Մանր եղջերավոր կենդանի

ՆՄ – Ներդրումային մասնագետ

ՆԿ – Ներդրումային կոմիտե

ՊԳԿ – Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն

ՏԱ – Տեխնիկական աջակցություն

ՏԹՖ – Տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա

ՏՈՏ – Տոհմային ոչխարաբուծական տնտեսություն

ՏՏ – Տնային տնտեսություն

ՓԲԸ –Փակ բաժնետիրական ընկերություն

ՓՄՁ- Փոքր և միջին ձեռնարկություններ

ՖՏ – Ֆերմերային տնտեսություն

UNDP VET – UNDP “Vocational Education and Training System” Project

VCMI - Value Chain Multiplier Index

HACCP – Hazard analysis and critical control points

1. ԱՄՓՈՓ ԲԱԺԻՆ

ՀԳՏՏԶՀ-ի և իր ծրագրերի մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) նպատակն է տեղեկացնել ՀԳՏՏԶՀ-ին իր գործունեության սոցիալական արդյունավետության և կայունության վերաբերյալ՝ Հիմնադրամին հնարավորություն ընձեռելով բարելավելու իր գործողությունները և գնահատելու թիրախային խմբերին ցուցաբերած աջակցության արդյունքները:

Հաշվետվությունը ներկայացնում է տեղեկատվություն ՀԳՏՏԶՀ-ի ներդրումների սոցիալական արդյունավետության և ՀԳՏՏԶՀ-ի ընդհանուր գործունեության գնահատման վերաբերյալ: Գնահատման արդյունքները վերաբերում են ՀԳՏՏԶՀ-ի գործունեությանը առ 31.12.2012թ.: Հաշվետվության 3.6 բաժնում ներկայացված են 2013թ.-ին ՀԳՏՏԶՀ-ի կողմից ֆինանսավորված ներդրումային ծրագրերի հնարավոր ազդեցությունը:
Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամը (ՀԳՏՏԶՀ) ստեղծվել է 2009թ.-ի հունվարի 8-ին Հայաստանում «Շուկայավարման հնարավորություններ ֆերմերներին» ծրագրի «Գյուղական ֆինանսավորման» բաղադրիչի շրջանակներում: «Գյուղական ֆինանսավորման» բաղադրիչի հիմնական նպատակն է գյուղական փոքր ֆերմերների և փոքր ու միջին չափի ձեռնարկությունների զարգացման և կայուն տնտեսական աճի խթանումը՝ աջակցելով ֆինանսավորման տրամադրմամբ մասնավոր փոքր ու միջին չափի գյուղական ձեռնարկություններին, որոնք փոխկապված են գյուղմթերք արտադրող աղքատ տնտեսվարող սուբյեկտների հետ:

ՀԳՏՏԶՀ-ն վերը նշված նպատակների իրագործման համար մշակել և իրագործում է ներդրումային և տեխնիկական աջակցության գործիքները:

Ներդրումային գործիքներ: ՀԳՏՏԶՀ-ն կատարում է ներդրումներ սեփական կապիտալում՝ սովորական և արտոնյալ բաժնետոմսերի գնման միջոցով, տնտեսապես կենսունակ և դրական զարգացման միտում ունեցող ձեռնարկություններում:

Տեխնիկական աջակցություն: Անհրաժեշտության դեպքում Հիմնադրամը տրամադրում է տեխնիկական աջակցություն կազմակերպություններին, նրանց կողմից նախաձեռնած ***տեխնիկական, տեխնոլոգիական և այլ բարեփոխումների*** իրականացման կամ կազմակերպությունների գործունեությանը նպաստող տարաբնույթ միջոցառումներին մասնակցության օժանդակության հարցում:

Հիմնադրամի **թիրախային խմբում** ընդգրկվում են ՀՀ մարզերում գործող այն ձեռնարկությունները, որոնք զբաղվում են հետևյալ գործունեությամբ.

- գյուղմթերքի վերամշակում և պահածոյացում,
- կաթնամթերքի արտադրություն,
- զինեգործություն,
- ձկնաբուծություն,
- գյուղական տարածքներում աշխատատեղերի ստեղծմանը նպաստող այլ գործունեություն:

ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ բոլոր ընկերությունները Հիմնադրամի կողմից ստացել են տեխնիկական աջակցություն՝ ուղղված ձեռնարկության ֆինանսական կառավարման բարելավմանը: Հաճախորդ բոլոր ընկերությունները ստացել են ***հարկային խորհրդատվություն,*** ութ ընկերություններին տրամադրվել է ***հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների կազմման*** ուղղությամբ խորհրդատվություն, ութ ընկերություններում իրականացրել են ***ֆինանսական հաշվետվությունների և տնտեսական արդյունքների աուդիտ***:

Իր գործունեության ընթացքում ՀԳՏՏԶՀ-ը ֆինանսավորել է 9 ներդրումային ծրագիր: ՀԳՏՏԶՀ-ի կողմից առ 31.12.2012թ. ներդրումային գործիքների միջոցով տեղաբաշխված գումարը կազմում է **1651.0 մլն** ՀՀ դրամ, որից **1275.0 մլն** ՀՀ դրամը ներդրվել է ընկերությունների բաժնեհավաք կապիտալում, իսկ **376.0 մլն** ՀՀ դրամը տրամադրվել է որպես ստորադաս փոխառություն:

Ընդհանուր առմամբ, ներդրումային ծրագրերը դրական ազդեցություն են ունեցել հաճախորդ ընկերությունների արտադրանքի իրացումից ստացված հասույթի՝ զուտ շրջանառության վրա:
ՀԳՏՏԶՀ-ի ծրագրերի արդյունքում **2012 թ.-ին** հաճախորդ ընկերությունները գրանցել են **զուտ շրջանառության աճ ավելի քան 1 մլրդ դրամի չափով** բազիսային տարվա համեմատ, իսկ **2013 թ.-ին** այդ ցուցանիշը կհասնի շուրջ **1,77 մլրդ դրամի:** Հաճախորդ ինը ընկերություններից հինգը հասույթի աճ են գրանցել ազդեցության առաջին տարվա ընթացքում, երեք ընկերություն՝ երկրորդ տարվա, իսկ մեկ ընկերություն արտադրանքի իրացում կիրականացնի 2014թ.-ից:

Ընդհանուր առմամբ, ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը տեղական շուկայում հաճախորդ ընկերությունների վաճառքների վրա եղել է չեզոք: Հաշվի առնելով տեղական շուկայի տարողությունը, մրցակցության բարձր աստիճանը, ինչպես նաև սննդամթերքի պահանջարկի նվազման միտումը (պայմանավորված

բնակչության թվի նվազման միտումով), ՀԳՏՏՁՀ-ի հաճախորդ ընկերությունների մեծ մասը նպատակ ուներ ընդլայնելու արտահանման ծավալները՝ ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում:

Մինչև ներդրումային ծրագրերի իրականացումը հաճախորդ ընկերությունների վաճառքներում գերակշիռ մասը **(65%-ը)** կազմել են տեղական շուկայում վաճառքները: Ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում տեղական շուկայի վաճառքի մասնաբաժինը նվազել է՝ 2012թ.-ին կազմելով ընդհանուր վաճառքի **42 %**-ը, իսկ 2013 թ.-ին՝ **36 %**-ը:

ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված ծրագրերը դրական ազդեցություն են ունեցել հաճախորդ ընկերությունների՝ արտահանումից ստացված հասույթի վրա: Այդ մասին են նշել արտահանող բոլոր հաճախորդ ընկերությունները:
Ներդրումային ծրագրերի արդյունքում հաճախորդ ընկերությունների կողմից **արտահանումից ստացված հասույթը բազիսային տարվա համեմատ 2012 թ.-ին աճել է շուրջ 1,1 մլրդ դրամով՝** կազմելով շուրջ 2 մլրդ դրամ: 2013 թ.-ին արտահանման ծավալները կշարունակեն աճել և կհասնեն 2,7 մլրդ դրամի՝ մոտ 1,8 մլրդ դրամով ավելի բազիսային տարվա համեմատ: Ընդհանուր վաճառքների մեջ արտահանման մասնաբաժինը 2012 թ.-ին կազմել է 58 %՝ ի համեմատ բազիսային տարիների 35 %-ի:

ՀԳՏՏՁՀ-ի հաճախորդ ընկերությունների կողմից գյուղատնտեսական արտադրանքի ձեռք բերված ծավալներն արժեքային արտահայտությամբ նույնպես աճել են ծրագրի ազդեցության տարիների ընթացքում՝ ի համեմատ բազիսային տարվա: Այսպես՝ **2012 թ.-ին մթերվել է շուրջ 986 մլն դրամի չափով ավելի արտադրանք,**համեմատած բազիսային տարվա հետ, իսկ նույն ցուցանիշը **2013 թվականին կկազմի շուրջ 1 մլրդդրամ**:

ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված ծրագրերը դրական ազդեցություն են ունեցել հաճախորդ ընկերություններում նոր աշխատատեղերի ստեղծման առումով: Ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում 2012 թ.-ի վերջի դրությամբ հաճախորդ ընկերություններում, ընդհանուր առմամբ, ստեղծվել է **98 նոր աշխատատեղ**, որից **75-ը՝** լրիվ դրույքով հաստիք, իսկ մնացած **23-ը՝** կարճաժամկետ/սեզոնային զբաղվածություն: ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված ծրագրերը դրական ազդեցություն են ունեցել ավելի շատ **կանանց զբաղվածության առումով:** Նոր աշխատատեղերի **55 %**-ը բաժին է ընկել կանանց, ընդ որում՝ կանանց թիվը հաճախորդ ընկերությունների աշխատակիցների ցանկում ավելացել է 122-ից (բազիսային տարի) մինչև 176 (ազդեցության տարի):

Ներդրումներ իրականացրած հաճախորդ ընկերություններում, աշխատատեղերի ավելացման հետ մեկտեղ, ավելացել է տարեկան աշխատավարձային ֆոնդը, որը **2012 թ.-ին կազմել է 195,7 մլն դրամ՝ 51 %-ով ավելի բազիսային տարվա համեմատ**: Աճել է ոչ միայն աշխատավարձային ֆոնդը, այլև հաճախորդ ընեկերությունների կողմից վճարված միջին ամսական աշխատավարձը՝ բազիսային տարվա համեմատ **39 %-ով** և կազմելով **60,622 դրամ** (2012 թ.-ին):
2012թ.-ին, ընդհանուր առմամբ, հաճախորդ ընկերություններում հաշվարկվել է **441,176 հազ.** դրամ հարկ, որից **179,610 հազ. դրամը** ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում հավելյալ գոյացած հարկերի գումարներն են (մոտ **41%):**

2012 թվականին ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ընկերությունները մթերումներ են իրականացրել շուրջ **740 ֆերմերային տնտեսություններից**, որոնց **39 %-ից սկսել են մթերում իրականացնել ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում**: Ըստ արժեքային շղթաների՝ նոր մատակարար ֆերմերային տնտեսությունների 86%-ը ներգրավված է մրգի, խաղողի և բանջարեղենի արտադրության, 12 %-ը՝ կաթի և անասնակերի արտադրության, իսկ 2 %-ը՝ ձկնաբուծության մեջ:

ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում ֆերմերային տնտեսությունների կողմից **մատակարարումների ծավալները 2012 թ.-ին աճել են ավելի քան 3,900 տոննայով,** ընդ որում՝ **մեկ ֆերմերային տնտեսության հաշվով մատակարարումների աճը կազմել է 5.3 տոննա կամ ֆերմերային տնտեսության** կողմից **վաճառքի 41 %-ը:**

Ինչ վերաբերվում է ֆերմերային տնտեսությունների կողմից հաճախորդ ընկերություններին մատակարարված գյուղմթերքի դիմաց ստացված **եկամտին**, ապա այն ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում 2012 թ.-ին կազմել է շուրջ **1,162 մլն դրամ՝ 986 մլն դրամով ավելի բազիսային տարվա համեմատ:**

2012 թ.-ին ֆերմերային տնտեսությունների կողմից վաստակած հավելյալ եկամտի գերակշիռ մասը (70 %) բաժին է ընկել **ձկնամթերք մատակարարող ֆերմերային տնտեսություններին,** ինչը պայմանավորված է ձկնամթերքի բարձրարժեք գյուղատնտեսական արտադրանք լինելու փաստով: ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում գյուղմթերքի իրացումից ձևավորված եկամտի **25 %-ը (մոտ 250 մլն դրամը) բաշխվել է միրգ և բանջարեղեն մատակարարող 672 ֆերմերային տնտեսությունների միջև**: Կաթի և անասնակերի արտադրությամբ զբաղվող **55 ֆերմերային տնտեսություններին** բաժին է ընկել հավելյալ **եկամուտների 5 %-ը** (**շուրջ 52 մլն դրամը**):

Հաճախորդ ընկերությունների հետ համագործակցող ֆերմերային տնտեսությունների եկամուտների աճը թույլ է տվել ֆերմերային տնտեսություններին ներդրումներ իրականացնել ինչպես իրենց ֆերմերային տնտեսության գործունեության ուղղությամբ, այնպես էլ՝ տնային տնտեսության բարեկեցության բարելավման նպատակով: Հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ֆերմերային տնտեսությունների **32 %-ը** (**200 մլն դրամի** չափով) ներդրումներ է իրականացրել վերը նշված ուղղություններով: Ներդրումների **73 %-ն** (շուրջ 147 մլն դրամ) ուղղվել է ֆերմերային տնտեսության զարգացմանը, իսկ **27 %-ը**՝ տնային տնտեսության բարեկեցության բարելավմանը:

ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում գյուղատնտեսական մթերքի արտադրության և վերամշակման ոլորտում ստեղծվել է **360 նոր աշխատատեղ, որից 98-ը**՝ ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ընկերություններում, իսկ **262 աշխատատեղը**՝ հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ֆերմերային տնտեսություններում: Հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ֆերմերային տնտեսությունները **զբաղվածություն են ապահովում շուրջ 5,750 անձանց** համար, **որոնց 62 %-ը կանայք են:**

Ծրագրի ազդեցության, մասնավորապես՝ հաճախորդ ընկերությունների կողմից մթերումների ծավալի և ընդլայնման շնորհիվ աճել է վարձու աշխատակիցներ ունեցող ֆերմերային տնտեսությունների մասնաբաժինը: Այսպես՝ եթե 2010 թ.-ին ֆերմերային տնտեսությունների 40 %-ն ուներ վարձու աշխատակիցներ, ապա 2012 թ.-ին ֆերմերային տնտեսությունների արդեն 44 %-ն էր ներգրավել լրացուցիչ աշխատուժ՝ ֆերմայի ընդլայնված գործունեություն կազմակերպելու համար:

Սույն հաշվետվության մեջ հաշվարկվել է **արժեքային շղթայի բազմապատկչի** (VCMI) ինդեքսը, որը չափում է ներդրումների արդյունքում գոյացած հավելյալ շահույթը/արժեքը **բնակչության/տնային տնտեսությունների (ֆերմերներ, ընկերություն և ֆերմերային տնտեսության աշխատակիցներ) և հասարակության (հարկային մուտքերի ավելացում պետական բյուջե) մակարդակներում**:

Ծրագրի իրականացման առաջին տարում տնային տնտեսությունների համար գոյացած արժեքը կազմել է **51 մլն** դրամ, որի գերակշիռ մասը բաժին է ընկել պետական բյուջե փոխանցվող հարկերին (**79 %**): Հետագա տարիներին տնային տնտեսությունների մակարդակում գոյացող արժեքի կառուցվածքը փոխվում է: Այսպես՝ 2011թ.-ից մինչև 2018թ.-ը՝ գոյացած արժեքի գերակշիռ մասը (70-82 %) բաժին է ընկնում **ֆերմերային տնտեսությունների կողմից վաստակած եկամտին:** Տնային տնտեսությունների

աշխատավարձից վաստակած եկամտին բաժին է ընկնում ամենաքիչ մասնաբաժինը (3-7 %), միևնույն ժամանակ տարեցտարի աշխատավարձի մասնաբաժինը մի փոքր ավելանում է (2010թ.-ին՝ 3 %-ից մինչև 2018թ.-ին՝ 7 %):

ՀԳՏՏՁՀ-ի ծրագրի կողմից **1,791 մլն դրամի ներդրումների** արդյունքում տնային տնտեսությունների մակարդակում գոյացած **Զուտ Եկամուտների/Արժեքի զեղչված արժեքը** 9 տարիների համար **կազմում է 5,141 մլն դրամ**, իսկ VCMI **ինդեքսը՝ 2.87**: Այսպիսով՝ ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված ներդրումների յուրաքանչյուր դրամի հաշվով տնային տնտեսությունների համար ստեղծվել **2.87 դրամի** զուտ եկամուտ:

ՀԳՏՏՁՀ ընդհանուր գործունեության գնահատման արդյունքները ներկայացված են 4-րդ բաժնում:

2. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (ՀԳՏՏԶՀ) և ՀԳՏՏԶՀ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Հետազոտության նպատակը և շրջանակները

ՀԳՏՏԶՀ-ի և իր ծրագրերի մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ հաշվետվության նպատակն է տեղեկացնել ՀԳՏՏԶՀ-ին իր գործունեության սոցիալական արդյունավետության և կայունության վերաբերյալ՝ Հիմնադրամին հնարավորություն ընձեռելով բարելավելու իր գործողությունները և գնահատելու թիրախային խմբերին ցուցաբերած օժանդակության արդյունքները:
ՀԳՏՏԶՀ-ի և իր ծրագրերի մոնիթորինգը և գնահատումը բաղկացած է երկու հիմնական բաժիններից.

1. ՀԳՏՏԶՀ-ի ներդրումների սոցիալական արդյունավետության գնահատում, արժեքային շղթայի բազմապատկիչի ինդեքսի հաշվարկ (VCMI) ընդհանուր գործողությունների և յուրաքանչյուր ընկերության համար:
2. ՀԳՏՏԶՀ-ի ընդհանուր գործունեության գնահատում:

Հետազոտության ընթացքում հավաքագրվել ու վերլուծվել են երկրորդային և առաջնային տվյալներ հետևյալ հարցերի շուրջ.

1. Հավելյալ եկամուտ, որը ստացվել է (2012 թ.-ի տվյալների հիման վրա, առկայության դեպքում) տնային տնտեսությունների և տարբեր մակարդակների բյուջեների կողմից բազային տարվա հետ համեմատած (յուրաքանչյուր հաճախորդ ընկերության և ՀԳՏՏԶԳ-ի կողմից կատարված բոլոր ներդրումների համար):
2. Հավելյալ եկամուտ, որն ակնկալվում էստանալ տնային տնտեսությունների և տարբեր մակարդակների բյուջեների կողմից (2012 թ. տվյալների և ակնկալիքների հիման վրա)՝ «նորմալ աճի» իրավիճակի հետ համեմատած (յուրաքանչյուր հաճախորդ ընկերության և ՀԳՏՏԶՀ-ի կողմից կատարված բոլոր ներդրումների համար):
3. ՀԳՏՏԶՀ-ի ներդրումների քանակական և որակական ազդեցության գնահատումն ըստ գործունեության, արդյունավետության, ազդեցության, կայունության:
4. ՀԳՏՏԶՀ-ի կողմից տրամադրված տեխնիկական աջակցություն:
5. Իրականացված մոնիթորինգի և գնահատման նախապատրաստման հիման վրա քաղված դասերն ու ՀԳՏՏԶԳ-ին տրամադրվող խորհրդատվությունը:

ՀԳՏՏԶՀ-ի և իր ծրագրերի մոնիթորինգի ու գնահատման վերաբերյալ հաշվետվությունը պատրաստվել է հետևյալ սկզբունքների շրջանակներում.

1. ներգրավել շահառուներին,
2. հասկանալ շահառուների մոտ առկա փոփոխությունները,
3. արժևորել այն, ինչը կարևոր է,
4. ներառել այն, ինչը նյութական է,
5. հավելագրումներ չկատարել,
6. լինել թափանցիկ,
7. վերստուգել արդյունքը:

2.2 Հետազոտության խնդիրները

2.2.1 Խնդիր/բաժին 1. ՀԳՏՏԶՀ-ի ներդրումների սոցիալական արդյունավետության գնահատում, արժեքային շղթայի բազմապատկիչի ինդեքսի հաշվարկ (VCMI) ընդհանուր գործողությունների և յուրաքանչյուր ընկերության համար:

Այս բաժնում գնահատվել է 2009 թվականից մինչև 2012 թվականը ներառյալ ընկած ժամանակահատվածում ՀԳՏՏԶՀ-ի ներդրումների սոցիալական արդյունավետությունն ըստ հետևյալ 3 մակարդակների.

1. շահառուներ, որոնք կազմում են ՀԳՏՏԶՀ-ի կողմից ներդրումներ իրականացված ձեռնարկություններին մատակարարումներ իրականացնող ֆերմերները, ֆերմերային խմբերը և միջնորդները (այսուհետ՝ ֆերմերներ),
2. ՀԳՏՏԶՀ-ի կողմից ներդրումներ իրականացված ձեռնարկություններ (այսուհետ՝ հաճախորդ ընկերություն),
3. հասարակություն (օրինակ՝ հարկերի մուտքերից Պետական բյուջեի եկամուտների բարձրացման միջոցով):

ՀԳՏՏԶՀ-ի ներդրումների սոցիալական արդյունավետության գնահատումը, արժեքային շղթայի բազմապատկիչի ինդեքսի հաշվարկն (VCMI) իրականացվել է հետևյալ սկզբունքով.

1. Ծրագրի արդյունքը գնահատվել է որպես բազիսային տարվա իրավիճակի (մինչև ՀԳՏՏԶՀ-ի ներդրումները) և 2012 թվականին տիրող իրավիճակի (Ծրագրի ազդեցություն) տարբերություն,
2. Ծրագրի ազդեցությունը գնահատվել է՝ համադրելով ՀԳՏՏԶՀ-ի ներդրումների արդյունքում առկա իրավիճակն (2012 թվականին տիրող իրավիճակը) առանց ներդրումների իրավիճակի հետ: Առանց ներդրումների իրավիճակի

կանխատեսումն իրականացվել է՝ «բազիսային տարվա» փաստացի իրավիճակին ավելացնելով տարեկան «նորմալ աճ»:

3. Հավելյալ եկամուտը, որն ստացվել է տնային տնտեսությունների և տարբեր մակարդակների բյուջեների կողմից, գնահատվել է հետևյալ մոտեցմամբ.

   – հավելյալ եկամուտների կանխատեսման համար հիմք են ընդունվել 2012 թվականի փաստացի տվյալները;

   – կանխատեսումներն իրականացվել են 2013-2018 թվականների համար (մինչև ՀԳՏՏՁՀ-ի ներդրումների ավարտը հաճախորդ բոլոր ընկերություններում)՝ հետագա տարիների համար կիրառելով «մնացորդային արժեք» մոտեցումը (Residual value),

   - եկամուտների տարեկան աճը գնահատվել է «նորմալ աճի» սցենարով, եթե ընկերությունն իրականացրել է ներդրումային ծրագիրն ամբողջովին, և առկա չէ որևէ փաստարկ, որ ընկերությունը նախատեսում է ներդրումներ իրականացնել կանխատեսվող առաջին տարվա կտրվածքով (2013 թ.);

   - եկամուտների տարեկան աճը գնահատվել է «նորմալ աճից» արագընթաց սցենարով, եթե ընկերությունը չի իրականացրել ներդրումային ծրագիրն ամբողջովին, և առկա է փաստարկ, որ ընկերությունը նախատեսում է ներդրումներ իրականացնել կանխատեսվող առաջին տարվա կտրվածքով (2013 թ.): Կանխատեսումների օբյեկտիվությունն ապահովելու և գոյացած հավելյալ եկամուտը չգերագնահատելու համար, տարեկան աճի առավելագույն սահմանը կազմել է 10 %, եթե առկա չեն ավելի բարձր աճ հիմնավորող փաստարկներ (օրինակ՝ հետազոտության իրականացման ամսաթվին ընկերության իրացման և/կամ մթերման ծավալներում գրանցվել է արդեն իսկ 10 %-ից ավելի աճ՝ ի համեմատ 2012 թ.-ի ցուցանիշների) առանձին ընկերությունների մակարդակով:

Հաշվի առնելով այն փաստը, որ ՀԳՏՏՁՀ-ի ներդրումները հաճախորդ ընկերություններում իրականացվել են տարբեր ժամանակահատվածներում, ինչպես նաև այն իրողությունը, որ անհրաժեշտ տվյալների հավաքագրումը 3 մակարդակներով ամսական կտրվածքով խրթին է կամ անհնար (օրինակ՝ հաճախորդ ընկերությանը մատակարարումներ իրականացնող ֆերմերների եկամուտները), սույն հետազոտության շրջանակում որպես հետազոտության ժամանակահատված ընդունվել է օրացուցային տարին:

Բազիսային և ազդեցության տարիների սահմանման համար հաշվի են առնվել հետևյալ հիմնական գործոնները.

- ՀԳՏՏՁՀ-ի կողմից ներդրումների իրականացման և փոխառության տրամադրման ամսաթիվը/տարեթիվը,

- ընկերության կողմից ներդրումների և փոխառության օգտագործման ամսաթիվը/տարեթիվը,
- ներդրումների և փոխառության օգտագործման հնարավոր ազդեցության տարեթիվը՝ կախված ընկերության գործունեության առանձնահատկություններից:

Այսպիսով՝

1. Բազիսային տարի է սահմանվել **ՀԳՏՏԶՀ-ի ֆինանսավորման տրամադրման տարվան նախորդող տարին**, իսկ ազդեցության տարիներ դրան հաջորդող տարիները, եթե ՀԳՏՏԶՀ-ի ֆինանսավորման արդյունքները հնարավոր է եղել գրանցել ֆինանսավորման տարվա ընթացքում:
2. Բազիսային տարի է սահմանվել **ՀԳՏՏԶՀ-ի ֆինանսավորման տրամադրման տարին**, իսկ ազդեցության տարիներ՝ դրան հաջորդող տարիները, եթե ՀԳՏՏԶՀ-ի ներդրումների արդյունքները հնարավոր է եղել գրանցել ֆինանսավորման տարվան հաջորդող տարվա ընթացքում:

	Ընկերություն	Ներդրման տրամադրման ամսաթիվ	Փոխառության տրամադրման ամսաթիվ	Ծրագրի իրականացման տևողությունն առ 31.12.12թ., ամիս	Բազիսային տարի	Ազդեցության տարի/ տարիներ
1.	«Ակվատեխա վտոմատիկա» ՓԲԸ	2010 թ. ապրիլի 29-ին	-	32	2009	2010 2011 2012
2.	«Փյունիկ ՏԹՖ» ՓԲԸ	2010 թ. սեպտեմբերի 17-ին	-	27	2010	2011 2012
3.	«Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ	2011 թ. մայիսի 19 –ին	2010թ. հուլիսի 8-ին 2012թ. օգոստոսի 6-ին	19	2009	2010 2011 2012
4.	«365 Գրուպ» ՓԲԸ	2011 թ. մայիսի 19-ին	-	19	2010	2011 2012
5.	«Ազրոլոգ» ՓԲԸ	2011 թ. մայիսի 13-ին	-	19	2010	2012
6.	«Չիզ Թաուն» ՓԲԸ	2011 թ. հուլիսի 14-ին	2011թ. հունիսի 28-ին	18	2010	2011 2012
7.	«Հարպրոդ» ՓԲԸ	2011 թ. հոկտեմբերի 31-ին	-	14	2010	2011 2012
8.	«ԱՐԱԼԵՌ» ՓԲԸ	2012 թ. հունիս 14-ին	2012թ. հունիսի 1-ին	6	2011	2012

9.	«ՍԻՍ Նատուրալ» ՓԲԸ	2012 թ. հոկտեմբերի 31-ին	2012թ. հուլիսի 31-ին	5	2011	2012

ՀԳՏՏԶՀ-ի ներդրումների սոցիալական արդյունավետությունը գնահատվել է ըստ ստորև բերված **հիմնական չափորոշիչների**: Վերջիններս ներկայացված են ըստ ազդեցության երեք մակարդակների Հավելված 1-ում:

«Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու արդյունքում 01.01.2011 թ.-ից ի վեր ՀՀ-ում գործող բոլոր կազմակերպությունների համար, բացի «փոքրերից» (մինչև 100 մլն դրամ տարեկան շրջանառությամբ) կիրառվում է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտը մինչ այդ գործող ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների փոխարեն: ՀԳՏՏԶՀ և իր ծրագրերի մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ հաշվետվության տեխնիկական առաջադրանքում ներառված չափորոշիչներից մեկի գնահատումը՝ Ծրագրի ազդեցությունը հաճախորդ ընկերությունների ***շահույթի*** վրա, անհնար է եղել իրականացնել ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների հիման վրա, քանի որ ստանդարտների փոփոխման արդյունքում փոփոխվել են նշված ֆինանսական ցուցանիշի հաշվարկման մոտեցումները: Սույն մեթոդաբանության շրջանակներում առաջարկվել է չդիտարկել «հաճախորդ ընկերության շահույթը» որպես Ծրագրի ազդեցության չափորոշիչ: Հարկ է նշել, որ առաջարկվող մոտեցումը չի ազդել հետազոտության որակի վրա, քանի որ առաջարկված մնացած չափորոշիչները թույլ են տվել ստանալ ամբողջական պատկեր հետազոտության առարկայի վերաբերյալ:

Հետազոտության արդյունքում ստացված տվյալների հիման վրա իրականացվել է ՀԳՏՏԶՀ-ի ծրագրերի սոցիալական արդյունավետության գնահատում՝ արժեքային շղթայի բազմապատկչի (Value Chain Multiplier Index/VCMI) հաշվարկ, ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ընկերությունների և ամբողջական ներդրումների համար: Ինդեքսը չափում է ներդրումների արդյունքում գոյացած հավելյալ շահույթը/արժեքը **բնակչության/տնային տնտեսությունների (ֆերմերներ, ընկերության և ֆերմերային տնտեսության աշխատակիցներ) և հասարակության (հարկային մուտքերի ավելացում պետական բյուջե) մակարդակներում**: *Նշում՝ VCMI ինդեքսի հաշվարկն իրականացվել է՝ համաձայն Առաջադրանքում բերված մեթոդաբանության/բանաձևի (Տես բաժին 3.5.3):*

2.2.2 Խնդիր/բաժին 2. ՀԳՏՏԶՀ-ի ընդհանուր գործունեության գնահատում:

Այս բաժնում գնահատվել է ՀԳՏՏԶՀ-ի գործունեությունը՝ կիրառելով ԵՄ արդյունքին ուղղված մոնիթորինգի մեթոդաբանությունը (ազգային ընթացիկ ծրագրերի համար) և ներկայացվել հաշվետվություն հետևյալի մասին.

- Արտադրողականություն/Efficiency,
- Արդյունավետություն/ Effectiveness
- Ազդեցություն/Impact,
- Կայունություն/ Sustainability,
- Քաղված դասեր/ Lessons learned

ՀԳՏՏԶՀ-ի գործունեության գնահատման համար **անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումն ու վերլուծությունն իրականացվել է հետևյալ փուլերով և գործիքներով.**

1. ՀԳՏՏԶՀ-ի ծրագրային հետևյալ փաստաթղթերի, հաշվետվությունների ուսումնասիրություն.
   - համաձայնագրեր,
   - ՀԳՏՏԶՀ-ի Կանոնադրություն,
   - կանոնակարգեր և կարգեր,
   - ռազմավարական ծրագիր,
   - աշխատանքային պլաններ և բյուջե 2010-2012 թվականների համար,
   - հաշվետվություններ 2010-2012 թվականների համար,
   - ՀԳՏՏԶՀ-ի ներդրումների իրականացման և փոխառությունների տրամադրման ուղեցույց և ընթացակարգի այլ փաստաթղթեր,
   - ներդրումային ծրագրեր,
   - ծրագրային այլ փաստաթղթեր:
2. Խորին հարցազրույցներ ՀԳՏՏԶՀ-ի անձնակազմի և հաճախորդ ընկերությունների ներկայացուցիչների հետ՝ ԵՄ արդյունքին ուղղված մոնիթորինգի մեթոդաբանությանը համապատասխան մշակված հարցաշարերով:

2.3 Առաջնային և երկրորդային տվյալների հավաքագրում և վերլուծություն

Ուսումնասիրության նպատակից բխող հիմնական խնդիրները բացահայտելու/գնահատելու նպատակով **առաջնային և երկրորդային տվյալների հավաքագրումն ու վերլուծությունն իրականացվել են հետևյալ փուլերով և գործիքներով.**

1. ՀԳՏՏԶՀ-ի ծրագրային փաստաթղթերի, հաշվետվությունների և այլ նյութերի ուսումնասիրություն, հաճախորդ ընկերություններից անհրաժեշտ տվյալների հավաքագրման համար գործիքների մշակում,

2. Խորին հարցազրույց հաճախորդ ընկերությունների ներկայացուցիչների հետ, մշակված ձևաթղթերի համաձայն փաստաթղթերի և տվյալների հավաքագրում և ուսումնասիրություն,
3. Ֆերմերների շրջանում քանակական և որակական հետազոտության ընտրանքի և գործիքների մշակում՝ հիմնված հաճախորդ ընկերությունից ստացված տվյալների վրա,
4. Ֆերմերների շրջանում քանակական և որակական հետազոտության իրականացում/դաշտային աշխատանքներ,
5. Տվյալների մուտքագրում և վերլուծություն:

- *Երկրորդային հետազոտություն/երկրորդային տվյալների հավաքում, մշակում:*

Այս փուլում հավաքագրվել և դիտարկվել են երկրորդային տվյալները: Ծրագրային թիմն օգտվել է տեղեկատվության հետևյալ աղբյուրներից.
1. ՀԳՏՏԶՀ-ի ծրագրային փաստաթղթեր, հաշվետվություններ և այլ նյութեր,
2. հաճախորդ ընկերությունների ներդրումային ծրագրեր, փաստաթղթեր, հաշվետվություններ և այլ նյութեր,
3. Ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ մարզպետարանների Գյուղատնտեսության վարչություններ,
4. առկա հետազոտություններ, ուսումնասիրություններ, գիտական հոդվածներ, գրքեր և այլն,
5. ինտերնետային ռեսուրսներ և այլն:

Երկրորդային տվյալների հավաքագրման փուլի ընթացքում օգտագործվել են տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներ, մասնավորապես՝ հաշվետվություններ, վիճակագրական տվյալների աղբյուրներ և այլն:

- *Առաջնային տվյալների հավաքագրում և մշակում, քանակական և որակական հետազոտություններ:*

ՖՏ-ների հետ դաշտային ուսումնասիրություններն իրականացվել են նախապես մշակված և ՀԳՏՏԶՀ համապատասխան անձնակազմի հետ համաձայնեցված հարցաշարերի միջոցով: Մշակվել է հիմնականում երկու տեսակի գործիք՝ հարցաթերթիկ և հարցաշարեր՝ նախատեսված.
1. արժեքային շղթայում ներգրավված ֆերմերների/տնային տնտեսությունների համար (տնային տնտեսությունների հարցաթերթիկ),

2. արժեքային շղթայում ներգրավված անձանց/ֆերմերային տնտեսությունների ներկայացուցիչների և միջնորդների հետ խմբային քննարկումների ուղեցույց,
3. արժեքային շղթայում ներգրավված հաճախորդ ընկերությունների համար (փորձագիտական հարցազրույցների հարցաշար):

Տվյալների հավաքագրման գործիքների մշակում: Հետազոտության գործիքները՝ հարցաթերթերը, խմբային քննարկման ուղեցույցները, փորձագիտական հարցազրույցների հարցաշարերը, մշակվել են այնպես, որ ապահովվի Առաջադրանքի պայմաններում զետեղված և սույն մեթոդաբանությունում ներկայացված հատուկ տեղեկատվության, ինչպես նաև Հաշվետվության պատրաստման համար այլ անհրաժեշտ տվյալների հավաքագրումը դաշտից: Մինչ դաշտային աշխատանքների մեկնարկը հարցաշարերը համաձայնեցվել են ՀԳՏՏՁՀ համապատասխան անձնակազմի հետ, այնուհետև փորձարկվել և կիրառվել են միայն վերջնական շտկումներից հետո:
Ստորև ներկայացված են առաջնային տվյալների հավաքագրման աղբյուրները, գործիքները և ընտրանքի ծավալը:

Թիրախային խումբ	Տվյալների հավաքագրման գործիք, հետազոտության մեթոդ	Նախատեսված հարցվողների թիվ	Իրականացված հարցումների թիվ
Ֆերմեր/տնային տնտեսություններ	Անհատական հարցազրույց կիսաստանդարտացված հարցաշարով, Դիտարկում	առնվազն 500 ֆերմեր	508 ֆերմեր
Արժեքային շղթաներում ներգրավված անձինք	Խմբային քննարկում	առնվազն 160 ֆերմեր (20 խմբային քննարկում, յուրաքանչյուր խմբում 8 մասնակից)	160 ֆերմեր (20 խմբային քննարկում և խորին հարցազրույց)
Խորին հարցազրույց հաճախորդ ընկերությունների ներկայացուցիչների հետ	Փորձագիտական, խորին հարցազրույց	9 հաճախորդ ընկերություն	9 հաճախորդ ընկերություն

Ուսումնասիրության թիրախը և ընտրանքը: Հետազոտությունն իրականացվել է 9 հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ֆերմերների հետ:

Ֆերմերներն ընտրվել են ըստ ընկերությունների կողմից տրամադրված ցանկի[1], ովքեր մատակարարում են համապատասխան գյուղմթերք:

Հետազոտության պահին ՀԳՏՏԶՀ-ն հաստատել էր, սակայն դեռ չէր ֆինանսավորել, երկու ներդրումային ծրագրեր, որոնք ուղղված են ՀՀ Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում սպանդանոցների հիմնմանը: Նշված ծրագրերի շրջանակներում իրականացված հետազոտության նպատակն է գնահատել ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացվող Ծրագրի պոտենցիալ ազդեցությունը մսի արտադրության ոլորտում ներգրավված ֆերմերային տնտեսությունների վրա:

Ընտրանք: Հետազոտության համար ընտրվել են նշված երկու մարզերի և հարակից մարզերի (որոնց համար ևս ստեղծվող սպանդանոցները կարող են հասանելի լինել) 10 համայնքներ, որոնք մասնագիտացված են անասնապահության ոլորտում (ունեն ԽԵԿ-եր և ՄԵԿ-եր) և ունեն հետագա զարգացման համար համապատասխան ռեսուրսներ (արոտներ): Ընդհանուր առմամբ, հարցմանը մասնակցել է 186 Ֆերմերային տնտեսություն, որոնք ներգրավված են մսի արտադրության ոլորտում:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է հարցված ՖՏ-ների թիվն ըստ հաճախորդ ընկերությունների:

Աղյուսակ 2.1: Քանակական հետազոտությանը մասնակցած ֆերմերների թիվն ըստ հաճախորդ ընկերությունների

	Հաճախորդ ընկերություն	Հարցված ՖՏ-ների թիվ
1.	«Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ	4
2.	«Փյունիկ ՏԹՖ» ՓԲԸ	0[2]
3.	«Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ	87
4.	«365 Գրուպ» ՓԲԸ	81
5.	«Ագրոլոգ» ՓԲԸ	3
6.	«Չիզ Թաուն» ՓԲԸ	15
7.	«Հարպրոդ» ՓԲԸ («Լեոն» ՍՊԸ)	81
8.	«ԱՐԱԼԵՌ» ՓԲԸ	20
9.	«ՍԻՍ Նատուրալ» ՓԲԸ	31

[2] «Փյունիկ ՏԹՖ» ՓԲԸ-ի հետ հարցում չի իրականացվել, քանի որ վերջին երկու տարիներին չի համագործակցում ՖՏ-ների հետ

Ընդամենը	322[3]
Մեկ արտադրությունում ներգրավված ֆերմերային տնտեսություններ	186
Ընդամենը	508

Խմբային քննարկումներ և խորին հարցազրույց: Սոցիալական ազդեցությունը և նրա հետագա բարելավման համար անհրաժեշտ քայլերն ավելի լավ ընկալելու համար իրականացվել են խմբային քննարկումներ և խորին հարցազրույցներ արժեքային շղթայում ներգրավված անձանց հետ: Խմբային քննարկումներն իրականացվել են արժեքային շղթայում ներգրավված ֆերմերային տնտեսությունների ներկայացուցիչների և միջնորդների հետ:

Տվյալների հավաքագրում, դաշտային աշխատանքներ: Հավաքված տվյալների որակը, մասնավորապես՝ դրանց համապատասխանությունը, ճշգրտությունը, հուսալիությունն ու ամբողջականությունն ապահովելու համար իրականացվել են հետևյալ գործողությունները.

- *դաշտային աշխատանքների ժամանակացույցի կազմում,* որն արտացոլում է մարդկային, ժամանակային և ֆինանսական ռեսուրսների բաշխման արդյունավետությունը: Դաշտային աշխատանքներում ներգրավված հարցազրուցավարների ծանրաբեռնվածությունը կազմվել է այնպես, որ ապահովվի օրական կտրվածքով իրականացվելիք առաջադրանքների խելամիտ քանակություն:
- *դաշտային աշխատանքներում ներգրավված փորձագետների հրահանգավորում:* Տվյալների հավաքման գործիքների մշակումից հետո իրականացվել է դաշտային աշխատանքներում ներգրավված հարցազրուցավարների հրահանգավորում:

Տվյալների մուտքագրում: Ստեղծվել են տվյալների շտեմարաններ (SPSS software, MS Excel), ստուգվել են լրացված հարցաթերթերը, բաց հարցերը կոդավորվել են, այնուհետև մուտքագրվել են հավաքագրված առաջնային տվյալները:

Տվյալների վերլուծություն: Տվյալների վերլուծության փուլում իրականացվել է որակական և քանակական տվյալների համադրում և խաչաձև ստուգում:

Հաշվետվության կազմությունը: Հաշվետվությունը ներկայացնում է ուսումնասիրության արդյունքները՝ համաձայնեցված ՀԳՏՏԶՀ-ի հետ: Այն ներառում է քանակական ամփոփ

[3] 8 ֆերմերային տնտեսություն մատակարարում է 1-ից ավելի համախորդ ընկերության

տեղեկատվություն, որը վերաբերում է ՀԳՏՏԶՀ-ի ներդրումների սոցիալական գործունեությանն ու արդյունավետությանը, ինչպես նաև որակական գնահատմանը:

3. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (ՀԳՏՏԶՀ) ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

3.1 ՀԳՏՏԶՀ-ի նպատակները և իրականացրած ծրագրերի նկարագրությունը

Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամը (ՀԳՏՏԶՀ) ստեղծվել է 2009թ.-ի հունվարի 8-ին Հայաստանում «Շուկայավարման հնարավորություններ ֆերմերներին» ծրագրի «Գյուղական ֆինանսավորման» բաղադրիչի շրջանակներում: «Գյուղական ֆինանսավորման» բաղադրիչի հիմնական նպատակն է գյուղական փոքր ֆերմերների և փոքր ու միջին չափի ձեռնարկությունների զարգացման և կայուն տնտեսական աճի խթանումը՝ աջակցելով ֆինանսավորման տրամադրմանը մասնավոր փոքր ու միջին չափի գյուղական ձեռնարկություններին, որոնք փոխկապված են գյուղմթերք արտադրող աղքատ տնտեսվարող սուբյեկտների հետ:

Հայաստանի գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի գլխավոր **նպատակն է** Հայաստանի Հանրապետության գյուղական տարածքների տնտեսական զարգացման միջոցով աղքատության նվազեցմանն օժանդակելը:
Գլխավոր նպատակին հասնելու համար Հիմնադրամը գործարկում է երկրորդային նպատակները, որոնք են՝

- Խթանել հարաբերական տնտեսական առավելություններ ունեցող այն գյուղատնտեսական ձեռնարկությունների աճին, որոնք փոխկապված են գյուղմթերք արտադրող աղքատ տնտեսվարող սուբյեկտների հետ և կարող են ապահովել նոր աշխատատեղեր գյուղական բնակչության համար,
- Ապահովել համապատասխան ներդրումային և ֆինանսավորման գործիքակազմ, որոնք կբավարարեն գյուղական տարածքներում գործող տնտեսվարող սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման պահանջները,
- Ապահովել Հայաստանի ֆինանսական համակարգի հետագա զարգացումը՝ բավարարելու փոքր և միջին բիզնեսի վարկավորման պահանջները:

ՀԳՏՏԶՀ-ն վերը նշված նպատակների իրագործման համար մշակել և իրագործում է հետևյալ հիմնական գործիքները.

- ներդրումային գործիքներ,
- տեխնիկական աջակցություն:

Հիմնադրամի **թիրախային խմբում** ընդգրկվում են ՀՀ մարզերում գործող այն ձեռնարկությունները, որոնք զբաղվում են հետևյալ գործունեությամբ.

- գյուղմթերքի վերամշակում և պահածոյացում,
- կաթնամթերքի արտադրություն,
- գինեգործություն,
- ձկնաբուծություն,
- գյուղական տարածքներում աշխատատեղերի ստեղծմանը նպաստող այլ գործունեություն:

Ձեռնարկությունները ներդրման պահին պետք է հանդիսանան բաժնետիրական ընկերություններ, որոնք կոոպերացիայի սկզբունքով համագործակցում են գյուղական տարածքներում գործող տնային տնտեսությունների հետ:
ՀԳՏՏԶՀ-ի կառավարման գլխավոր մարմինը ՀՀ վարչապետի գլխավորած Հոգաբարձուների խորհուրդն է:
ՀԳՏՏԶՀ-ի ներդրումային որոշումները հաստատվում են Ներդրումային կոմիտեի կողմից, որն հանդիսանում է Հոգաբարձուների խորհրդին առընթեր գործող կոլեգիալ մարմին:

Ներդրումային գործիքներ: ՀԳՏՏԶՀ-ն կատարում է ներդրումներ սեփական կապիտալում՝ սովորական և արտոնյալ բաժնետոմսերի գնման միջոցով, տնտեսապես կենսունակ և դրական զարգացման միտում ունեցող ձեռնարկություններում:

ՀԳՏՏԶՀ-ն տրամադրում է նաև ստորադաս և ապահովված փոխատվություններ:
Հարկ է նշել, որ ներդրումները արտոնյալ բաժնետոմսերի գնման և փոխառությունների տրամադրման միջոցով հնարավոր են միայն սովորական բաժնետոմսերում ներդրումների առկայության դեպքում: Ընդ որում, ստորադաս փոխառությունները տրամադրվում են միայն շրջանառու միջոցների համալրման համար:

Հիմնադրամը սահմանել է տարբեր ֆինանսական գործիքներում ներդրումների հետևյալ սահմանաչափեր՝

Ֆինանսավորման գործիքներ	Տոկոսներով Կանոնադրական կապիտալում	Նվազագույն ներդրումը
Սովորական բաժնետոմսեր	25 - 45%	20 մլն ՀՀ դրամ
Արտոնյալ բաժնետոմսեր	մինչև 25%	20 մլն ՀՀ դրամ
Ստորադաս փոխառություններ	-	-

Գործիքների ցանկացած հարաբերակցության դեպքում Հիմնադրամի կողմից կատարվող ընդհանուր ներդրումը չի կարող գերազանցել ձեռնարկության սեփական կապիտալի

(մինչև ներդրումը) 70%-ը և կապիտալի ու պարտավորությունների հանրագումարի 50%-ը:

Տեխնիկական աջակցություն: Անհրաժեշտության դեպքում Հիմնադրամը տրամադրում է տեխնիկական աջակցություն կազմակերպություններին, նրանց կողմից նախաձեռնած ***տեխնիկական, տեխնոլոգիական և այլ բարեփոխումների*** իրականացման կամ կազմակերպությունների գործունեությանը նպաստող տարաբնույթ միջոցառումներին մասնակցության օժանդակության հարցում:

Հիմնադրամի կողմից ֆինանսավորվող տեխնիկական աջակցությունը հիմնականում ներառում է.

- տարածքային և ոլորտային ներդրումային հետազոտություն,
- միջազգային տոնավաճառներին/ ցուցահանդեսներին մասնակցություն,
- ուսումնական շրջագայություններ,
- կազմակերպություններում հզորությունների ստեղծում,
- մարքետինգային ուսումնասիրություններ,
- տեխնոլոգիայի փոխանցում,
- սննդի ապահովության միջազգային ստանդարտների ընդունում,
- կառավարման աջակցություն ներառյալ՝ բյուջետավորումը, հաշվապահությունը, աուդիտը, հարկային համապատասխանությունը, բիզնեսի վերակազմավորումը (կառուցվածքային փոփոխությունների իրականացում), բիզնեսի գործընթացի օպտիմիզացում, և իրականացվող ներդրման մոնիթորինգ,
- ներդրման արտաքին սոցիալ-տնտեսական արդյունքների գնահատում:

3.2. ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ընկերությունների և իրականացրած ներդրումային ծրագրերի համառոտ նկարագիրը

3.2.1 ՀԳՏՏԶՀ-ի կողմից ֆինանսավորված ներդրումային ծրագրերի համառոտ նկարագիրը և անմիջական արդյունքները

Իր գործունեության ընթացքում ՀԳՏՏԶՀ-ը ֆինանսավորել է 9 ներդրումային ծրագիր: ՀԳՏՏԶՀ-ի կողմից առ 31.12.2012թ. ներդրումային գործիքների միջոցով տեղաբաշխված գումարը կազմում է 1651.0 մլն ՀՀ դրամ, որից 1275.0 մլն ՀՀ դրամը ներդրվել է ընկերությունների բաժնեհավաք կապիտալում, իսկ 376.0 մլն ՀՀ դրամը տրամադրվել է որպես ստորադաս փոխառություն: Ստորև աղյուսակում ներկայացված է ՀԳՏՏԶՀ-ի առ 31.12.2012թ. ֆինանսավորված ներդրումային նախագծերը:

Աղյուսակ 3.1: ՀԳՏՏԶՀ-ի ֆինանսավորված ներդրումային նախագծերն առ 31.12.2012թ.

	Ընկերության անվանում	Ներդրումային ծրագրի մեկնարկի տարեթիվ	ՀԳՏՏԶՀ իրականացված ներդրում (մլն դրամ)	Ներդրման ժամկետ	ՀԳՏՏԶՀ տրամադրված փոխառություն (մլն դրամ)	Փոխառության ժամկետ
1	“Ակվատեխավտոմատիկա” ՓԲԸ	2010թ.	200	7 տարի		
3	“Մեղրու պահածոների գործարան”ՓԲԸ	2010թ.	50	7 տարի	30 48	5 տարի 5 տարի
2	“Փյունիկ ՏԹՖ” ՓԲԸ	2011թ.	200	5 տարի		
4	“365 Գրուպ” ՓԲԸ	2011թ.	200	5 տարի		
5	“Ագրոլոգ” ՓԲԸ	2011թ.	20	6 տարի		
6	“Չիզ Թաուն” ՓԲԸ	2011թ.	115	6 տարի	48[4]	4.5 տարի
7	“Հարպրոդ” ՓԲԸ	2011թ.	200	7 տարի		
8	“Արալեռ” ՓԲԸ	2012թ.	90	5 տարի	50	5 տարի
9	“Սիս Նատուրալ” ՓԲԸ	2012թ.	200	7 տարի	200	5 տարի

ՀԳՏՏԶՀ-ն ներդրումներ է իրականացրել գյուղմթերքի արտադրության և վերամշակման հինգ ենթաճյուղերում՝ ձկնաբուծություն և ձկան վերամշակում, թռչնաբուծություն, մրգի ու բանջարեղենի արտադրություն և վերամշակում, գինու արտադրություն, կաթի արտադրություն և վերամշակում և ոչխարաբուծություն, ընդ որում առանձնանում է մրգի ու բանջարեղենի արտադրություն և վերամշակման ոլորտը, որին բաժին է ընկել ֆինանսավորման 45%-ը (տե՛ս Աղյուսակ 3.2):

---

[4] հետազոտության օրվա դրությամբ մարվել է:

Աղյուսակ 3.2: ՀԳՏՏԶՀ-ի ֆինանսավորված ներդրումային նախագծերն ըստ ոլորտների առ 31.12.2012թ.

Ոլորտ	Համախորդ ընկերության անվանում	Ներդրումների ընդհանուր չափ, մլն դրամ	Ներդրումների մասնաբաժին,%
Ձկնաբուծություն և ձկան վերամշակում	“Ակվատեխավտոմատիկա” ՓԲԸ	200	12%
Թռչնաբուծություն	“Փյունիկ ՏԹՖ” ՓԲԸ	200	12%
Մրգի և բանջարեղենի արտադրություն և վերամշակում	- “Մեղրու պահածոների գործարան”ՓԲԸ - “Ազրոլոզ” ՓԲԸ - “Հարպրոդ” ՓԲԸ - “Սիս Նատուրալ” ՓԲԸ	748	45%
Գինու արտադրություն	“365 Գրուպ” ՓԲԸ	200	12%
Կաթի արտադրություն և վերամշակում	“Չիզ Թաուն” ՓԲԸ	163	10%
Ոչխարաբուծություն	“Արալեռ ՏՈՏ ” ՓԲԸ	140	8%
Ընդամենը		**1,651**	**100%**

Ստորև ներկայացված է ՀԳՏՏԶՀ-ի կողմից ֆինանսավորված կազմակերպությունների, ներդրումային ծրագրերի և դրանց անմիջական արդյունքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն:

__Ձկնաբուծություն__

«Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ-ն իրականացնում է ձկնաբուծություն, ձկան և ձկնկիթի վերամշակում և վաճառք տեղական և արտաքին շուկաներում: Ընկերությունը հիմնադրվել է 1999 թ.-ին և իր գործունեության 14 տարվա ընթացքում գրանցել է մի շարք ձեռքբերումներ, մասնավորապես՝ նոր ձկնատեսակի՝ թառափի արտադրության հիմնում, ձկան և ձկնկիթի վերամշակման կազմակերպում, մուտք նոր շուկաներ և այլն: Ներկայումս Հայաստանի ձկնամթերքի արտադրության շուկայում ընկերությունը զբաղեցնում է առաջնային դիրք, հանդիսանում է թառափի սև ձկնկիթի արտադրող, ինչպես նաև բեղմնավորված ձկնկիթի և մանրաձկան հիմնական մատակարարը:

«Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ-ն իր գործունեությունը ծավալում է Արարատի մարզի Սիփանիկ և Սիս, Արմավիրի մարզի Գայ և Արաքս գյուղական համայնքներում: Ընկերությունն աճեցնում է իշխան, թառափ, կարմրախայտ, լոքո և նրանց տարատեսակները, արտադրում և իրացնում է կենդանի ձուկ, ձկան և ձկնկիթի վերամշակված արտադրատեսակներ, ինչպես նաև արտադրական սպառման համար նախատեսված մանրաձուկ և բեղմնավորված ձկնկիթ: Ներկայումս Ընկերությունն իր արտադրանքն իրացնում է տեղական շուկայում, ինչպես նաև արտահանում՝ Վրաստան, Ռուսաստան, Ուկրաինա և Պարսկաստան:

ՀԳՏՏԶՀ-ի ներդրումային կոմիտեն հաստատել է «Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ-ի ներդրումային ծրագիրը և ներդրման ընդհանուր գումարը՝ 200 մլն ՀՀ դրամը, փոխանցվել է Ընկերությանը 2010 թ. ապրիլի 29-ին: Ընկերության ներդրումային ծրագրի նպատակն էր բարելավել արտադրանքի մրցունակությունը արտաքին շուկայում, ընդլայնել արտահանման ծավալները և արտահանվող արտադրանքի տեսականին: *Ներդրումային ծրագիրն ուղղված էր Ընկերության արտադրական հզորությունների ընդլայնմանը և ձկնաբուծության ու ձկան վերամշակման արտադրական գործընթացի արդյունավետության բարձրացմանը՝ ապահովելով վերջնական արտադրանքի որակական հատկանիշները*:

Ընկերությունն իրականացրել է ներդրումային ծրագրով նախատեսված հիմնական աշխատանքները, սակայն՝ որոշակի շեղումներով: Ընկերությունն իր գործունեության ընդլայնման նպատակով նախատեսել և իրականացրել է լաբորատոր սարքավորումների ձեռքբերում, ջրային ավազանների կառուցում, հիմնական ու շրջանառու միջոցների ձեռքբերում: Նշված աշխատանքների մի մասը, մասնավորապես՝ թառափի մայրական կազմի ու լաբորատոր սարքավորումների ձեռքբերումը, իրականացվել է 2010թ.-ին: 2010-2011թթ. ընթացքում ձեռք է բերվել ձկան կեր ներդրումային ամբողջ գումարի 45%-ի չափով, որը ներդրումային ծրագրով նախատեսված չի եղել: 2011թ.-ին Ընկերությունն իրականացրել է ներդրումներ արտադրական հզորությունների ընդլայնման ուղղությամբ. կառուցել է ջրավազաններ, ձեռք է բերել թթվածնի օքսիգեներատորներ և աէրատորներ: Արտադրական հզորությունների ընդլայնման ուղղությամբ հատկացվել է ներդրումային գումարի մոտ 33%-ը (ծրագրով նախատեսված գումարի մոտ կեսը):

Ներդրումային ծրագրի արդյունքում Ընկերությունը բարելավել է արտադրական գործընթացը՝ արտադրական հզորությունների ընդլայնման, սննդի անվտանգության պայմանների ապահովման, տեխնոլոգիական գործընթացի և ձկան կերի պաշարների կառավարման բարելավման ուղղություններով: Արտադրական գործընթացի արտադրողականության և արդյունավետության բարելավման շնորհիվ Ընկերությունն ամրապնդել է իր մրցակցային դիրքը արտաքին շուկայում: 2009թ.-ին՝ մինչև ներդրումային ծրագրի իրականացումը, Ընկերության արտահանման ծավալները կազմում էին շուրջ 25 մլն ՀՀ դրամ, մինչդեռ 2012թ.-ին Ընկերությունն արտաքին շուկա է մատակարարել 769 մլն ՀՀ դրամի չափով ձուկ և ձկնամթերք: Հարկ է նշել, որ Ընկերությունը համագործակցում է ՀՀ-ում գործող մի շարք ձկնաբուծական տնտեսությունների հետ՝ մատակարարելով մանրաձուկ և գնելով պատրաստի ձկան տեսականի, որը վերամշակվում և արտահանվում է:

Թռչնաբուծություն

«Փյունիկ Տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ՓԲԸ-ն գործում է տոհմային թռչնաբուծության ոլորտում: Ընկերությունն ապահովում է տոհմային հատկանիշ ունեցող ածան և բրոյլեր հավերի մայրական կազմի վերարտադրողական գործընթացը՝ կազմակերպելով մեկ օրական թռչնի և բեղմնավորված ձվի արտադրություն: Տոհմային թռչնաբուծության ոլորտում ընկերությունը գործում է 2001թ.-ից՝ տարիների ընթացքում կուտակելով անհրաժեշտ փորձը և տեխնոլոգիան: Ֆաբրիկան հանդիսանում է տոհմային թռչնաբուծության ոլորտի միակ մասնագիտացված ընկերությունը ՀՀ-ում: «Փյունիկ ՏԹՖ» ՓԲԸ-ն համագործակցում է ոլորտի առաջատար առաջնային տոհմաբուծարանների՝ «Lohmann» և «Aviagen» ընկերությունների հետ: Ընկերության արտադրական հզորությունները տեղակայված են ՀՀ Լոռվա մարզում: Ընկերության արտադրանքի շուկան հավկիթ և թռչնամիս արտադրող ՀՀ-ն և Վրաստանյան ընկերություններն են:

ՀԳՏՏԶՀ-ի ներդրումային կոմիտեն 2010թ. ապրիլի 12-ին հաստատեց «Փյունիկ ՏԹՖ» ՓԲԸ ներդրումային ծրագիրը, և 2010թ. մայիսին կնքվեց բաժնետոմսերի բաժանորդագրման պայմանագիր: Ներդրման ընդհանուր գումարը՝ 200 մլն ՀՀ դրամը փոխանցվել է Ընկերությանը 2010թ. սեպտեմբերի 17-ին: Ընկերության ներդրումային ծրագրի նպատակն էր հայաստանյան շուկայում իր դիրքերի ամրապնդումը և վրաստանյան շուկայում իր դիրքերի ընդլայնումը: Ներդրումային ծրագիրն ուղղված էր արտադրական հզորությունների և արտադրության ծավալների ընդլայնմանը: Ընկերությունն իրականացրել է ներդրումային ծրագրով նախատեսված գրեթե բոլոր աշխատանքները, սակայն ժամկետից ուշ՝ ֆինանսավորման ուշացման պատճառով: Ընկերությունը ներդրումային ծրագիրն ավարտին է հասցրել 2012թ.-ին՝ իրականացնելով ներդրումներ հետևյալ ուղղություններով.

- ձեռք են բերվել և տեղադրվել ինկուբատորային սարքավորումներ, ածխե վառարաններ,
- վերանորոգվել է ճտի տեղափոխման հատուկ բեռնատարը,
- ձեռք է բերվել նոր մայրական թռչնի կազմ, իրականացվել են դրա աճեցման հետ կապված ծախսերը՝ կապված կերաբաղադրամասերի և կերահավելումների հետ:

Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում Ընկերությունն ընդլայնել է իր արտադրական հզորությունները, բարելավվել արտադրական գործընթացի արդյունավետությունը, ինչի արդյունքում շուրջ 30%-ով կրճատվել են էներգակիրներին ուղղվող ծախսերը: Արտադրական գործընթացի բարելավումը դրական է անդրադարձել նաև վերջնական արտադրանքի որակական հատկանիշների վրա:

Մրգի և բանջարեղենի արտադրություն և վերամշակում

«Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ-ն մրգից և բանջարեղենից պահածոների արտադրություն կազմակերպող առաջին ձեռնարկություններից է ՀՀ-ում: Մեղրու պահածոների գործարանը հիմնադրվել է 1930թ.-ին, սեփականաշնորհվել 1996 թ.-ին՝ որպես բաց բաժնետիրական ընկերություն և 2011թ.-ին վերագրանցվել որպես փակ բաժնետիրական ընկերություն: Ընկերության արտադրական հզորությունները տեղակայված են ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքում:

Ընկերությունն արտադրում է հիմնականում մուրաբաներ, ջեմեր, օշարակներ, հյութեր և ըմպելիքներ, որոնց գերակշռող մասն արտահանվում է ԱՄՆ, Ռուսաստան և Ուկրաինա: Ընկերության արտադրանքը հայտնի է իր համով և որակով, որն ապահովվում է Մեղրու տարածաշրջանից մթերվող բարձրորակ մրգի և հատապտուղների շնորհիվ: Ընկերությունը համագործակցում է ավելի քան 120 մատակարարների/ֆերմերային տնտեսությունների հետ՝ապահովելով կայուն շուկա և եկամտի աղբյուր վերջիններիս համար:

ՀԳՏՏԶՀ ներդրումային կոմիտեն 2010 թ.-ի հունիսի 8-ին հաստատեց Ընկերության ներդրումային ծրագիրը: Ընդհանուր առմամբ, Ընկերությունը ՀԳՏՏԶՀ-ից ստացել է 148 մլն ՀՀ դրամի ֆինանսավորում, որից 40.0 մլն ՀՀ դրամ փոխառությունը տրամադրվել է 2010թ. հուլիսի 20-ին[5], բաժնեհավաք կապիտալում ներդրումն իրականացվել է 50 մլն ՀՀ դրամի չափով 2011թ.-ի մայիսի 19-ին, ինչպես նաև ևս մեկ ստորադաս փոխառություն՝ 48 մլն ՀՀ դրամի չափով, տրամադրվել է 2012թ. օգոստոսի 6-ին:

Ընկերության ներդրումային ծրագրի նպատակն էր բարելավել մրցակցային դիրքը ներքին և արտաքին շուկաներում՝ ընդլայնելով գործունեությունը ջեմերի արտադրության հիմնման և թարմ մրգերի վաճառքի կազմակերպման միջոցով, բարելավելով արտադրանքի որակական հատկանիշները:

Ներդրումային ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվել են ամբողջությամբ և ըստ նախատեսված ժամանակացույցի: Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում ընկերության արտադրության գործընթացը համապատասխանեցվել է սննդի անվտանգության միջազգային ստանդարտներին:

[5] որից 10 մլն. դրամը մարվել է Ընկերության կողմից 2011թ.-ին

Նշված աշխատանքների արդյունքում 2012 թ. ավարտին Ընկերությունը ստացել է «ISO 22000» և «HACCP» սերտիֆիկատները «Quality Austria» կազմակերպության կողմից:

Ընկերության արտադրական հզորություններն ավելացել են մոտ 20%-ով, բարելավվել է արտադրության արդյունավետությունը՝ ապահովելով մթերվող մրգի և հատապտղի որակական հատկանիշները և նվազեցնելով հումքի կորստի ռիսկը արտադրության ողջ փուլում:

Ընկերությունը բարելավել է նաև հումքի մատակարարման գործընթացը և պաշարների կառավարումը, ինչի արդյունքում նվազել են պատրաստի արտադրանքի մատակարարման խափանման ռիսկերը:

«Հարպրոդ» ՓԲԸ-ն գործունեություն է ծավալում մրգի ու բանջարեղենի վերամշակման և պահածոների արտադրության ոլորտում: Ընկերությունը մասնագիտացած է բանջարեղենի և մրգերի պահածոների արտադրության, ինչպես նաև չրի արտադրության ոլորտում: Ընկերությունը ստեղծվել է 2008թ. նախկին «Հոկտեմբերյանի պահածոների գործարանի» հիմքի վրա, որը հանդիսանում էր ԽՍՀՄ 10 խոշորագույն պահածոների գործարաններից մեկը: Ընկերության վարչական գրասենյակը և արտադրական տարածքները գտնվում են Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Շահումյան 9 հասցեում:

Ընկերությունն արտադրում է պահածոների լայն տեսականի, մասնավորապես՝ բանջարեղենի և վայրաճ խոտերի մարինադներ, բանջարեղենի պահածոներ, ջեմեր, կոմպոտներ, մուրաբաներ և այլն: Ընկերության արտադրանքն իրացվում է ինչպես ներքին շուկայում, այնպես էլ արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն: Ընկերությունը բանջարեղենի և մրգերի մթերումն իրականացնում է ավելի քան 390 ֆերմերային տնտեսությունից՝ ապահովելով վերջիններիս համար կայուն շուկա և եկամուտ վաստակելու հնարավորություն:

ՀԳՏՏՁՀ-ի ներդրումային կոմիտեն 2011թ. հունիսի 2-ին հաստատել է Ընկերության ներդրումային ծրագիրը, և 2011թ. հոկտեմբերի 31-ին կնքվել է բաժնետոմսերի բաժանորդագրման պայմանագիր: Ներդրման ընդհանուր գումարը՝ 200 մլն ՀՀ դրամը, փոխանցվել է Ընկերությանը 2011թ. հոկտեմբերի 31-ին: Ընկերության ներդրումային ծրագրի նպատակն էր՝ տեղական շուկայում իր շուկայի մասնաբաժնի ընդլայնումը և արտահանման ծավալների աճը: Ներդրումային ծրագրում Ընկերությունը նախատեսում էր ավելացնել արտադրական հզորությունները, ներդրումներ կատարել շրջանառու կապիտալում՝ արտադրության ծավալների ընդլայնման նպատակով: Ներքին շուկայում դիրքերի ամրապնդման նպատակով նախատեսվում էր ձևավորել պատրաստի արտադրանքի առաքման ցանց Երևան քաղաքում:
Ներդրումային ծրագրի իրականացման ընթացքում ծրագրով նախատեսված ներդրումների ուղղությունները որոշակի փոփոխության են ենթարկվել: 2011թ.-ին ներդրումներն իրականացվել են ամբողջությամբ շրջանառու միջոցների ուղղությամբ՝ մթերելով նախատեսվածից ավելի շատ հումք: Հիմնադրամի հետ փոխադարձ պայմանավորվածության արդյունքում, որոշվել է մնացած ներդրումները կատարել 2012թ.-ին Ընկերության արտադրանքի իրացումից գոյացած դրամական միջոցների հաշվին: 2012թ.-ին Ընկերությունը կատարեց ներդրումների մի մասը, մասնավորապես՝ ձեռք բերվեցին տրանսպորտային միջոցներ և արտադրական որոշ սարքավորումներ:

Ծրագրով նախատեսված էր ձեռք բերել պահածոների պիտակավորման ու փաթեթավորման սարքեր, սակայն վերջիններիս բարձր գնի ու ֆինանսական միջոցների բացակայության պատճառով դրանց ձեռքբերումը հետաձգվել է անորոշ ժամանակով:

Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում Ընկերությունը գրանցեց արտադրության ու իրացման ծավալների աճ, արտադրանքի որակի բարելավում: Արտադրանքի ծավալների աճը և արտադրանքի բարելավված որակը թույլ տվեցին Ընկերությանը մասնակցել պետական գնումների մրցույթին և ճանաչվել հաղթող 2013թ.-ի համար ՀՀ զինված ուժերին պահածոներ մատակարարելու գծով:

«Ագրոլոգ» ՓԲԸ-ն հանդիսանում է փոքր ձեռնարկություն, որն սկսել է իր գործունեությունը 2008թ.-ին: Ընկերությունը զբաղվում է մրգերի սառնարանային պահեստավորմամբ, պահպանմամբ և հետբերքահավաքային վաճառքով: Միևնույն ժամանակ Ընկերությունը վարձակալությամբ է տրամադրում սառնարանային խցեր և մատուցում սառնարանային պայմաններում մրգերի և բանջարեղենի պահպանման ծառայություններ ֆերմերային տնտեսություններին, անհատ այգեգործներին և ընկերություններին: Ընկերությունը գործունեությունը ծավալում է ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում:

Ընկերության ներդրումային ծրագիրը հաստատվել է ՀԳՏՏԶՀ-ի ներդրումային կոմիտեի կողմից 2010թ.-ին և 2011թ.-ի մայիսի 13-ին Ընկերությանը փոխանցվել է 20 մլն ՀՀ դրամ ներդրումային գումարը: Ստացված գումարն ուղղվել է ներդրումային ծրագրով

նախատեսված ուղղություններով և չափերով: Ընկերությունն իր գործունեության ընդլայնման նպատակով նախատեսել և 2011թ.-ի հունիս ամսին ավելացրել է 2 սառնարանային խցիկ՝ մեծացնելով իր արտադրական հզորությունները 50 տոննայով ու կրկնապատկելով ընդհանուր սառնարանային հզորությունները (հասցնելով 100 տոննայի): Բացի այդ՝ 2011թ.-ի մայիս-հունիս ամիսների ընթացքում Ընկերությունը ձեռք է բերել բեռնատար մեքենա՝ գյուղմթերքի մատակարարումներն իրականացնելու համար: Շրջանառու միջոցների համալրումն իրականացվել է 2011թ.-ի աշնանը՝ բերքահավաքի սեզոնի ընթացքում:

Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում կրկնապատկվեցին Ընկերության արտադրական հզորությունները, բարելավվեց սառնարանային խցերի զինվածությունը, ինչը թույլ է տալիս, մրգի և բանջարեղենի ճիշտ պահպանման տեխնոլոգիա կիրառելու դեպքում, նվազեցնել կորուստները: Ընկերությունը բարելավեց նաև մրգի և բանջարեղենի մթերման և մանրածախ առևտրի կետեր առաքման գործընթացները: Արդյունքում Ընկերությունը 2011-2012թթ. ընթացքում ավելացրեց մթերման ու վաճառքի ծավալները:

«ՍԻՍ Նատուրալ» ՓԲԸ-ի հիմնական գործունեությունն է բնական հյութերի արտադրությունը: «ՍԻՍ Նատուրալ» ՓԲԸ-ն ստեղծվել է 2000թ.-ին: Ընկերությունը ներկայացնում է բնական հյութերի «YAN», «SIS», «Jusis» ապրանքանիշերը, որոնք լայն ճանաչում են վայելում ներքին շուկայում: Միևնույն ժամանակ Ընկերությունն իրականացնում է պահածոների՝ ջեմերի ու մուրաբաների արտադրություն: Ընկերության արտադրանքը հիմնականում վաճառվում է ներքին շուկայում, միևնույն ժամանակ տարեց տարի աճել են արտահանման ծավալները:

Արտադրանքը հիմնականում արտահանվում է ԱՊՀ երկրներ (Թուրքմենիա, Ուկրաինա, Վրաստան), Արևմտյան Եվրոպա (Հունգարիա, Ֆրանսիա) և ԱՄՆ: Ընկերության վարչական և արտադրական շինությունները տեղակայված են Երևան քաղաքի մերձակայքում: «ՍԻՍ Նատուրալ» ՓԲԸ-ն համագործակցում է ավելի քան 50 ֆերմերային տնտեսությունների և միջնորդների հետ՝ մթերելով տարեկան շուրջ 1,200 տոննա միրգ և բանջարեղեն:
ՀԳՏՏՁՀ-ի ներդրումային կոմիտեն 2012թ. հունիսի 25-ին հաստատել է Ընկերության ներդրումային ծրագիրը, և 2012թ. հոկտեմբերի 26-ին կնքվել է բաժնետոմսերի բաժանորդագրման պայմանագիր: Ներդրման ընդհանուր գումարը՝ 200 մլն ՀՀ դրամը, փոխանցվել է Ընկերությանը 2012թ. հոկտեմբերի 31-ին: Բացի այդ, 2012թ.-ի հուլիսի 31-

ին Ընկերությունը ՀԳՏՏԶՀ-ից ստացել է փոխառություն՝ 200 մլն ՀՀ դրամի չափով: Ընդհանուր առմամբ, ՀԳՏՏԶՀ-ի կողմից Ընկերությանը տրամադրվել է 400 մլն. ՀՀ դրամ ֆինանսական միջոցներ: Ընկերության ներդրումային ծրագրի նպատակն էր ներքին և արտաքին շուկաներում իր մրցակցային դիրքի բարելավումը՝ արտադրության ընդլայնման և մեկ միավոր արտադրանքի ուղղակի ծախսերի կրճատման, սննդի անվտանգության միջազգային ստանդարտների ներդրման միջոցով:
Ընկերությունն իրականացրել է ներդրումային ծրագրով նախատեսված աշխատանքները: Միևնույն ժամանակ, քանի որ ՀԳՏՏԶՀ-ի կողմից ֆինանսական միջոցների տրամադրումը նախատեսված ժամկետից ուշացել էր մի քանի ամսով, Ընկերությունն իր շրջանառու կապիտալից է ներդրում կատարել աշխատանքները նախատեսված ժամանակացույցով իրականացնելու նպատակով: Ներդրումային գումարով Ընկերությունը հիմնել է խտացված հյութի (մրգային խյուսի) նոր արտադրություն, վերանորոգել, հզորացրել է առկա սարքավորումները, նախկին վարչական շենքը վերազինվել է որպես պահեստ, կառուցել է նոր վարչական շենք, իսկ ներդրումների մոտ կեսն էլ ուղղվել է շրջանառու միջոցների ձեռքբերմանը:

Ներդրումային ծրագրի արդյունքում Ընկերության հյութերի արտադրությունը և փաստաթղթաշրջանառությունը ճանաչվեց «HACCP» և «ISO 22000» ստանդարտներին լիովին համապատասխանող և Ընկերությանը շնորհվեցին «HACCP» և «ISO 22000» սերտիֆիկատներ: Խտացված հյութի (մրգային խյուսի) նոր արտադրամասի հիմնումը

կնպաստի մեկ միավոր արտադրանքի ուղղակի ծախսերի կրճատմանը, ինչպես նաև ֆերմերներից մթերումների ծավալի ավելացմանը: Պահեստային տարածքների ընդլայնումը կնպաստի ապրանքային տեսականու ընդլայնմանը և ներքին ապրանքաշրջանառության կառավարման բարելավմանը:

<u>Գինու արտադրություն</u>

«365 Գրուպ» ՓԲԸ-ն իր գործունեությունը ծավալում է 2008թ.-ից: Ընկերությունն իրականացնում է խաղողի և մրգային գինիների, թնդեցված գինիների ու ծիրանի կոնյակի արտադրություն: Ընկերության արտադրանքն իրացվում է «365 Վայնս» ապրանքանիշի ներքո:
Ընկերությունը գինիներն արտադրում է տարբեր մրգերից ու հատապտուղներից՝ խաղողից, նռից, սերկևիլից, մոշից, բալից և այլն: Ընկերության արտադրանքի տեսականու մեջ հատուկ տեղ ունեն Պինո տեսակի մրգային գինիները, որոնք ներկայացվում են սպառողին արդեն ճանաչված «Passion de Pineau» ապրանքանիշի ներքո: Ընկերության արտադրանքը լայն ճանաչում է վայելում ներքին շուկայում, ինչպես նաև արտահանվում ԷՌԴ, Ուկրաինա և ԵՄ-ն երկրներ:
Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է Երևանում, իսկ խաղողի, մրգի և հատապտղի մթերումն իրականացնում է Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Վայոց Ձորի, Սյունիքի, Տավուշի մարզերի գյուղական համայնքներից:

ՀԳՏՏԶՀ-ի ներդրումային կոմիտեն 2010թ. դեկտեմբերի 29-ին հաստատել է Ընկերության ներդրումային ծրագիրը, և 2011թ.-ի ապրիլին կնքվել է բաժնետոմսերի բաժանորդագրման պայմանագիր: Ներդրման ընդհանուր գումարը՝ 200 մլն ՀՀ դրամը, փոխանցվել է Ընկերությանը 2011 թ. մայիսի 19-ին: Ընկերության ներդրումային ծրագրի նպատակն էր ամրապնդել Ընկերության դիրքերը ներքին և արտաքին շուկաներում՝ արտադրանքի որակական հատկանիշների բարելավման, արտադրության և վաճառքի ծավալների ընդլայնման միջոցով:

Պարենի անվտանգության միջազգային ստանդարտների ներդրման և համապատասխանեցման («ISO 22000» սերտիֆիկատ) և արտադրական հզորությունների ավելացման համար Ընկերությունն իրականացրել է արտադրական ու հարակից պահեստային, ինչպես նաև գրասենյակային տարածքների հիմնանորոգման աշխատանքներ՝ համապատասխանեցնելով «ISO 22000: 2005» սերտիֆիկատի պահանջներին:

Ներդրումային ծրագրի արդյունքում Ընկերությունը մոտ 4 անգամ ավելացրեց արտադրական հզորությունները, ներդրեց բարձրորակ գինու արտադրության համար անհրաժեշտ տեխնոլոգիական լուծումները և որակի ապահովման և վերահսկման ընթացակարգերը, ինչպես նաև ընդլայնեց մթերման ծավալները:

2012 թ. ավարտին Ընկերությունը ստացավ «ISO 22000» և «HACCP» սերտիֆիկատներ «Quality Austria» կազմակերպության կողմից: Ներդրումային ծրագրի արդյունքները վաճառքների ավելացման տեսքով արձանագրվեցին 2011-2012թթ՝ արտահանման ծավալների աճով:

Հարկ է նշել, որ ներդրումային ծրագրով Ընկերությունը նախատեսում էր լրացուցիչ ֆինանսավորում (400 մլն դրամի չափով) ներգրավել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից (ՎԶԵԲ): ՎԶԵԲ-ից ստացված վարկային գումարներով

ընկերությունը նախատեսում էր իրականացնել խաղողի և մրգի մթերման արտադրամասի հիմնում, սարքավորումներով և տարաներով համալրում, ՌԴ-ում ներկայացուցչության հիմնում (մեծածախ առևտրի լիցենզա, ֆիրմայի գրանցում, մինի բեռնատար, առաջիկա 5 ամսվա վարձավճար և այլ ծախսեր), և շրջանառու կապիտալի ընդլայնում: Սույն հետազոտության իրականացման պահին ներդրումային ծրագիրը ավարտին չէր հասցվել ֆինանսավորման բացակայության պատճառով:

Կաթի արտադրություն և վերամշակում

«Չիզ Թաուն» ՓԲԸ-ն իրականացնում է հայկական ավանդական պանրի տեսականու՝ չանախ, լոռի և այլն, կաթնամթերքի արտադրություն ու վաճառք: Ընկերությունը ստեղծվել է 2008թ.-ին և իր գործունեության առաջին երկու տարիների ընթացքում մասնագիտացված էր պանրի մեծածախ վաճառքի մեջ՝ մատակարարելով տեղական արտադրության պանրի տեսականի ք. Երևանի մանրածախ ցանցին:

2009-2010 թթ.-ի ընթացքում Ընկերությունը հիմնում է կաթի վերամշակման արտադրամաս՝ պանրի և կաթնամթերքի արտադրություն կազմակերպելու նպատակով: Ներկայումս Ընկերությունն արտադրում է հայկական ավանդական պանրի և կաթնամթերքի լայն տեսականի, որը շուկայահանվում է «ԳՅՈՒՂ» ապրանքանիշի ներքո: Ընկերության արտադրանքն իրացվում է ներքին շուկայում: 2013թ.-ին Ընկերության արտադրանքի առաջին խմբաքանակն արտահանվել է ՌԴ: Ընկերության գրասենյակը և պանրի ու կաթնամթերքի արտադրամասերը գտնվում են Երևան քաղաքի Վարդաշեն թաղամասում: Ընկերությունը կաթի մթերումն իրականացնում է հիմնականում ՀՀ Արագածոտնի մարզից:

ՀԳՏՏԶՀ-ի ներդրումային կոմիտեն 2011թ. մայիսի 2-ին հաստատել է Ընկերության ներդրումային ծրագիրը, և 2011թ. հունիսի 30-ին կնքվել է բաժնետոմսերի բաժանորդագրման պայմանագիր: Ներդրման ընդհանուր գումարը՝ 115 մլն ՀՀ դրամը, փոխանցվել է Ընկերությանը 2011թ. հուլիսի 14-ին: Իսկ 2011թ.-ի հունիսի 28-ին Ընկերությանը տրամադրվել է նաև 48 մլն ՀՀ դրամի փոխառություն:

Ներդրումներն իրականացվել են ծրագրով նախատեսվածից բավականին մեծ շեղումներով: Եթե, օրինակ, *վերանորոգման ու շինարարական աշխատանքների* համար պետք է ներդրվեր 30-40 մլն ՀՀ դրամ, իրականացվել է մոտ 3 անգամ ավելի ներդրում՝ 108 մլն ՀՀ դրամի չափով (ներդրումային գումարի մոտ 66%-ը): Պատճառն այն է, որ նախապես պլանավորված չի եղել ներդնել Պարենի անվտանգության միջազգային ստանդարտները, և միայն ներդրումային ծրագրի հաստատումից ու մեկնարկից հետո է

որոշվել համապատասխանեցնել շինարարական ու վերանորոգման աշխատանքներն այդ ստանդարտներին: Ընկերությունը հիմքից վերանորոգել է պանրի արտադրամասը, իսկ թթու կաթնամթերքի արտադրամասը՝ ամբողջությամբ կառուցել: Սակայն, դեռևս կան անավարտ աշխատանքներ, որոնց իրականացման ժամկետները դեռ չեն պլանավորվել: Շինարարական ու վերանորոգման աշխատանքները տևել են 2011թ.-ի մարտ ամսից մինչև 2012թ.-ի փետրվար ամիսը:

Արտադրամասերի վերազինման համար ներդրվել է 45-50 մլն ՀՀ դրամ գումար, որը կազմում է ընդհանուր ներդրված գումարի մոտ 27%-ը: Վերջինս իրականացվել է 2011թ.-ի հունիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում: Ներդրումների մնացած գումարը Ընկերությունն օգտագործել է ընթացիկ վարկային պարտավորությունները մարելու նպատակով, քանի որ առկա վարկային պարտավորությունները սպասարկելու համար միջոցների խնդիր ուներ (2011թ.-ին շինարարական աշխատանքների պատճառով արտադրությունը ժամանակավորապես դադարել էր, և իրացումից դրամական հոսքերը կտրուկ նվազել էին): Շինարարական աշխատանքների ընդլայնման հետևանքով կաթի *մթերման կետերում ու շրջանառու կապիտալում* նախատեսված ներդրումները

հետաձգվեցին անորոշ ժամկետով: Հետագայում Ընկերությունը կրկին ներգրավվեց վարկային միջոցներ՝ շրջանառու կապիտալի համալրման նպատակով:
Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում Ընկերությունն ապահովեց բարձրորակ կաթնամթերք արտադրելու համար անհրաժեշտ պայմանները, որոնք համապատասխանում են սննդի անվտանգության միջազգային ստանդարտներին: Ընկերությունն ունի բոլոր անհրաժեշտ արտադրական հզորությունները՝ մատակարարելու բարձրորակ արտադրանք ինչպես ներքին, այնպես էլ՝ արտաքին շուկաներին: Արդեն 2013 թվականին պանրի առաջին խմբաքանակն արտահանվել է ՌԴ:

Ոչխարաբուծություն

«ԱՐԱԼԵՌ ՏՈՏ» ՓԲԸ-ն սկսել է ոչխարաբուծությամբ զբաղվել 2010թ.-ից, և ներկա դրությամբ հանդիսանում է ՀՀ-ում գործող միակ տոհմային ոչխարաբուծական տնտեսությունը: Ընկերությունը կազմակերպում է Ռուսաստանի Դաշնությունից ներմուծված էդիլբաև ցեղատեսակի ոչխարների բուծում՝ ոչխարաբուծությամբ զբաղվող ֆերմերային տնտեսություններին վաճառելու նպատակով:

Ընկերության կողմից առաջարկվող տոհմային ոչխարներն ունեն բարձր մթերատվություն ի համեմատ տեղական տեսակների, ինչը թույլ կտա Ընկերության հաճախորդներին՝ֆերմերային տնտեսություններին, բարձրացնել իրենց տնտեսության արտադրողականությունը: «ԱՐԱԼԵՌ ՏՈՏ» ՓԲԸ-ն ունի ավելի քան 10 տարվա գործունեության փորձ գյուղատնտեսության՝ այգեգործության և անասնապահության ոլորտներում, ինչը թույլ է տալիս ապահովել նոր ճյուղի՝ տոհմային ոչխարաբուծության, արդյունավետությունը: Ներկայումս Ընկերությունն ունի 1,500 մայրական կազմ, տոհմային մայրացուների և արուների առաջին խմբաքանակը նախատեսվում է հանել վաճառքի 2014 թվականին:
ՀԳՏՏՁՀ-ի ներդրումային կոմիտեն 2012 թ. ապրիլի 10-ին հաստատել է Ընկերության ներդրումային ծրագիրը, և 2012թ. օգոստոսի 15-ին կնքվել է բաժնետոմսերի բաժանորդագրման պայմանագիր: Ներդրման ընդհանուր գումարը՝ 90 մլն ՀՀ դրամը փոխանցվել է Ընկերությանը 2012թ. հունիսի 14-ին: Իսկ մինչ այդ՝ 2012թ.-ի հունիսի 1-ին, Ընկերությանը տրամադրվել է նաև փոխառություն՝ 50 մլն ՀՀ դրամի չափով:
Ներդրումներն իրականացվել են նախատեսված բոլոր ուղղություններով, սակայն՝ որոշակի շեղումներով: Ծրագրով նախատեսվում էր 2012թ.-ին ներմուծել 900 գլուխ մայրական կազմ (մաքի), սակայն Ընկերությունը ներմուծել է ծրագրով նախատեսված

քանակի շուրջ 70%-ը, այն է՝ 600 գլուխ, ինչպես նաև ներքին շուկայից ձեռք է բերել 600 գլուխ բալբաս տեղական ցեղատեսակի ոչխարներ:

Միևնույն ժամանակ շինարարական աշխատանքների ուղղությամբ ներդրումներն իրականացվել են ավելի մեծ ծավալներով: Շինարարական աշխատանքներն ուղղված են եղել անասնաշենքի վերանորոգմանը, ինչպես նաև արոտներում ոչխարների բուծման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի ստեղծմանը (հովիվների համար կացարան, ոչխարների համար անասնաշենք ու ամառային զբոսահրապարակ և այլն):

Ներդրումային ծրագրի արդյունքում Ընկերությունն ապահովել է շուրջ 1,500 գլուխ ոչխարների մայրական կազմի բուծման համար անհրաժեշտ ենթակառուցվածք: Ներդրումային գումարով ֆինանսավորվել են նաև ոչխարհիների բուծման համար անհրաժեշտ ընթացիկ ծախսերը: Հետազոտության պահին ԱՐԱԼԵՌ տոհմային ոչխարաբուծական տնտեսությունում մայրական կազմի քանակն անցնում է 1,500 գլուխը, որն ապահովվել է և՛ ներմուծման քանակի, և՛ ծնելիության շնորհիվ:
Ծրագրով նախատեսված չէր, սակայն Ընկերությունը ձեռք է բերել նաև տեխնիկա՝ կոմբայն, խոտ տեղափոխող մեքենա, սեփական հումքի մատակարարման հարցերը բարելավելու և հումքի ինքնարժեքը նվազեցնելու համար: Հարկ է նշել, որ ընկերությունը մատուցում է նաև մեխանիզատորական ծառայություններ իրեն անասնակեր մատակարարող ֆերմերներին՝ փոխշահավետ պայմաններով: «ԱՐԱԼԵՌ ՏՈՏ» ՓԲԸ-ն նախատեսում է շարունակել ներդրումները տոհմային տնտեսության ընդլայնման ուղղությամբ՝ նպատակ ունենալով հասցնել մայրական կազմը մինչև 3,000 գլխի:
«ԱՐԱԼԵՌ ՏՈՏ» ՓԲԸ-ի դեպքում ներդրումների ազդեցությունը վաճառքների տեսանկյունից, դեռևս հնարավոր չէ գնահատել, քանի որ Ընկերությունը շարունակում է ներդրումներ իրականացնել և տոհմային կենդանիների վաճառքը նախատեսում է մեկնարկել 2014թ.-ից:

3.2.2 ՀԳՏՏՁՀ-ի տեխնիկական աջակցության ծրագրերի համառոտ նկարագիրը և անմիջական արդյունքները

ՀԳՏՏՁՀ-ն իր նպատակների իրագործման համար, ներդրումային գործիքների հետ մեկտեղ, մշակել և իրագործել է տեխնիկական աջակցության ծրագրեր հետևյալ ուղղություններով.

1. ***<u>մինչներդրումային աջակցություն,</u>*** մասնավորապես՝ ՀԳՏՏՁՀ-ի ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածում, տարածքային և ոլորտային ներդրումային հետազոտություններ, ցուցահանդեսների կազմակերպում և միջազգային տոնավաճառներին/ ցուցահանդեսներին մասնակցություն և այլն,
2. ***<u>տեխնիկական աջակցություն ներդրումների փուլում,</u>*** որն ուղղված է աջակցելու ՀԳՏՏՁՀ-ին և ՀԳՏՏՁՀ-ի հաճախորդ ընկերություններին՝ պատշաճ կերպով ներդրումային ուղղությունների ընտրությունը և ներդրումային ծրագրերի իրականացմանը: Տեխնիկական աջակցության հնարավոր ուղղությունները ներառում են մարքեթինգային ուսումնասիրություններ, տեխնոլոգիայի փոխանցում, պարենի անվտանգության միջազգային ստանդարտների ներդրում, կառավարման աջակցություն (ներառյալ՝ բյուջետավորում, հաշվապահություն, աուդիտ, հարկային խորհրդատվություն, բիզնեսի վերակազմավորում/ կառուցվածքային փոփոխությունների իրականացում), բիզնեսի գործընթացի օպտիմիզացում և իրականացվող ներդրման մոնիթորինգ:
3. ***<u>հետներդրումային աջակցություն,</u>*** որի նպատակն է բարելավել հետներդրումային հնարավորությունները՝ փաստաթղթավորելով և տարածելով տեղեկատվություն ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքների և քաղված դասերի վերաբերյալ,
4. ***<u>ծրագրի կառավարման աջակցություն</u>***, որի նպատակն է բարելավել ՀԳՏՏՁՀ-ի կարողությունները՝ գործունեության արդյունավետության ապահովման և բարձրորակ ծառայությունների մատուցման համար:

Հաշվետվության սույն բաժնում ներկայացված են ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված տեխնիկական աջակցության ծրագրերը, որոնք ուղղված են եղել հաճախորդ ընկերություններին: Ստորև բերված աղյուսակում ամփոփ ձևով ներկայացված են ՀԳՏՏՁՀ-ի կողմից հաճախորդ ընկերություններին տրամադրված տեխնիկական աջակցության ուղղությունները:

Աղյուսակ 3.3: Հաճախորդ ընկերություններին տրամադրված տեխնիկական աջակցության ուղղությունները

Տեխնիկական աջակցության ուղղությունները	Ակվատեխավտոմատիկա	Փյունիկ ՏԹՖ	Մեղրու պահածոների գործարան	365 Գրուպ	Ագրոլոգ	Չիզ Թաուն	Հարպրոդ	ԱՐԱԼԵՌ	ՍԻՍ Նատուրալ
Հաշվապահական հաշվառում և հաշվետվությունների կազմում	V	V	V	V	V	V	V		V
Հարկային խորհրդատվություն	V	V	V	V	V	V	V	V	V
Հաշվետվությունների և տնտեսական արդյունքների աուդիտ	V	V	V	V		V	V	V	V
Ցուցահանդեսներին մասնակցություն	V		V	V		V	V	V	V
Սննդի անվտանգության միջազգային ստանդարտների ապահովման հետ կապված խորհրդատվություն	V	V	V	V		V	V	V	V
Սննդի անվտանգության միջազգային ստանդարտների համապատասխանության հավաստագրում		V *	V	V		V *			V

*հավաստագրերի շնորհումը նախատեսվում է 2013թ.-ի վերջին

ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ բոլոր ընկերությունները ստացել են տեխնիկական աջակցություն՝ ուղղված ձեռնարկության ֆինանսական կառավարման բարելավմանը: Հաճախորդ բոլոր ընկերությունները ստացել են ***հարկային խորհրդատվություն,*** ութ ընկերություններին տրամադրվել է ***հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների կազմման*** ուղղությամբ խորհրդատվություն, ութ ընկերություններում իրականացրել են ***ֆինանսական հաշվետվությունների և տնտեսական արդյունքների աուդիտ***:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ ֆինանսական կառավարման բարելավմանն ուղղված տեխնիկական աջակցության ծրագրերի արդյունքներն այնքան էլ չեն գոհացրել հաճախորդ ընկերություններին: Դժգոհությունները հիմնականում վերաբերում են հաշվապահական ու հարկային խորհրդատվություններին, որոնց արդյունավետությունը ցածր է գնահատվել ընկերությունների կողմից: Հարկ է նշել, որ դժգոհության պատճառները պայմանավորված են տրամադրվող տեխնիկական աջակցության նույնատիպությամբ (հաշվի չեն առնվել ձեռնարկության առանձնահատկությունները և

պահանջները) և ՀԳՏՏԶՀ-ի ու հաճախորդ ընկերությունների միջև հաղորդակցման բացով: ՀԳՏՏԶՀ-ի կողմից ֆինանսական կառավարման ուղղությամբ աջակցությունը տրամադրվել է ներդրումների կառավարումը բարելավելու և ընկերության ֆինանսական կառավարման թափանցիկությունը բարձրացնելու նպատակով, ինչն ընկալվել է որոշ հաճախորդ ընկերությունների կողմից ներդրումային ծրագրի հաստատումից և մեկնարկից հետո:

Ցուցահանդեսներին մասնակցությանն աջակցելը մեծամասամբ դրական արդյունք է ապահովել ընկերություններին՝ իրենց ոլորտում նոր տեխնոլոգիաների, միտումների վերաբերյալ տեղեկատվության ստացման և նոր գործընկերների հետ կապի հաստատման տեսանկյունից: Շոշափելի դրական արդյունքներ են գրանցել «Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ-ն և «Հարպրոդ» ՓԲԸ-ն, որոնք ապրանքների մատակարարման նոր պայմանագրեր են կնքել ցուցահանդեսներին մասնակցության արդյունքում:

Պարենի անվտանգության միջազգային ստանդարտների ներդրման և համապատասխանեցման (ISO22000 սերտիֆիկացման) ուղղությամբ տեխնիկական աջակցության և կապիտալ ներդրումների իրականացման արդյունքում ինը հաճախորդ ընկերություններից երեքին շնորհվեց «ISO 22000» և «HACCP» որակի հավաստագրեր: Մեղրու պահածոների գործարանը մեկնարկել է նաև «Կաշրուտ» ստանդարտի «Կոշեր» հավաստագրման գործընթացը:
«Փյունիկ ՏԹՖ» ՓԲԸ-ն և «Չիզ Թաուն» ՓԲԸ-ն մեկնարկել են պարենի անվտանգության միջազգային ստանդարտների ներդրման ու համապատասխանեցման գործընթացը. հավաստագրման փուլը նախատեսված է ավարտին հասցնել 2013թ.-ի վերջին:
«Ակվատեխավտոմատիկա» և «Հարպրոդ» ընկերությունները սննդի անվտանգության միջազգային ստանդարտների ապահովման և ներդրման նպատակով պետք է իրականացնեն մեծածավալ աշխատանքներ: Ստանդարտների ներդրման գործընթացը չի մեկնարկել՝ անհրաժեշտ աշխատանքների ֆինանսավորման բացակայության պատճառով (նախատեսված չէր ներդրումային ծրագրով):
«Ագրոլոգ» և «ԱՐԱԼԵՌ ՏՈՏ» ընկերությունները, հետազոտության պահի դրությամբ, պարենի անվտանգության միջազգային ստանդարտների ներդրման անհրաժեշտություն չունեին: Սակայն, «ԱՐԱԼԵՌ ՏՈՏ» ընկերությունը ներդրումային ծրագիր է ներկայացրել ՀԳՏՏԶՀ-ին, որով նախատեսվում է սպանդանոց հիմնադրել Վայոց Ձորի մարզում: Ներդրումային ծրագրի հաստատման դեպքում «ԱՐԱԼԵՌ ՏՈՏ»-ին կտրամադրվի սննդի անվտանգության հետ կապված խորհրդատվություն, և ընկերությունը հնարավորություն կունենա սկսելու ISO սերտիֆիկացման գործընթացը:

ՀԳՏՏԶՀ-ի հետ համագործակցության արդյունքում բոլոր հաճախորդ ընկերություններն անցել են ձեռնարկության վերակազմավորման և կառուցվածքային փոփոխության փուլերով [6]: Թեև ՀԳՏՏԶՀ-ի տեխնիկական աջակցության ծրագրերն ուղղված էին նպաստելու ձեռնարկության վերակազմավորման արդյունքում ներքին կառուցվածքային և կառավարման գործընթացների փոփոխությունների սահուն իրականացմանը, գրեթե բոլոր հաճախորդ ընկերությունները դեռ ունեն կառավարման (այդ թվում նաև ֆինանսական) համակարգի բարելավման անհրաժեշտություն: Հարկ է նշել, որ այս փուլում հաճախորդ ընկերությունները գիտակցում են կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված հետագա քայլերի անհրաժեշտությունը:

[6] ՀԳՏՏԶՀ-ի կողմից առաջարկվող ներդրումային գործիքները ենթադրում են, որ եթե հաճախորդ ընկերությունը չի հանդիսանում բաժնետիրական ընկերություն, ապա կատարվում է վերակազմակերպում փակ կամ բաց բաժնետիրական ընկերության

3.3 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը հաճախորդ ընկերությունների մակարդակում

3.3.1 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում հաճախորդ ընկերությունների հասույթի փոփոխությունը

Ընդհանուր առմամբ, ներդրումային ծրագրերը դրական ազդեցություն են ունեցել ՀԸ-ների արտադրանքի իրացումից ստացված հասույթի՝ զուտ շրջանառության վրա:

Զուտ շրջանառություն - ձեռնարկության հիմնական գործունեության արդյունքում (արտադրանքի և ապրանքների իրացումից, աշխատանքների կատարումից ու ծառայությունների մատուցումից) ստացված հասույթն առանց անուղղակի հարկերի:

ՀԳՏՏԶՀ-ի ծրագրերի արդյունքում **2012 թ.-ին** հաճախորդ ընկերությունները գրանցել են **զուտ շրջանառության աճ ավելի քան 1 մլրդ դրամի չափով** բազիսային տարվա համեմատ, իսկ **2013 թ.-ին** այդ ցուցանիշը կհասնի շուրջ **1,77 մլրդ դրամի** (տե՛ս Աղյուսակ 3.4): Հաճախորդ ինը ընկերություններից հինգը հասույթի աճ են գրանցել ազդեցության առաջին տարվա ընթացքում, երեք ընկերություն՝ երկրորդ տարվա, իսկ մեկ ընկերություն արտադրանքի իրացում կիրականացնի 2014թ.-ից:

Աղյուսակ 3.4: Հաճախորդ ընկերությունների հավելյալ հասույթը ազդեցության տարիներին բազիսային տարվա համեմատ

Ընկերություններ	Հասույթը բազիսային տարում (հազ. դրամ)		Ազդեցության տարիներ, հասույթի աճ/նվազում բազիսային տարվա համեմատ (հազ. դրամ)			
			2010 թ.	2011 թ.	2012 թ.	2013[7] թ.
Ակվատեխավտոմատիկա	2009 թ.	185,033	311,412	506,444	722,087	1,209,967
Մեղրու պահածոների գործարան	2009 թ.	67,868	22,741	30,153	91,638	103,352
Ագրոլոգ	2010 թ.	2,030		-116	5,945	1,290
365 Գրուպ	2010 թ.	84,394		64,451	72,237	167,388
Չիզ Թաուն	2010 թ.	0		3,760	67,367	136,442
Հարպրոդ	2010 թ.	86,727		-7,095	90,885	307,840
Փյունիկ ՏԹՖ	2010 թ.	495,158		149,683	3,829	-267,732
ՍԻՍ Նատուրալ	2011 թ.	1,530,384			-21,731	114,679
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	2011 թ.	0			0	0
Ընդամենը		**2,451,594**	**334,153**	**747,280**	**1,032,256**	**1,773,226**

[7] Կանխատեսում (հիմք են ընդունվել առաջին կիսամյակի ցուցանիշները)

Ինչպես երևում է Աղյուսակ 3.5-ից, ներդրումային ծրագրերի իրագործման արդյունքում, վաճառքի ծավալների կայուն աճ են արձանագրել Ակվատեխավտոմատիկա ՓԲԸ-ն, Մեղրու պահածոների գործարան ՓԲԸ-ն, 365 Գրուպ ՓԲԸ-ն և Չիզ Թաուն ՓԲԸ-ն, որոնցից երկուսի՝ Ակվատեխավտոմատիկա ՓԲԸ-ի, Մեղրու պահածոների գործարան ՓԲԸ-ի համար Ծրագրի ազդեցությունը դրսևորվում է 2010 թվականից, իսկ 365 Գրուպ ՓԲԸ-ի և Չիզ Թաուն ՓԲԸ-ի համար՝ 2011թ.-ից:

Աղյուսակ 3.5: Հաճախորդ ընկերությունների զուտ շրջանառությունը/հասույթը բազիսային և ազդեցության տարիների համար, հազ. դրամ

Հազ. դրամ	2009 թ.	2010 թ.	2011 թ.	2012 թ.	2013[8] թ.
Ակվատեխավտոմատիկա	185,033	496,445	691,477	907,120	1,395,000
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %		*168 %*	*39 %*	*31 %*	*54 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ		*168 %*	*274 %*	*390 %*	*654 %*
Մեղրու պահածոների գործարան	67,868	90,609	98,021	159,506	171,220
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %		*34 %*	*8 %*	*63 %*	*7 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %		*34 %*	*44 %*	*135 %*	*152 %*
Հարպրոդ		86,727	79,632	177,612	394,567
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %			*-8 %*	*123 %*	*122 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %			*-8 %*	*105 %*	*355 %*
365 Գրուպ		84,394	148,845	156,631	251,782
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %			*76 %*	*5 %*	*61 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %			*76 %*	*86 %*	*198 %*
Փյունիկ ՏԹՖ		495,158	644,841	498,987	227,426
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %			*30 %*	*-23 %*	*-54 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %			*30 %*	*1 %*	*-54 %*
Ագրոլոգ		2,030	1,914	7,975	3,320
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %			*-6 %*	*317 %*	*-58 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %			*-6 %*	*293 %*	*64 %*
Չիզ Թաուն		0	3,760	67,367	136,442
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %				1692 %	103 %
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %			-	-	-
ՍԻՍ Նատուրալ			1,530,384	1,508,653	1,645,063
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %				*-1 %*	*9 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %				*-1 %*	*7 %*
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ			0	0	0
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %					
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %					

[8] Կանխատեսում (հիմք են ընդունվել առաջին կիսամյակի ցուցանիշները)

Ակվատեխավտոմատիկա ՓԲԸ-ն գրանցել է զուտ շրջանառության կտրուկ աճ ազդեցության տարիների ընթացքում: 2012 թվականին Ընկերության վաճառքները կազմել են շուրջ 907,1 մլն դրամ՝ աճելով 5 անգամ բազիսային տարվա (2009 թ.) համեմատ: **Մեղրու պահածոների գործարանի** վաճառքի ծավալները 2012 թվականին կազմել են 159,5 մլն դրամ, ինչը շուրջ 2.5 անգամ ավելին է բազիսային տարվա (2009 թ.) համեմատ: **365 Գրուպ ՓԲԸ-ի** վաճառքները բազիսային տարվա համեմատ աճել են շուրջ 2 անգամ՝ 2012 թվականին կազմելով 156,6 մլն դրամ: **Չիզ Թաուն ՓԲԸ-ն** վաճառքներ չէր իրականացնում ներդրումային ծրագրի իրականացման որոշակի փուլում (արտադրամասերի շինարարության փուլում), ինչով էլ պայմանավորված է 2011 թ.-ի վաճառքի ցածր ցուցանիշները: 2012 թ.-ից ընկերությունը ապահովեց շուրջ 67 մլն դրամի հասույթ, իսկ 2013 թ.-ի առաջին կիսամյակի վաճառքի ցուցանիշները վկայում են, որ տարեկան վաճառքի ծավալները նախորդ տարվա համեմատ կլինեն երկու անգամից ավելի:

Փյունիկ ՏԹՖ, Ագրոլոգ և Հարպրոդ ընկերությունների համար ևս Ծրագրի ազդեցության սկիզբ է համարվում 2011 թվականը: Նշված Ընկերություններից երկուսը՝ Ագրոլոգը և Հարպրոդը, գրանցել են վաճառքների աճ՝ սկսած ազդեցության երկրորդ տարվանից: Փյունիկ ՏԹՖ-ի դեպքում պատկերն այլ է. Ընկերությունը վաճառքների աճ է գրանցել ազդեցության առաջին և երկրորդ տարիների ընթացքում, իսկ երրորդ տարում՝ վաճառքների անկում արտաքին գործոնների ազդեցության ներքո:

Հարպրոդ ՓԲԸ-ում շրջանառության աճը գրանցվել է ազդեցության երկրորդ տարում՝ 2012թ.-ին՝ պայմանավորված ներդրումների ազդեցությամբ: Ընկերությունը ներդրումները ներգրավել է 2011 թ.-ին, ընդ որում՝ սկզբնական շրջանում ներդրումային գումարն ուղղել է շրջանառու միջոցների՝ գյուղմթերքի ձեռքբերմանը, որի արդյունքը վաճառքների աճի տեսքով արձանագրվել է 2012 թվականին: Ծրագրի ազդեցության երկրորդ տարում՝ 2012 թ.-ին, Ընկերությունը գրանցել է 177,6 մլն դրամի վաճառք, որը երկու անգամ ավելին է բազիսային տարվա՝ 2010 թ.-ի համեմատ: Հարկ է նշել, որ Ընկերությունը ներդրումային ծրագրի հիմնական միջոցներում ներդրումներ կատարելու մասով ավարտի է հասցրել 2012 թ.-ին, որոնց արդյունքները կարձանագրվեն 2013 թ.-ին:

Ագրոլոգ ընկերության 2011 թ.-ին շրջանառության չնչին նվազումը պայմանավորված է նրանով, որ սառնարանային գործունեության դեպքում վաճառքի սեզոնն սկսվում է դեկտեմբեր ամսից և տևում մինչև հաջորդ տարվա մարտ - ապրիլ ամիսները: Այդ իսկ պատճառով, վաճառքի ծավալների աճը պետք է դիտել 2011 – 2012 թթ. դեկտեմբերից մինչև մարտ - ապրիլ ընկած ժամանակահատվածում: Սակայն, ընկերության համար ծրագրի դրական ազդեցությունը երկարատև չի եղել մի շարք ներքին և արտաքին

գործոնների բացասական ազդեցության պատճառով, որոնք ընկերությանը հասցրել են ֆինանսական վատ վիճակի: Ընկերության տնտեսական գործունեության ցածր արդյունավետությունը և, որպես արդյունք, շրջանառության և շահութաբերության նվազումը պայմանավորված է եղել հետևյալ ներքին գործոններով.

- մրգի/բանջարեղենի (նոր տեսականու) պահպանման տեխնոլոգիական բացերի/թերությունների առկայությամբ,
- շուկայավարման ռազմավարության բացակայությամբ, ցածր արդյունավետությամբ,
- ֆինանսական կառավարման անարդյունավետությամբ:

Ընկերության տնտեսական ցուցանիշների վրա բացասական ազդեցություն են ունեցել նաև արտաքին գործոնները, որոնք են.

- էներգակիրների գների աճը,
- անբարենպաստ կլիմայական պայմանները (մասնավորապես՝ վաղ գարնանային ցրտահարություն, կարկուտ և այլն),
- մրգի և բանջարեղենի ներքին շուկայի անկայունությունը,
- մրգի և բանջարեղենի շուկայում մրցակցության աճն ու շուկայահանման մոտեցումների/բիզնես մոդելի փոփոխությունները:

Փյունիկ ՏԹՖ-ն ևս ներդրումային ծրագրի իրականացման ընթացքում մեծապես տուժել է արտաքին գործոնի բացասական ազդեցությունից: Ընկերությունը ներդրումային ծրագրի արդյունքում ազդեցության առաջին տարվա ընթացքում (2011 թ.-ին) գրանցեց վաճառքների աճ 30 %-ով: Սակայն, 2012 թվականն անբարենպաստ տարի էր ընկերության համար, քանի որ Իրանի Իսլամական Հանրապետությունը, ելնելով ներքին վատ տնտեսական իրավիճակից, դեմպինգային գներով ապրանքների զանգվածային ներմուծում է իրականացրել Հայաստան: Իրավիճակը բացասաբար ազդեց Ընկերության արտադրանքի մրցունակության վրա. Ընկերությունը ստիպված էր դադարեցնել արտադրությունը: 2012 թ.-ին վաճառքի ծավալները նախորդ տարվա համեմատ նվազեցին 23 %-ով, իսկ 2013 թ.-ին՝ 54%-ով: Ընկերությունը նախատեսում է վերանայել իր արտադրանքի կառուցվածքը՝ ավելացնելով տեսականին և նվազեցնելով արտաքին գործոնների ազդեցության ռիսկը: Ընկերությունը դիմել է ՀԳՏՏԶՀ-ին՝ լրացուցիչ ստորադաս փոխառություն ներգրավելու նպատակով, որը կուղղվի ընկերության վիճակի կայունացմանը (տարվա վերջի դրությամբ հայտը հաստատվել է և լրացուցիչ ստորադաս փոխառությունը կտրամադրվի ընկերությանը սահմանված նախապայմանների իրականացումից հետո):

ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ընկերություններից երկուսը՝ **ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ՓԲԸ**-ն և **ՄԻՍ Նատուրալ ՓԲԸ-ն,** ֆինանսավորվել են 2012 թվականին, ուստի այս Ընկերությունների

համար դեռևս շուտ է ակնկալել որևէ ազդեցություն վաճառքի ծավալների աճի տեսանկյունից:

ԱՐԱԼԵՌ ՏՌՏ ընկերությունը, ելնելով գործունեության՝ տոհմային ոչխարաբուծության առանձնահատկությունից, տոհմային ոչխարների իրացումը կմեկնարկի 2014 թ.-ից:

ՍԻՍ Նատուրալ ընկերությունը ֆինանսական միջոցները ներգրավել է 2012 թ.-ի կեսերին, որոնց ազդեցությունը հասույթի վրա չի արտահայտվում նույն տարում: Իսկ արդեն 2013 թ.-ին, հաշվի առնելով նաև ընկերության վաճառքների կանխատեսումները, կարձանագրվի 9 % վաճառքի ծավալների աճ նախորդ տարվա համեմատ և 7 % աճ բազիսային տարվա համեմատ:

Ելնելով ներդրումային ծրագրերի տևողությունից՝ **կանխատեսվել են 2013 – 2018 թթ.-ի հաճախորդ ընկերությունների շրջանառությունները**: Կանխատեսման համար հիմք են ընդունվել.

- հաճախորդ ընկերությունների կողմից ներդրումների իրականացման ընթացքում կատարված աշխատանքները,
- հետաձգված ներդրումների առկայությունը և դրանց հնարավոր ազդեցությունը ընկերության հասույթի վրա,
- հաճախորդ ընկերությունների վաճառքի ծավալների փոփոխությունների միտումները՝ ելնելով տարբեր գործոնների ազդեցությունից,
- ընկերությունների նպատակները և կանխատեսումները առաջիկա տարիների համար,
- ՀՀ ՀՆԱ իրական աճի կանխատեսումը 2014 թ.-ի համար՝ պետական բյուջեով նախատեսված, և այլն:

2014 թ.-ի պետական բյուջեի նախագծի հիմքում դրված է ՀՆԱ-ի 5,2 տոկոս իրական աճի ցուցանիշը, ինչն էլ հիմք է ընդունվել հաճախորդ ընկերությունների վաճառքի ծավալների կանխատեսման համար:

Ստորև բերված Աղյուսակ 3.6-ում արտահայտված են ընկերությունների վաճառքների կանխատեսումները 2013 – 2018 թթ. համար: 2013 թ.-ի կանխատեսման համար հիմք են ընդունվել ընկերությունների կողմից տրամադրված, իրական հիմքեր ունեցող կանխատեսումների սցենարները՝ 2013 թ.-ի երկրորդ կեսի համար: Սակայն պետք է նշել, որ դրանցից որոշների տվյալները որոշակի փոփոխությունների են ենթարկվել աշխատանքային խմբի կողմից՝ բավարար հիմքերի բացակայության պատճառով:

Իսկ սկսած 2014 թ.-ից՝ կանխատեսումների համար հիմք է հանդիսացել ՀՀ ՀՆԱ իրական աճի կանխատեսվող ցուցանիշը (5.2 %), եթե ՀԸ-ն իրականացրել է ներդրումային ծրագիրն ամբողջովին, և առկա չէ որևէ փաստարկ, որ ՀԸ-ը նախատեսում է ներդրումներ իրականացնել կանխատեսվող առաջին տարվա կտրվածքով:

Բացառությամբ **Փյունիկ ՏԹՖ, ԱՐԱԼԵՌ ՏՈՏ և ՍԻՍ Նատուրալ** ընկերությունների՝ **մնացած ընկերությունների վաճառքի կանխատեսումների** համար հիմք է ընդունվել **5.2 % տարեկան բնական աճը**:

Փյունիկ ՏԹՖ-ն հարցման պահի դրությամբ ակնկալում էր ներգրավել նոր ֆինանսական միջոցներ ՀԳՏՏԶՀ-ից փոխառության տեսքով՝ գործունեության մեջ ներդնելու և ներկայիս ծանր իրավիճակից դուրս գալու համար: Փյունիկ ՏԹՖ-ի համար վաճառքի կանխատեսումների համար հիմք են ընդունվել լրացուցիչ ֆինանսավորման տրամադրման հավանականությունը և ընկերության վաճառքի քաղաքականության նպատակները (վերականգնել վաճառքի նախորդ տարիների՝ 2010–2011 թթ. ցուցանիշները): Աշխատանքային խմբի գնահատմամբ **ՍԻՍ Նատուրալ ընկերության** ներդրումային ծրագրի դրական ազդեցությունը դեռևս ամբողջությամբ չի անդրադարձել ընկերության ներկայիս շրջանառության վրա, այդ իսկ պատճառով ազդեցության երկրորդ տարում շրջանառությունը կարող է աճել ավելի քան 5.2 % - ով: Հետևաբար ընկերության 2014 թ.-ի վաճառքի ծավալների համար կանխատեսվել է 7 % աճ նախորդ տարվա համեմատ: **ԱՐԱԼԵՌ ՏՈՏ-ի** վաճառքների կանխատեսման համար հիմք են հանդիսացել տոհմային ոչխարների մայրական կազմի գլխաքանակը, գլխաքանակի տարեկան աճը, 2014 թ.-ից ի վեր տարեկան վաճառքի համար նախատեսված գլխաքանակի մասնաբաժինը, մեկ գլխի միջին գինը:

Աղյուսակ 3.6: Հաճախորդ ընկերությունների շրջանառության կանխատեսումները 2013-2018 թթ. համար, հազ. դրամ

	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.
Ագրոլոգ	3,320	3,493	3,674	3,865	4,066	4,278
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ,%		*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*
365 Գրուպ	251,782	264,874	278,648	293,138	308,381	324,417
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %		*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*
Չիզ Թաուն	136,442	143,537	151,001	158,853	167,114	175,804
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %		*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*
Հարպրոդ	394,567	415,084	456,593	480,336	505,313	531,590
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %		*5.2 %*	*10.0 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*

Ակվատեխավտոմատիկա	1,395,000	1,467,540	1,543,852	1,624,132	1,708,587	1,797,434
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %		*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*
Փյունիկ ՏԹՖ	227,426	450,000	473,400	498,017	523,914	551,157
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %		*97.9 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*
ՍԻՍ Նատուրալ	1,645,063	1,760,217	1,851,748	1,948,039	2,049,337	2,155,903
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %		*7 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	0	30,000	50,000	52,600	55,335	58,213
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %			*66.7 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*
Մեղրու պահածոների գործարան	171,220	180,124	189,490	199,344	209,709	220,614
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %		*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*

3.3.2 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը տեղական շուկայում իրացման վրա

Ընդհանուր առմամբ, ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը տեղական շուկայում հաճախորդ ընկերությունների վաճառքների վրա եղել է չեզոք: Հաշվի առնելով տեղական շուկայի տարողությունը, մրցակցության բարձր աստիճանը, ինչպես նաև սննդամթերքի պահանջարկի նվազման միտումը (պայմանավորված բնակչության թվի նվազման միտումով)՝ ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ընկերությունների մեծ մասը նպատակ ուներ ընդլայնելու արտահանման ծավալները՝ ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում: Ինչպես երևում է ստորև բերված Գծապատկեր 3.1-ում, ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում ՀԸ-ների հասույթի աճը պայմանավորված է եղել արտահանման ծավալների աճով:

Գծապատկեր 3.1. Հաճախորդ ընկերությունների վաճառքները տեղական և արտաքին շուկաներում բազիսային և ազդեցության տարիներում



Մինչև ներդրումային ծրագրերի իրականացումը ՀԸ-ների վաճառքներում գերակշիռ (65 %) մաս են կազմել տեղական շուկայում վաճառքները: Ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում տեղական շուկայի վաճառքի մասնաբաժինը նվազել է՝ 2012թ.-ին կազմելով ընդհանուր վաճառքի 42 %-ը, իսկ 2013 թ.-ին՝ 36 %-ը:

Աղյուսակ 3.7 Հաճախորդ ընկերությունների վաճառքների կառուցվածքը բազիսային տարում և ազդեցության տարիներին

	Չ.Մ.	Բազիսային տարի	Ազդեցության տարիներ	
			2012 թ.	**2013 թ.**
Ընդամենը զուտ շրջանառություն,	***հազ. դրամ***	**2,451,594**	**3,483,851**	**4,224,820**
որից հասույթ տեղական շուկայում վաճառքներից	*հազ. դրամ*	1,591,588	1,455,081	1,516,316
	%	65 %	42 %	36 %
որից հասույթ արտահանումից	*հազ. դրամ*	860,006	2,028,770	2,708,504
	%	35 %	58 %	64 %

Գումարային արտահայտությամբ ՀԸ-ների կողմից տեղական շուկայում վաճառքները նվազել են 2012 թ.-ին 136,5 մլն դրամով՝ ի համեմատ բազիսային տարվա նույն ցուցանիշի: 2013 թ.-ի համար կանխատեսումները փաստում են, որ որոշ ձեռնարկություններ կավելացնեն իրենց վաճառքի ծավալները տեղական շուկայում: Տեղական շուկայում վաճառքի ծավալների փոփոխության միտումներն ըստ ձեռնարկությունների տարբեր են և ներկայացված են Աղյուսակ 3.8-ում:

Աղյուսակ 3.8 Տեղական շուկայում հաճախորդ ընկերությունների վաճառքներից ձևավորված հավելյալ հասույթը ազդեցության տարիներին բազիսային տարվա համեմատ

Ընկերություններ	Տեղական շուկայում վաճառքից ստացված հասույթը բազիսային տարում (հազ. դրամ)	Ազդեցության տարիներ, հասույթի աճ/նվազում բազիսային տարվա համեմատ (հազ. դրամ)			
		2010 թ.	**2011 թ.**	**2012 թ.**	**2013[9] թ.**
Ակվատեխավտոմատիկա	160,081	41,812	14,921	-22,013	49,919
Մեղրու պահածոների գործարան	11,710	6,491	9,590	20,122	14,341
Ագրոլոգ	2,030		-116	5,945	1,290
365 Գրուպ	37,814		8,431	-8,006	91,582
Չիզ Թաուն	0		3,760	67,367	49,125
Հարպրոդ	21,780		23,111	30,321	176,266
Փյունիկ ՏԹՖ	351,915		241,839	78,039	-175,131
ՄԻՄ Նատուրալ	1,006,260			-308,283	-282,665
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	0				
Ընդամենը	**1,591,588**	**48,304**	**301,536**	**-136,507**	**-75,272**

Ի համեմատ բազիսային տարվա 2012 թվականին տեղական շուկայում վաճառքի ծավալների աճ է արձանագրել հինգ, իսկ 2013 թվականին՝ վեց ընկերություն: Ինչպես երևում է Աղյուսակ 3.9-ից, 2012 թվականին **տեղական շուկայում վաճառքի զգալի աճ են արձանագրել** հաճախորդ ընկերություններից **Մեղրու պահածոների գործարանը,**

[9] Կանխատեսում (հիմք են ընդունվել առաջին կիսամյակի ցուցանիշները)

Հարպրոդը, Ագրոլոգը և Չիզ Թաունը, իսկ 2013 թ.-ին իրենց դիրքերն են վերականգնել՝ **Ակվատեխավտոմատիկան և 365 Գրուպը**: Նշված ձեռնարկություններից չորսը՝ **Մեղրու պահածոների գործարանը, Հարպրոդը, Ակվատեխավտոմատիկան և 365 Գրուպը,** իրականացնում են նաև արտահանում: Որոշ ընկերություններ (Ակվատեխավտոմատիկան և 365 Գրուպը) արտահանման ծավալներն ապահովելու նպատակով ստիպված են եղել կրճատել տեղական շուկայում վաճառքի ծավալները 2012 թ.-ին:

Աղյուսակ 3.9: Տեղական շուկայում հաճախորդ ընկերությունների վաճառքի ծավալները բազիսային ու ազդեցության տարիներին, հազ. դրամ

	2009 թ.	**2010 թ.**	**2011 թ.**	**2012 թ.**	**2013 թ.**
Ագրոլոգ		**2,030**	**1,914**	**7,975**	**3,320**
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %			*-6 %*	*317 %*	*-58 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %			*-6 %*	*293 %*	*64 %*
365 Գրուպ		**37,814**	**46,244**	**29,807**	**129,396**
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %			*22 %*	*-36 %*	*334 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %			*22 %*	*-21 %*	*242 %*
Չիզ Թաուն			**3,760**	**67,367**	**49,125**
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %				*1692 %*	*-27 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %				*1692 %*	*1207 %*
Հարպրոդ		**21,780**	**44,891**	**52,101**	**198,046**
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %			*106 %*	*16 %*	*280 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %			*106 %*	*139 %*	*809 %*
Ակվատեխավտոմատիկա	**160,081**	**201,893**	**175,002**	**138,068**	**210,000**
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %		*26 %*	*-13 %*	*-21 %*	*52 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %		*26 %*	*9 %*	*-14 %*	*31 %*
Փյունիկ ՏԹՖ		**351,915**	**593,754**	**429,954**	**176,784**
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %			*69 %*	*-28 %*	*-59 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %			*69 %*	*22 %*	*-50 %*
ՍԻՍ Նատուրալ			**1,006,260**	**697,977**	**723,595**
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %				*-31 %*	*4 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %				*-31 %*	*-28 %*
ԱՐԱԼԵԶ ՏՈՏ			**0**	**0**	**0**
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %			-	-	-
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %					
Մեղրու պահածոների գործարան	**11,710**	**18,201**	**21,299**	**31,832**	**26,050**
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %		*55 %*	*17 %*	*49 %*	*-18 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %		*55 %*	*82 %*	*172 %*	*122 %*

Մնացած երեք ընկերություններից երկուսը՝ **Փյունիկ ՏԹՖ ՓԲԸ-ն և ՍԻՍ Նատուրալ ՓԲԸ-ն,** իրենց դիրքերը զիջել են ներքին շուկայում: Ընդ որում՝ **ՍԻՍ Նատուրալ ՓԲԸ-ի** դեպքում արտահանման ծավալների աճը որոշակի չափով կոմպենսացրել է ներքին

շուկայում դիրքերի վատթարացումը, և, ընդհանուր առմամբ, ՀԸ-ը վաճառքների աճ կգրանցի 2013 թ.-ին: **Փյունիկ ՏԹՖ ՓԲԸ-ի** դեպքում պատկերն այլ է. ՀԸ-ը կորցրել է իր շուկայի մասնաբաժինը տեղական շուկայում՝ Իրանից ՀՀ դեմպինգային գներով ապրանքների զանգվածային ներմուծման հետևանքով:

ԱՐԱԼԵՌ ՏՌՏ ՓԲԸ-ի դեպքում, ինչպես նշվել է, ընկերության վաճառքները կանխատեսվում են 2014 թ.-ից:

3.3.3 ՀԳՏՏՋՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը արտահանման ծավալների վրա

ՀԳՏՏՋՀ-ի կողմից իրականացված ծրագրերը դրական ազդեցություն են ունեցել հաճախորդ ընկերությունների՝ արտահանումից ստացված հասույթի վրա: Ինչպես արդեն նշվել է, ներդրումային ծրագրի ազդեցությունն ավելի ակնհայտ է ընկերությունների արտահանման ծավալների վրա՝ ի համեմատ տեղական շուկայում վաճառքների, ինչով էլ պայմանավորված՝ աճել է ընկերությունների ընդհանուր զուտ շրջանառությունը: Այդ մասին են նշել նաև հաճախորդ ընկերությունների խմբում ընդգրկված բոլոր արտահանողները:

Ներդրումային ծրագրերի արդյունքում ՀԸ-ների **արտահանումից ստացված հասույթը բազիսային տարվա համեմատ 2012 թ.-ին աճել է շուրջ 1,1 մլրդ դրամով՝** կազմելով շուրջ 2 մլրդ դրամ: 2013 թ.-ին արտահանման ծավալները կշարունակեն աճել և կհասնեն 2,7 մլրդ դրամի՝ մոտ 1,8 մլրդ դրամով ավելի բազիսային տարվա համեմատ: Ընդհանուր վաճառքների մեջ արտահանման մասնաբաժինը 2012 թ.-ին կազմել է 58 %՝ ի համեմատ բազիսային տարիների 35 %-ի:

Աղյուսակ 3.10. Արտաքին շուկաներում հաճախորդ ընկերությունների վաճառքներից ձևավորված հավելյալ հասույթը ազդեցության տարիներին՝ բազիսային տարվա համեմատ

Ընկերություններ	Արտահանումից ստացված հասույթը բազիսային տարում (հազ. դրամ)	Ազդեցության տարիներ, հասույթի աճ/նվազում բազիսային տարվա համեմատ (հազ. դրամ)			
		2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
Ակվատեխավտոմատիկա	24,952	269,600	491,523	744,100	1,160,048
Մեղրու պահածոների գործարան	56,158	16,250	20,563	71,516	89,011
Ագրոլոգ	0		0	0	0
365 Գրուպ	46,581		56,021	80,244	75,805
Չիզ Թաուն	0		0	0	87,318
Հարպրոդ	64,947		-30,206	60,564	131,574
Փյունիկ ՏԹՖ	143,243		-92,156	-74,210	-92,601
ՄԻՍ Նատուրալ	524,125			286,551	397,343
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	0			0	0
Ընդամենը	**860,006**	**285,850**	**445,744**	**1,168,764**	**1,848,498**

Ընկերությունների արտահանման ծավալները՝ ըստ բազիսային ու ազդեցության տարիների, արտահայտված են Աղյուսակ 3.11-ում: Հաճախորդ ինը ընկերություններից յոթն արտահանում են իրականացնում. արտահանում չեն իրականացնում միայն

Ագրոլոգ և **ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ՓԲԸ-ները**: Արտահանող ընկերություններից **Չիզ Թաունը** արտահանում սկսել է ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում: Ընկերության արտադրանքի (պանիր) առաջին խմբաքանակն արտահանվել է ՌԴ 2013 թ.-ին տեղական արտահանող ընկերության միջոցով: **Ակվատեխավտոմատիկա, Մեղրու պահածոների գործարան և Հարպրոդ** ընկերություններն արտահանում կազմակերպում են երկու եղանակով՝ վաճառք տեղական արտահանող ընկերությանը և ուղղակի արտահանում իրենց ընկերության միջոցով: Մնացած ընկերություններն իրականացրել են միայն ուղղակի արտահանում՝ իրենց իսկ ընկերությունների միջոցով:

Բացառությամբ **Փյունիկ ՏԹՖ**-ի՝ բոլոր արտահանող ընկերություններում ազդեցության տարիների ընթացքում գրանցվել է արտահանման ծավալների աճ՝ ի համեմատ բազիսային տարվա: Ուշադրության է արժանի **Ակվատեխավտոմատիկա** ընկերության արտահանման ծավալների թռիչքային աճը 2010 թ.-ին՝ ավելի քան 12 անգամ նախորդ տարվա համեմատ, որից հետո աճի տեմպն ավելի «համեստ» է՝ տարեկան 50 - 75 %: Ազդեցության առաջին տարում արտահանման զգալի աճ են ապահովել նաև **365 Գրուպը**՝ 120 %-ով, **ՍԻՍ Նատուրալը**՝ 55 %-ով: Իսկ արդեն ազդեցության 2-րդ ու 3-րդ տարիներին զգալի աճ են արձանագրել/ելու Մեղրու պահածոների գործարանն ու Հարպրոդ ընկերությունները՝ մոտ 3 անգամ:

Աղյուսակ 3.11: Հաճախորդ ընկերությունների արտահանման ծավալները բազիսային ու ազդեցության տարիներին, հազ. դրամ

	2009 թ.	2010 թ.	2011 թ.	2012 թ.	2013 թ.
365 Գրուպ		**46,581**	**102,601**	**126,824**	**122,386**
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %			*120 %*	*24 %*	*-3 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %			*120 %*	*172 %*	*163 %*
Չիզ Թաուն		**0**	**0**	**0**	**87,318**
Հարպրոդ		**64,947**	**34,741**	**125,511**	**196,521**
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %			*-47 %*	*261 %*	*57 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %			*-47 %*	*93 %*	*203 %*
Ակվատեխավտոմատիկա	**24,952**	**294,552**	**516,475**	**769,052**	**1,185,000**
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %		*1080 %*	*75 %*	*49 %*	*54 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %		*1080 %*	*1970 %*	*2982 %*	*4649 %*
Փյունիկ ՏԹՖ		**143,243**	**51,087**	**69,033**	**50,642**
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %			*-64 %*	*35 %*	*-27 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %			*-64 %*	*-52 %*	*-65 %*
ՍԻՍ Նատուրալ			**524,125**	**810,676**	**921,468**
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %				*55 %*	*14 %*
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %				*55 %*	*76 %*
Մեղրու պահածոների գործարան	**56,158**	**72,409**	**76,721**	**127,674**	**145,170**
Աճը/Նվազումը նախորդ տարվա համեմատ, %		29 %	6 %	66 %	14 %
Աճը/Նվազումը բազիսային տարվա համեմատ, %		29 %	37 %	127 %	159 %
Ընդամենը	**57,295**	**581,066**	**1,269,929**	**2,010,242**	**2,708,504**

3.3.4 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը ֆերմերներից գնումների ծավալի, արժեքի և տեսականու վրա

3.3.4.1 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը հաճախորդ ընկերության ֆերմերներից գնումների ծավալի և արժեքի վրա

Ստորև բերված Աղյուսակ 3.12-ում և 3.13-ում հաշվարկվել են հաճախորդ ընկերությունների կողմից իրականացված մթերման ծավալները քանակային ու արժեքային արտահայտությամբ բազային և Ծրագրի ազդեցության տարիների համար: Աղյուսակներում արտահայտված տվյալների աղբյուրներն են հաճախորդ ընկերությունների կողմից տրամադրված տվյալները և վերջիններիս գյուղմթերք մատակարարող ֆերմերների շրջանում իրականացված քանակական հետազոտության արդյունքում ստացված տվյալները: 2013 թ.-ին մթերման ծավալների հաշվարկման համար հիմք են ընդունվել ընկերությունների կողմից տրամադրված ուսումնասիրության պահին առկա տվյալները, նախորդ տարիների մթերման ծավալները, ընկերությունների և հետազոտական թիմի կողմից 2013 թ.-ին մթերման ծավալների միտումների վերաբերյալ կանխատեսումները:

Աղյուսակ 3.12: Հաճախորդ ընկերությունների գյուղարտադրանքի մթերման ծավալների աճը ազդեցության տարիներին՝ բազիսային տարվա համեմատ

Ընկերություններ	Մթերման ծավալները բազիսային տարում (տոննա)	Ազդեցության տարիներ, մթերման ծավալների աճ/նվազում բազիսային տարվա համեմատ (տոննա)			
		2010 թ.	2011 թ.	2012 թ.	2013 թ.
Ակվատեխավտոմատիկա	0	10	130	351	376
Մեղրու պահածոների գործարան	27	27	55	34	56
Ագրոլոգ	3		24	69	17
365 Գրուպ	188		257	304	271
Չիզ Թաուն	0		0	240	423
Հարպրոդ	1,323		1,147	1,589	2,338
Փյունիկ ՏԹՖ	0		188	0	0
ՄԻՄ Նատուրալ	254			961	995
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	0			375	375
Ընդամենը	**1,795**	**37**	**1,800**	**3,922**	**4,850**

ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ընկերություններից միայն հինգն է մթերումներ իրականացրել ֆերմերային տնտեսություններից մինչև ներդրումային ծրագրերի իրականացումը:

Նշված ընկերությունների շարքում են Մեղրու պահածոների գործարանը, Ագրոլոգը, Հարպրոդը, 365 Գրուպը և ՍԻՍ Նատուրալը: Մնացած **չորս ընկերություններն սկսել են մթերումներ իրականացնել ֆերմերային տնտեսություններից ներդրումային ծրագրի իրականացման ընթացքում**, ընդ որում՝ դրանցից երեքը՝ **Ակվատեխավտոմատիկան, Չիզ Թաունը** և **ԱՐԱԼԵՌ ՏՈՏ**-ը շարունակել են ֆերմերային տնտեսություններից մթերումներ իրականացնել դիտարկված ազդեցության տարիների ընթացքում: Փյունիկ ընկերության 2012 թ.-ից հետո մթերումների ծավալների դադարեցումը կապված է գյուղմթերքի խոշոր մատակարարի հետ համագործակցության հաստատմամբ (2012 թ.-ին), իսկ 2013 թ.-ին՝ նաև արտադրության ծավալների կտրուկ անկմամբ:

Ընդհանուր առմամբ, ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ բոլոր ընկերություններում, բացառությամբ **Փյունիկ ՏԹՖ**-ի, ազդեցության տարիների ընթացքում գրանցվել է մթերումների ծավալների աճ՝ ի համեմատ բազիսային տարվա: Ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում **2012 թվականին ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ութ ընկերություններ մթերել են ֆերմերային տնտեսություններից շուրջ 3,900 տոննայով** ավելի արտադրանք՝ ի համեմատ բազիսային տարվա, 2013 թվականին այդ ցուցանիշը կհասնի 4,850 տոննայի (կամ ընդհանուր մթերումների 73 %-ի):

Ընդհանուր առմամբ, ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ընկերությունների կողմից գյուղարտադրանքի ձեռք բերված ծավալներն արժեքային արտահայտությամբ աճել են ծրագրի ազդեցության տարիների ընթացքում՝ ի համեմատ բազիսային տարվա: Այսպես՝ **2012 թ.-ին մթերվել է շուրջ 986 մլն դրամի չափով ավելի արտադրանք՝** ի համեմատ բազիսային տարվա, իսկ նույն ցուցանիշը **2013 թվականին կկազմի շուրջ 1 մլրդ. դրամ**: Բացառությամբ երկու ընկերությունների՝ **Փյունիկ ՏԹՖ**-ի և **Ագրոլոգի՝** մնացած յոթ ընկերություններում ֆերմերային տնտեսություններից մթերման ծավալների աճը ազդեցության տարիների ընթացքում դրական է:

Աղյուսակ 3.13: Հաճախորդ ընկերությունների ֆերմերներից գնումների արժեքի աճը ազդեցության տարիներին՝ բազիսային տարվա համեմատ

Ընկերություններ	Մթերման ծավալները բազիսային տարում (հազ.դրամ)	Ազդեցության տարիներ, մթերման ծավալների աճ/նվազում բազիսային տարվա համեմատ (հազ.դրամ)			
		2010 թ.	2011 թ.	2012 թ.	2013 թ.
Ակվատեխավտոմատիկա	0	14,354	202,073	684,450	718,673
Մեղրու պահածոների գործարան	6,148	9,397	19,654	16,064	22,959
Ագրոլոգ	1,200		6,740	960	-200
365 Գրուպ	27,469		53,978	43,946	55,107
Չիզ Թաուն	0		0	29,703	52,415
Հարպրոդ	81,467		31,956	92,558	101,607
Փյունիկ ՏԹՖ	0		18,750	0	0
ՍԻՍ Նատուրալ	59,830			96,090	104,676
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	0			22,470	22,470
Ընդամենը	**176,115**	**23,751**	**333,151**	**986,241**	**1,077,706**

Ստորև բերված աղյուսակներում արտահայտված են հաճախորդ ընկերությունների կողմից գյուղատնտեսական մթերքի մթերման ծավալների քանակների ու արժեքների կանխատեսումները 2014 – 2018 թթ.-ի համար:

Աղյուսակ 3.14: Հաճախորդ ընկերությունների մթերման ծավալների կանխատեսումները 2014-2018 թթ-ի համար, տոննա

Մթերումներ, տոննա	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.
Ագրոլոգ	21	22	23	24	26
365 Գրուպ	483	508	534	562	591
Չիզ Թաուն	445	468	492	518	545
Հարպրոդ	3852	4052	4263	4485	4718
Ակվատեխավտոմատիկա	383	391	399	407	415
Փյունիկ ՏԹՖ	135	142	149	157	165
ՍԻՍ Նատուրալ	1337	1406	1479	1556	1637
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	375	386	406	427	449
Մեղրու պահածոների գործարան	86	91	95	100	106
Ընդամենը	**7116**	**7465**	**7841**	**8236**	**8651**

Աղյուսակ 3.15: Հաճախորդ ընկերությունների կողմից ֆերմերներից գնումների արժեքների կանխատեսումները 2014 – 2018 թթ-ի համար, հազ. դրամ

Հազ. դրամ	**2014 թ.**	**2015 թ.**	**2016 թ.**	**2017 թ.**	**2018 թ.**
Ագրոլոգ	**1,052**	**1,107**	**1,164**	**1,225**	**1,288**
Աճը/ Նվազումը նախորդ տարվա համեմատ,%	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*
365 Գրուպ	**86,870**	**91,387**	**96,139**	**101,138**	**106,398**
Աճը/ Նվազումը նախորդ տարվա համեմատ, %	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*
Չիզ Թաուն	**55,140**	**58,008**	**61,024**	**64,197**	**67,536**
Աճը/ Նվազումը նախորդ տարվա համեմատ, %	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*
Հարպրոդ	**192,594**	**202,609**	**213,145**	**224,228**	**235,888**
Աճը/ Նվազումը նախորդ տարվա համեմատ, %	*5.2%*	*5.2%*	*5.2%*	*5.2%*	*5.2%*
Ակվատեխավտոմատիկա	**733,046**	**747,707**	**762,661**	**777,914**	**793,473**
Աճը/ Նվազումը նախորդ տարվա համեմատ, %	*2.0 %*	*2.0 %*	*2.0 %*	*2.0 %*	*2.0 %*
Փյունիկ ՏԹՖ	**13,500**	**14,202**	**14,941**	**15,717**	**16,535**
Աճը/ Նվազումը նախորդ տարվա համեմատ, %	-[10]	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*
ՍԻՍ Նատուրալ	**176,022**	**185,175**	**194,804**	**204,934**	**215,590**
Աճը/ Նվազումը նախորդ տարվա համեմատ, %	*7.0 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	**22,470**	**23,144**	**24,348**	**25,614**	**26,946**
Աճը/ Նվազումը նախորդ տարվա համեմատ, %	*0 %*	*3.0 %*	*5.2 %*	*5.2 %*	*5.2 %*
Մեղրու պահածոների գործարան	**30,183**	**31,752**	**33,403**	**35,140**	**36,968**
Աճը/ Նվազումը նախորդ տարվա համեմատ, %	*3.7%*	*5.2%*	*5.2%*	*5.2%*	*5.2%*
Ընդամենը մթերում	**1,310,877**	**1,355,091**	**1,401,629**	**1,450,108**	**1,500,621**

2014 – 2018 թթ. հաճախորդ ընկերությունների կողմից գյուղմթերքի մթերման ծավալների ու արժեքների կանխատեսման համար հիմք են ընդունվել.

- ✓ ընկերությունների կողմից կատարված կանխատեսումները շրջանառության ու մթերումների ծավալների հետ կապված,
- ✓ ընկերության գործունեության բնույթը (հումքի բազայի առկայությունը, անհրաժեշտությունը և այլն),
- ✓ մթերման ծավալների նախորդ տարիների ցուցանիշները և դինամիկան:

[10] 2013թ.-ին մթերում չի իրականացրել

Համախորդ ընկերությունների գերակշիռ մասի համար կանխատեսվել է մթերումների ծավալների տարեկան 5.2 % աճ բոլոր տարիների համար՝ հիմք ընդունելով ընկերությունների շրջանառության աճի կանխատեսման ցուցանիշը: Ստորև ներկայացված ընկերությունների համար մթերման ծավալների աճի կանխատեսումները տարբերվում են, մասնավորապես.

Ակվատեխավտոմատիկա ընկերության համար մթերման ծավալների համար ավելի պահպանողական աճ է կանխատեսվել (տարեկան 2%)՝ հաշվի առնելով 2012 և 2013 թթ.-ին մթերման ծավալների կտրուկ աճը, արտադրական հզորությունները և այլն: Քանի որ ՀԸ-ն իրականացրել է ձկան արտադրության հզորությունների ընդլայնմանն ուղղված ներդրումներ, ենթադրվել է, որ մոտակա հինգ տարիների ընթացքում ընկերությունը մթերման ծավալների աճի հետ մեկտեղ կընդլայնի նաև սեփական ձկնամթերքի արտադրության ծավալները:

Փյունիկ ՏԹՖ-ն նախատեսում է 2014 թ.-ից վերագործարկել թռչնաֆաբրիկայի գործունեությունը, որի արդյունքում ընկերությունը կվերսկսի մթերման գործընթացը և 2014 թ.-ին մթերման ծավալները կկազմեն շուրջ 13.5 մլն ՀՀ դրամ:

Արալեռ ՏՈՏ ընկերությունն իր սեփական հումքի բազայի ավելացման շնորհիվ 2014 թ.-ին կարող է ձեռք բերվող մթերման ծավալները դեռ չավելացնել: Հետագա տարիներին տոհմային մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակի ավելացման հետ մեկտեղ կաճեն նաև անասնակերի մթերման ծավալները, այդ իսկ պատճառով 2015 թ.-ին կանխատեսվել է մթերման ծավալների 3 % աճ, և 2016 թ.-ից՝ 5.2 % աճ:

Մեղրու պահածոների գործարանը 2013 թ.-ին իրականացրել է մեծ քանակությամբ մթերումներ և 2014 թ.-ին կունենա որոշակի պաշարներ, այդ իսկ պատճառով 2014 թ.-ի համար կանխատեսվել է մթերման ծավալների 3.7 % աճ, իսկ մնացած տարիների համար՝ 5.2 % աճ:

3.3.4.2 ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը հաճախորդ ընկերության ֆերմերներից գնումների տեսականու վրա

Հաճախորդ ընկերությունների կողմից մթերվող գյուղմթերքների հիմնական խմբերն ըստ արժեքային շղթաների ներկայացված են ստորև:

Արժեքային շղթա	Մթերվող տեսականին
Մրգերի և բանջարեղենի արտադրություն և վերամշակում	Մրգեր Հատապտուղ Խաղող Ընդեղեն Բանջարեղեն
Ոչխարաբուծություն, կաթի արտադրություն և վերամշակում	Անասնակեր Կաթ
Ձկնաբուծություն	Ձկնամթերք

Ստորև բերված աղյուսակում արտահայտված են հաճախորդ ընկերությունների կողմից մթերվող գյուղմթերքի տեսակներն ըստ խմբերի: Ամենամեծ տեսականին ունեն մրգի ու բանջարեղենի խմբերը, որոնցում ընդգրկված է ավելի քան 30 անուն մթերք:

Աղյուսակ 3.16: Հաճախորդ ընկերությունների կողմից մթերված գյուղմթերքի տեսականին

	Մրգեր	Հատապտուղ	Խաղող	Ընդեղեն	Բանջարեղեն	Կերային մշակաբույսեր	Կաթ	Ձկնամթերք
Ագրոլոգ	■							
365 Գրուպ	■	■	■					
Չիզ Թաուն								
Հարպրոդ	■	■	■	■	■		■	
Ակվատեխավտոմատիկա								■
Փյունիկ ՏԹՖ						■		
ՍԻՍ Նատուրալ	■	■		■	■			
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ						■		
Մեղրու պահածոների գործարան	■	■		■	■			

Ընկերություններից յոթն ավելացրել է մթերվող գյուղմթերքի տեսականին ներդրումային ծրագրի իրականացման ընթացքում, ընդ որում՝ յուրաքանչյուրն ավելացրել է

տեսականին ամենաշատը վեց տեսակով: Գյուղմթերքի տեսականին ավելացրած ընկերությունների ցանկը բերված է Աղյուսակ 3.17-ում:

Աղյուսակ 3.17: Գյուղմթերքի նոր տեսականի ներգրաված ընկերություններն ու մթերած տեսականին

Ընկերության անվանումը	Ավելացրած գյուղմթերքի տեսականին	Նոր արտադրանքի անվանումը
Հարպրոդ	Դդմիկ	Դդմիկի խավիար
365 Գրուպ	Բալ, ելակ, հոն, մոշ, խաղողի մի քանի սորտ, սալոր	Մրգային գինիներ
Մեղրու պահածոների գործարան	Արքայանարինջ, կիվի	Մուրաբա
ՍԻՍ Նատուրալ	Հոն, ազնվամորի	Հյութ
Չիզ Թաուն	Կաթ	Պանիր, կաթնամթերք
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	Անասնակեր	Տոհմային ոչխարներ
Ակվատեխավտոմատիկա	Ձկնամթերք	-[11]

[11] Ձկնամթերքի մթերումը պայմանավորված է ձկան արտահանման ծավալների աճով:

3.3.4.3 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը հաճախորդ ընկերության կողմից ֆերմերներին վճարման ժամկետների ու պայմանների վրա

Հաճախորդ ընկերությունների կողմից որոշակի փոփոխության են ենթարկվել մատակարարված արտադրանքի դիմաց ֆերմերներին վճարման ձևերն ու ժամկետները: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է հաճախորդ ընկերությունների կողմից կիրառվող վճարման մոտեցումները մինչև ներդրումները և ներդրումներից հետո, ինչպես նաև վճարումների մասնաբաժինն ընդհանուրի մեջ՝ ըստ վճարման ձևերի:

Աղյուսակ 3.18: Ընկերությունների կողմից ՖՏ-ից գնումների դիմաց վճարման ձևերը մինչև ներդրումները և ներդրումներից հետո, վճարումների մասնաբաժինն ընդհանուրի մեջ ըստ վճարման ձևերի

Հաճախորդ ընկերություններ	Մինչև ներդրումները			Ներդրումներից հետո			Արդյունքում			Նշումներ
	Կանխավճարով	Գնման պահին	Հետվճարով	Կանխավճարով	Գնման պահին	Հետվճարով	Բարելավվել է	Վատթարացել է	Մնացել է անփոփոխ	
Ազրոլզ	0%	100%	0%	0%	80%	20%		V		հետվճարի ժամկետն ավելացել է 2-3 ամսով
365 Գրուպ	0%	90%	10%	0%	90%	10%			V	նվազեցրել է հետվճարային վճարվող գումարի մասնաբաժինը
Հարպրոդ	0%	30%	70%	0%	40%	60%	V			
ՍԻՍ Նատուրալ	20%	80%		20%	80%				V	
Մեղրու պահածոների գործարան	0%	0%	100%	0%	0%	100%	V			հետվճարի ժամկետն է կրճատել մինչև 1 ամիս
Ակվատեխավտոմատիկա	գնումներ չեն իրականացվել			0%	100%*	100%**				
Չիզ Թաուն	գնումներ չեն իրականացվել					100%				
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	գնումներ չեն իրականացվել			10%	90%					

*մինչև 2011 թ.-ը

** 2011թ.-ից հետո

ՄԻՍ Նատուրալ ընկերությունը, ոչ միայն ժամանակին ու տեղում վճարում է գնումների դիմաց, այլև ձեռք բերվող մթերքի 20 %-ի համար տրամադրում է կանխավճար: Նույն սկզբունքով է համագործակցում ֆերմերների հետ **ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ընկերությունը**: Այսինքն, ընդհանուր առմամբ, ինը ընկերություններից միայն երկուսն են կարողանում կանխավճար տրամադրել ֆերմերային տնտեսություններին՝ որպես գնում կատարելու երաշխիք: Կանխավճարի միջին ժամկետը տատանվում է 10 - 30 օրվա միջակայքում:

Ագրոլոգը, 365 Գրուպը և **Հարպրոդը** մթերված արտադրանքի արժեքի մի մասի համար վճարումն իրականացնում են գնման պահին, իսկ մնացած գումարը վճարում են հետվճարային սկզբունքով: Ընդ որում՝ **365 Գրուպը** և **Ագրոլոգը** կանխիկ են վճարում մթերված արտադրանքի 80 %-90 %-ի համար, իսկ **Հարպրոդը**՝ 60 %-ի համար: **365 Գրուպը** հետվճարային սկզբունքով է աշխատում հիմնականում մշտական մատակարարների հետ, որոնց հետ համագործակցությունը հիմնված է փոխվստահության վրա: Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում ընկերությունը որևէ փոփոխություններ չի կատարել ՖՏ-ներին վճարման քաղաքականությունում: **Ագրոլոգ ՓԲԸ**-ն փոփոխել է մթերված արտադրանքի դիմաց վճարման մեխանիզմը կանխիկ դրամի հոսքերի անարդյունավետ կառավարման արդյունքում: Մինչև ներդրումներն ընկերությունը մթերված բերքի համար վճարում կատարել է գնումներից հետո առավելագույնը 1 ամսվա ընթացքում, սակայն, ներդրումներից հետո ընկերությունը մթերված բերքի համար վճարումն իրականացրել է 3-4 ամիս հետո: **Հարպրոդ ՓԲԸ-ն** թեև չի կրճատել մթերված բերքի համար վճարման ժամկետները (վճարում է գնման պահից սկսած մինչև 5 ամսվա ընթացքում), սակայն նվազեցրել է հետվճարային ձևով վճարվող գումարի մասնաբաժինը (70 %-ից մինչև 60 %):

Մեղրու պահածոների գործարանը ՖՏ-ներից մթերված արտադրանքի դիմաց վճարումն իրականացնում է հետվճարային սկզբունքով: Ներդրումների արդյունքում ընկերությունը բարելավել է մթերված արտադրանքի դիմաց ՖՏ-ներին վճարման ժամանակացույցը: Եթե մինչև ներդրումները մթերված արտադրանքի համար վճարվում էր հիմնականում գնման պահից սկսած, մեկ ամսից ավելի երկար ժամկետում, ներդրումներից հետո մթերված արտադրանքի 80-90 %-ի դիմաց ՖՏ-ները վճարվում են մինչև 1 ամսվա ընթացքում: Ընդ որում՝ 2012 թ.-ին մթերքի որոշ տեսակների՝ թզի, ընկույզի համար, իսկ 2013 թ-ին՝ դեղձի, ազնվամորու, հոնի համար գործարանը վճարումը կատարել է անմիջապես գնման պահին:

Ակվատեխավտոմատիկա ընկերությունը փոփոխության է ենթարկել մթերված ձկնամթերքի դիմաց վճարման պայմանները ներդրումային ծրագրից հետո (մինչ այդ մթերում չէր իրականացվում): Ընկերությունը մինչև 2011 թ.-ն իրականացնում էր փոքր ծավալներով մթերումներ և վճարում գնման պահին: 2011 թ.-ից ի վեր արտահանման պայմանագրերի սպասարկման համար ընկերությունն իրականացնում է մեծածավալ մթերումներ, որոնց դիմաց վճարման ժամկետները սահմանվում են՝ հիմք ընդունելով արտահանման դիմաց վճարման ժամկետները (ընկերությունը վճարում է մթերված ձկնամթերքի դիմաց գնման պահից մեկ ամիս հետո):

Չիզ Թաուն ՓԲԸ-ն կաթի մթերման գործընթացն սկսել է կազմակերպել 2012 թ.-ից: Ընկերության ներկայացուցչի խոսքերով մինչ այսօր առկա չէ մթերված կաթի դիմաց վճարման հստակ ժամանակացույց: Միևնույն ժամանակ ընկերությունը փորձում է վճարումներ կատարել 15 օրը մեկ, ինչպես ընդունված է գործունեության ոլորտում:

3.3.5 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում հաճախորդ ընկերությունում աշխատողների թվի և աշխատավարձերի փոփոխությունը

3.3.5.1 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում հաճախորդ ընկերությունում ստեղծված նոր աշխատանքային հաստիքները

ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերը դրական ազդեցություն են ունեցել հաճախորդ ընկերություններում նոր աշխատատեղերի ստեղծման տեսանկյունից: Ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում 2012 թ.-ի վերջի դրությամբ հաճախորդ ընկերություններում, ընդհանուր առմամբ, ստեղծվել է **98 նոր աշխատատեղ**, որից 75-ը լրիվ դրույքով հաստիքներ են, իսկ մնացած 23-ը՝ կարճաժամկետ/սեզոնային զբաղվածություն: Ինչպես երևում է աղյուսակից, հաճախորդ ընկերություններից միայն **Ագրոլոգ** ընկերությունում է ազդեցության երկրորդ տարվա՝ 2012 թ.-ի դրությամբ գրանցվել աշխատատեղերի կրճատում, որը պայմանավորված է եղել գործունեության վատթարացմամբ: 2012 թ.-ի դրությամբ առավել մեծ թվով աշխատողներ են ներգրավել **Մեղրու պահածոների գործարանը, ՍԻՍ Նատուրալ, Հարպրոդ** ու **Փյունիկ ՏԹՖ** ընկերությունները:

Աղյուսակ 3.19: Հաճախորդ ընկերություններում ստեղծված հավելյալ աշխատատեղերը, բազիսային տարվա համեմատ

Ընկերություններ	Աշխատատեղերի թիվը բազիսային տարում	Ազդեցության տարիներ, աշխատատեղերի աճ/նվազում բազիսային տարվա համեմատ		
		2010 թ.	2011 թ.	2012 թ.
Ակվատեխավտոմատիկա	**28**	*1*	*3*	*10*
Մեղրու պահածոների գործարան	**26**	*6*	20	24
Ագրոլոգ	**6**		5	-5
365 Գրուպ	**4**		*2*	*9*
Չիզ Թաուն	**0**		*4*	*11*
Հարպրոդ	**62**		*21*	*9*
Փյունիկ ՏԹՖ	**30**		*10*	*18*
ՍԻՍ Նատուրալ	**87**			*19*
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	**7**			*3*
Ընդամենը աշխատողներ	**250**	**7**	**65**	**98**

2012 թ.-ին հաճախորդ ընկերություններն ապահովել են **348 աշխատատեղ**, որի 62 %-ը բաժին է ընկել լրիվ դրույքով աշխատատեղերին, 37 %-ը՝ սեզոնային/կարճաժամկետ, իսկ 1 %-ը՝ հաստիքային կես դրույքով աշխատատեղերին: Սեզոնային աշխատողներ

ներգրավում են մրգի և բանջարեղենի արտադրության ու վերամշակման արժեքային շղթայում ներգրավված հինգ հաճախորդ ընկերություններից չորսը՝ **Ագրոլոգը, Հարպրոդը, ՍԻՍ Նատուրալը** և **Մեղրու պահածոների գործարանը:** Իսկ կես դրույքով աշխատողներ ներգրավել է միայն **365 Գրուպ** ընկերությունը, 2010 – 2011 թթ.՝ մեկ աշխատակից, 2012 – 2013 թթ.՝ երկու աշխատակից:

Ստորև բերված գծապատկերում ներկայացված է աշխատատեղերի բաշխումն ըստ ոլորտների: 2012 թ.-ին հաճախորդ ընկերություններում **զբաղվածների 78 %-ը բաժին է ընկել մրգի և բանջարեղենի ոլորտին**, որտեղ Ծրագրի ազդեցությամբ ստեղծված **նոր աշխատատեղերը 56-ն են (ընդհանուրի 57 %-ը)**: Մրգի և բանջարեղենի ոլորտում զբաղվածների մեծ թիվը պայմանավորված է այն փաստով, որ ինը հաճախորդ ընկերություններից հինգը ներգրավված է նշված ոլորտում, միևնույն ժամանակ վերջիններս հանդիսանում են ոլորտի առաջատարները: Մնացած չորս հաճախորդ ընկերություններին բաժին է ընկել զբաղվածների 22 %-ը և նոր ստեղծված աշխատատեղերի 43 %-ը: Զբաղվածների **14 %-ը ներգրավված է թռչնաբուծության ոլորտում**, որտեղ **նոր աշխատատեղերը կազմել են ընդհանուրի 19 %-ը** (18 աշխատատեղ): Ձկնաբուծության, կաթի վերամշակման և ոչխարաբուծության ոլորտներում զբաղվածների մասնաբաժինը կազմել է 8 %, իսկ նոր աշխատատեղերը՝ 24 (կամ ընդհանուրի 24 %-ը):

Գծապատկեր 3.2: Հաճախորդ ընկերութուններում զբաղվածներն ըստ ոլորտների (2012թ.)



Գծապատկեր 3.3: Նոր աշխատատեղերն ըստ ոլորտների



ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերը դրական ազդեցություն են ունեցել **կանանց զբաղվածության տեսանկյունից:** Նոր աշխատատեղերի 55 %-ը բաժին է ընկել կանանց, ընդ որում՝ կանանց թիվը հաճախորդ ընկերությունների աշխատակիցների ցանկում ավելացել է 122-ից (բազիսային տարի) մինչև 176 (ազդեցության տարի):

Աղյուսակ 3.20: Հաճախորդ ընկերությունների աշխատակիցների թիվը և կանանց մասնաբաժինը բազիսային և ազդեցության տարիների համար

Ընկերություններ	Բազիսային տարի			Ազդեցության տարի (2012թ.)		
	Ընդամենը աշխատողներ	որից կանայք	որից կանայք, %	Նոր աշխատատեղեր	որից կանայք	որից կանայք, %
Ակվատեխավտոմատիկա	**28**	6	21 %	10	3	30 %
Մեղրու պահածոների գործարան	**26**	12	46 %	24	20	83 %
Ագրոլոգ	**6**	2	33 %	-5	-2	40 %
365 Գրուպ	**4**	2	50 %	9	3	33 %
Չիզ Թաուն	**0**	0	0 %	11	4	36 %
Հարպրոդ	**62**	37	60 %	9	7	78 %
Փյունիկ ՏԹՖ	**30**	15	50 %	18	9	50 %
ՍԻՍ Նատուրալ	**87**	47	54 %	19	10	53 %
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	**7**	1	14 %	3	0	0 %
Ընդամենը	**250**	**122**	**49%**	**98**	**54**	55 %

ՀԳՏՏՋՀ-ի կողմից իրականացված ծրագրերի դրական ազդեցությունը կանանց զբաղվածության տեսանկյունից պայմանավորված է այն փաստով, որ ֆինանսավորված հաճախորդ ընկերությունների գերակշիռ մասը ներգրավված են այն ոլորտներում, որտեղ կանանց զբաղվածությունը բարձր մակարդակ ունի: Այսպես՝ ֆինանսավորված ինը ընկերություններից հինգում, որոնք ներգրավված են մրգի և բանջարեղենի վերամշակման արժեքային շղթայում, մինչև ներդրումային ծրագրի իրականացումը կանանց մասնաբաժինն աշխատակիցների ցանկում եղել է բավականին բարձր (54 %), ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում, ոլորտում ստեղծված 56 նոր աշխատատեղերից 38-ը (68 %-ը) բաժին է ընկել կանանց: Կանանց զբաղվածության բարձր մակարդակ է գրանցվել նաև թռչնաբուծության ոլորտում, որտեղ զբաղվածների կեսը կանայք են: Ձկնաբուծության, կաթի վերամշակման և ոչխարաբուծության ոլորտներում կանանց ներգրավվածությունը համեմատաբար ցածր է, սակայն ներդրումային ծրագրի արդյունքում մի փոքր աճել է: Այսպես՝ կաթի վերամշակման և ոչխարաբուծության ոլորտներում կանանց մասնաբաժինը աճել է 14 %-ից մինչև 24 %, իսկ ձկնաբուծության ոլորտում՝ 21 %-ից մինչև 24 %:



Գծապատկերներ 3.5-3.7-ում ներկայացված են հաճախորդ ընկերություններում աշխատողների թվի կանխատեսումները 2013 – 2018 թթ.-ի համար: Աշխատողների թվի կանխատեսումների համար հիմք են ընդունվել.

- ընկերությունների 2013 – 2018 թթ. գործունեության ընդլայնման հետ կապված ծրագրերն ու կանխատեսումները,
- իրականացված/վելիք ներդրումների ծավալներն ու ժամկետները, հետաձգված ներդրումների առկայությունը,
- շրջանառության ու մթերումների ծավալների կանխատեսումները,
- ընկերություններում ներգրավված աշխատուժի առկա կառուցվածքը և այլն:

Ներդրումային ծրագրերի ազդեցության և հետագա տարիներին հաճախորդ ընկերություններում ստեղծվող աշխատատեղերի վերաբերյալ թվային տվյալներն արտահայտված են ստորև բերված գծապատկերներում:

ՀԳՏՏԶՀ հաճախորդ ընկերություններում աշխատողների վերաբերյալ թվային տվյալների վերլուծության համար ընկերությունները պայմանականորեն խմբավորվել են երեք խմբում՝ ելնելով ազդեցության տարիներին աշխատողների թվի փոփոխության առանձնահատկություններից ու կանխատեսման սցենարից:

Առաջին խմբում ընդգրկված են **Ագրոլոգ** և **Փյունիկ ՏԹՖ** ընկերությունները, որոնց աշխատատեղերի թիվն ազդեցության տարիների ընթացքում աճել, իսկ հետո նվազել է (պայմանավորված գործունեության վատթարացման հետ), ընդ որում՝ **Փյունիկ ՏԹՖ**-ի դեպքում աշխատատեղերի նվազումը գրանցվել է 2013 թ.-ին և ավելի կտրուկ բնույթ է

կրել: **Ագրոլոգ** և **Փյունիկ ՏԹՖ** ընկերությունների համար, հաշվի առնելով ընկերությունների կողմից որդեգրած քաղաքականությունը հետագա տարիների համար, կանխատեսվել է աշխատատեղերի «վերականգնման» սցենար՝ հասցնելով դրանց թիվը բազիսային տարվա ցուցանիշին: Նշենք, որ բազիսային տարում **Ագրոլոգ** ընկերությունում աշխատատեղերի թիվը կազմել է 6, իսկ **Փյունիկ ՏԹՖ**-ում՝ 30:

Գծապատկեր 3.5: Ագրոլոգ և Փյունիկ ՏԹՖ՝ աշխատատեղերի կանխատեսում 2013 – 2018 թթ.-ի համար



	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Ագրոլոգ	11	1	2	4	5	6	6	6
Փյունիկ ՏԹՖ	40	48	16	30	30	30	30	30

Երկրորդ պայմանական խմբում ընդգրկվել են այն ընկերությունները, որոնց աշխատատեղերի փոփոխությունը թե՛ ազդեցության տարիներին և թե՛ հետագա տարիներին (կանխատեսվող) համեմատաբար կայուն է, և կանխատեսումներն էլ պահպանողական են: Այս խմբում ընդգրկված են **365 Գրուպ**, **ՄԻՄ Նատուրալ** և **Մեղրու պահածոների գործարան** ընկերությունները: Այս ընկերություններում ազդեցության տարիների ընթացքում արդեն զգալիորեն աճել է աշխատատեղերի թիվը, ինչը պայմանավորված է եղել ներդրումների ներգրավման արդյունքում ընդհանուր գործունեության ընդլայնմամբ: Ելնելով վերջիններիս գործունեության (շրջանառության, մթերումների ծավալների) ավելի «պահպանողական» կանխատեսումներից, 2013 թ.-ից սկսած կանխատեսվել է աշխատատեղերի թվի «պահպանման» սցենար:

Ինչպես երևում է գծապատկեր 3.6-ից, 2013 թ.-ին, 2012 թ.-ի համեմատ, **ՄԻՄ Նատուրալ** և **Մեղրու պահածոների գործարան** ընկերություններում աշխատատեղերի թվի փոփոխություն չի կանխատեսվել, իսկ **365 Գրուպ** ընկերությունում կանխատեսվել է աշխատատեղի աճ մեկով:

Գծապատկեր 3.6: 365 Գրուպ, ՍԻՍ Նատուրալ և Մեղրու պահածոների գործարան ՝ աշխատատեղերի կանխատեսում 2013 – 2018 թթ.-ի համար



	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
365 Գրուպ	6	13	14	14	14	14	14	14
ՍԻՍ Նատուրալ	87	106	106	108	108	108	108	108
Մեղրու պահածոների գործարան	46	50	50	50	50	50	50	50

Պայմանական երրորդ խմբում ընդգրկված են այն ընկերությունները, որոնց համար կանխատեսվել է աշխատատեղերի ավելացման «լավատեսական» սցենար (**Չիզ Թաուն, Հարպլրոդ, Ակվատեխավտոմատիկա և ԱՐԱԼԵՌ ՏՌՏ**)։ Նշվածներն այն ընկերություններն են, որոնք 2013 թ.-ին դեռ շարունակում են ընդլայնել իրենց գործունեությունը՝ կապված ներդրումային ծրագրի իրականացման հետ, հետևաբար և նախատեսում են 2013 թ.-ին ավելացնել աշխատատեղերը։

ԱՐԱԼԵՌ ՏՌՏ ընկերությունը, ինչպես արդեն նշվել է, դեռևս ներդրումներ է իրականացնում և մեծացնում է անասնագլխաքանակը, հետևաբար տարեցտարի աճելու է ընկերության աշխատողների թիվը, մինչև անասնագլխաքանակի կայունանալը։

Գծապատկեր 3.7: Չիզ Թաուն, Հարպրոդ, Ակվատեխավտոմատիկա և ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ՝ աշխատատեղերի կանխատեսում 2013 – 2018 թթ.-ի համար



	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Չիզ Թաուն	4	11	16	16	16	16	16	16
Հարպրոդ	83	71	86	86	86	86	86	86
Ակվատեխավտոմատիկա	31	38	48	48	48	48	48	48
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	7	10	12	14	17	17	17	17

Չիզ Թաուն ընկերությունը պլանավորածից ավելի երկար ժամանակ է հատկացրել ներդրումային ծրագրով նախատեսված աշխատանքներին, հետևաբար գործունեության ընդլայնմամբ նախատեսված ցուցանիշներին դեռ չի հասել 2012 թ.-ի դրությամբ: Այդ իսկ պատճառով, 2013 թ.-ին կանխատեսվել է գործունեության ընդլայնում, որի արդյունքում բնականաբար, աճելու է նաև աշխատատեղերի թիվը:

2013 թ.-ին գործունեության (շրջանառության, մթերումների) և դրա հետ կապված աշխատատեղերի թվի աճ են կանխատեսել նաև **Հարպրոդ** և **Ակվատեխավտոմատիկա** ընկերությունները:

Համաձայն ներկայացված կանխատեսումների՝ բազիսային տարվա համեմատ **2018 թ.-ի դրությամբ հաճախորդ ընկերություններում կստեղծվի ընդհանուր առմամբ 125 հավելյալ աշխատատեղ**, որի մեջ մեծ կլինեն **Հարպրոդ** ու **Մեղրու պահածոների գործարան**՝(յուրաքանչյուրը 19 %) ՍԻՍ Նատուրալ (17 %) և **Ակվատեխավտոմատիկան** (16%) ընկերությունների մասնաբաժինները:

Աղյուսակ 3.21: Հաճախորդ ընկերություններում հավելյալ աշխատատեղերի կանխատեսումը, բազիսային տարվա համեմատ

Ընկերություններ	Աշխատատեղերի թիվը բազիսային տարում	Ազդեցության տարիներ, աշխատատեղերի աճ/նվազում բազիսային տարվա համեմատ	
		2012թ.	2018թ.
Ակվատեխավտոմատիկա	**28**	*10*	20
Մեղրու պահածոների գործարան	**26**	*24*	24
Ագրոլոգ	**6**	*-5*	0
365 Գրուպ	**4**	*9*	10
Չիզ Թաուն	**0**	*11*	16
Հարպրոդ	**62**	*9*	24
Փյունիկ ՏԹՖ	**30**	*18*	0
ՄԻՍ Նատուրալ	87	*19*	21
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	**7**	*3*	10
Ընդամենը աշխատողներ	**250**	**98**	**125**

3.3.5.2 ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը հաճախորդ ընկերությունների կողմից վճարվող աշխատավարձերի վրա

Ներդրումներ իրականացրած հաճախորդ ընկերություններում, աշխատատեղերի ավելացման հետ մեկտեղ, ավելացել է տարեկան աշխատավարձային ֆոնդը, որը **2012 թ.-ին կազմել է 195,7 մլն դրամ՝ 51 %-ով ավելի բազիսային տարվա հետ համեմատած**:

Սույն բաժնում աշխատավարձային ֆոնդը և աշխատավարձերը արտացոլում են աշխատակիցներին վճարվող առձեռն գումարը՝ առանց հարկերի, տուրքերի և այլ պահումների:

Ստորև բերված Աղյուսակ 3.22-ում ներկայացված է ընկերություններում ներգրավված բոլոր աշխատողներին վճարված աշխատավարձային ֆոնդի աճը ազդեցության տարիներին՝ ի համեմատ բազիսային տարվա, իսկ Աղյուսակ 3.23-ում՝ աշխատավարձային տարեկան ֆոնդն ըստ տարիների ու ընկերությունների:

Աղյուսակ 3.22: Հաճախորդ ընկերությունների աշխատավարձային ֆոնդի (առանց հարկերի) աճը /նվազումը ազդեցության տարիներին բազիսային տարվա համեմատ

Ընկերություններ	Աշխատա-վարձային ֆոնդը բազիսային տարում (հազ. դրամ)	Ազդեցության տարիներ, աշխատավարձային ֆոնդի աճ/նվազում բազիսային տարվա համեմատ			
		2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
Ակվատեխավտոմատիկա	18,226	-1,414	2,521	13,601	31,107
Մեղրու պահածոների գործարան	11,084	4,593	10,057	10,042	17,884
Ագրոլոգ	1,500		1,620	-600	-300
365 Գրուպ	1,142		2,190	5,352	8,928
Չիզ Թաուն	0		1,878	5,912	12,640
Հարպրոդ	19,865		5,786	3,603	10,182
Փյունիկ ՏԹՖ	17,400		1,236	2,286	-8,472
ՄԻՄ Նատուրալ	57,981			22,676	28,384
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	2,791			2,807	3,514
Ընդամենը	**129,990**	**3,179**	**25,288**	**65,679**	**103,867**

Աղյուսակ 3.23: Հաճախորդ ընկերությունների կողմից վճարված տարեկան աշխատավարձերը **(առանց հարկերի)**

Ընկերություններ	*Հազ. դրամ*				
	2009 թ.	**2010 թ.**	**2011 թ.**	**2012 թ.**	**2013 թ.**[12]
Ակվատեխավտոմատիկա	18,226	16,812	20,747	31,827	49,333
Մեղրու պահածոների գործարան	11,084	15,677	21,141	21,126	28,968
Ագրոլոգ		1,500	3,120	900	1,200
365 Գրուպ		1,142	3,333	6,495	10,070
Չիզ Թաուն		0	1,878	5,912	12,640
Հարպրոդ		19,865	25,651	23,468	30,047
Փյունիկ ՏԹՖ		17,400	18,636	19,686	8,928
ՍԻՍ Նատուրալ			57,981	80,657	86,365
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ			2,791	5,599	6,305
Ընդամենը	**29,310**	**72,396**	**155,278**	**195,669**	**233,857**

Բացառությամբ երկու ընկերությունների՝ **Ագրոլոգի** և **Փյունիկ ՏԹՖ-ի**, մնացած յոթ ընկերություններում դիտարկվել է աշխատավարձային ֆոնդի դրական աճ ազդեցության տարիների ընթացքում՝ ի համեմատ բազիսային տարվա: 2012 թ.-ին աշխատավարձային ֆոնդի կտրուկ աճ են գրանցել **365 Գրուպը** (շուրջ 6 անգամ), **Ակվատեխավտոմատիկա** և **Մեղրու պահածոների գործարան** ընկերությունները (շուրջ 2 անգամ):

Ծրագրի ազդեցության տարիներին հաճախորդ ընկերությունների կողմից աշխատավարձային ֆոնդի աճը պայմանավորված է ինչպես աշխատատեղերի ավելացմամբ, այնպես էլ՝ միջին աշխատավարձերի աճով:

Ստորև բերված աղյուսակում արտահայտված են լրիվ դրույքով ներգրավված աշխատողների ամսական միջին աշխատավարձերն ու դրանց փոփոխություններն ըստ ընկերությունների: Բացառությամբ երկու ընկերությունների՝ **Ագրոլոգի** և **Փյունիկ ՏԹՖ-ի**, մնացած յոթ ընկերությունները ավելացրել են աշխատակիցների վարձատրությունը ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում: **2012 թ.-ի** դրությամբ **միջին աշխատավարձի կտրուկ աճ է գրանցել Ակվատեխավտոմատիկա** (50 % աճ բազիսային տարվա համեմատ), **365 Գրուպ** (44 % աճ բազիսային տարվա համեմատ) և **ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ընկերությունները** (40 % աճ բազիսային տարվա համեմատ):

[12] Կանխատեսման համար հիմք են ընդունվել առաջին կիսամյակի ցուցանիշները և աշխատողների թիվը

Աղյուսակ 3.24: Լրիվ դրույքով աշխատողների միջին ամսական աշխատավարձերը

Ընկերություններ	Միջին աշխատա-վարձը բազիսային տարում (դրամ)	Միջին աշխատավարձը ազդեցության տարիներին (դրամ)				Միջինացված աշխատավարձ ազդեցության բոլոր տարիների համար (դրամ)
		2010 թ.	2011 թ.	2012 թ.	2013 թ.	
Ակվատեխավտոմատիկա	54,244	52,121	60,502	81,263	85,647	**69,883**
Աճ/նվազում բազիսային տարվա համեմատ, %		-4%	12%	50%	58%	29%
Մեղրու պահածոների գործարան	45,400	51,850	52,500	53,300	54,366	**53,004**
Աճ/ նվազում բազիսային տարվա համեմատ, %		14%	16%	17%	20%	17%
Ագրոլոգ	50,000		70,000	75,000	50,000	**65,000**
Աճ/ նվազում բազիսային տարվա համեմատ, %			40%	50%	0%	30%
365 Գրուպ	39,765		54,830	57,197	63,531	**58,519**
Աճ/ նվազում բազիսային տարվա համեմատ,%			38%	44%	60%	47%
Չիզ Թաուն	0		39,127	44,787	65,835	**49,916**
Աճ/ նվազում բազիսային տարվա համեմատ, %			-	-	-	-
Հարպրոդ	50,100		50,050	51,150	56,250	**52,483**
Աճ/ նվազում բազիսային տարվա համեմատ, %			0%	2%	12%	5%
Փյունիկ ՏԹՖ	48,333		45,000	42,603	46,500	**44,701**
Աճ/ նվազում բազիսային տարվա համեմատ, %			-7%	-12%	-4%	-8%
ՍԻՍ Նատուրալ	71,768			93,645	93,645	**93,645**
Աճ/ նվազում բազիսային տարվա համեմատ, %				30%	30%	30%
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	33,229			46,655	65,678	**56,166**
Աճ/ նվազում բազիսային տարվա համեմատ, %				40%	98%	69%
Միջին աշխատավարձը բոլոր ՀԸ-ների համար	**43,649**	**51,986**	**53,144**	**60,622**	**64,606**	**62,614**
Աճ/ նվազում բազիսային տարվա համեմատ, %		19%	22%	39%	48%	43%

Մինչև ներդրումների իրականացումը հաճախորդ ընկերությունների կողմից վճարված **միջին ամսական աշխատավարձը** մեկ աշխատողի համար կազմել է **43,649 դրամ**, ամենացածր աշխատավարձը գրանցվել է ոչխարաբուծության ոլորտում (**ԱՐԱԼԵՌ ՏՈՏ**՝ 33,229 դրամ), իսկ ամենաբարձրը՝ մրգի և բանջարեղենի վերամշակման ոլորտում (**ՍԻՍ Նատուրալ**՝ 71,768 դրամ): **Ներդրումների իրականացման արդյունքում**, հաճախորդ ընկերությունների կողմից վճարված միջին ամսական աշխատավարձը բազիսային

տարվա համեմատ **աճել է 39 %-ով** և կազմել **60,622 դրամ** (2012 թ.-ին)։ 2012 թ.-ին ամենաբարձր միջին աշխատավարձը գրանցվել է ձկնաբուծության ոլորտում (**Ակվատեխավտոմատիկա**՝ 81,263 դրամ), իսկ ամենացածրը՝ թռչնաբուծության ոլորտում (**Փյունիկ ՏԹՖ**՝ 42,603 դրամ)։

Ինչպես արդեն նշվել է, սեզոնային աշխատողներ ներգրավում են ՀԳՏՏՋՀ հաճախորդ ընկերություններից չորսը՝ **Ագրոլոգ, Հարպրոդ, ՍԻՍ Նատուրալ** և **Մեղրու պահածոների գործարան** ընկերությունները։ Վերջիններիս կողմից ներգրավված աշխատողներին վճարված զուտ աշխատավարձերի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացված է Աղյուսակ 3.25-ում։

Աղյուսակ 3.25։ Սեզոնային աշխատողներին վճարված տարեկան և օրական զուտ աշխատավարձերը մեկ անձի հաշվով

Ընկերություններ	Բազիսային տարի	Ազդեցության տարիներ				Աճ/անկում բազիսային տարվա համեմատ, %
		2010 թ.	2011 թ.	2012 թ.	Միջին (2010-2012թթ.)	
Մեղրու պահածոների գործարան						
1 մարդու տարեկան զուտ աշխատավարձը, դրամ	265,464	312,889	288,553	173,430	258,291	-3%
Մեկ աշխատողի աշխատած օրերի թիվը, օր	81	94	118	54	89	9%
Օրական միջին վարձատրությունը, դրամ	3,293	3,338	2,441	3,213	2,997	-9%
Ագրոլոգ						
1 մարդու տարեկան զուտ աշխատավարձը	75,000		75,000	0	75,000	0%
Մեկ աշխատողի աշխատած օրերի թիվը, օր	30		30	0	30	0%
Օրական միջին վարձատրությունը	2,500		2,500	0	2,500	0%
Հարպրոդ						
1 մարդու տարեկան զուտ աշխատավարձը	238,477		264,506	285,869	275,188	15%
Մեկ աշխատողի աշխատած օրերի թիվը, օր	125		125	125	125	0%
Օրական միջին վարձատրությունը	1,908		2,116	2,287	2,202	15%
ՍԻՍ Նատուրալ						
1 մարդու տարեկան զուտ աշխատավարձը	541,509			522,813	522,813	-3%
Մեկ աշխատողի աշխատած օրերի թիվը, օր	234			234	234	0%
Օրական միջին վարձատրությունը	2,314			2,234	2,234	-3%

Մեղրու պահածոների գործարան ընկերությունը սեզոնային աշխատողներ է ներգրավել, ինչպես մինչև ներդրումները (2009 թ.), այնպես էլ ներդրումային ծրագրից հետո (2010-2012 թթ.): Ինչպես երևում է աղյուսակից, 2010 թ.-ին աճել է ինչպես սեզոնային աշխատակիցների աշխատած օրերի քանակը, այնպես էլ օրական և տարեկան վարձատրությունը: 2011 թ.-ից ընկերությունը փոփոխություն է կատարել իր կադրային քաղաքականության մեջ՝ կրճատելով սեզոնային աշխատողների թիվը և զբաղվածությունը, միաժամանակ ավելացնելով հաստիքային աշխատակիցների թիվը: Ինչպես երևում է աղյուսակից, **Ագրոլոգ ընկերությունը** սեզոնային աշխատող է ներգրավել միայն 2010 – 2011 թթ., քանի որ 2012 թ.-ից նրա գործունեությունը վատթարացել է, և նա կրճատել է նաև հիմնական աշխատողների թիվը: Սեզոնային աշխատողների աշխատած օրերի քանակը և վարձատրությունը փոփոխության չի ենթարկվել ներդրումների իրականացման արդյունքում:

Հարպրոդ ընկերությունում ներգրավված սեզոնային աշխատողները տարվա ընթացքում աշխատել են միջինը 125 օր և յուրաքանչյուրի տարեկան միջին վարձատրությունը 2011-2012 թթ.-ին կազմել է 275,188 դրամ՝ 15 %-ով ավելի բազիսային տարվա համեմատ:

ՍԻՍ Նատուրալ ընկերության սեզոնային աշխատողները տարվա ընթացքում աշխատել են միջինը 234 օր ինչպես բազիսային, այնպես էլ ազդեցության տարվա ընթացքում: Տարեկան վարձատրությունն ազդեցության առաջին տարվա (2012 թ.) ընթացքում նվազել է 3 %-ով և կազմել 522,813 դրամ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է հաճախորդ ընկերությունների կողմից վճարվելիք աշխատավարձային ֆոնդի (առանց հարկերի) վերաբերյալ կանխատեսումները 2014-2018թթ.-ի համար: Կանխատեսման համար հիմք է ընդունվել2014-2018թթ.-ի համար կանխատեսված աշխատողների թիվը և մեկ աշխատողի հաշվով միջին տարեկան վարձատրությունը: Հաշվարկները կատարվել են այնպես, որ աշխատավարձային ֆոնդի տարեկան աճը չգերազանցի 2014 – 2018 թթ.-ի համար ընկերությունների զուտ շրջանառության տարեկան աճի ցուցանիշը: Այսպես՝ 2014 – 2018 թթ.-ի համար աշխատավարձային ֆոնդի միջին տարեկան աճը կազմել է 5.2 % բոլոր ՀԸ-ների դեպքում՝ բացառությամբ **Ագրոլոգ** ՓԲԸ-ի (այս ընկերության աշխատավարձային ֆոնդի համար կանխատեսվել է տարեկան 2 % աճ):

Աղյուսակ 3.26: Հաճախորդ ընկերությունների կողմից վճարվելիք աշխատավարձային ֆոնդը (առանց հարկերի) 2014 – 2018 թթ.-ի համար

Ընկերություն	*Աշխատավարձային ֆոնդ, հազ. դրամ*				
	2014 թ.	**2015 թ.**	**2016 թ.**	**2017 թ.**	**2018 թ.**

Ակվատեխավտոմատիկա	90,101	94,786	99,715	104,900	110,355
Մեղրու պահածոների գործարան	57,193	60,167	63,296	66,587	70,050
Ագրոլոգ	51,000	52,020	53,060	54,122	55,204
365 Գրուպ	66,835	70,310	73,966	77,813	81,859
Չիզ Թաուն	69,258	72,860	76,649	80,634	84,827
Հարպրոդ	59,175	62,252	65,489	68,895	72,477
Փյունիկ ՏԹՖ	48,918	51,462	54,138	56,953	59,914
ՍԻՍ Նատուրալ	98,515	103,637	109,027	114,696	120,660
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	69,093	72,686	76,465	80,441	84,624
Ընդամենը	**610,087**	**640,180**	**671,805**	**705,040**	**739,971**

3.4 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը ֆերմերային տնտեսության մակարդակում

3.4.1 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ֆերմերների թվի վրա

2012 թվականին ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ընկերությունները մթերումներ են իրականացրել շուրջ **740 ֆերմերային տնտեսություններից**, որոնց **39 %-ը սկսել է մատակարարել ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում**: Հաճախորդ ընկերություններին մատակարարում իրականացնող ֆերմերային տնտեսությունների գերակշիռ մասը՝ 91 %-ը, ներգրավված է մրգի, խաղողի և բանջարեղենի արտադրության արժեքային շղթայում, 8 %-ը զբաղված է կաթի և անասնակերի արտադրության, իսկ 1 %-ը ձկնաբուծական գործունեության մեջ:

Գծապատկեր 3.8: ՀԸ-ներին մատակարարում իրականացնող ֆերմերների մասնաբաժինն ըստ արժեքային շղթայի



Ֆերմերային տնտեսությունների 39 %-ը (կամ շուրջ 290 ՖՏ) սկսել է մատակարարումներ իրականացնել ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ընկերություններին ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում: Ըստ արժեքային շղթաների՝ նոր մատակարար ՖՏ-ների 86%-ը ներգրավված է մրգի, խաղողի և բանջարեղենի արտադրության մեջ, 12 %-ը՝ կաթի և անասնակերի արտադրության, իսկ 2 %-ը՝ ձկնաբուծության մեջ:

Գծապատկեր 3.9: Նոր մատակարար ՖՏ-ներն ըստ արժեքային շղթայի



3.4.2 Հաճախորդ ընկերությունների կողմից գյուղատնտեսական մթերքի մթերման կազմակերպումը

Հաճախորդ ընկերությունների կողմից մթերման կազմակերպումն իրականացվում է տարբեր մոտեցումներով՝ կախված մթերման տեսականուց, մթերման աշխարհագրությունից, ընկերության մթերման քաղաքականությունից:

Միրգ և բանջարեղեն վերամշակող հաճախորդ ընկերությունները կիրառում են մթերման հետևյալ հիմնական մոտեցումները.

1. գյուղատնտեսական մթերքի մթերման գործընթացից առաջ (սովորաբար բերքահավաքից մոտ 10-15 օր առաջ) ընկերությունը հայտարարում է մթերման գործընթացի վերաբերյալ՝ տեղեկացնելով, թե ինչ տեսակի մթերք և ինչ գնի սահմաններում է մթերվելու: Տեղեկատվությունը տարածվում է ֆերմերային տնտեսությունների շրջանում տարբեր եղանակներով (օրինակ՝ հայտարարություն է տրվում հեռուստատեսությամբ, հայտարարությունը փակցվում է գործարանի մթերման կետում, տեղեկատվությունը տարածվում է այն համայնքներում, որտեղից ընկերությունը մթերում է կատարում): ՖՏ-ները տեղափոխում են գյուղմթերքը ընկերության գործարան/մթերման կետ և հանձնում՝ ընկերության կողմից սահմանված պայմաններին և գնին համաձայն:
2. ընկերության աշխատակիցն այցելում է ֆերմերային տնտեսություններ, նայում է այգին կամ բերքը, ֆերմերի հետ պայմանավորվում է տեսականու և սորտերի ձեռքբերման վերաբերյալ, տեղում պայմանավորվում են գնի վերաբերյալ, քննարկում են մատակարարման և վճարման տարբերակները: Նախնական պայմանավորվածությունը ձեռք է բերվում բերքահավաքից մոտ 10-15 օր առաջ,

երբ արդեն հայտնի է, թե ինչ որակի է լինելու մթերվող միրգը/բանջարեղենը, և մոտավորապես որքան կլինի մթերման ծավալը/քանակը:

3. ընկերությունը գյուղատնտեսական մթերքի մատակարարման վերաբերյալ պայմանավորվածությունը ձեռք է բերում նախօրոք, օրինակ՝ բանջարեղենի դեպքում՝ ցանքսից առաջ: Պայմանագիր է կնքվում կամ բանավոր պայմանավորվածություն է ձեռք բերվում մատակարարման ծավալների և գների վերաբերյալ: Նշված մոտեցմամբ ընկերությունները սովորաբար համագործակցում են խոշոր ֆերմերային տնտեսությունների հետ, որոնք մեծ ծավալով մատակարարումներ են իրականացնում:
4. վայրի հատապտուղների, խոտաբույսերի, ինչպես նաև փոքրածավալ մթերման դեպքում ընկերությունները համագործակցում են միջնորդների հետ, որոնք ձեռք են բերում նշված տեսականին ֆերմերային տնտեսություններից կամ անհատներից (վայրի հատապտուղների և խոտաբույսերի դեպքում), կոնսոլիդացնում և հանձնում ընկերությանը:

Մրգի և բանջարեղենի մթերման ընթացքում գործում են մթերքի «գնման վայրի» և տեղափոխման հետևյալ մոտեցումները.

- ֆերմերային տնտեսությունը վաճառում է արդեն հավաքված միրգը/բանջարեղենը «ֆերմայից», ընկերությունն իր տրանսպորտային միջոցով մթերքը հասցնում է իր տարածք,
- ֆերմերային տնտեսությունը վաճառում է արդեն հավաքված միրգը/բանջարեղենը անմիջապես ընկերությանը՝ կազմակերպելով տեղափոխումը դեպի ընկերության մթերման վայր/կետ,
- ֆերմերային տնտեսությունը վաճառում է ամբողջովին կամ մասամբ այգու/դաշտի բերքը «ծառի վրայից/դաշտից», այս դեպքում բերքահավաքի կազմակերպումը և բերքի տեղափոխումն իրականացնում է ընկերությունը:

Համախորդ ընկերությունները միրգն ու բանջարեղենը մթերում են **շուկայական գնով**, որի ձևավորման վրա ազդում են մի շարք գործոններ (տվյալ տարվա ընթացքում բերքի ծավալները, տվյալ ֆերմերային տնտեսության կողմից առաջարկվող բերքի ծավալները և որակը, դաշտի/այգու տեղադիրքը՝ հեռավորությունը հիմնական շուկաներից և այլն): Ինչպես համախորդ ընկերությունների, այնպես էլ ՖՏ-ների ներկայացուցիչները նշում են, որ մինչև բերքահավաքը չի սկսվում, գինը հայտնի չի լինում: Մթերվող մրգի/բանջարեղենի շուկայական գնի անորոշությունը մի շարք բարդություններ է ստեղծում ինչպես արտադրողների, այնպես էլ մթերողների համար: ՀՀ մրգի և բանջարեղենի մթերման ոլորտում գրեթե չի կիրառվում մթերման ծավալների և գնի վերաբերյալ նախնական պայմանավորվածության մոտեցումը, ինչը բացասաբար է

ազդում թե՛ ֆերմերային տնտեսությունների, և թե՛ արժեշղթայի մնացած մասնակիցների գործունեության արդյունավետության վրա:

Կաթի մթերում իրականացնում է միայն մեկ հաճախորդ կազմակերպություն՝ **Չիզ Թաուն** ՓԲԸ-ն: Ընկերությունը կաթի մթերման գործընթացը կազմակերպում է միջնորդների միջոցով, որոնք ունեն կաթի հավաքման համար անհրաժեշտ միջոցներ, մասնավորապես՝ կաթի հավաքման կետ՝ զինված համապատասխան սարքավորումներով: Միջնորդները կաթը մթերում են ՖՏ-ներից, ստուգում կաթի որակը (թթվայնություն, յուղայնություն և այլն), պահպանում՝ ապահովելով անհրաժեշտ ջերմային ռեժիմը: Ընկերությունն իրականացնում է կաթի տեղափոխումը կաթի հավաքման կետերից իր տրանսպորտային միջոցներով: Վճարումները ՖՏ-ներին իրականացվում են միջնորդների միջոցով:

Կաթի մթերման շուկայական գնի վրա ազդող առաջնային գործոնն է կաթի առաջարկի ու պահանջարկի հարաբերակցությունը ներքին շուկայում, ընդ որում՝ կաթի առաջարկը ներքին շուկայում կրում է սեզոնային բնույթ, իսկ պահանջարկը համեմատաբար կայուն է: Կաթի առաջարկի սեզոնային բնույթը պայմանավորված է ֆերմերային տնտեսությունների կողմից կիրառվող կաթի արտադրության մոտեցմամբ, որը հիմնված է կերային բազայի մատչելիության գործոնի վրա: Մասնավորապես՝ գարնան և ամռան ամիսներին, երբ հասանելի է մատչելի կերային բազան արոտների տեսքով, կաթի առաջարկը բարձր է, իսկ աշնան և ձմռան սեզոնին, երբ կիրառվում է մսուրային պահվածքը, կաթի առաջարկն իջնում է: Կաթի առաջարկի սեզոնային բնույթից են բխում կաթի գնի փոփոխությունները տարվա կտրվածքով: Կաթի գնի վրա ազդող գործոնների շարքում են նաև գյուղական համայնքի հեռավորությունը մթերող ընկերությունից և կաթի որակը (հիմնականում յուղայնության աստիճանը): Կաթի շուկայական բազիսային գինը սովորաբար սահմանվում է կաթ մթերող խոշոր ընկերությունների գնային քաղաքականության ազդեցությամբ, իսկ միջին և փոքր վերամշակողներն առաջարկում են «մրցունակ» գին՝ առաջնորդվելով խոշոր ընկերությունների կողմից առաջարկվող գնային սանդղակից:

Անասնակերի՝ խոտի, գարու և այլ կերերի մթերում իրականացնում է ևս մեկ ընկերություն՝ ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ՓԲԸ-ն: Ընկերությունն անասնակերի պահանջի շուրջ 70 %-ն ապահովում է իր տնտեսության ռեսուրսների շնորհիվ, իսկ մնացած 30 %-ը ձեռք է բերում ՖՏ-ներից: Ընկերությունը կիրառում է անասնակերի մթերման երկու հիմնական եղանակ.

1. ընկերությունն ունի որոշ գյուղատնտեսական տեխնիկա և առաջարկում է փոխշահավետ համագործակցության պայմաններ ՖՏ-ներին: Մասնավորապես՝ ընկերությունն առաջարկում է գյուղատնտեսական մեխանիզատորական

ծառայություններ ֆերմերներին բերքահավաքի ընթացքում, ծառայությունների արժեքի դիմաց ՖՏ-ները վաճառում են իրենց հողակտորից ստացված անասնակերը՝ խոտը, գարին և այլն, շուկայական գներով:

2. Ընկերությունը պայմանավորվածություն է ձեռք բերում ՖՏ-ների հետ բերքահավաքից 15 - 20 օր առաջ անհրաժեշտ անասնակերի տեսակի, քանակի, տեղափոխման և գնի վերաբերյալ: Այս դեպքում մատակարարված անասնակերի դիմաց ընկերությունը վճարում է կանխիկ դրամով:

Ձկան մթերում իրականացնում է **Ակվատեխավտոմատիկա ՓԲԸ-ն**՝ համագործակցելով անմիջապես ձկնաբուծական ֆերմերային տնտեսությունների հետ: Ձկան մատակարարման վերաբերյալ պայմանավորվածությունը ձկնաբուծարանների հետ սովորաբար ձեռք է բերվում երկու ամիս առաջ, հիմնականում պայմանավորվում են ձկան տեսականու ու քանակների վերաբերյալ: Ձկան տեղափոխումն իրականացվում է ընկերության տրանսպորտային միջոցներով:

ՀԳՏՏՁՀ-ի հաճախորդ ընկերություններին գյուղատնտեսական մթերք մատակարարող **ՖՏ-ների գերակշիռ մասը՝ 74 %-ը, գյուղմթերք է մատակարարում միայն ՀԳՏՏՁՀ-ի հաճախորդ ընկերություններին,** մնացած 26 %-ը համագործակցում է նաև այլ մթերող ընկերությունների հետ, ինչպես նաև վաճառում է արտադրանքը մանրամեծածախ ցանցին և/կամ անմիջապես սպառողներին/բնակչությանը:

Հարցմանը մասնակցած ֆերմերային տնտեսությունների գերակշիռ մասը՝ **79 %-ը, ուղղակի մատակարարում է իրականացնում հաճախորդ ընկերություններին** և միայն 21 %-ն է մատակարարում գյուղմթերքը միջնորդների միջոցով: Ըստ ոլորտների՝ պատկերը մի փոքր տարբերվում է, այսպես՝ եթե ձկնաբուծության ոլորտում ՖՏ-ների 100 %-ն է իրականացնում ձկնամթերքի ուղղակի վաճառք, ապա բանջարեղեն և միրգ մատակարարողների՝ 85 %-ը, իսկ կաթի և անասնակերի մատակարարների՝ միայն 31 %-ը:

Կաթի մատակարարման դեպքում միջնորդների առկայությունը տրամաբանական և պարտադիր պայման է, քանի որ սովորաբար կաթ արտադրողները ՀՀ-ում փոքր և միջին չափի ՖՏ-ներ են և չունեն կաթի բավարար քանակ՝ կաթի պահպանումն ու տեղափոխումը պատշաճ կերպով կազմակերպելու նպատակով: Սննդի անվտանգության և կորուստների նվազեցման տեսանկյունից կաթի հավաքման ենթակառուցվածքը (համապատասխան սառեցման սարքավորումներով հագեցած կաթի հավաքման կետերը և կաթի տեղափոխման տրանսպորտային միջոցները) պարտադիր նախապայման են կաթի շուկայի կայացման համար: Մյուս կողմից՝ ձկնաբուծության

ոլորտում ներկայացված են համեմատաբար խոշոր ձկնաբուծական տնտեսություններ, որոնք կարող են ապահովել համապատասխան ռեսուրսներ՝ ձկան պահպանումն ու տեղափոխումը կազմակերպելու համար: Մրգի և բանջարեղենի պահպանման և տեղափոխման պահանջներն ավելի պարզ են՝ ի համեմատ կաթի և ձկան, որոնք պահանջում են հատուկ ջերմային ռեժիմ: Միրգն ու բանջարեղենը սովորաբար տեսակավորվում են անմիջապես բերքահավաքից հետո և տեղափոխվում մթերման կետ/գործարան կամ արտադրողի կամ մթերողի կողմից բեռնատար/կիսաբեռնատար տրանսպորտային միջոցներով:

Աղյուսակ 3.27: Գյուղատնտեսական մթերքի մատակարարման ձևերն ըստ ոլորտների

Արժեքային շղթա	Անմիջապես հաճախորդ ընկերություններին մատակարարում իրականացնող ՖՏ, %	Միջնորդների միջոցով հաճախորդ ընկերություններին մատակարարում իրականացնող ՖՏ, %
Ձկնաբուծություն	100 %	0 %
Բանջարեղենի և մրգի արտադրություն	85 %	15 %
Կաթի, անասնակերի արտադրություն	31 %	69 %
Ընդամենը	**79 %**	**21 %**

Հարցմանը մասնակցած ֆերմերային տնտեսությունների **միայն 28 %-ն** ունի **մատակարարման պայմանագրեր** հաճախորդ ընկերությունների հետ: Ընդ որում՝ պայմանագրային փոխհարաբերությունների տեսանկյունից համեմատաբար բարձր ցուցանիշ է գրանցվել մրգի և բանջարեղենի արտադրության և վերամշակման արժեքային շղթայում և ձկնաբուծության ոլորտում, որտեղ համապատասխանաբար ՖՏ-ների 31 %-ը և 50 %-ն ունեն պայմանագրեր:

Մրգի և բանջարեղենի մատակարարման պայմանագրերում հիմնականում նշվում են ինչպես մթերման ծավալները, այնպես էլ՝ մեկ միավորի արժեքը:

*«Հա՛, գինը պարտադիր նշվում է, 110 դրամ էր, այս տարի 120 դրամ է նշված՝ նվազագույնը: Թե առավելագույնն ինչքան կսահմանվի, չգիտեմ, բայց նվազագույն գինը պարտադիր նշվում է»: «Այո՛, անպայման տոննաժը նշվում է»: (**365 զրույց**-ին մատակարարում իրականացնող ֆերմերներ):*

Անասնակերի և կաթի մատակարարումը հիմնականում իրականացվում է առանց պայմանագրային փոխհարաբերությունների. հարցված ֆերմերային տնտեսություններից ոչ մեկը չուներ պայմանագիր մթերողների հետ:

Աղյուսակ 3.28: Գյուղատնտեսական մթերքի մատակարարման պայմանագրերի առկայությունն ըստ արժեքային շղթաների

Արժեքային շղթա	Պայմանագրային սկզբունքով աշխատող ՖՏ-ների ների մասնաբաժինը, %	Որից Պայմանագրում ֆիքսվում է մատակարարվող մթերքի գինը, %	Պայմանագրում ֆիքսվում է մատակարարվող մթերքի ծավալը, %
Ձկնաբուծություն	50 %	50 %	100 %
Բանջարեղենի և մրգի արտադրություն	31 %	89 %	94 %
Կաթի, անասնակերի արտադրություն	0 %	0 %	0 %
Ընդամենը բոլոր ՖՏ-ների համար	**28 %**	**88 %**	**95 %**

Պայմանագիր չունեցող ՖՏ-ները համագործակցում են մթերող կազմակերպությունների հետ բանավոր պայմանավորվածության հիման վրա: Պայմանագրային փոխհարաբերությունները կարևորվում են ՖՏ-ների կողմից, քանի որ պայմանագիրն ընկալվում է որպես երաշխիք՝ արտադրված գյուղմթերքը սահմանված ծավալով և արժեքով իրացնելու համար:

*«Լավ կլիներ, որ լիներ մթերող, որի հետ պայմանագիր կնքեինք՝ ֆիքսելով և՛ գինը, և՛ ծավալը, որ մատակարարման խնդիրներ չունենայինք և «ծիրանի տարի լինել-չլինելուց» անկախ կարողանայինք նորմալ գնով վաճառել, այլ ոչ թե մթերողը գինը թելադրի, թե այս տարի ծիրանը շատ ա, էժան ենք մթերում...»: «Շատ ու քիչը կապ չունի, մի տարի շատ է լինում, մի տարի՝ քիչ, գինն էլ հետը բարձրացնում-իջեցնում են, ու դրանից մենք ենք տուժում: Թող ֆիքսված գին լինի» /**Միս նատուրալ** ընկերությանը մատակարարում իրականացնող ֆերմերներ/:*

*«Չի եղել տենց բան, բայց մենք միշտ տենց մարդու սպասել ենք, որ մենք էլ մեր պայմանները դնենք» /**Չիզ Թաուն** ընկերությանը մատակարարում իրականացնող ֆերմեր/:*

Որոշ ՖՏ-ներ նշել են, որ պայմանագրային փոխհարաբերությունների անհրաժեշտություն չկա, քանի որ իրենք համոզված են, որ կիրացնեն արտադրանքը:

«Պայմանագրի կարիք էլ չկա. եթե իրենք էլ չլինեն, մի ուրիշը կգա ու կտանի» /ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ընրկերությանը մատակարարում իրականացնող ֆերմեր/:

Պայմանագրային փոխհարաբերությունների առկայության ցածր մակարդակը, գյուղմթերքի գների անկայունությունը բացասաբար են ազդում թե՛ հաճախորդ ընկերությունների, թե՛ ֆերմերային տնտեսությունների գործունեության արդյունավետության վրա՝ սահմանափակելով շուկայի մասնակիցների պլանավորման և զարգացման հնարավորությունները: Բնական աղետների՝ կարկտահարության, ցրտահարության, երաշտի և այլնի կանխարգելման համակարգի թերի

զարգացվածությունը, մինչև ցանքսի սեզոնը ՖՏ-ների հետ անհրաժեշտ գյուղմթերքի տեսականու և ծավալի վերաբերյալ պայմանավորվածության բացակայությունն անկանխատեսելի են դարձնում գյուղմթերքի արտադրության ծավալները յուրաքանչյուր սեզոնի ընթացքում, ինչը բերում է շուկայական գների էական տատանումներին: Միևնույն ժամանակ ապահովագրության բացակայությունը բարձրացնում է գյուղմթերքի արտադրության ոլորտի ռիսկայնությունը և սահմանափակում շուկայի մասնակիցների հնարավորությունները ներդնելու շուկայի կանոնակարգմանը /կայունությանն ուղղված մեխանիզմներ:

ՀԳՏՏՋՀ-ի հաճախորդ ընկերություններին գյուղմթերք մատակարարող **ՖՏ-ների միայն 42 %-ն** է նշել, որ **ունի մշտական գնորդ** իր արտադրանքի համար, ինչը ևս մեկ անգամ փաստում է ՀՀ-ում գյուղմթերքի շուկայի անկայունության մասին: Ընդ որում՝ մրգի և բանջարեղենի արտադրության մեջ ներգրավված ֆերմերային տնտեսությունների համար շուկան ավելի կայուն և հասանելի է՝ ի համեմատ կաթի և անասնակերի արտադրությամբ զբաղվող ՖՏ-ների: Այսպես՝ միրգ և բանջարեղեն մատակարարող ՖՏ-ների 46 %-ն է նշել, որ ունի մշտական գնորդ, իսկ կաթ և անասնակեր մատակարարող ՖՏ-ների՝ միայն 9 %-ը: Ձկնաբուծության ոլորտում ևս շուկան կարելի է համարել համեմատաբար կայուն և հասանելի. հարցմանը մասնակցած 4 ձկնաբուծարաններից երկուսը նշել են, որ ունեն մշտական գնորդներ:

Գծապատկեր 3.10: Մշտական գնորդ ունեցող ՖՏ-ների մասնաբաժինն ըստ ոլորտների



3.4.3 ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը ֆերմերների եկամտի վրա

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են 2012 թ.-ին ՖՏ-ների կողմից ՀԸ-ներին մատակարարումների միջին ծավալներն ըստ գյուղատնտեսական արտադրանքի հիմնական խմբերի: **Մրգի և բանջարեղենի** մատակարարում է իրականացնում 672 ֆերմերային տնտեսություն, մեկ ՖՏ-ին բաժին ընկնող տարեկան միջին ծավալը կազմել է 7.1 տոննա կամ ՖՏ-ի ընդհանուր վաճառքի 63 %-ը: Նշված խմբում ամենամեծ մատակարարման ծավալները մեկ ՖՏ-ի հաշվով գրանցվել են **ՍԻՍ Նատուրալ ՓԲԸ-ի** հետ համագործակցող ՖՏ-ի մոտ (23.4 տոննա տարեկան), իսկ ամենափոքր ծավալները՝ **Մեղրու պահածոների գործարանին** մատակարարում իրականացնող ՖՏ-ի մոտ (0.5 տոննա տարեկան):

Աղյուսակ 3.29: 2012 թ.-ին ֆերմերային տնտեսությունների կողմից մատակարարված գյուղատնտեսական մթերքի ծավալներն ըստ տեսակի և մթերող ընկերությունների

Ընկերություններ	Մատակարարում իրականացնող ֆերմերների քանակը	Մատակարարման միջին ծավալը մեկ ՖՏ-ի համար, տոննա	Մեկ ՖՏ-ի ընդհանուր վաճառքներից ՀԸ-ին մատակարարման մասնաբաժինը, %
Միրգ և բանջարեղեն			
Մեղրու պահածոների գործարան	120	0.5	30 %
Ազրոլոգ	6	12.0	78 %
365 Գրուպ	103	4.8	94 %
Հարպրոդ	391	7.4	70 %
ՍԻՍ Նատուրալ	52	23.4	43 %
Մրգի և բանջարեղենի մատակարարում	***672***	***7.1***	***63 %***
Ձկնամթերք			
Ակվատեխավտոմատիկա	10	35.1	60 %
Կաթ			
Չիզ Թաուն	25	9.6	94 %
Անասնակեր			
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	30	12.5	100 %
Ընդամենը բոլոր ՖՏ-ների համար	737	18.7	70 %

Մեկ ՖՏ-ի հաշվով մատակարարման ամենամեծ ծավալները գրանցվել են ձկնաբուծության ոլորտում, որտեղ մեկ ՖՏ-ն ՀԸ-ին միջինում մատակարարել է 35.1 տոննա **ձկնամթերք**:

ՀԸ-ին **կաթ** և **անասնակեր** մատակարարող ՖՏ-ների թիվը կազմում է համապատասխանաբար 25 և 30, կաթի միջին մատակարարման տարեկան ծավալները կազմել են 9.6 տոննա, իսկ անասնակերի դեպքում՝ 12.5 տոննա:



Հետազոտության արդյունքները փաստում են, որ ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում հաճախորդ ընկերություններն ավելացրել են ՖՏ-ներից մթերվող գյուղմթերքի ծավալները (տե՛ս Բաժին 3.3.4): ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը ՖՏ-ի կողմից մատակարարումների ծավալների վրա ներկայացված է ստորև բերված Աղյուսակ 3.30-ում:

ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում ՖՏ-ների կողմից **մատակարարումների ծավալները 2012 թ.-ին աճել են ավելի քան 3,900 տոննայով**, ընդ որում՝ **մեկ ՖՏ-ի հաշվով մատակարարումների աճը կազմել է 5.3 տոննա կամ ՖՏ-ի վաճառքի 41 %-ը (տե՛ս Աղյուսակ 3.30):**

ՀԳՏՏՁՀ-ի ծրագրի արդյունքում, **միրգ և բանջարեղեն** արտադրող 672 ՖՏ 2012 թ.-ին մատակարարել է յուրաքանչյուրը միջինում **4.4 տոննայից ավելի արտադրանք**՝ ի համեմատ բազիսային տարվա, ինչն ապահովել է ՖՏ-ի ընդհանուր **վաճառքի ծավալների 35 % -ը:** ՀԳՏՏՁՀ-ի ՀԸ-ներից երեքը՝ **Ակվատեխավտոմատիկա, Չիզ Թաուն** և **ԱՐԱԼԵՌ ՏՈՏ** ընկերությունները, ՀԳՏՏՁՀ-ի ծրագրի արդյունքում սկսել են մթերումներ իրականացնել ՖՏ-ներից՝ ապահովելով **35.1 տոննա ձկնամթերքի**, **9.6 տոննա կաթի** և

12.5 տոննա անասնակերի վաճառքի հնարավորություն մեկ ՖՏ-ի հաշվով: Ընդ որում՝ կաթ և անասնակեր վաճառող ՖՏ-ի համար ՀԸ-ները գրեթե միակ գնորդներն են (ՀԸ-ին բաժին ընկնող վաճառքի ծավալը կազմել է կաթի դեպքում 94 %, իսկ անասնակերի դեպքում՝100 %): ՀԳՏՏՁՀ-ի ծրագրի արդյունքում **ձկնաբուծական 10 ՖՏ-ների** համար ստեղծվել է միջինում **35.1 տոննա ձկնամթերքի** վաճառքի հնարավորություն, որը կազմել է ՖՏ-ների **վաճառքի ընդհանուր ծավալների 60 %-ը**:

Աղյուսակ 3.30: Ծրագրի արդյունքում ՖՏ-ների կողմից մատակարարված գյուղմթերքի ծավալներն ըստ ապրանքային խմբերի

Ապրանքային խումբ	Մատակա-րարում իրականացնող ֆերմերների քանակը	Ընդամենը վաճառքների միջին ծավալը մեկ ՖՏ-ի հաշվով, տոննա	Ծրագրի արդյունքում		
			Ընդամենը մթերման ծավալների աճը, տոննա	Մատակարար-ման ծավալների աճը մեկ ՖՏ-ի հաշվով, տոննա	Մեկ ՖՏ-ի կողմից իրացված արտադրանքի մասնաբաժինն ընդհանուր վաճառքից, %
Ձկնամթերք	10	58.9	351	35.1	60 %
Անասնակեր	30	12.5	375	12.5	100 %
Կաթ	25	10.2	240	9.6	94 %
Միրգ և բանջարեղեն	672	9.7	2,957	4.4	45 %
Ընդամենը բոլոր ՖՏ-ների համար	**737**	**12.9**	**3,922**	**5.3**	**41 %**

ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում ՖՏ-ների կողմից ՀԸ-ին մատակարարված գյուղմթերքի դիմաց ստացված **եկամուտը** 2012 թ.-ին կազմել է շուրջ **1,162 մլն դրամ՝ 986 մլն դրամով ավելի բազիսային տարվա համեմատ** (տե՛ս Աղյուսակ 3.31):

Աղյուսակ 3.31: ՖՏ-ի կողմից մատակարարված գյուղմթերքի դիմաց ստացված եկամուտն ըստ ապրանքային խմբերի

Ապրանքային խումբ	Մատակարարում իրականացնող ֆերմերների քանակը	Ընդամենը 2012 թ.-ին ՖՏ-ների կողմից վաստակած համախառն եկամուտը ՀԸ-ին մատակարարված արտադրանքի դիմաց, դրամ	Ընդամենը 2012 թ.-ին ՖՏ-ների կողմից վաստակած հավելյալ եկամուտը[13] ՀԸ-ին մատակարարված արտադրանքի դիմաց, դրամ
Ձկնամթերք	10	684,450,000	684,450,000
Անասնակեր	30	22,470,000	22,470,000
Կաթ	25	29,702,791	29,702,791
Միրգ և բանջարեղեն	672	425,733,853	249,618,588
Ընդամենը բոլոր ՖՏ	**737**	**1,162,356,644**	**986,241,379**

[13] Բազիսային տարվա համեմատ

2012 թ.-ին ՖՏ-ների կողմից վաստակած հավելյալ եկամտի գերակշիռ մասը (70 %) բաժին է ընկել **ձկնամթերք մատակարարող ՖՏ-ներին,** ինչը պայմանավորված է ձկնամթերքի բարձրարժեք գյուղատնտեսական արտադրանք լինելու փաստով: ՀԸ-ների կողմից մթերվող ապրանքային խմբում ձկնամթերքն ունի ամենաբարձր գինը, որի միջին արժեքը մոտ 15-30 անգամ ավելի բարձր է մնացած ապրանքային խմբերից (ձկնամթերքի միջին գինը մեկ կգ-ի համար 1,950 դրամ է, մրգինը և բանջարաղենինը՝ 89,5 դրամ, կաթինը՝ 124 դրամ, անասնակերինը՝ 60 դրամ):

Աղյուսակ 3.32: ՖՏ-ների կողմից մատակարարված գյուղմթերքի միջին վաճառքի գինն ըստ ապրանքային խմբերի և մթերող կազմակերպությունների

Ընկերություններ	Միջին գներ մեկ տոննայի համար (դրամ)
Միրգ և բանջարեղեն	
Մեղրու պահածոների գործարան	362,441
Ագրոլոգ	30,000
365 Գրուպ	145,089
Հարպրոդ	59,767
ՄԻՍ Նատուրալ	128,315
Մրգի և բանջարեղենի մատակարարում	89,583
Ձկնամթերք	
Ակվատեխավտոմատիկա	1,950,000
Կաթ	
Չիզ Թաուն	124,000
Անասնակեր	
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	60,000
Ընդամենը բոլոր ՖՏ-ների համար	203,301

ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում գյուղմթերքի իրացումից ձևավորված եկամտի **25 %-ը (մոտ 250 մլն դրամ) բաշխվել է միրգ և բանջարեղեն մատակարարող 672 ՖՏ-ներին**: Կաթի և անասնակերի արտադրությամբ զբաղվող **55 ՖՏ-ներին** բաժին է ընկել հավելյալ **եկամուտների 5 %-ը (շուրջ 52 մլն):**

Գծապատկեր 3.12: ՖՏ-ի կողմից վաստակած հավելյալ եկամուտն ըստ հիմնական ապրանքային խմբերի, %



Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում մեկ ՖՏ-ի կողմից վաստակած տարեկան եկամուտն ըստ հիմնական ապրանքային խմբի: **Ձկնաբուծական ՖՏ-ի** կողմից վաստակած տարեկան եկամուտն ամենաբարձրն է՝ **68 մլն դրամ**: Միևնույն ժամանակ այս խմբում են ներառված ամենաքիչ թվով ՖՏ-ներ (10 ՖՏ): Մնացած **727 ՖՏ-ի** կողմից վաստակած հավելյալ միջին տարեկան եկամուտը կազմել է **415,119 դրամ**: Ընդ որում՝ ամենաբարձր եկամուտը գրանցվել է **կաթ** մատակարարող ՖՏ-ի մոտ՝ **1,188,112 դրամ** տարեկան, իսկ ամենացածր հավելյալ եկամուտը՝**միրգ և բանջարեղեն** մատակարարող ՖՏ-ի մոտ **(371,456 դրամ)**: Միևնույն ժամանակ միրգ և բանջարեղեն մատակարարող ՖՏ-ների թիվն անհամեմատ մեծ է (672 ՖՏ)՝ ի համեմատ մնացած խմբերում ներգրավված ՖՏ-ների:

Աղյուսակ 3.33: ՖՏ-ի կողմից մատակարարված գյուղմթերքի դիմաց ստացված միջին հավելյալ եկամուտն ըստ ապրանքային խմբերի

Ապրանքային խմբեր	ՖՏ-ի քանակը	Մեկ ՖՏ-ի միջին տարեկան եկամուտը, դրամ	Մեկ ՖՏ-ի միջին տարեկան հավելյալ եկամուտը, դրամ	Մեկ ՖՏ-ի միջին տարեկան հավելյալ եկամուտը,%
Ձկնամթերք	**10**	**68,445,000**	**68,445,000**	**100%**
Անասնակեր	30	749,000	749,000	100%
Կաթ	25	1,188,112	1,188,112	100%
Միրգ և բանջարեղեն	672	633,533	371,456	59%
Ընդամենը բոլոր ՖՏ-ների համար, բացառությամբ ձկնաբուծական ՖՏ-ի	**727**	**657,368**	**415,119**	**63%**

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ-ում ձկնաբուծարանները հանդիսանում են մասնագիտացված ՖՏ-ներ՝ ի տարբերություն այլ ոլորտներում (բանջարաբոստանային մշակաբույսերի արտադրություն, դաշտավարություն, այգեգործություն, անասնապահություն) ներգրավված ՖՏ-ների, որոնց գերակշիռ մասը փոքր և միջին ՖՏ-ներ են, որոնք զբաղվում են գյուղատնտեսությամբ 1991թ.-ին հողերի սեփականաշնորհման արդյունքում: Ի տարբերություն ավանդական գյուղատնտեսական ճյուղերի՝ ձկնաբուծության ոլորտը ՀՀ-ում սկսել է վերականգնվել ավելի ուշ՝ մասնավոր ներդրումների շնորհիվ: Արդյունքում՝ ձկնաբուծությունը ներդրողի/ֆերմերի կողմից ի սկզբանե դիտվել և կառավարվել է որպես ձեռնարկատիրական գործունեություն՝ ի տարբերություն այլ ոլորտներում ներգրավված ՖՏ-ների, որոնք զբաղվել են գյուղատնտեսությամբ՝ ընտանիքի սննդի կարիքները հոգալու նպատակով:

Հաշվի առնելով ՖՏ-ների թիվը (outreach)՝ կարելի է եզրակացնել, **որ ՀԳՏՏՋՀ-ի ծրագրերի դրական ազդեցությունը ՖՏ-ների եկամուտների վրա ցայտուն է մրգի և բանջարեղենի արտադրության ոլորտում:**

Արմավիրի մարզ, գյուղ Սարդարապատ

Լյովա Կարապետյան՝ «365 Գրուպ» ՓԲԸ-ի մատակարար ֆերմեր

55-ամյա Լյովան Արմավիրի մարզի Սարդարապատ գյուղի բնակիչ է: Լյովան, կնոջ հետ միասին, ապրում է որդիների ընտանիքների հետ: Բացի իրենից՝ ընտանիքում գյուղատնտեսությամբ զբաղվում է նաև մեծ որդին, ով անձամբ է ղեկավարում տնտեսությունը:

Լյովան համագործակցում է ՀԳՏՏՋՀ-ի երկու հաճախորդ ընկերությունների՝ **«Հարպրոդ» և «365 Գրուպ» ՓԲԸ-ների** հետ: «Հարպրոդի» հետ համագործակցում է 1990-ական թվականներից՝ մատակարարելով հիմնականում լոլիկ, պղպեղ, սմբուկ, իսկ ***2011 թվականից՝ «Հարպրոդի» պատվերով նաև ծիծակ:***

«Գործարանի հետ գրավոր պայմանագիր չունենք, սակայն արտադրանքի իրացման հետ կապված ոչ մի խնդիր առ այսօր չենք ունեցել», - նշում է Լյովան: 2012 թվականին Լյովան ստացել է մոտ 160 տ բերք (բանջարեղեն), որի 55 %-ից ավելին հանձնել է «Հարպրոդին», ինչի դիմաց

ստացել է ավելի քան 7,000,000 դրամ եկամուտ: Բերքի մյուս մասը հանձնել է միջնորդներին՝ ստանալով զրեթե նույնքան գումար:

«365 Գրուպի» հետ սկսել է համագործակցել 2010 թվականից՝ մատակարարելով խաղող: Գործարանի հետ աշխատում է պայմանագրային սկզբունքով և այս 4 տարիների ընթացքում արտադրանքի իրացման հետ կապված ոչ մի խնդիր չի ունեցել: *2012 թվականին գործարանին է հանձնել 42 տ խաղող, որի դիմաց ստացել է 6,000,000 դրամ եկամուտ:*

2010 թվականից, իր տնտեսության ընդլայնման հետ մեկտեղ, Լյովան ***աշխատանքով է ապահովում իր 5 համագյուղացիներին***՝ հնարավորություն ընձեռելով յուրաքանչյուրին վաստակելու 800,000 դրամի չափով եկամուտ մեկ տարվա ընթացքում:

«Հարպրոդի» և «365 Գրուպի» հետ համագործակցությունը վստահություն է ներշնչել Լյովային՝ կատարելու ներդրումներ բանջարեղենի և խաղողի արտադրությունն ընդլայնելու նպատակով: 2011 թվականին, ներդնելով 1,500,000 դրամ, Լյովան ձեռք է բերել 2,5 հա հող՝ մշակվող հողատարածքի և խաղողի այգիների ընդլայնման նպատակով: *Առաջիկա 5 տարիների ընթացքում Լյովան մտադրություն ունի ավելի մեծացնելու խաղողի այգիները, քանի որ դրանց մշակումն ավելի քիչ ժամանակատար և ծախսատար գործընթաց է, բայց ապահովում է ավելի շատ եկամուտ:*

Վերջին 4 տարիների ընթացքում գյուղմթերքի իրացումից ստացված հասույթը նպաստել է Լյովայի ընտանիքի բարեկեցության մակարդակի բարձրացմանը, մասնավորապես՝ ընտանիքը ձեռք է բերել ավտոմեքենա, բարելավել տնտեսության կենցաղային պայմանները, ինչպես նաև աջակցել որդու նորաստեղծ ընտանիքին՝ նոր բնակարան գնելու համար:

«Ընտանիքիս ապրելակերպը վերջին երեք տարիների ընթացքում զգալիորեն բարելավվել է, քանի որ ունենք իրացման կայուն շուկա: Այն մեզ համար ապահովում է կայուն եկամուտ, թույլ տալիս պլանավորել ֆերմերային տնտեսության ընդլայնմանն ուղղված ծախսերը և միաժամանակ ընտանիքի կյանքն ավելի բարեկեցիկ դարձնել», - ավելացնում է Լյովան:

3.4.4 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը ֆերմերների ակտիվների ընդլայնման վրա և հետագայում ներդրումներ կատարելու մտադրության վրա

ՀԸ-ների հետ համագործակցող ֆերմերային տնտեսությունների եկամուտների աճը թույլ է տվել ՖՏ-ներին ներդրումներ իրականացնել ինչպես իրենց ֆերմերային տնտեսության գործունեության ուղղությամբ, այնպես էլ՝ տնային տնտեսության բարեկեցության բարելավման նպատակով:

ՀԸ-ին մատակարարումներ իրականացնող ֆերմերային տնտեսությունների **32 %-ը 200 մլն դրամի** չափով ներդրումներ են իրականացրել՝ վերը նշված ուղղություններով: Ինչպես երևում է աղյուսակից, ներդրումների 73 %-ն (շուրջ 147մլն դրամ) ուղղվել է ֆերմերային տնտեսության զարգացմանը, իսկ 27 %-ը՝ տնային տնտեսության բարեկեցության բարելավմանը:

Աղյուսակ 3.34: Ծրագրի ազդեցության տարիներին ներդրումներ իրականացրած ֆերմերների թիվը և ներդրումների չափը

Ներդրումների ուղղությունը	Ներդրումներ իրականացրած ֆերմերների թիվը	Ներդրումներ իրականացրած ֆերմերների մասնաբաժինը, %	Ներդրումների չափը, հազ. դրամ	Ներդրումների մասնաբաժինն ընդհանուրից, %
Կապիտալ ներդրումներ ֆերմերային տնտեսության մեջ	58	18 %	147,141	73 %
Տնային տնտեսության բարեկեցության բարելավմանն ուղղված խոշոր գնումներ	52	17 %	53,140	27 %
Ընդամենը	**100**	**32 %**	**200,281**	**100 %**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ֆերմերային տնտեսության զարգացման նպատակով ներդրումներ իրականացրած ֆերմերների թիվը և ներդրումների չափը մինչև ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերը (բազիսային տարի) և դրանից հետո: Ինչպես երևում է աղյուսակից, մինչև Ծրագրի իրականացումը սահմանափակ թվով ՖՏ-ներ (1%-ը) շուրջ 40 մլն դրամի ներդրումներ են իրականացրել ֆերմերային տնտեսության զարգացման նպատակով, իսկ Ծրագրի ազդեցության տարիների վերաբերյալ հարցմանը մասնակցած **ֆերմերների 18 %-ը** շուրջ **148 մլն դրամի** ներդրում է կատարել՝ արտադրության ընդլայնման նպատակով:

Աղյուսակ 3.35: Ծրագրի ազդեցության և բազիսային տարիներին ֆերմերային տնտեսության զարգացման նպատակով ներդրումներ իրականացրած ֆերմերների թիվը և ներդրումների չափը

	Բազիսային տարիներ (2009-2011թթ.)	Ազդեցության տարիներ (2011-2013 թթ.)
Ներդրումներ իրականացրած ֆերմերների թիվը	3	58
Ներդրումներ իրականացրած ֆերմերների մասնաբաժինը,%	1 %	18 %
Ներդրումների չափը, հազ. դրամ	**38,970**	**147,141**

Ներդրումների գերակշիռ մասն (98.7 %-ը) իրականացվել է **մրգի և բանջարեղենի ոլորտում**: ՀԸ-ներին միրգ և բանջարեղեն մատակարարող ՖՏ-ների 20 %-ն իրականացրել է միջինում շուրջ **2.7 մլն դրամի** կապիտալ ներդրումներ ֆերմերային տնտեսության ընդլայնման կամ գործունեության բարելավման ուղղություններով: Ներդրումների ուղղությունները ներկայացված են Աղյուսակ 3.36-ում: **Ձկնաբուծության** ոլորտում ներդրում է իրականացրել ձկնաբուծարանների 50 %-ը: Ներդրումներն ուղղված են եղել ձկների մայրական կազմի ձեռքբերմանն ու ձկնաբուծարանների ենթակառուցվածքի բարելավմանը և միջինում կազմել են 775,000 դրամ մեկ ՖՏ-ի հաշվով: **Կաթի և անասնակերի արտադրությամբ զբաղվող** ՖՏ-ների միայն 6 %-ն է կատարել միջինը 200,000 դրամի ներդրում: Ներդրումներն ուղղված են եղել կաթի արտադրության ընդլայնմանը:

Աղյուսակ 3.36: Ծրագրի ազդեցության տարիներին ֆերմերային տնտեսության զարգացման նպատակով ներդրումներ իրականացրած ֆերմերների թիվը և ներդրումների չափն ըստ ոլորտների

Ակտիվների տեսակն ըստ ոլորտների	Ներդրումներ իրականացրած ֆերմերների թիվը	Ներդրումներ իրականացրած ֆերմերների մասնաբաժինը, %	Ներդրումների միջին չափը մեկ ՖՏ-ի հաշվով, դրամ	Ներդրումների չափը, դրամ	Ներդրումների մասնաբաժինը ընդհանուրից,%
Ձկնաբուծություն	**2**	**50%**	775,000	**1,550,000**	**1.1%**
Ձկների մայրական կազմ	*1*	*50%*	1,050,000	*1,050,000*	*68%*
Ենթակառուցվածք	*1*	*50%*	500,000	*500,000*	*32%*
Բանջարեղենի և մրգի արտադրություն	**54**	**20%**	**2,688,722**	**145,191,000**	**98.7%**
Հող	30	54 %	3,068,333	92,050,000	63 %
Այգու ձեռքբերում, հիմնում	14	25 %	1,194,286	16,720,000	12 %
Գյուղտեխնիկա	5	9 %	4,060,000	20,300,000	14 %
Գործիքներ	3	5 %	3,033,333	9,100,000	6 %
Պահեստի ձեռքբերում	1	2 %	5,500,000	5,500,000	4 %

Այլ (տնկիների ձեռքբերում, հենասյուներ և այլն)	4	7 %	380,250	1,521,000	1 %
Կաթի և անասնակերի արտադրություն	**2**	**6 %**	**200,000**	**400,000**	**0.3 %**
Կթու կով	2	100 %	200,000	400,000	100 %
Ընդամենը	**58**	**18 %**	2,536,914	**147,141,000**	

Ներդրումներ իրականացրած ՖՏ-ների **67 %-ը** ներդրումներն իրականացրել է **սեփական միջոցներով՝ եկամտից մասհանումների շնորհիվ**, 22 %-ը՝ ինչպես սեփական եկամտից, այնպես էլ վարկային միջոցներով: ՖՏ-ների միայն 10 %-ն է ներդրումներ իրականացրել բացառապես վարկային միջոցներով (տե՛ս Գծապատկեր 3.12): Ընդ որում՝ վարկային միջոցներից օգտվել են միայն մրգի և բանջարեղենի արտադրությամբ զբաղվող ՖՏ-ները, ինչը տրամաբանական է, քանի որ հենց տվյալ ոլորտին էր բաժին ընկել ներդրումների գերակշիռ մասը (98.7%-ը):

Գծապատկեր 3.13: ՖՏ-ների կողմից իրականացված ներդրումների աղբյուրներն ըստ ոլորտների



Ինչպես երևում է Գծապատկեր 3.13-ից, **ներդրումները հիմնականում ուղղված են եղել արտադրության ծավալների ավելացմանը**, այսպես ներդրումներ իրականացրած ՖՏ-ների 45 %-ն ընդլայնել է գյուղմթերքի արտադրության ծավալները, իսկ 25 %-ը՝ գրանցել արտադրողականության բարձրացում: ՖՏ-ների 15 %-ը ներդրումների արդյունքում ավելացրել է արտադրվող գյուղմթերքի տեսականին, իսկ ՖՏ-ների 13 %-ը՝ բարելավել գյուղմթերքի որակը: Ներդրում կատարած ՖՏ-ների 25 %-ը դեռ չի գրանցել ներդրումների

արդյունքները, ինչը պայմանավորված է ոլորտի առանձնահատկություններով (օրինակ՝ այգու հիմնման դեպքում առաջին բերքը դեռ չի ստացվել):

Գծապատկեր 3.14: Ներդրումների ազդեցությունը ՖՏ-ների գործունեության վրա



ՀԸ-ներին մատակարարում իրականացնող **ՖՏ-ների մեծ մասը (58 %-ը)** դրական է գնահատել հետագայում գյուղմթերքի արտադրության ծավալներն ընդլայնելու ուղղությամբ ներդրումներ իրականացնելու հեռանկարը: Ընդ որում՝ **ֆերմերային տնտեսության զարգացման հեռանկարներ** են տեսնում հիմնականում **ձկնաբուծության և մրգի ու բանջարեղենի** ոլորտում ներգրավված ՖՏ-ները (տե՛ս Գծապատկեր 3.15):

Գծապատկեր 3.15: Ըստ Ձեզ `արժե՞ արդյոք ներդրումներ կատարել՝ հետագայում գյուղմթերքի արտադրության ծավալներն ընդլայնելու համար



Կաթի և անասնակերի արտադրության մեջ ներգրավված ՖՏ-ների գերակշիռ մասը չի տեսնում զարգացման հեռանկար կամ դժվարացել է պատասխանել այդ հարցին: Իրավիճակը պայմանավորված է նրանով, որ նշված ոլորտներից ՀԸ-ները մթերումներ են իրականացնում 2012 թ.-ից, հետևաբար Ծրագրի ազդեցությունը դեռ տեսանելի չէ:

Գծապատկեր 3.16: Ըստ Ձեզ՝ արժե՞ արդյոք ներդրումներ կատարել՝ հետագայում գյուղմթերքի արտադրության ծավալներն ընդլայնելու համար



Ի տարբերություն կաթի և անասնակերի արտադրության ոլորտների՝ մրգի, բանջարեղենի և ձկնաբուծության ոլորտներում Ծրագրի ազդեցությունն արդեն տեսանելի է, ինչով էլ պայմանավորված են ՖՏ-ների մտադրությունները՝ ֆերմերային տնտեսության գործունեությունն ընդլայնելու վերաբերյալ: Այսպես՝ բանջարեղենի, մրգի արտադրության և ձկնաբուծության ոլորտներում ներգրավված ՖՏ-ների շուրջ 50 %-ը նախատեսում է ավելացնել գյուղմթերքի արտադրության ծավալները կամ տեսականին:



Մոտակա տարիներին ֆերմերային տնտեսության գործունեությունն ընդլայնելու նպատակ ունեցող ՖՏ-ների մեծ մասը (48 %-ը) նախատեսում է ներդրումներ իրականացնել սեփական միջոցների հաշվին, 14 %-ը՝ վարկային միջոցներով, իսկ 38 %-ը սեփական միջոցները նախատեսում է համալրել վարկային միջոցներով:



Ստորև բերված Աղյուսակ 3.37-ում և Աղյուսակ 3.38-ում ներկայացված են ՖՏ-ների կողմից 2012թ.-ին տնային տնտեսության բարեկեցության բարելավման նպատակով ակտիվների ձեռքբերման վերաբերյալ տվյալները: ՖՏ-ների 17 %-ն է իրականացրել խոշոր գնումներ, ընդ որում՝ մեկ ՖՏ-ին հատկացվել է միջինում շուրջ 1մլն դրամ գնումների համար: ՖՏ-ների գերակշիռ մասը ձեռք է բերել կենցաղային ապրանքներ՝ հեռուստացույց, սառնարան, լվացքի մեքենա (տե՛ս Աղյուսակ 3.38):

Աղյուսակ 3.37: 2012 թ.-ին ՖՏ-ների կողմից տնային տնտեսության բարեկեցությունը բարելավելու նպատակով ձեռք բերված ակտիվների արժեքը

Ոլորտները	Տնային տնտեսության համար խոշոր գնում իրականացրած ֆերմերների մասնաբաժինը,%	Գնումների միջին արժեքը մեկ ՖՏ-ն հաշվով, դրամ	Գնումների արժեքը,դրամ	Գնումների արժեքը ընդհանուրից,%
Ձկնաբուծություն	25 %	5,000,000	5,000,000	9 %
Բանջարեղենի և մրգի արտադրություն	17 %	995,652	45,800,000	86 %
Կաթի և անասնակերի արտադրություն	14 %	468,000	2,340,000	4 %
Ընդամենը	17 %	1,021,923	53,140,000	100 %

Աղյուսակ 3.38: 2012 թ.-ին ՖՏ-ների կողմից տնային տնտեսության բարեկեցությունը բարելավելու նպատակով ձեռք բերված ակտիվների տեսակները

Ակտիվների տեսակները	ՖՏ-ների թիվը	ՖՏ-ների մասնաբաժինն ակտիվներ ձեռք բերած ՖՏ-ներից, %	ՖՏ-ների մասնաբաժինը բոլոր ՖՏ-ներից, %
Հեռուստացույց	15	29 %	5 %
Լվացքի մեքենա	12	23 %	4 %
Սառնարան	10	19 %	3 %
Կահույք	10	19 %	3 %
Ավտոմեքենա	9	17 %	3 %
Համակարգիչ	4	8 %	1 %
Գազիֆիկացում	2	4 %	1 %
Տուն	1	2 %	0 %
Այլ	3	6 %	1 %
Ընդամենը	52	100 %	17 %

Հակոբյան Արթուր՝ «Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ-ի մատակարար ֆերմեր
Սյունիքի մարզ, քաղաք Մեղրի

27-ամյա Արթուրն ապրում է Սյունիքի մարզի Մեղրի քաղաքում: Նա ամուսնացած է և ունի 3 տարեկան դուստր, իսկ շուտով կծնվի նաև որդին: Արթուրի մայրը բնակվում է Ռուսաստանի Դաշնությունում՝ մեծ որդու տանը: Արթուրն իր 20-ամյա կնոջ հետ միասին զբաղվում է այգեգործությամբ:

Դեռ վաղ հասակից Արթուրը զբաղվել է *նռան, թզի և արքայանարնջի մատակարարմամբ* Երևան քաղաքի վաճառքի կետերին: Նրա մյուս եղբայրը բնակվում է Երևան քաղաքում, և այժմ նա է զբաղվում Արթուրի մշակած բերքի խոշոր սուպերմարկետներին մատակարարմամբ:

Արթուրը «Մեղրու պահածոների գործարանի» հետ սկսել է համագործակցել 2011 թվականից՝ մատակարարելով թուզ: Գործարանի հետ աշխատում է պայմանագրային սկզբունքով և այս երեք տարիների ընթացքում արտադրանքի իրացման հետ կապված ոչ մի խնդիր չի ունեցել: 2012 թվականին ավելացրել է գործարանին մատակարարվող թզի ծավալները 30 %-ով՝ հասցնելով 1 տ-ի, ինչի դիմաց ստացել է 450,000 դրամ եկամուտ, ևս 2 տ թուզ վերամշակել է և չրի տեսքով հանձնել վաճառակետերին՝ ստանալով 6,000,000 դրամ եկամուտ:

2012 թվականին Արթուրը ձեռք է բերել 2,5 հա հող՝ ներդնելով 6,500,000 դրամ, հիմնել այգիներ և արդեն 2013 թվականին 2010 թվականի համեմատ գրեթե 50 %-ով ավելացրել բերքի ծավալները: Ավելի քան 3,000,000 դրամ Արթուրը 2013 թվականին վճարել է իր 7 աշխատողներին, որոնց թիվն այս տարի 2010 թվականի համեմատ ավելացել է 4-ով:

Վերջին 3 տարիների ընթացքում գյուղմթերքից ստացված հասույթից գնել է նաև բեռնատար մեքենա և նոր բնակարան Մեղրի քաղաքում, որն այժմ տրված է վարձակալության և ընտանիքին ապահովում է տարեկան 1,080,000 ՀՀ դրամ եկամուտ: Նա նաև բարելավել է տնտեսության կենցաղային պայմանները, գնել նոր հեռուստացույց, սառնարան, կահույք և այլն: Ամեն տարի Արթուրն իր և իր եղբայրների ընտանիքների հետ կազմակերպում է արտագնա հանգիստ: Առաջիկա 5 տարիների ընթացքում Արթուրը մտադրություն ունի սեփական միջոցներով հիմնել ջերմոցային տնտեսություն, ավելացնել բերքի ծավալները և տեսականին:



«Վերջին երեք տարիների ընթացքում ընտանիքիս բարեկեցությունն էականորեն բարելավվել է, քանի որ հողագործությունից և այգեգործությունից ստացված եկամուտը բավականին բարձր է: Կարծում եմ, որ միանշանակ արժե ներդրումներ կատարել՝ հետագայում գյուղմթերքի արտադրության ծավալներն ընդլայնելու համար», - նշում է Արթուրը:

Արթուրի խոսքերով, Մեղրիում բազմաթիվ ընտանիքների բարեկեցությունը բարելավվել է «Մեղրու պահածոների գործարանի» շնորհիվ, որը տարեցտարի մեծացնում է մթերման ծավալները. նույնիսկ բերքահավաքի սեզոնին Մեղրիում աշխատուժի խնդիր կա և շատ ժամանակ աշխատողներ են հրավիրում ՀՀ այլ մարզերից:

3.5 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը բնակչության սոցիալական բարեկեցության վրա

3.5.1 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում նոր աշխատատեղերի ստեղծում

ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում գյուղատնտեսական մթերքի արտադրության և վերամշակման ոլորտում ստեղծվել է **360 նոր աշխատատեղ, որից 98 աշխատատեղը՝** ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ընկերություններում, իսկ **262 աշխատատեղը՝** հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ՖՏ-ներում:

ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերը դրական ազդեցություն են ունեցել հաճախորդ ընկերություններում նոր աշխատատեղերի ստեղծման տեսանկյունից: Ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում 2012 թ.-ի վերջի դրությամբ հաճախորդ ընկերություններում, ընդհանուր առմամբ, ստեղծվել է **98 նոր աշխատատեղ**, որից 75-ը լրիվ դրույքով հաստիքներ են, իսկ մնացած 23-ը՝ կարճաժամկետ/սեզոնային զբաղվածություն: ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերը դրական ազդեցություն են ունեցել **կանանց զբաղվածության տեսանկյունից:** Նոր աշխատատեղերի 55 %-ը բաժին է ընկել կանանց, ընդ որում՝ կանանց մասնաբաժինը հաճախորդ ընկերությունների աշխատակիցների ցանկում ավելացել է 49%-ից մինչև 51%:

Ներդրումների իրականացման արդյունքում, հաճախորդ ընկերություններում զբաղվածների աշխատավարձը բազիսային տարվա համեմատ **աճել է 39 %-ով** և կազմել **60,622 դրամ** (2012 թ.-ին) /մանրամասն տեղեկատվությունը ՀՀ-ում աշխատատեղերի և աշխատավարձերի վերաբերյալ ներկայացված է Բաժին **3.3.5.2** -ում/:

Ընդհանուր առմամբ, ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացրած ծրագրերը դրական ազդեցություն են ունեցել հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ՖՏ-ներում զբաղվածների թվի և վերջիններիս կողմից վաստակած եկամտի վրա: Հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ՖՏ-ներում **262** անձանց համար նոր աշխատատեղեր են ստեղծվել, աշխատակիցների վարձատրության ֆոնդն աճել է **165 մլն դրամով:** ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ընկերություններին մատակարարում իրականացնող ՖՏ-ներում զբաղված շուրջ **4,230 գյուղական վայրերի բնակիչների (որից 70 %-ը կանայք են) տարեկան եկամուտն աճել է 6%-ով:** Ձկնաբուծության ոլորտում զբաղվածների (50 անձ) տարեկան միջին եկամուտն աճել է 21 %-ով՝ կազմելով 451,000 դրամ: Մրգի և բանջարեղենի արտադրության ոլորտում զբաղվածների (շուրջ 4,180 անձ) միջին տարեկան եկամուտն աճել է 6 %-ով և կազմել 328,457 դրամ:

Ստորև ներկայացված է լրացուցիչ տեղեկատվություն հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ՖՏ-ներում զբաղվածների և վերջիններիս վարձատրության չափի վերաբերյալ:

ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ֆերմերային տնտեսություններն **զբաղվածություն են ապահովում շուրջ 5,750 անձանց** համար, **որոնց 62 %-ը կանայք են:** Հայաստանի գյուղական բնակավայրերում գյուղատնտեսությունը բնակչության հիմնական զբաղմունքն է: Այլ ոլորտներում զբաղվածության հնարավորության բացակայությունը կամ սահմանափակ լինելը հանգեցնում է նրան, որ բնակչության գերակշիռ մասը զբաղված է սեփական ֆերմերային տնտեսությունում: ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ֆերմերային տնտեսություններում **զբաղվածների 26 %-ն** ինքնազբաղվածներ են, նույն ընտանիքի անդամներ, որոնք զբաղված են իրենց ՖՏ-ի գործունեության մեջ և ստանում են եկամուտներ այդ գործունեությունից: Այսպես՝ հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների **աշխատունակ տարիքի բնակչության 59 %-ը** ներգրավված է ֆերմերային տնտեսության գործունեության մեջ, որոնցից շուրջ 38 %-ը կանայք են՝ որպես ինքնազբաղվածներ:

Գծապատկեր 3.19: Ֆերմերային տնտեսություններում զբաղված անձանց բաշխումը



ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ֆերմերային տնտեսություններում **զբաղվածների 74 %-ը** (կամ շուրջ 4,230 անձ) վարձու աշխատակիցներ են, որոնցից 70 %-ը կանայք են:

Աղյուսակ 3.39: Հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ֆերմերային տնտեսություններում զբաղվածների թիվը

	Ընդամենը	Որից կանայք
Ընդամենը զբաղվածների թիվը	**5,749**	**62 %**
ընտանիքի անդամներ	1,516	38 %
վարձու աշխատողներ	4,233	70 %

Հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ՖՏ-ներում աշխատատեղերի և վարձու աշխատողների եկամուտների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը, ինչպես նաև նշված ցուցանիշների փոփոխությունը Ծրագրի ազդեցության տարվա համար (2012 թ.), ի համեմատ բազիսային տարվա (2010 թ.), ներկայացված է ստորև:

Ծրագրի ազդեցության, մասնավորապես՝ հաճախորդ ընկերությունների կողմից մթերումների ծավալի և ընդլայնման շնորհիվ աճել է վարձու աշխատակիցներ ունեցող ՖՏ-ների մասնաբաժինը: Այսպես՝ եթե 2010 թ.-ին ՖՏ-ների 40 %-ն ուներ վարձու աշխատակիցներ, ապա 2012 թ.-ին արդեն ՖՏ-ների 44 %-ն էր ներգրավել լրացուցիչ աշխատուժ ֆերմայի ընդլայնված գործունեությունը կազմակերպելու համար: Հարկ է նշել, որ վարձու աշխատակիցներ են ներգրավել բանջարեղենի, մրգի արտադրությամբ զբաղվող ՖՏ-ները և ձկնաբուծարանները, իսկ կաթի և անասնակերի արտադրության մեջ ներգրավված ՖՏ-ները դեռ չեն հասել զարգացման այն փուլին, որ լրացուցիչ աշխատուժի կարիք ունենան (տե՛ս Գծապատկեր 3.19):

Գծապատկեր 3.20: Վարձու աշխատակիցներ ունեցող ՖՏ-ների մասնաբաժինը 2010 և 2012 թթ.



2012 թ.-ին **բանջարեղենի և մրգի արտադրության ոլորտում** ներգրավված վարձու աշխատակիցների թիվը կազմել է շուրջ **4,180 մարդ, որից 71 %-ը կանայք են**: Ի համեմատ 2010 թ.-ի՝ բանջարեղենի և մրգի արտադրության ոլորտում ներգրավված

վարձու աշխատակիցների թիվն աճել է **249-ով:** Կանանց ներգրավվածության բարձր աստիճանը պայմանավորված է նրանով, որ միրգ և բանջարեղեն արտադրող ՖՏ-ները սովորաբար լրացուցիչ աշխատուժ են ներգրավում բերքահավաքի սեզոնին՝ առաջարկելով կարճաժամկետ զբաղվածություն գյուղական համայնքների բնակչությանը: Հաշվի առնելով այն փաստը, որ գյուղական բնակավայրերում բոլոր ընտանիքներն ունեն իրենց տնտեսությունը, ընդ որում՝ զբաղվում են տարաբնույթ գործունեությամբ՝ դաշտավարությամբ, անասնաբուծությամբ, այգեգործությամբ և այլն, տղամարդիկ ներգրավված են լինում իրենց տնտեսության աշխատանքներում, իսկ կանայք՝ այլ ՖՏ-ներում՝ սեզոնային աշխատանքներում: Հարկ է նշել նաև, որ գյուղատնտեսությանը կից սպասարկող ոլորտներում (օրինակ՝ բեռնափոխադրումներ, մեխանիզատորական ծառայություններ, ագրոնոմիական խորհրդատվություն, գյուղպարագաների վաճառք, անասնաբուժություն և այլն) տղամարդկանց ներգրավվածությունը կանանց համեմատ ավելի բարձր է: Այսպիսով՝ միրգ և բանջարեղեն արտադրող ՖՏ-ների կողմից առաջարկվող սեզոնային աշխատանքը գյուղաբնակ կանանց համար զբաղվածության սահմանափակ հնարավորություններից է:

Ալեքսան Հովհաննիսյան` `«Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ-ի մատակարար ֆերմեր
Սյունիքի մարզ, քաղաք Մեղրի

63-ամյա Ալեքսանն ապրում է Սյունիքի մարզի Մեղրի քաղաքում: Նա ապրում է իր մոր, կնոջ (57 տարեկան), 34 և 23 տարեկան երկու որդիների, 30 տարեկան հարսի և երկու թոռնիկների հետ (6 և 3 տարեկան) հետ: Ընտանիքում Ալեքսանի հետ այգեգործությամբ զբաղվում են կինը, մեծ որդին և հարսը:

Ալեքսանը «Մեղրու պահածոների գործարանի» հետ սկսել է համագործակցել 2010 թվականից՝ մատակարարելով թուզ: Գործարանի հետ աշխատում է պայմանագրային սկզբունքով և այս 4 տարիների ընթացքում արտադրանքի իրացման հետ կապված ոչ մի խնդիր չի ունեցել: 2012 թվականին ավելացրել է թզի արտադրության ծավալները գրեթե 100 %-ով, որի արդյունքում գործարանին մատակարարել է 1,5 տ թուզ, որը կազմել է ավելի քան 550,000 դրամ, ևս 3,5 տ թուզ վերամշակել է և չրի տեսքով հանձնել վաճառակետերին՝ ստանալով 12,500,000 դրամ եկամուտ:

2012 թվականին Ալեքսանը ձեռք է բերել 20,000 մ² այգի՝ ներդնելով 5,300,000 դրամ, ավելացրել է տնկիներ և արդեն 2013 թվականին 2010 թվականի համեմատ գրեթե 4 անգամ ավելացրել բերքի ծավալները: 2013 թվականին Ալեքսանն իր 8 աշխատողներին վճարել է 8,000,000 դրամ, որից երկուսը եղել են կին:

Վերջին 3 տարիների ընթացքում գյուղմթերքից ստացված հասույթով ձեռք է բերել նաև մրգի պահեստավորման սառնարան՝ ներդնելով 5,000,000 դրամ, ինչպես նաև բարելավել է տնտեսության կենցաղային պայմանները, գնել նոր ավտոմեքենա: Առաջիկա 5 տարիների ընթացքում Ալեքսանը մտադիր է ավելացնել իր այգիները: Նա նաև մտադրություն ունի ծավալել նոր ձեռնարկատիրական գործունեություն, այն է՝ հիմնել նաև թարմ հյութի վաճառակետ Երևան քաղաքում:

Չնայած այն բանին, որ Ալեքսանը ծախսատար է համարում գյուղատնտեսության ոլորտը, գտնում է, որ արժե ներդրումներ կատարել այս ոլորտում, մասնավորապես՝ ձեռք բերել գյուղատնտեսական տեխնիկա:

«Կարծում եմ՝ մեր քաղաքի բարեկեցությունը նույնպես բարելավվել է, քանի որ գործազրկության մակարդակն ու սեզոնային արտագաղթը Մեղրիում նվազել են», - ավելացնում է Ալեքսանը:

Ձկնաբուծության ոլորտում ներգրավված **վարձու աշխատակիցների թիվը** 2012 թվականին կազմել է **50 մարդ՝ 13-ով ավելի** 2010 թվականի համեմատ: Ձկնաբուծության ոլորտում զբաղվածների սահմանափակ քանակը պայմանավորված է հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ձկնաբուծարանների փոքր թվով (10 ձկնաբուծարան՝ ի տարբերություն 670-ից ավելի միրգ և բանջարեղեն արտադրող ՖՏ-ների): Հարկ է նշել, որ ձկնաբուծարաններն առաջարկում են լրիվ դրույքով զբաղվածություն իրենց վարձու աշխատակիցներին: Ձկնաբուծության ոլորտում կանանց ներգրավվածության տեսանկյունից դրական տեղաշարժ է գրանցվել 2012 թ.-ին: Եթե 2010 թ.-ին հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ձկնաբուծարաններում ընդհանրապես կանայք ներգրավված չէին որպես վարձու աշխատակիցներ, ապա 2012 թ-ին կանանց մասնաբաժինը կազմել է 16 %:

Աղյուսակ 3.40: Հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ֆերմերային տնտեսություններում ստեղծված աշխատատեղերը

	Աշխատատեղեր (բազիսային տարի **2010 թ.**)		Աշխատատեղեր (ազդեցության տարի **2012 թ.**)		Նոր աշխատատեղեր
	Ընդամենը	որից կանայք	Ընդամենը	որից կանայք	
Ձկնաբուծություն	37	0 %	50	16 %	13
Բանջարեղենի և մրգի արտադրություն	3,934	76 %	4,183	71 %	249
Ընդամենը	**3,971**	**75 %**	**4,233**	**70 %**	**262**

Ծրագրի ազդեցության, մասնավորապես՝ հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ՓՏ-ներում վարձու աշխատողների թվի աճի և միջին վարձատրության աճի հետևանքով 2012 թ.-ին **13 %-ով աճել են** ՓՏ-ներում ներգրավված **աշխատողների վարձատրությանն ուղղված վճարումները**՝ կազմելով **շուրջ 1.4 մլրդ դրամ** տարվա կտրվածքով: Ձկնաբուծության ոլորտում վարձատրությանն ուղղված վճարումներն աճել են 63 %-ով, իսկ մրգի և բանջարեղենի ոլորտում՝ 13 %-ով: Այսպիսով՝ ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված ծրագրի արդյունքում ՓՏ-ներում զբաղվածների վարձատրության չափը 2012 թ.-ին աճել է **165 մլն դրամով**, որից 95 %-ը (156 մլրդ դրամ) բաժին է ընկնում մրգի և արտադրության ոլորտին, իսկ 5 %-ը՝ ձկնաբուծության ոլորտին:

Աղյուսակ 3.41: ՓՏ-ներում ներգրավված աշխատողների վարձատրությանն ուղղված վճարումներն ըստ ոլորտների, դրամ

	Բազիսային տարի (2010 թ.)	Ազդեցության տարի (2012 թ.)	Աճ/նվազում բազիսային տարվա համեմատ, դրամ	Աճ/նվազում բազիսային տարվա համեմատ, %
Ձկնաբուծություն	13,795,714	22,550,000	8,754,286	63 %
Բանջարեղենի և մրգի արտադրություն	1,217,607,639	1,373,935,335	156,327,696	13 %
Ընդամենը	**1,231,403,353**	**1,396,485,335**	**165,081,982**	**13 %**

Գծապատկեր 3.21: ՓՏ-ում ներգրավված աշխատողների վարձատրությանն ուղղված հավելյալ վճարումները **(165** մլն դրամ**)** բաշխվածությունն ըստ ոլորտների



Ստորև բերված Աղյուսակ 3.42-ում ներկայացված են լրացուցիչ ցուցանիշներ, որոնք թույլ են տալիս հասկանալ, թե ինչ ազդեցություն է ունեցել ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված ծրագիրը ՓՏ-ներում զբաղվածների վարձատրության չափի վրա: Հաշվի

առնելով այն փաստը, որ ՖՏ-ները ներգրավում են ինչպես լրիվ դրույքով աշխատակիցներ, այնպես էլ` կարճաժամկետ/սեզոնային բնույթի աշխատանքի համար վարձու աշխատողներ, հաշվարկվել է մեկ աշխատողի համար միջին զբաղվածությունը տարեկան կտրվածքով, և մեկ աշխատողի համար միջին վարձատրության չափը օրական կտրվածքով:

Ձկնաբուծության ոլորտում ներգրավված աշխատողների զբաղվածության չափը տարեկան կտրվածքով չի փոփոխվել, քանի որ վերջիններս լրիվ դրույքով զբաղվածներ են: Ի տարբերություն ձկնաբուծության ոլորտի՝ մրգի և բանջարեղենի արտադրության ոլորտում ներգրավված աշխատակիցների գերակշիռ մասը սեզոնային/կարճաժամկետ զբաղվածներ են, որոնց միջին զբաղվածությունը տարվա կտրվածքով մեկ անձի հաշվով կազմել է 2010 թ.-ին 71 օր, իսկ 2012թ.-ին՝ 69 օր: Թեև միջին զբաղվածությունը մեկ անձի հաշվով կրճատվել է, մեկ օրվա միջին վարձատրության չափն աճել է 9 %-ով (4,366 դրամից մինչև 4,748 դրամ): Ուստի մեկ անձի հաշվով զբաղվածության նվազումը կոմպենսացվել է մեկ օրվա վարձատրության աճով, և արդյունքում մրգի և բանջարեղենի ոլորտում զբաղվածների տարեկան եկամուտներն աճել են 6 %-ով: Հարկ է նշել, որ, թեև ձկնաբուծության ոլորտում գրանցվել է տարեկան եկամտի կտրուկ աճ (21 %) մրգի և բանջարեղենի ոլորտում գրանցված համեստ աճի (6 %-ով) համեմատ, օրական վարձատրության չափը մրգի և բանջարեղենի ոլորտում մոտ 2.7 անգամ բարձր է:

Աղյուսակ 3.42: ՖՏ-ներում զբաղվածների միջին զբաղվածությունը և վարձատրությունը բազիսային և ազդեցության տարիներին

	Միջին զբաղվածությունը մեկ տարում, օր	Միջին վարձատրության չափն օրական, դրամ	Միջին վարձատրության չափը տարեկան, դրամ
Բազիսային տարի՝ 2010 թվական			
Ձկնաբուծություն	264	1,412	372,857
Բանջարեղենի և մրգի արտադրություն	71	4,366	309,509
Ընդամենը	73	4,267	310,099
Ազդեցության տարի՝ 2012 թվական			
Ձկնաբուծություն	264	1,708	451,000
Բանջարեղենի և մրգի արտադրություն	69	4,748	328,457
Ընդամենը	71	4,615	329,904
Աճ/Նվազում 2012 թ.-ին՝ ի համեմատ 2010 թ.-ի,%			
Ձկնաբուծություն	0 %	21 %	21 %
Բանջարեղենի և մրգի արտադրություն	-2 %	9 %	6 %
Ընդամենը	-2 %	8 %	6%

3.5.2 ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա

ՀԳՏՏՁՀ հաճախորդ ընկերությունները հաշվարկում և Պետական բյուջե են փոխանցում հետևյալ տեսակի հարկերի գումարները.

- ԱԱՀ,
- Շահութահարկ,
- Եկամտային հարկ,
- Եկամտահարկ և Սոց. վճար՝ մինչև 2013թ.-ը,
- Գույքահարկ,
- Հողի հարկ,
- Բնօգտագործման վճար,
- և այլ հարկեր ու տուրքեր:

Աղյուսակ 3.43: Հաճախորդ ընկերություններում գոյացած համախառն հարկերը, հազ. դրամ

Ընկերություններ	2009	2010	2011	2012	2013
Ակվատեխավտոմատիկա	110,148	151,180	180,251	180,041	270,071
Մեղրու պահածոների գործարան	5,009	10,262	-821	6,903	15,258
Ագրոլոգ		508	547	695	472
365 Գրուպ		12,126	14,642	14,916	35,869
Չիզ Թաուն		0	714	2,533	31,664
Հարպրոդ		14,474	14,407	10,132	52,487
Փյունիկ ՏԹՖ		338	39,126	29,772	12,726
Սիս Նատուրալ			116,360	193,182	190,608
Արալեռ ՏՈՏ			2,603	3,003	2,608
Ընդամենը	**115,157**	**188,889**	**367,828**	**441,176**	**611,764**

2012թ.-ին, ընդհանուր առմամբ, հաճախորդ ընկերություններում հաշվարկվել է 441,176 հազ. դրամ հարկ, որից 179,610 հազ. դրամը ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում հավելյալ գոյացած հարկերի գումարներն են (մոտ 41%):

Աղյուսակ 3.44: Հաճախորդ ընկերություններում առաջացած հավելյալ հարկերը ազդեցության տարիներին բազիսային տարվա համեմատ

Ընկերություններ	Գոյացած հարկերը բազիսային տարում (հազ. դրամ)		Ազդեցության տարիներ, գոյացած հարկերի աճ/նվազում բազիսային տարվա համեմատ (հազ. դրամ)			
			2010 թ.	2011 թ.	2012 թ.	2013[14] թ.
Ակվատեխավտոմատիկա	2009 թ.	110,148	41,033	70,103	69,893	159,923
Մեղրու պահածոների գործարան	2009 թ.	5,009	5,253	-5,830	1,894	10,250
Ագրոլոգ	2010 թ.	508		38	186	-36
365 Գրուպ	2010 թ.	12,126		2,515	2,790	23,743
Չիզ Թաուն	2010 թ.	0		714	2,533	31,664
Հարպրոդ	2010 թ.	14,474		-67	-4,342	38,013
Փյունիկ ՏԹՖ	2010 թ.	338		38,788	29,434	12,388
ՍԻՍ Նատուրալ	2011 թ.	116,360			76,822	74,248
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	2011 թ.	0			400	6
Ընդամենը		**258,964**	**46,285**	**106,262**	**179,610**	**350,198**

Ինչպես երևում է գծանկարից, գրեթե բոլոր ընկերություններում գոյացած հարկերի գումարները աճել են բազիսային տարվա համեմատ: Բացառություն է կազմում միայն Հարպրոդ ընկերությունը, որի հաշվարկված հարկերի ընդհանուր գումարը, բազիսային տարվա համեմատ, նվազել է մոտ 4 մլն դրամով:

Գծանկար 3.22: 2012թ.-ին հաշվարկված հարկերի աճը/նվազումը բազիսային տարվա նկատմամբ , հազ. դրամ



[14] Կանխատեսում (հիմք են ընդունվել առաջին կիսամյակի ցուցանիշները)

Բացարձակ արժեքով գնահատման դեպքում, հարկերի գումարի ամենամեծ աճ են գրանցել երեք ընկերություն՝ Միս Նատուրալ ՓԲԸ-ն (76.8 մլն դրամ), Ակվատեխավտոմատիկա ՓԲԸ-ն (69.8 մլն դրամ) և Փյունիկ ՏԹՖ (29.4 մլն դրամ)։ 2013թ.-ին բոլոր ընկերություններում կգրանցվի հարկային հատկացումների աճ, բացառությամբ Ագրոլոգ և Փյունիկ ՏԹՖ ՓԲԸ-ների, որոնց գործունեության վատթարացումը բացասաբար կազդի հարկային վճարումների վրա։
Ընկերությունների կողմից տրամադրված տվյալների, շրջանառության, աշխատավարձային ֆոնդի և այլ ցուցանիշների կանխատեսումների, ինչպես նաև հարկային դաշտում գործող հարկային դրույքաչափերի հիման վրա կատարվել է հաճախորդ ընկերություններում գոյացող հարկերի գումարների կանխատեսումները 2014-2018թթ. համար։

Աղյուսակ 3.45: Ընկերություններում գոյացող հարկերի գումարների կանխատեսումները 2014-2018թթ.-ի համար, հազ. դրամ

Ընկերություններ	2014	2015	2016	2017	2018
Ակվատեխավտոմատիկա	283,931	298,511	313,850	329,986	346,962
Մեղրու պահածոների գործարան	16,252	17,093	17,963	18,878	19,840
Ագրոլոգ	526	564	600	617	634
365 Գրուպ	37,414	39,038	40,748	42,546	44,438
Չիզ Թաուն	14,937	15,712	16,528	17,385	18,288
Հարպրոդ	55,070	57,787	60,350	63,046	65,881
Փյունիկ ՏԹՖ	26,971	28,252	29,600	31,017	32,509
Միս Նատուրալ	204,089	214,653	225,204	236,303	247,979
Արալեռ ՏՈՏ	3,934	4,739	4,932	5,135	5,348
Ընդամենը	**643,124**	**676,351**	**709,774**	**744,912**	**781,878**
Աճ/անկում նախորդ տարվա համեմատ, %	5%	5%	5%	5%	5%

Այսպիսով, ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում 2018թ.-ին ՀԸ-ները ն պետական բյուջե կփոխանցե հավելյալ **520.3 մլն ՀՀ դրամ** հարկային գումար։

Աղյուսակ 3.46: Հաճախորդ ընկերություններում առաջացած հավելյալ հարկերը ազդեցության տարիներին՝ 2014-2018թթ. բազիսային տարվա համեմատ

Ընկերություններ	Գոյացած հարկերը բազիսային տարում (հազ. դրամ)		Ազդեցության տարիներ, գոյացած հարկերի աճ/նվազում բազիսային տարվա համեմատ (հազ. դրամ)				
			2014	2015	2016	2017	2018
Ակվատեխավտոմատիկա	2009 թ.	173,783	188,363	203,702	219,838	236,814	236,814
Մեղրու պահածոների գործարան	2009 թ.	11,243	12,084	12,954	13,869	14,831	14,831
Ագրոլոգ	2010 թ.	18	56	92	108	126	126
365 Գրուպ	2010 թ.	25,287	26,912	28,621	30,420	32,311	32,311
Չիզ Թաուն	2010 թ.	14,937	15,712	16,528	17,385	18,288	18,288
Հարպրոդ	2010 թ.	40,596	43,313	45,876	48,572	51,407	51,407
Փյունիկ ՏԹՖ	2010 թ.	26,633	27,914	29,262	30,679	32,171	32,171
ՍԻՍ Նատուրալ	2011 թ.	87,729	98,293	108,844	119,943	131,619	131,619
ԱՐԱԼԵՌ ՏՈՏ	2011 թ.	0	1,331	2,136	2,329	2,532	2,745
Ընդամենը		**258,964**	**381,557**	**414,785**	**448,207**	**483,346**	**520,311**

3.5.3 ՀԳՏՏԶՀ-ի ծրագրերի սոցիալական արդյունավետության գնահատում արժեքային շղթայի բազմապատկչի (Value Chain Multiplier Index/VCMI) ինդեքսի հիման վրա:

VCMI ինդեքսը չափում է ներդրումների արդյունքում գոյացած հավելյալ շահույթը/արժեքը **բնակչության/տնային տնտեսությունների (ֆերմերներ, ընկերություն և ֆերմերային տնտեսության աշխատակիցներ) և հասարակության (հարկային մուտքերի ավելացում պետական բյուջե) մակարդակներում**:

VCMI ինդեքսի հաշվարկը իրականացվել է համաձայն սույն հետազոտության առաջադրանքում բերված մեթոդաբանության/բանաձևի:

Որտեղ՝

B - տնային տնտեսությունների համար գոյացող շահույթ/արժեքն է, որը ներառում է.

- ֆերմերների կողմից վաստակած եկամուտը,
- համախորդ ընկերության կողմից վճարված առձեռն աշխատավարձերը,
- պետական բյուջե հաշվառված հարկերը:

$B_{with\ investments}$ - ներդրումների առկայությամբ սցենար:

B_{base} – առանց ներդրումների սցենար: “Առանց ներդրումներ” սցենարը հաշվարկվել է՝ կիրառելով տարեկան 5.2% աճ՝ բազիսային տարվա և բազիսային տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար:

Inv – ՀԳՏՏԶՀ-ի ներդրումներ՝ ՀԳՏՏԶՀ-ի կողմից ՀԸ-ներին տրամադրած ներդրումային գումարը:

i – իրականացման ամիս՝ ներդրումների ներգրավման տարուց մինչև 2018թ.-ը ընկած ժամանակահատվածը:

d – զեղչման գործակից: Որպես զեղչման գործակից կիրառվել է պետական պարտատոմսերի տոկոսադրույքը, մասնավորապես 2012թ.-ին Պետական միջինժամկետային պարտատոմսերի եկամտաբերության տարեկան միջին ցուցանիշը (14.3%):

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ՀԳՏՏԶՀ-ի ծրագրի արդյունքում **տնային տնտեսությունների մակարդակում գոյացած Զուտ եկամուտները/Արժեքը** և դրանց կառուցվածքը: Ինչպես երևում է աղյուսակից Ծրագրի իրականացման առաջին տարում ՏՏ-ների համար գոյացած արժեքը կազմել է 51 մլն դրամ, որի գերակշիռ մասը բաժին է ընկել պետական բյուջե փոխանցվող հարկերին (79%): Հետագա տարիներին ՏՏ-ների մակարդակում գոյացող արժեքի կառուցվածքը փոխվում է, այսպես 2011թ.-ից մինչև 2018թ.-ը՝ գերակշիռ մասը (70-82%) բաժին է ընկնում **ֆերմերային տնտեսությունների կողմից վաստակած եկամտին:** ՏՏ-ների աշխատավարձից վաստակած եկամտին բաժին է ընկնում ամենաքիչ մասնաբաժինը (3-7%), միևնույն ժամանակ տարեցտարի

աշխատավարձին ընկնող մասնաբաժինը մի փոքր ավելանում է (2010թ.-ին 3%-ից մինչև 2018թ.-ին՝ 7%):

Աղյուսակ 3.47: ՀԳՏՏԶՀ-ի ծրագրի արդյունքում տնային տնտեսությունների մակարդակում գոյացած Զուտ եկամուտների/Արժեքի կառուցվածքը ծրագրի իրականացման տարիներին

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Ֆերմերների եկամուտներ վաճառքից	18%	72%	82%	73%	71%	71%	71%	70%	70%
Տնային տնտեսությունների եկամուտներ աշխատավարձից	3%	5%	5%	6%	7%	7%	7%	7%	7%
Պետական բյուջե հաշվառված հարկերը	79%	23%	13%	22%	22%	22%	22%	22%	23%
Ընդամենը զուտ արժեք/եկամուտ, մլն դրամ	51.0	405.5	1,159.5	1,426.5	1,495.1	1,551.3	1,602.8	1,656.4	1,712.4

ՀԳՏՏԶՀ-ի ծրագրի կողմից **1,791 մլն դրամի ներդրումների** արդյունքում տնային տնտեսությունների մակարդակում գոյացած **Զուտ եկամուտների/Արժեքի զեղչված արժեքը** 9 տարիների համար **կազմում է 5,141 մլն դրամ**, իսկ **VCMI ինդեքսը՝** **2.87**: Այսպիսով, ՀԳՏՏԶՀ-ի ծրագրի կողմից իրականացված ներդրումների յուրաքանչյուր դրամի հաշվով տնային տնտեսությունների համար ստեղծվել է 2.87 դրամի զուտ եկամուտ (կամ տարեկան միջինը 571 մլն դրամի եկամուտ):

VCMI ինդեքսի հաշվարկը ներկայացված է Հավելված 2-ում:

3.5.4 ՀԳՏՏԶՀ-ի ծրագրերի ազդեցության սուբյեկտիվ գնահատումը շահառուների կողմից

Գծապատկեր 3.22 Հաճախորդ ընկերությունների հետ համագործակցության ազդեցությունը ֆերմերային տնտեսության, ընտանիքի և համայնքի բարեկեցության վրա՝ ըստ ՀԸ-ներին մատակարարում իրականացնող ՖՏ-ների գնահատման:



ՀՀ Սյունիքի մարզ, գյուղ Նռնաձոր

Մկրտիչ Բոյաջյան՝ «Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ-ի մատակարար ֆերմեր

40-ամյա Մկրտիչը քաղաք Մեղրիից Սյունիքի մարզի Նռնաձոր գյուղ է տեղափոխվել 1991 թ.-ին, քանի որ դեռ մանուկ հասակից նա երազում էր հիմնել իր սեփական այգիները և զբաղվել դրանց մշակությամբ: Նա ապրում է իր ծնողների հետ (մայրը՝ 60 տարեկան և հայրը՝ 70 տարեկան), ամուսնացած է, ունի 3 դուստր (12, 8 և 6 տարեկան): Մկրտիչը, նրա 33-ամյա կինը և մայրը զբաղվում են այգեգործությամբ:

Մկրտիչը «Մեղրու պահածոների գործարանի» հետ սկսել է համագործակցել 2005 թվականից՝ մատակարարելով թուզ: Գործարանի հետ աշխատում է պայմանագրային սկզբունքով և այս 8 տարիների ընթացքում արտադրանքի իրացման հետ կապված ոչ մի խնդիր չի ունեցել: 2012 թվականին 10 %-ով ավելացրել է գործարանին մատակարարվող թզի ծավալները՝ հասցնելով 3 տ-ի, որի դիմաց ստացել է 750,000 դրամ եկամուտ: 2012 թվականին Մկրտիչը վաճառել է նաև 30 տ նուռ «Երևանի շամպայն գինիների» և «Պռոշյանի կոնյակի» գործարաններին, որի դիմաց ստացել է 9,000,000 ՀՀ դրամ եկամուտ, ինչպես նաև շուկայահանել է 2 տ արքայանարինջ՝ ստանալով 600,000 ՀՀ դրամ եկամուտ:

Վերջին տարիներին Մկրտիչն ավելացրել է տնկիները և արդեն 2013 թվականին, 2010 թվականի համեմատ, գրեթե 30 %-ով ավելացրել թզի բերքի ծավալները: 2013 թվականին Մկրտիչը ձեռք է բերել 5,000 մ² այգի՝ ներդնելով 2,000,000 դրամ, և հիմնել նռան այգի: 2013 թվականին գրեթե 2,000,000 դրամ Մկրտիչը հատկացրել է իր 15 աշխատողների վարձատրմանը, որոնց թիվն այս տարի 2010 թվականի համեմատ ավելացել է 5-ով:

Վերջին 3 տարիների ընթացքում նա գյուղմթերքից ստացված հասույթով ձեռք է բերել նաև գյուղատնտեսական տեխնիկա և 220 մ² պահեստ՝ ներդնելով ավելի քան 12,000,000 դրամ, ինչպես նաև բարելավվել է տնտեսության կենցաղային պայմանները: Առաջիկա 5 տարիների ընթացքում Մկրտիչը մտադրություն ունի սեփական միջոցներով հիմնել այգիներ և ավելացնել տնկիներ:

Մկրտիչը սիրում է իր աշխատանքը, սիրով մշակում է իր հիմնած այգիները, որոնք ունեն շատ խնամված տեսք: Ավելին՝ 3-4 տարի առաջ գերմանական ֆիլմ նկարահանող մի խումբ նրա այգու մասին ֆիլմ է նկարահանել:

Մկրտիչի գնահատմամբ իր ընտանիքի բարեկեցությունը վերջին երեք տարիների ընթացքում բարելավվել է, քանի որ հողագործությունից և այգեգործությունից ստացված եկամուտը

բավականին բարձր է և գտնում է, որ արժե ներդրումներ կատարել՝ հետագայում գյուղմթերքի արտադրության ծավալներն ընդլայնելու համար:

Ինչպես նշում է Մկրտիչը, Նռնաձոր համայնքի ընդհանուր բարեկեցության մակարդակը ևս բարձրացել է: Նռնաձորը փոքր համայնք է, որտեղ բնակվում է 45 տնային տնտեսություն: Համայնքի բոլոր ընտանիքները զբաղվում են այգեգործությամբ և վաճառում են բերքը ՀԳՏՏԶՀ-ի երկու հաճախորդ ընկերություններին (***«Մեղրու պահածոների գործարան» և «365 Գրուպ»***), ինչպես նաև այլ մթերող կազմակերպություններին և միջնորդներին*:*

«Այգեգործությունից ստացված եկամուտն է պատճառը, որ ոչ ոք չի մտածում համայնքը լքելու մասին: Ավելին՝ բերքահավաքի սեզոնին համայնքում անգամ աշխատուժի խնդիր կա, և շատ ժամանակ աշխատողներ են հրավիրում ՀՀ այլ մարզերից, որոնք ապահովվում են բնակարանով, սննդով և վարձատրվում օրական 5,500 ՀՀ դրամ», - պատմում է Մկրտիչը:

3.6 ՀԳՏՏԶՀ-ի կողմից 2013 թ.-ին ֆինանսավորված ծրագրերի ազդեցության պոտենցիալի գնահատում

2013 թ.-ի հոկտեմբերի 28-ին ՀԳՏՏԶՀ-ի Ներդրումային կոմիտեն հաստատել է երկու ներդրումային ծրագրերի ֆինանսավորումը, որոնք ուղղված կլինեն ՀՀ Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում սպանդանոցների հիմնմանն ու շահագործմանը:

Ներդրումային ծրագրերն իրականացվելու են ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ՓԲԸ-ի[15] և Արզնի մսամթերք ՓԲԸ-ի [16] կողմից՝ Միավորված Ազգերի Կազմակերպության Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ/FAO), «GCP/ARM/004/GRE Աջակցություն սպանդանոցների զարգացմանը Հայաստանում» ծրագրի աջակցությամբ:

«GCP/ARM/004/GRE Աջակցություն Սպանդանոցների զարգացմանը Հայաստանում» ծրագրի շրջանակներում նախատեսված է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը թվով հինգ տնտեսվարողների կտրամադրի սպանդանոցային ժամանակակից սարքավորումներ, ինչպես նաև տեխնիկական աջակցություն սպանդանոցների նախագծման, կառուցման և հետագա շահագործման ընթացքում: Մնացած բոլոր ծախսերը (նեռարյալ կապիտալ շինարարության և շրջանառու միջոցներ) պետք է հանդիսանան տնտեսվարողների՝ մասնավոր հատվածի ներդրումները:

ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ՓԲԸ-ն և Արզնի մսամթերք ՓԲԸ-ն, դիմելով ՀԳՏՏԶՀ-ին, ներգրավել են համապատասխանաբար 100 մլն դրամ[17] և 200 մլն դրամ[18] ներդրումներ ՀՀ Վայոց Ձորի և Կոտայքի մարզերում սպանդանոցների հիմնման և շահագործման ներդրումային ծրագրերն իրականացնելու նպատակով:

ՀԳՏՏԶՀ-ն Արզնի մսամթերք ՓԲԸ-ին ֆինանսական միջոցներ կտրամադրի երկու փուլով.

- Ժամանակակից պահանջներին համապատասխանող սպանդանոցի շինարարություն – 100,000,000 ՀՀ դրամ /առաջին փուլ/;
- մսոսկրային ալյուրի արտադրության համար սարքավորումների ձեռքբերում - 100,000,000 ՀՀ դրամ /երկրորդ փուլ/:

Ստորև ներկայացված է ամփոփ տեղեկատվություն սպանդանոցների տեղակայման վայրի, հզորությունների, մթերման աշխարհագրության և այլնի վերաբերյալ:

---

[15] ՀԳՏՏԶՀ-ի առկա ՀԸ

[16] ՀԳՏՏԶՀ-ի նոր ՀԸ

[17] որպես ստորադաս փոխառություն

[18] 100 մլն դրամ՝ սեփական կապիտալում ներդրում, մնացածը՝ ստորադաս փոխառություն

	Արզնի մսամթերք ՓԲԸ	ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ՓԲԸ
Տեղակայման վայրը	ՀՀ, Կոտայքի մարզ, Արզնի համայնք, հասցե՝ Արզնի - Աբովյան խճուղի 5/1	Վայոց Ձորի մարզ, Զառիթափ համայնքի տարածք, (Վայք քաղաքից 4 կմ հեռավորության վրա Երևան-Սիսիան մայրուղուց 80 մետր հեռավորության վրա):
Առավելագույն հզորությունը	մեկ հերթափոխում 150 գլուխ՝ -30 գլուխ ԽԵԿ -60 գլուխ ՄԵԿ - 60 գլուխ խոզ	մեկ հերթափոխում 218 գլուխ՝ -18 գլուխ ԽԵԿ -200 գլուխ ՄԵԿ
Մատուցվող ծառայությունները	- կենդանիների մորթի ծառայությունների մատուցում, - ընկերության կողմից գնվող անասունների մորթ, տեսակավորում և վաճառք, - մսուկրային ալյուրի արտադրություն	- կենդանիների մորթի ծառայությունների մատուցում, - ընկերության կողմից գնվող անասունների մորթ, տեսակավորում, փաթեթավորում և մսի վաճառք,
Հաճախորդներ	-խոշոր և մանր եղջերավոր կենդանիների, խոզերի բուծմամբ զբաղվող ֆերմերային տնտեսություններ -տավարի, ոչխարի, խոզի իրացման մանրամեծածախ ցանցեր -արտահանող կազմակերպություններ	-խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բուծմամբ զբաղվող ֆերմերային տնտեսություններ -տավարի, ոչխարի իրացման մանրամեծածախ ցանցեր -արտահանող կազմակերպություններ
Մթերման աշխարհագրությունը	Կոտայքի մարզի համայնքներ, Կոտայքի մարզին հարակից Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերի համայնքներ	Վայոց Ձորի մարզի համայնքներ, Վայոց Ձորի մարզին հարակից Սյունիքի և Արարատի մարզերի համայնքներ

3.6.1 ՀԳՏՏՁՀ-ի կողմից 2013թ.-ին ֆինանսավորված ծրագրերի ազդեցության պոտենցիալը ֆերմերներից գնումների ծավալի, արժեքի և տեսականու վրա

Ստորև բերված Աղյուսակ 3.6.1-ում ներկայացված են սպանդանոցների կողմից ֆերմերային տնտեսություններին մատուցվող ծառայությունների վերաբերյալ կանխատեսումները 2014-2020 թթ.-ի համար, ներառյալ ծառայությունների ծավալը՝ սպանդի ենթարկված և մթերված կենդանիների գլխաքանակը, սպանդանոցներից օգտվող ՖՏ-ների թիվը:

Կանխատեսումների համար հիմք են հանդիսացել տվյալների հետևյալ աղբյուրները.

- ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ՓԲԸ-ի և Արզնի մսամթերք ՓԲԸ-ի կողմից ներկայացված ներդրումային ծրագրերը (այսուհետ՝ ՆԾ), մասնավորապես՝ ՆԾ-ում ներկայացված ՖՏ-ներին մատուցվող ծառայությունների ծավալներն ըստ կենդանիների տեսակների:
- ՖՏ-ների շրջանակներում իրականացված քանակական հետազոտության արդյունքները:

Ենթադրություններ/կանխատեսման հիմքեր.

- Համաձայն ներդրումային ծրագրի ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ՓԲԸ-ն իր գործունեությունը պետք է սկսեր 2013թ.-ի երկրորդ կեսից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆինանսավորումն իրականացվել է 2013թ.-ի վերջին, ենթադրվում է, որ ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ՓԲԸ-ն իր գործունեությունը կսկսի 2014թ.-ի վերջին: Մթերվող ծավալների կանխատեսումների համար հիմք են ընդունվել ներդրումային ծրագրում ներկայացված ցուցանիշները:
- Ըստ ներդրումային ծրագրի **Արզնի մսամթերք ՓԲԸ** -ն իր գործունեությունը պետք է սկսեր 2014թ.-ի հունվար ամսին: Հաշվի առնելով այն փաստը, որ 2013թ.-ի վերջի դրությամբ ֆինանսավորում դեռ չէր իրականացվել, ենթադրվել է, որ **Արզնի մսամթերք ՓԲԸ**-ն իր գործունեությունը կսկսի 2015թ.-ի հունվար ամսին: Մթերվող ծավալների կանխատեսումների համար հիմք են ընդունվել ներդրումային ծրագրում ներկայացված ցուցանիշները:
- Ազդեցության առաջին տարվա համար մեկ ՖՏ-ի հաշվով մթերված կենդանիների քանակները հաշվարկվել են՝ հիմք ընդունելով մեկ ՖՏ-ի հաշվով վաճառվող միջին տարեկան գլխաքանակը (աղբյուր՝ քանակական հետազոտության արդյունքներ): Ազդեցության հետագա տարիների համար ենթադրվել է, որ մեկ ՖՏ-ի հաշվով վաճառվող միջին գլխաքանակը կաճի տարեկան 3%-ով:

- Սպանդանոցներից օգտվող ՖՏ-ների թիվը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝ սպանդի ենթարկված տարեկան գլխաքանակը բաժանվել է մեկ ՖՏ-ի հաշվով մթերված միջին գլխաքանակին:

Աղյուսակ 3.6.1: Սպանդանոցների կողմից մթերվող, սպանդի ենթարկված կենդանիների գլխաքանակ և սպանդանոցի ծառայություններից օգտվող ՖՏ-ների թվի կանխատեսումները 2014-2020 թթ.-ի համար

ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ՓԲԸ	2014թ.	2015թ	2016թ	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Խոշոր եղջերավոր կենդանի (ԽԵԿ), գլուխ	948	3,889	4,788	5,895	7,258	8,936	11,002
Մանր եղջերավոր կենդանի (ՄԵԿ), գլուխ	1,387	3,045	3,852	4,873	6,165	7,798	9,865
Ընդամենը, գլուխ	**2,335**	**6,934**	**8,641**	**10,769**	**13,423**	**16,735**	**20,867**
Մեկ ՖՏ-ի հաշվով մթերված ԽԵԿ, գլուխ	9.7	10.0	10.3	10.6	10.9	11.2	11.6
Մեկ ՖՏ-ի հաշվով մթերված ՄԵԿ, գլուխ	86.0	88.5	91.2	93.9	96.8	99.7	102.6
ԽԵԿ-ի վաճառք իրականացրած ՖՏ-ների թիվը	98	389	465	556	665	795	950
ՄԵԿ-ի վաճառք իրականացրած ՖՏ-ների թիվը	16	34	42	52	64	78	96
Ընդամենը ՖՏ-ների թիվը	**114**	**424**	**508**	**608**	**729**	**873**	**1046**
Արզնի մսամթերք ՓԲԸ	2014թ.	2015թ	2016թ	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Խոշոր եղջերավոր կենդանի (ԽԵԿ), գլուխ	0	3,246	3,569	3,927	4,243	4,536	4,812
Մանր եղջերավոր կենդանի (ՄԵԿ), գլուխ	0	6,485	7,134	7,848	8,476	9,066	9,612
Խոզ, գլուխ	0	6,485	7,134	7,848	8,476	9,066	9,612
Ընդամենը, գլուխ	0	17,837	19,623	21,195	22,668	24,036	25,232
Մեկ ՖՏ-ի հաշվով մթերված ԽԵԿ, գլուխ	0	9.8	10.1	10.4	10.7	11.0	11.4
Մեկ ՖՏ-ի հաշվով մթերված ՄԵԿ, գլուխ	0	46.0	47.4	48.8	50.3	51.8	53.3
Մեկ ՖՏ-ի հաշվով մթերված խոզ, գլուխ	0	33.4	34.4	35.4	36.5	37.6	38.7
ԽԵԿ-ի վաճառք իրականացրած ՖՏ-ների թիվը	0	331	354	378	396	411	424
ՄԵԿ-ի վաճառք իրականացրած ՖՏ-ների թիվը	0	141	151	161	169	175	180
Խոզի վաճառք իրականացրած ՖՏ-ների թիվը	0	194	207	221	232	241	248
Ընդամենը ՖՏ-ների թիվը	**0**	**666**	**712**	**760**	**797**	**828**	**852**
Ընդամենը կենդանի վաճառող ՖՏ-ների թիվը	**0**	**1090**	**1219**	**1368**	**1526**	**1700**	**1898**

ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ՓԲԸ-ն նախատեսում է իր գործունեության առաջին տարվա ընթացքում[19] սպանդի ենթարկել շուրջ 950 գլուխ ԽԵԿ և 1,387 գլուխ ՄԵԿ՝ շահագործելով առկա հզորությունների[20] համապատասխանաբար 37% և 3%-ը: Ընկերությունը նախատեսում է 2017թ.-ին սպանդի ենթարկել շուրջ 5,900 գլուխ ԽԵԿ և 4,900 գլուխ ՄԵԿ՝ շահագործելով

[19] Գործունեությունը կմեկնարկի 2014թ.-ի նոյեմբեր ամսից
[20] Մեկ հերթափոխի դեպքում հզորությունները

առկա հզորությունների[21] համապատասխանաբար 90%-ը և 6%-ը: 2018թ.-ից ի վեր Ընկերությունը ԽԵԿ-երի սպանդը կիրականացնի երկու հերթափոխով: 2020թ.-ին նախատեսվում է սպանդի ենթարկել շուրջ 11,000 գլուխ ԽԵԿ (շահագործելով հզորությունների 84%-ը) և 9,900 գլուխ ՄԵԿ (շահագործելով հզորությունների 13%-ը): Գործունեության առաջին տարվա ընթացքում սպանդանոցի ծառայություններից կօգտվեն ԽԵԿ-ի բուծմամբ զբաղվող շուրջ 100 ՖՏ-ներ և ՄԵԿ-ի բուծմամբ զբաղվող շուրջ 16 ՖՏ-ներ: 2020թ.-ի դրությամբ, սպանդանոցի ծառայություններից կօգտվեն 1,000-ից ավելի ՖՏ-ներ, որոնց գերակշիռ մասը (950 ՖՏ) կօգտվի ԽԵԿ-ի սպանդի ծառայություններից:

Արգնի մսամթերք ՓԲԸ-ն իր գործունեության առաջին տարվա ընթացքում կսպասարկի շուրջ 670 ՖՏ, որի կեսը (շուրջ 331 ՖՏ) կօգտվի ԽԵԿ-երի սպանդի ծառայությունից: 2020թ.-ին Ընկերության հաճախորդների/մատակարարների թիվը կաճի՝կազմելով 852 ՖՏ: Ընկերությունն իր գործունեության առաջին տարում կշահագործի արտադրական հզորությունների[22] 30%-ը, իսկ 2020թ.-ին կավելացնի արտադրական հզորությունների շահագործման ծավալները՝ հասցնելով այն շուրջ 45%-ի:

3.6.2 ՀԳՏՏԶՀ-ի կողմից 2013 թ.-ին ֆինանսավորված ծրագրերի ազդեցությունը ֆերմերային տնտեսության մակարդակում

ՀՀ-ում մսի ապրանքայնության մակարդակը[23] բավականին բարձր է (2012թ.-ին կազմել է 83.7%)՝ ի համեմատ գյուղատնտեսական այլ արտադրատեսակների: Ընդ որում՝ ՖՏ-ներն իրենց կողմից արտադրած մսամթերքի 81.1%-ը վաճառել են կանխիկ դրամով և միայն 2.4%-ն են իրացրել ապրանքափոխանակման միջոցով /տե՛ս Աղյուսակ 3.6.2/:

---

[21] մեկ հերթափոխի դեպքում հզորությունները

[22] մեկ հերթափոխի դեպքում հզորությունները

[23] Գյուղատնտեսական մթերքի ապրանքայնության մակարդակն իրենից ներկայացնում է տնտեսության կողմից վաճառված, ապրանքափոխանակման և ծառայությունների դիմաց բնամթերքով տրված ծավալների տեսակարար կշիռների հանրագումարը:

Աղյուսակ 3.6.2: Գյուղատնտեսական մթերքի ապրանքայնության մակարդակը* 2011 – 2012 թթ., ՀՀ-ում[24], (տոկոսներով)

Բուսաբուծություն											
Հացահատիկ և հատիկընդեղեն		Կարտոֆիլ		Բանջարեղեն		Պարենային բոստան		Պտուղ և հատապտուղ		Խաղող	
2011	2012	2011	2012	2011	2012	2011	2012	2011	2012	2011	2012
32.7	33.0	40.5	40.8	77.4	78.0	95.2	95.2	52.1	65.9	85.1	85.6

Անասնաբուծություն									
Միս		Կաթ		Ձու		Բուրդ		Մեղր	
2011	2012	2011	2012	2011	2012	2011	2012	2011	2012
79.8	83.7	51.4	51.1	39.7	45.5	42.0	49.1	62.6	52.7

Աղյուսակ 3.6.3 Մսի իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից, (արտադրության ծավալի նկատմամբ, %)

Մարզերի անվանումը	Ընդամենը	*այդ թվում՝*					
		վաճառվել է	տրվել է ապրանքափո-խանակման դիմաց	տրվել է բնամթերքով ծառայություն ների դիմաց	օգտագործվել է տնտեսություն ում	*դրանից՝* վերամշակ-վել է	մնացորդը տնտեսու-թյունում
Ա	1	2	3	4	5	6	7
ՀՀ	100	81.1	2.4	0.2	15.9	2.8	0.4
Արագածոտն	100	97.1	-	-	2.9	25.3	-
Արարատ	100	83.9	-	-	16.1	3.4	-
Արմավիր	100	84.6	-	-	15.4	5.6	-
Գեղարքունիք	100	68.9	7.6	-	23.5	0.2	-
Լոռի	100	72.3	-	-	27.7	-	-
Կոտայք	100	89.4	-	-	10.6	2.4	-
Շիրակ	100	78.1	2.2	1.8	17.9	-	-
Սյունիք	100	75.2	3.6	0.3	20.9	-	-
Վայոց ձոր	100	77.1	-	-	22.1	22.0	0.8
Տավուշ	100	78.6	0.4	0.1	17.2	0.2	3.7

Միևնույն ժամանակ, ինստիտուցիոնալ սպանդանոցների և մսի մթերման օղակների բացակայությունը ՀՀ-ում հանգեցնում է նրան, որ մսի արտադրության, մատակարարման և իրացման շղթան կարգավորվում է տարերայնորեն: ՖՏ-ների համար հասանելի չէ կայուն և կանոնակարգված մսի մթերման/իրացման ենթակառուցվածքը, ինչը բացասաբար է ազդում ՖՏ-ների կողմից ներդրումներ իրականացնելու

[24] Աղբյուր՝ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔԻ ԻՐԱՑՈՒՄԸ (ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ) ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ»Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն

կարողությունների/հնարավորությունների վրա (և որպես հետևանք, սահմանափակում է ՖՏ-ների եկամուտ վաստակելու հնարավորությունները):

Հաշվի առնելով առկա իրավիճակը, սպանդանոցները կարող են լրացնել շուկայում առկա բացը՝ ծառայելով ՖՏ-ների համար որպես մսի իրացման կայուն և կանոնակարգված շուկա: (Հակառակ դեպքում, սպանդանոցների ծառայությունները պահանջված չեն լինի ՖՏ-ների կողմից, քանի որ վերջիններս ներգրավված են ներկայումս գործող մսի մատակարարման և իրացման շղթայում, որի միջոցով իրացնում են արտադրանքի գերակշիռ մասը (80%-ից ավելին)):

ՀԳՏՏՋՀ-ի կողմից 2013 թ.-ին ֆինանսավորված ծրագրերի ազդեցությունը ֆերմերային տնտեսության մակարդակում կարող է արտահայտվել հետևյալ տրամաբանական հաջորդությամբ.

Գծապատկեր 3.23: Սպանդանոցների գործունեության ազդեցությունը ՖՏ-ների մակարդակում



3.6.3 ՀԳՏՏՁՀ-ի կողմից 2013 թ.-ին ֆինանսավորված ծրագրերի ազդեցության պոտենցիալը ֆերմերային տնտեսության եկամտի վրա

Ստորև բերված Աղյուսակ 3.6.4-ում և Աղյուսակ 3.6.5-ում ներկայացված են ՖՏ-ների եկամուտների աճի վերաբերյալ կանխատեսումները:

Ենթադրություններ/կանխատեսման հիմքեր.

- Սպանդանոցների կողմից մթերվող կենդանիների գլխաքանակը և սպանդանոցի ծառայություններից օգտվող ՖՏ-ի թվի կանխատեսումները 2014-2020 թթ.-ի համար (տե՛ս Աղյուսակ 3.6.1):
- Մթերվող կենդանիների միջին քաշը բազիսային տարվա համար սահմանվել է՝ հիմք ընդունելով քանակական հետազոտության արդյունքները: Մթերվող կենդանիների միջին քաշը փոփոխման է ենթարկվել ազդեցության տարիների համար, հաշվի առնելով.
    - ա. դիտարկված ՖՏ-ներում կենդանիների ցածր մթերատվությունը՝ համեմատ արդյունավետ բտման դեպքում հնարավոր մթերատվության չափանիշների;
    - բ. այն ենթադրությունը, որ կայուն շուկայի հասանելիությունը թույլ կտա ՖՏ-ներին ներդրումներ իրականացնել՝ կենդանիների բտման արդյունավետությունը բարելավելու նպատակով , ինչն իր հերթին դրական ազդեցություն կունենա կենդանիների մթերատվության վրա;
    - գ. կենդանիների մթերատվության (կենդանի քաշը) ցուցանիշի տարեկան աճը ԽԵԿ-երի և ՄԵԿ-երի համար կազմել է 5% , իսկ խոճկորների համար՝ 3%:
- Մթերվող կենդանիների համար վճարվող միջին գինը[25] բազիսային տարվա համար սահմանվել է՝ հիմք ընդունելով հետազոտության արդյունքները: Մթերվող կենդանիների համար վճարվող միջին գինը փոփոխման չի ենթարկվել ազդեցության տարիների համար, քանի որ ներքին շուկայական գինը ձևավորվում է առաջարկի և պահանջարկի հիման վրա, և հայտնի չէ՝ արդյո՞ք սպանդանոցները կառաջարկեն իրենց հաճախորդ/մատակարար ՖՏ-ներին շուկայական գնից ավելի բարձր կամ ցածր գին:

[25] 1կգ կենդանի քաշի համար

Աղյուսակ 3.6.4: ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ՓԲԸ-ի պոտենցիալ մատակարար ՖՏ-ների եկամուտները բազիսային տարում

ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ՓԲԸ	Բազիսային տարի
Խոշոր եղջերավոր կենդանի (ԽԵԿ)	2012թ.
ՖՏ-ի միջին տարեկան վաճառքը, գլուխ	9.7
ԽԵԿ-ի միջին քաշը, կգ	186
Միջին գինը 1կգ կենդանի քաշի համար, դրամ	1005
ԽԵԿ-ի միջին արժեքը, դրամ	186,923
Միջին տարեկան եկամուտը ՖՏ-ի համար, հազ. դրամ	1,813
Հավելյալ եկամուտ, հազ. դրամ	
ԽԵԿ-ի վաճառք իրականացրած ՖՏ-ների թիվը	98
ՖՏ-ների համախառն տարեկան եկամուտը, հազ. դրամ	177,253
Համախառն հավելյալ եկամուտ, հազ. դրամ	
Մանր եղջերավոր կենդանի (ՄԵԿ)	
ՖՏ-ի միջին տարեկան վաճառքը, գլուխ	86.0
ՄԵԿ-ի միջին քաշը, կգ	37.9
Միջին գինը 1կգ կենդանի քաշի համար, դրամ	1,094
ՄԵԿ-ի միջին արժեքը, դրամ	41,500
Միջին տարեկան եկամուտը ՖՏ-ի համար, հազ. դրամ	3,567
Հավելյալ եկամուտ, հազ. դրամ	
ՄԵԿ-ի վաճառք իրականացրած ՖՏ-ների թիվը	16
ՖՏ-ների համախառն տարեկան եկամուտը, հազ. դրամ	57,544

Այսպիսով՝ ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ՓԲԸ-ի սպանդանոցի գործունեության արդյունքում 2020թ.-ին, բազիսային տարվա համեմատ, ԽԵԿ վաճառող 950 ՖՏ-ի միջին տարեկան եկամուտը կաճի շուրջ 1 մլն դրամով, իսկ ՄԵԿ վաճառող 96 ՖՏ-ի միջին տարեկան եկամուտը՝ 2.1 մլն դրամով: 2020թ.-ին անասնաբուծության ոլորտում ձևավորված հավելյալ եկամուտը կկազմի շուրջ 3.1 մլրդ դրամ, որի գերակշիռ մասը (84% կամ շուրջ 2.6 մլրդ դրամ) բաժին կընկնի տավարաբուծության ոլորտում ներգրավված ՖՏ-ներին:

Աղյուսակ 3.6.5: ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ՓԲԸ-ի կողմից հիմնվող սպանդանոցի գործունեության ազդեցությունը ՖՏ-ների եկամտի վրա

ԱՐԱԼԵՌ ՏՈՏ ՓԲԸ	Ազդեցության տարիներ						
Խոշոր եղջերավոր կենդանի (ԽԵԿ)	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
ՖՏ-ի միջին տարեկան վաճառքը, գլուխ	9.7	10.0	10.3	10.6	10.9	11.2	11.6
ԽԵԿ-ի միջին քաշը, կգ	186	195	205	215	226	237	249
Միջին գինը 1կգ կենդանի քաշի համար, դրամ	1005	1005	1005	1005	1005	1005	1005
ԽԵԿ-ի միջին արժեքը, դրամ	**186,923**	**196,269**	**206,083**	**216,387**	**227,206**	**238,566**	**250,495**
Միջին տարեկան եկամուտը ՖՏ-ի համար, հազ. դրամ	**1,813**	**1,961**	**2,121**	**2,294**	**2,481**	**2,683**	**2,901**
Հավելյալ եկամուտ, հազ. դրամ	0	148	308	480	667	870	1,088
ԽԵԿ-ի վաճառք իրականացրած ՖՏ-ների թիվը	98	389	465	556	665	795	950
ՖՏ-ների համախառն տարեկան եկամուտը, հազ. դրամ	**177,253**	**763,309**	**986,775**	**1,275,664**	**1,649,127**	**2,131,925**	**2,756,068**
Համախառն հավելյալ եկամուտ, հազ. դրամ	**0**	**586,056**	**809,523**	**1,098,411**	**1,471,874**	**1,954,673**	**2,578,815**
Մանր եղջերավոր կենդանի (ՄԵԿ)							
ՖՏ-ի միջին տարեկան վաճառքը, գլուխ	86.0	88.5	91.2	93.9	96.8	99.7	102.6
ՄԵԿ-ի միջին քաշը, կգ	37.9	39.8	41.8	43.9	46.1	48.4	50.8
Միջին գինը 1կգ կենդանի քաշի համար, դրամ	1,094	1,094	1,094	1,094	1,094	1,094	1,094
ՄԵԿ-ի միջին արժեքը, դրամ	41,500	43,575	45,754	48,041	50,444	52,966	55,614
Միջին տարեկան եկամուտը ՖՏ-ի համար, հազ. դրամ	**3,567**	**3,858**	**4,173**	**4,513**	**4,880**	**5,278**	**5,708**
Հավելյալ եկամուտ, հազ. դրամ	0	291	605	945	1,313	1,711	2,141
ՄԵԿ-ի վաճառք իրականացրած ՖՏ-ների թիվը	16	34	42	52	64	78	96
ՖՏ-ների համախառն տարեկան եկամուտը, հազ. դրամ	**57,544**	**132,702**	**176,261**	**234,119**	**310,969**	**413,044**	**548,626**
Համախառն հավելյալ եկամուտ, հազ. դրամ	**0**	**75,158**	**118,718**	**176,575**	**253,425**	**355,500**	**491,082**

Արզնի մսամթերք ՓԲԸ-ի սպանդանոցի գործունեության արդյունքում 2020 թ.-ին՝ բազիսային տարվա համեմատ ԽԵԿ վաճառող 424 ՖՏ-ի միջին տարեկան եկամուտը կաճի շուրջ 900 հազ դրամով, իսկ ՄԵԿ վաճառող 180 ՖՏ-ի և խոճկոր վաճառող 249 ՖՏ-ի միջին տարեկան եկամուտը՝ համապատասխանաբար 976 հազ. դրամով և 953 հազ դրամով: 2020թ.-ին անասնաբուծության ոլորտում ձևավորված հավելյալ եկամուտը

կկազմի շուրջ 1.2 մլրդ դրամ, որի գերակշիռ մասը (46% կամ շուրջ 560 մլն դրամ) բաժին կընկնի տավարաբուծության ոլորտում ներգրավված ՖՏ-ներին:

Աղյուսակ 3.6.6: Արզնի մսամթերք ՓԲԸ -ի պոտենցիալ մատակարար ՖՏ-ների եկամուտները բազիսային տարում

Արզնի մսամթերք ՓԲԸ	Բազիսային տարի
Խոշոր եղջերավոր կենդանի (ԽԵԿ)	2012թ.
ՖՏ-ի միջին տարեկան վաճառքը, գլուխ	9.8
ԽԵԿ-ի միջին քաշը, կգ	182
Միջին գինը 1կգ կենդանի քաշի համար, դրամ	1062
ԽԵԿ-ի միջին արժեքը, դրամ	**193,265**
Միջին տարեկան եկամուտը ՖՏ-ի համար, հազ. դրամ	**1,894**
Հավելյալ եկամուտ, հազ. դրամ	
ԽԵԿ-ի վաճառք իրականացրած ՖՏ-ների թիվը	331
ՖՏ-ների համախառն տարեկան եկամուտը, հազ. դրամ	**627,339**
Համախառն հավելյալ եկամուտ, հազ. դրամ	
Մանր եղջերավոր կենդանի (ՄԵԿ)	
ՖՏ-ի միջին տարեկան վաճառքը, գլուխ	46.0
ՄԵԿ-ի միջին քաշը, կգ	34.9
Միջին գինը 1կգ կենդանի քաշի համար, դրամ	1,266
ՄԵԿ-ի միջին արժեքը, դրամ	44,224
Միջին տարեկան եկամուտը ՖՏ-ի համար, հազ. դրամ	**2,034**
Հավելյալ եկամուտ, հազ. դրամ	
ՄԵԿ-ի վաճառք իրականացրած ՖՏ-ների թիվը	141
ՖՏ-ների համախառն տարեկան եկամուտը, հազ. դրամ	**286,794**
Համախառն հավելյալ եկամուտ, հազ. դրամ	
Խոզ, խոճկոր	
ՖՏ-ի միջին տարեկան վաճառքը, գլուխ	33.4
Խոճկորի միջին քաշը, կգ	54.0
Միջին գինը 1կգ կենդանի քաշի համար, դրամ	1,537
Խոճկորի միջին արժեքը, դրամ	83,000
Միջին տարեկան եկամուտը ՖՏ-ի համար, հազ. դրամ	**2,772**
Հավելյալ եկամուտ, հազ. դրամ	
Խոճկորի վաճառք իրականացրած ՖՏ-ների թիվը	186
ՖՏ-ների համախառն տարեկան եկամուտը, հազ. դրամ	**515,629**

Աղյուսակ 3.6.7: Արզնի մսամթերք ՓԲԸ -ի կողմից հիմնվող սպանդանոցի գործունեության ազդեցությունը ՖՏ-ների եկամտի վրա

Արզնի մսամթերք ՓԲԸ						
Խոշոր եղջերավոր կենդանի (ԽԵԿ)	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
ՖՏ-ի միջին տարեկան վաճառքը, գլուխ	9.8	10.1	10.4	10.7	11.0	11.4
ԽԵԿ-ի միջին քաշը, կգ	182	191	201	211	221	232
Միջին գինը 1կգ կենդանի քաշի համար, դրամ	1062	1062	1062	1062	1062	1062
ԽԵԿ-ի միջին արժեքը, դրամ	**193,265**	**202,929**	**213,075**	**223,729**	**234,915**	**246,661**
Միջին տարեկան եկամուտը ՖՏ-ի համար, հազ. դրամ	**1,894**	**2,048**	**2,215**	**2,396**	**2,591**	**2,802**
Հավելյալ եկամուտ, հազ. դրամ	0	154	321	502	697	908
ԽԵԿ-ի վաճառք իրականացրած ՖՏ-ների թիվը	331	354	378	396	411	424
ՖՏ-ների համախառն տարեկան եկամուտը, հազ. դրամ	**627,339**	**724,252**	**836,746**	**949,281**	**1,065,575**	**1,186,932**
Համախառն հավելյալ եկամուտ, հազ. դրամ	**0**	**96,913**	**209,406**	**321,942**	**438,236**	**559,593**
Մանր եղջերավոր կենդանի (ՄԵԿ)						
ՖՏ-ի միջին տարեկան վաճառքը, գլուխ	46.0	47.4	48.8	50.3	51.8	53.3
ՄԵԿ-ի միջին քաշը, կգ	34.9	36.7	38.5	40.4	42.5	44.6
Միջին գինը 1կգ կենդանի քաշի համար, դրամ	1266.0	1,266	1,266	1,266	1,266	1,266
ՄԵԿ-ի միջին արժեքը, դրամ	44,224	46,435	48,757	51,195	53,755	56,442
Միջին տարեկան եկամուտը ՖՏ-ի համար, հազ. դրամ	**2,034**	**2,200**	**2,379**	**2,573**	**2,783**	**3,010**
Հավելյալ եկամուտ, հազ. դրամ	0	166	345	539	749	976
ՄԵԿ-ի վաճառք իրականացրած ՖՏ-ների թիվը	141	151	161	169	175	180
ՖՏ-ների համախառն տարեկան եկամուտը, հազ. դրամ	**286,794**	**331,270**	**382,646**	**433,929**	**487,340**	**542,525**
Համախառն հավելյալ եկամուտ, հազ. դրամ	**0**	**44,476**	**95,852**	**147,135**	**200,547**	**255,731**
Խոզ, խոճկոր						
ՖՏ-ի միջին տարեկան վաճառքը, գլուխ	33.4	34.4	35.4	36.5	37.6	38.7
Խոճկորի միջին քաշը, կգ	54.0	55.6	57.3	59.0	60.8	62.6
Միջին գինը 1կգ կենդանի քաշի համար, դրամ	1537.0	1,537	1,537	1,537	1,537	1,537
Խոճկորի միջին արժեքը, դրամ	83,000	85,490	88,055	90,696	93,417	96,220
Միջին տարեկան եկամուտը ՖՏ-ի համար, հազ. դրամ	**2,772**	**2,941**	**3,120**	**3,310**	**3,512**	**3,726**
Հավելյալ եկամուտ, հազ. դրամ	0	169	348	538	740	953
Խոճկորի վաճառք իրականացրած ՖՏ-ների թիվը	186	205	215	226	237	249
ՖՏ-ների համախառն տարեկան եկամուտը, հազ. դրամ	**515,629**	**603,102**	**671,822**	**748,373**	**833,646**	**928,636**

Համախառն հավելյալ եկամուտ, հազ. դրամ	0	87,472	156,193	232,744	318,017	413,007

Ստորև բերված Աղյուսակ 3.6.8-ում ներկայացված են սպանդանոցների պոտենցիալ մատակարարների/հաճախորդների (ՖՏ-ների) համախառն տարեկան եկամուտները բազիսային տարում: Աղյուսակ 3.6.9-ում ներկայացված է սպանդանոցների պոտենցիալ մատակարարների/հաճախորդների (ՖՏ-ների) համախառն տարեկան և հավելյալ եկամուտները ազդեցության տարիներին՝ ըստ անասնաբուծության ենթաճյուղերի:

Աղյուսակ 3.6.8: Սպանդանոցներին պոտենցիալ մատակարարում իրականացնող ՖՏ-ների եկամուտները բազիսային տարում

	Բազիսային տարի (2012թ.)
ԽԵԿ-ի վաճառք իրականացրած ՖՏ-ների թիվը	429
ԽԵԿ-ի վաճառք իրականացրած ՖՏ-ների համախառն տարեկան եկամուտը, հազ. դրամ	804,592
ՄԵԿ-ի վաճառք իրականացրած ՖՏ-ների թիվը	157
ՄԵԿ-ի վաճառք իրականացրած ՖՏ-ների համախառն տարեկան եկամուտը, հազ. դրամ	344,337
Խոզի վաճառք իրականացրած ՖՏ-ների թիվը	186
Խոզի վաճառք իրականացրած ՖՏ-ների համախառն տարեկան եկամուտը, հազ. դրամ	515,629
Ընդամենը ՖՏ-ների թիվը	**772**
ՖՏ-ների համախառն տարեկան եկամուտը, հազ. դրամ	**1,664,558**

ՀԳՏՏՋՀ-ի կողմից սպանդանոցների հիմնմանն ուղղված ներդրումների արդյունքում, ՀՀ անասնաբուծության ոլորտում գոյացած հավելյալ եկամուտը 2020թ.-ին կկազմի շուրջ 4.3 մլրդ դրամ, որը կբաշխվի շուրջ 1900 ՖՏ-ների միջև: Անասնաբուծության մեջ ներգրավված ՖՏ-ների միջին տարեկան եկամուտները կաճեն շուրջ 2.3 մլն դրամով (բազիսային տարվա համեմատ):

Աղյուսակ 3.6.8: Սպանդանոցներին պոտենցիալ մատակարարում իրականացնող ՖՏ-ների եկամուտները բազիսային տարում

Տավարաբուծություն	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
ԽԵԿ-ի վաճառք իրականացրած ՖՏ-ի թիվը	720	819	934	1,061	1,206	1,373
ՖՏ-ների համախառն տարեկան եկամուտը, հազ. դրամ	1,390,648	1,711,027	2,112,409	2,598,408	3,197,501	3,943,000
Համախառն հավելյալ եկամուտ, հազ. դրամ	586,056	906,436	1,307,817	1,793,816	2,392,909	3,138,409
Հավելյալ միջին տարեկան եկամուտը ՖՏ-i հաշվով, հազ. դրամ	813	1,107	1,400	1,691	1,984	2,285
Ոչխարաբուծություն	**2015**	**2016**	**2017**	**2018**	**2019**	**2020**
ՄԵԿ-ի վաճառք իրականացրած ՖՏ-ի թիվը	175	193	213	232	253	276
ՖՏ-ների համախառն տարեկան եկամուտը, հազ. դրամ	419,495	507,531	616,765	744,897	900,384	1,091,151
Համախառն հավելյալ եկամուտ, հազ. դրամ	75,158	163,194	272,428	400,560	556,047	746,813
Հավելյալ միջին տարեկան եկամուտը ՖՏ-i հաշվով, հազ. դրամ	429	846	1,281	1,724	2,195	2,702
Խոզաբուծություն	**2015թ.**	**2016թ.**	**2017թ.**	**2018թ.**	**2019թ.**	**2020թ.**
Խոզի վաճառք իրականացրած ՖՏ-ի թիվը	186	205	215	226	237	249
ՖՏ-ների համախառն տարեկան եկամուտը, հազ. դրամ	515,629	603,102	671,822	748,373	833,646	928,636
Համախառն հավելյալ եկամուտ, հազ. դրամ	0	87,472	156,193	232,744	318,017	413,007
Հավելյալ միջին տարեկան եկամուտը ՖՏ-i հաշվով, հազ. դրամ	0	427	725	1,029	1,340	1,657
Ընդամենը անասնաբուծություն	**2015թ.**	**2016թ.**	**2017թ.**	**2018թ.**	**2019թ.**	**2020թ.**
Սպանդանոցներին մատակարարում իրականացնող ՖՏ-ների թիվը	**1,082**	**1,217**	**1,362**	**1,519**	**1,697**	**1,899**
ՖՏ-ների համախառն տարեկան եկամուտը, հազ. դրամ	**2,325,773**	**2,821,660**	**3,400,996**	**4,091,678**	**4,931,531**	**5,962,787**
Համախառն հավելյալ եկամուտ, հազ. դրամ	**661,215**	**1,157,102**	**1,736,438**	**2,427,120**	**3,266,973**	**4,298,229**
Հավելյալ միջին տարեկան եկամուտը ՖՏ-ի հաշվով, հազ. դրամ	**611**	**951**	**1,275**	**1,597**	**1,925**	**2,263**

3.6.4 Ֆերմերային տնտեսությունների առկա ակտիվները և ընդլայնման հեռանկարները

Սպանդանոցների պոտենցիալ մատակարարների/ՖՏ-ների ընդլայնման ներուժը գնահատելու համար դիտարկվել են հետևյալ գործոնները.

- ՖՏ-ներում առկա ռեսուրսները (կենդանիների գլխաքանակ, անասնագոմ, ջուր և այլն),
- Արոտավայրերի և անասնակերի հասանելիությունը:

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են բազիսային տարում (2012թ.-ին) ՖՏ-ներում առկա գլխաքանակը: Տավարաբուծությամբ զբաղվող ՖՏ-ներում միջինում առկա է 39.5 գլուխ ԽԵԿ, ոչխարաբուծությամբ զբաղվող ՖՏ-ներում՝ 239.1 ՄԵԿ, իսկ խոզաբուծությամբ զբաղվող ՖՏ-ներում՝ 67.6 գլուխ:

Աղյուսակ 3.6.9: ՖՏ-ներում առկա կենդանիների գլխաքանակն ըստ տեսակների

	Կոտայքի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզեր	Վայոց Ձորի, Սյունիքի և Արարատի մարզեր	Ընդամենը
Խոշոր եղջերավոր կենդանիներ (ԽԵԿ)			
ԽԵԿ-երի միջին թվաքանակը մեկ ՖՏ-ի հաշվով, գլուխ	37.3	41.6	**39.5**
որից կովեր, գլուխ	17.6	17.5	**17.1**
Մանր եղջերավոր կենդանիներ (ՄԵԿ)			
ՄԵԿ-երի միջին թվաքանակը մեկ ՖՏ-ի հաշվով, գլուխ	179.2	305.9	**239.1**
որից մաքիներ և խոյեր, գլուխ	96.7	168.1	**130.4**
Խոզեր			
Խոզերի միջին թվաքանակը մեկ ՖՏ-ի հաշվով, գլուխ	58.5	76.7	**67.6**
որից մերուներ, գլուխ	9.8	10.9	**10.3**

ՖՏ-ներում առկա արտադրական տարածքները՝ անասնագոմերը, շահագործվում են մասամբ: Հետևաբար, ՖՏ-ները պահանջարկի առկայության դեպքում կարող են ավելացնել գլխաքանակն առանց անասնագոմերի ընդլայնմանն ուղղված կապիտալ ներդրումների:

Տավարաբուծությամբ զբաղվող ՖՏ-ները կարող են ավելացնել գլխաքանակը միջինը 24 ԽԵԿ-ով (61%-ով), ոչխարաբուծությամբ զբաղվող ՖՏ-ները՝ 85.1 գլխով կամ 36%-ով, իսկ խոզաբուծությամբ զբաղվող ՖՏ-ները՝ 62.8 գլխով (93%-ով):

Աղյուսակ 3.6.10: ՖՏ-ներում առկա արտադրական տարածքները (անասնագոմեր) և անասնագոմերի շահագործման մակարդակը

	Ֆերմերների թիվը	Անասնագոմի միջին մակերեսը (քմ) 1 ՖՏ-ն հաշվով	Առկա գլխաքանակը 1 ՖՏ-ն հաշվով, գլուխ	Գլխաքանակի ավելացման հեռանկարը 1 ՖՏ-ն հաշվով, գլուխ	Գլխաքանակի ավելացման հեռանկարը 1 ՖՏ-ն հաշվով, %
Կոտայքի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզեր					
Տավարաբուծություն	49	111.3	37.3	18.3	49%
Ոչխարաբուծություն	29	204.1	179.2	24.9	14%
Խոզաբուծություն	15	165.7	58.5	51.9	89%
Վայոց Ձորի, Սյունիքի և Արարատի մարզեր					
Տավարաբուծություն	52	142.6	41.6	29.7	71%
Ոչխարաբուծություն	26	304.9	139.0	165.9	119%
Խոզաբուծություն	15	218.1	76.7	68.8	90%
Ընդամենը					
Տավարաբուծություն	101.0	127.0	39.5	24.0	61%
Ոչխարաբուծություն	55.0	324.5	239.1	85.4	36%
Խոզաբուծություն	30.0	195.6	67.6	62.8	93%

Անասնաբուծության ընդլայնման առումով թիրախային մարզերի ֆերմերային տնտեսությունների ներուժը պատկերացնելու համար կարևոր է դիտարկել թիրախային մարզերում հողային ռեսուրսների (մասնավորապես **արոտավայրերի**) առկայությունը և արոտավայրերի բեռնվածության մակարդակը:

Զոոտեխնիկական նորմերի համաձայն (Հայաստանի Հանրապետությունում ֆերմերային տնտեսություններ վարելու համակարգ, 1981 թ.)՝ արոտի ընթացքում մեկ միավոր ԽԵԿ-ի հաշվով տեղաբաշխման խտությունը որոշվել է 1 հա: Կենսակլիմայական փոփոխությունները, գերարածեցումը և արոտավայրերի վատ կառավարումը վերջին 20 տարիների ընթացքում մեծապես ազդել են արոտավայրերի որակի և սննդային արժեքի վրա: Այդ պատճառով որոշ մասնագետների մտահոգում է նշված խտության անբավարար քանակը: Հաշվի առնելով տվյալ փաստերը և Հայաստանի հողային ռեսուրսների մասին առկա տվյալները՝ արոտավայրի բաշխման 1,25 ԽԵԿ/հա և 0.2 ՄԵԿ/հա հարաբերակցություն է կիրառվել անասնապահության ծավալի ընդլայնման առումով թիրախային մարզի ներուժի հաշվարկման համար:

Հաշվարկումը հիմնվել է թիրախային մարզերի արոտավայրերի ու արոտատեղերի վրա: Անասնապահության ներուժի ավելացումը հաշվարկվել է 2012թ.-ին առկա ԽԵԿ-ի և ՄԵԿ-երի տվյալների հիման վրա:

Աղյուսակ 3.6.11: Անասնաբուծության ներուժն ըստ թիրախային մարզերի

Մարզ	Անասնաբու-ծական արտադրութ-յան համար առկա, ընդամենը	Առկա անասուն - ներ (ԽԵԿ)	Առկա անասուն - ներ (ՄԵԿ)	Ընդամե-նը ԽԵԿ և ՄԵԿ	Ընդամենը արոտավայրի պահանջն առկա գլխաքանակի համար	Չօգտագործ-ված արոտային ռեսուրսներ	ԽԵԿ և ՄԵԿ-ի հնարա-վոր աճ, գլուխ	Հնարավո ր աճ, %
Արագածոտն	134,980	75,700	82,158	157,858	111,057	23,923	13,957	9%
Արարատ	80,857	41,400	70,483	111,883	65,847	15,010	8,507	8%
Գեղարքունիք	216,830	98,500	91,680	190,180	141,461	75,369	27,449	14%
Կոտայք	90,416	54,300	40,979	95,279	76,071	14,345	2,163	2%
Սյունիք	155,339	52,500	86,284	138,784	82,882	72,457	44,279	32%
Վայոց Ձոր	98,617	18,500	19,530	38,030	27,031	71,586	45,918	121%
Ընդամենը	**777,039**	**340,900**	**391,114**	**732,014**	504,348	272,691	142,273	19%

Իրականացված վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ առկա 732,014 գլխի համեմատ թիրախային մարզերում կենդանիների գլխաքանակը կարող է աճել է 19%-ով (կամ շուրջ 142,273 գլուխ ԽԵԿ-ով և ՄԵԿ-ով): Վայոց Ձորի մարզն (բոլոր մարզերի համեմատ) ամենամեծ ներուժն ունի. այստեղ գլխաքանակը կարող է աճել է 121%-ով: Երկրորդ տեղը զբաղեցնում է Սյունիքի մարզը (32%): Կոտայքի մարզի ներուժը գնահատվում է 2% կամ շուրջ 2,100 լրացուցիչ գլուխ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է արոտային սեզոնին արոտների հասանելիությունը սպանդանոցների պոտենցիալ մատակարար ՖՏ-ների համար: Այսպիսով՝ ՖՏ-ների 61%-ի համար արոտները հասանելի են 12 ժամվա ընթացքում: Նշված ՖՏ-ները կենդանիների (հիմնականում ԽԵԿ-ի) արածեցումը կազմակերպում են իրենց ֆերմերային տնտեսությանը մոտ գտնվող արոտավայրերում, իսկ երեկոյան կենդանիները վերադառնում են անասնագոմ: ՖՏ-ների 25%-ը կենդանիների արածեցումը կազմակերպում են հեռագնա արոտավայրերում, որտեղ կենդանիները մնում են շուրջօրյա: ՖՏ-ների 13%-ը արոտավայրեր չեն օգտագործում, այս խմբում հիմնականում ներառված են խոզաբուծությամբ զբաղվող ՖՏ-ները և ԽԵԿ-երի ինտենսիվ/մսուրային բտում կազմակերպող ՖՏ-ները:

Աղյուսակ 3.6.12: Արոտների հասանելիությունը ՖՏ-ների համար

	Կոտայքի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզեր	Վայոց Ձորի, Սյունիքի և Արարատի մարզեր	Ընդամենը
Մինչև 12 ժամ	62%	60%	61%
24 ժամ	23%	28%	25%
Չի օգտագործվում	15%	12%	13%
Ընդամենը	100%	100%	100%

Ջրի առկայությունը արոտավայրերում կարևոր գործոն է հանդիսանում կենդանիների մթերատվության համար՝ անասնաբուծության ոլորտի զարգացման և արոտների համաչափ օգտագործման տեսանկյունից: Ներկայումս ՀՀ արոտավայրերի ենթակառուցվածքների (նեռարյալ կենդանիների համար ջրելատեղերի) բացակայությունը բացասաբար է անդրադառնում արոտավայրերի համաչափ շահագործման վրա և բերում է գյուղական համայնքներին/ՖՏ-ներին մոտ գտնվող արոտավայրերի գերարածեցմանը և դեգրադացմանը:

Թիրախային մարզերում անասնաբուծությամբ զբաղվող ՖՏ-ների 43%-ը ջրի հասանելությունը արոտավայրերում բավարար է գնահատել (արոտավայրերում առկա են անհրաժեշտ քանակի ջրելատեղեր): ՖՏ-ների 57%-ը նշել է, որ արոտավայրերում ջրի հասանելիությունը սահմանափակ է (արոտավայրերում առկա չեն անհրաժեշտ քանակի ջրելատեղեր), ինչը բացասաբար է անդրադառնում կենդանիների մթերատվության վրա:

Աղյուսակ 3.6.13: Ջրի առկայությունը արոտավայրերում

	Կոտայքի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզեր	Վայոց Ձորի, Սյունիքի և Արարատի մարզեր	**Ընդամենը**
Մշտապես	43%	42%	43%
Սահմանափակ	57%	58%	57%
Ընդամենը	100%	100%	43%

Մսուրային շրջանում թիրախային մարզերում անասնաբուծությամբ զբաղվող ՖՏ-ների 82%-ը որպես **անասնակեր** օգտագործում է խոտ, 57%-ը՝ հատիկային կերեր (ցորեն, գարի, վարսակ և այլն), 25%-ը՝ առվույտ և 15%-ը՝ կորնգան:

Աղյուսակ 3.6.14: Անասնակերի հասանելիությունը ՖՏ-ների համար

Կոտայքի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզեր	Խոտ	Հատիկային կերեր (ցորեն, գարի)	Առվույտ	Կորնգան
Սեփական մշակություն	35%	29%	4%	16%
Գնում	18%	12%	12%	0%
Մի մասը սեփական մշակություն, մի մասը գնում	43%	14%	4%	0%
Չի օգտագործվում	4%	45%	80%	84%
Վայոց Ձորի և հարակից մարզեր				
Սեփական մշակություն	44%	19%	0%	12%
Գնում	13%	19%	8%	0%
Մի մասը սեփական մշակություն, մի մասը գնում	42%	21%	21%	2%
Չի օգտագործվում	0%	40%	71%	87%
Ընդամենը				
Սեփական մշակություն	40%	24%	2%	14%
Գնում	16%	16%	10%	0%
Մի մասը սեփական մշակություն, մի մասը գնում	43%	18%	13%	1%
Չի օգտագործվում	2%	43%	75%	85%

Ինչպես երևում է աղյուսակից, ՖՏ-ների միայն 16%-ն ունի բավարար հողային ռեսուրսներ /խոտհարքներ/ մսուրային շրջանում խոտի պահանջը բավարարելու համար, իսկ ՖՏ-ների 43%-ը խոտի հավելյալ պահանջը գնում է այլ ՖՏ-ներից: Մնացած 18%-ը չի իրականացնում խոտի հունձ և ամբողջ ծավալը գնում է այլ ՖՏ-ներից:

Գրեթե նույն իրավիճակն է հատիկային մշակաբույսերի պարագայում. ՖՏ-ների 24%-ը ապահովում է հատիկային մշակաբույսերի պահանջն իր սեփական ռեսուրսներով, իսկ 18%-ը գնում է հավելյալ անհրաժեշտ քանակն այլ ՖՏ-ներից: ՖՏ-ների 16%-ը չի իրականացնում հատիկային մշակաբույսերի մշակություն և անհրաժեշտ քանակը ձեռք է բերում այլ ՖՏ-ներից, իսկ 43%-ը չի ներառում հատիկային մշակաբույսեր կենդանիների կերային ռացիոնում (հիմնականում ոչխարաբուծությամբ զբաղվող ՖՏ-ների դեպքում):

3.6.5 Ֆերմերային տնտեսություններում զբաղվածների թիվը և եկամուտները

Սույն բաժնում ներկայացված է սպանդանոցների պոտենցիալ մատակարար ՖՏ-ներում զբաղվածների թիվը, ինչպես նաև աշխատուժի կառուցվածքը և միջին վարձատրությունը:

Սպանդանոցների պոտնեցիալ մատակարար ՖՏ-ներում զբաղված են միջինը 3.8 մարդ, որից 2.8-ը ընտանիքի անդամներ են:

Աղյուսակ 3.6.15: ՖՏ-ներում զբաղվածների թիվը

	Կոտայքի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզեր	Վայոց Ձորի, Սյունիքի և Արարատի մարզեր	Ընդամենը
ՖՏ-ներում զբաղվածների քանակը	3.2	3.4	3.3
որից ընտանիքի անդամներ	2.7	2.9	2.8
որից վարձու աշխատակիցներ	0.5	0.5	0.5

ՖՏ-ների միայն 37%-ն են ներգրավում լրացուցիչ վարձու աշխատուժ, մեկ ՖՏ-ին բաժին է ընկնում միջինը 1.3 աշխատակից:

Աղյուսակ 3.6.16: ՖՏ-ներում վարձու աշխատակիցների թիվը և միջին տարեկան վարձատրությունը

	Վարձու աշխատուժ ունեցող ՖՏ-ների թիվը	Վարձու աշխատուժ ունեցող ՖՏ-ների %	Մեկ ՖՏ-ի հաշվով զբաղվածների միջին թիվը, մարդ	Տարեկան եկամուտը, դրամ
Կոտայքի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզեր	35	38%	1.3	1,117,143
Վայոց Ձորի, Սյունիքի և Արարատի մարզեր	34	37%	1.4	1,241,941
Ընդամենը	**69**	**37%**	**1.3**	**1,178,638**

Ինչպես երևում է Աղյուսակ 3.6.17-ից, ՖՏ-ներում զբաղվածների գերակշիռ մասը (71%-ը) հովիվներ են, 13%-ը բանվորներ, որոնք ներգրավվում են խոտի հունձի սեզոնին: Բացառությամբ կթվորների (զբաղվածների 9%-ը), մնացած զբաղվածները սեզոնային աշխատողներ են:

Աղյուսակ 3.6.17: ՖՏ-ներում վարձու աշխատուժի կառուցվածքը

Պաշտոնը	Մասնաբաժինը,%	
Հովիվ	72%	Սեզոնային (արոտային շրջան)
Բանվոր	12%	Սեզոնային (խոտի հունձ, մսուրային շրջան)
Կթվոր	11%	Ամբողջ տարի
Կենդանիների կերակրման և խնամքի համար պատասխանատու	5%	Սեզոնային (մսուրային շրջան)
Ընդամենը	100%	
Որից կանայք	11%	

Սեզոնային աշխատողների (հովիվներ, բանվորներ, կենդանիների կերակրման և խնամքի համար պատասխանատուներ) միջին ամսական վարձատրությունը տատանվում է 100,000-120,000 դրամի սահմաններում: Կթվորների ամսական վարձատրությունը տատանվում է 60,000-80,000 դրամի սահմաններում:

Աղյուսակ 3.6.18: ՖՏ-ներում վարձու աշխատուժի կառուցվածքը և միջին ամսական վարձատրությունը

Պատոնը	Մասնաբաժինը,%	Զբաղված օրերի թիվը տարեկան, օր	Միջին ամսական վարձատրությունը, դրամ
Կոտայքի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզեր			
Հովիվ	67%	180	120,000
Բանվոր	18%	30	110,000
Կթվոր	13%	360	60,000
Կենդանիների կերակրման և խնամքի համար պատասխանատու	2%	180	100,000
Ընդամենը	**100%**		
Վայոց Ձորի, Սյունիքի և Արարատի մարզեր			
Հովիվ	68%	180	107,000
Բանվոր	9%	30	100,000
Կթվոր	12%	360	80,000
Կենդանիների կերակրման և խնամքի համար պատասխանատու	12%	180	100,000
Ընդամենը	**100%**		

4.ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (ՀԳՏՏԶՀ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հաշվետվության սույն բաժնում ներկայացված են ՀԳՏՏԶՀ-ի գործունեության գնահատման արդյունքները: ՀԳՏՏԶՀ-ի գործունեության արդյունքների գնահատումն իրականացվել է՝ կիրառելով ՀԳՏՏԶՀ-ի գործունեության արդյունքների գնահատման ընթացքում ԵՄ արդյունքին ուղղված մոնիթորինգի մեթոդաբանությունը (ազգային ընթացիկ ծրագրերի համար), միևնույն ժամանակ սահմանափակվելով տեխնիկական առաջարկում ներկայացված հետևյալ ուղղություններով.

- Արտադրողականություն/Efficiency,
- Արդյունավետություն/ Effectiveness
- Ազդեցություն/Impact,
- Կայունություն/ Sustainability,
- Քաղված դասեր/ Lessons Learned:

ՀԳՏՏԶՀ-ի գործունեության գնահատման արդյունքներն ամփոփվել և ներկայացվել են ԵՄ արդյունքին ուղղված մոնիթորինգի մեթոդաբանության (ազգային ընթացիկ ծրագրերի համար) ուղեցույցով նախատեսված ձևաթերթերում (տե՛ս Հավելված 3):

4.1. ՀԳՏՏԶՀ-ի գործունեության արտադրողականության (Efficiency) գնահատում

Տնտեսապես որքա՞ն խնայողաբար են (որակի, քանակի և ժամանակի առումով) ռեսուրսները/միջոցները փոխարկվել արտադրանքի/կարճաժամկետ արդյունքի (Output):

4.1.1 Որքանո՞վ արդյունավետ են կառավարվում ներդրանքները (Inputs) և ռեսուրսները, դրանց առկայությունը և օգտագործումը:

Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամը (ՀԳՏՏԶՀ) հիմնադրվել է ԳԶՄՀ-ի աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր)՝ «Գյուղական ֆինանսավորում» բաղադրիչի (այսուհետ՝ Ծրագրի բաղադրիչ) շրջանակներում 2009 թվականի հունվարի 8–ին՝ Ծրագրի ֆինանսավորման համաձայնագրի կնքման պահից մեկ տարի հետո: ՀԳՏՏԶՀ-ի անձնակազմի ընտրության և համաձայնագրով նախատեսված այլ պայմանների ապահովման գործընթացն ավարտվել է 2009թ.-ի օգոստոս ամսին և ՀԳՏՏԶՀ-ն իր ծախսերը ԳԶՄՀ-ից ֆինանսավորվելու իրավունք է ստացել 2009թ.-ի օգոստոսի 12-ին: ՀԳՏՏԶՀ-ի

գործունեության առաջին ամիսներն ուղղված էին հիմնականում կազմակերպչական աշխատանքներին, մասնավորապես՝ գրասենյակի հիմնմանը, ներքին կանոնակարգերի և ընթացակարգերի մշակմանը, առաջիկա տարվա աշխատանքների նախագծմանը: Այսպիսով՝ ՀԳՏՏԶՀ-ն Ծրագրով նախատեսված իր բուն գործունեությունը մեկնարկել է Ծրագրի մեկնարկից շուրջ 2 տարի ուշ՝ 2010թ.-ին:

ՀԳՏՏԶՀ-ի գործունեության դիտարկվող ժամանակահատվածում (2010-2012թթ.) ռեսուրսների հասանելիության հետ կապված որևէ լուրջ խնդիր չի արձանագրվել: ՀԳՏՏԶՀ-ի գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները տրամադրվել են ՀԳՏՏԶՀ-ի կողմից մշակված, ՀԳՏՏԶՀ-ի Հոգաբարձուների խորհրդի (ՀԳՏՏԶՀ-ի կառավարման բարձրագույն և խորհրդատվական մարմին, որը գլխավորում է ՀՀ Վարչապետը) և ԳԶՄՀ-ի կողմից հաստատված տարեկան աշխատանքային ծրագրի և տարեկան նախահաշվի հիման վրա: ՀԳՏՏԶՀ-ը ստացել է բավարար ֆինանսական ռեսուրսներ՝ որպես կանխավճար, ընթացիկ գործունեությունն իրականացնելու համար: Ծրագրի ֆինանսական ռեսուրսների պլանավորման, հաստատման և տեղաբաշխման մեջ ներգրավված են հետևյալ կողմերը՝ ԳԶՄՀ, «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» (ԾԻԳ), ՀԳՏՏԶՀ-ի Հոգաբարձուների խորհուրդը և ՀԳՏՏԶՀ-ը, որոնք իրականացրել են իրենց գործառույթները՝ ԳԶՄՀ-ի և ՀՀ կառավարության միջև, ինչպես նաև ՀՀ կառավարության և ՀԳՏՏԶՀ-ի միջև կնքված պայմանագրերի դրույթներին համապատասխան և նախատեսված ժամկետներում:

ՀԳՏՏԶՀ-ի կառավարումը և անձնակազմի կառուցվածքը հաստատվել է 2009-2010թթ. ընթացքում, և կառավարման յուրաքանչյուր մարմնի և մակարդակի գործառույթներն ու պարտականությունները համապարփակ և պատշաճ կերպով փաստագրված են ՀԳՏՏԶՀ-ի Կանոնադրության հոդվածներում և ավելի մանրամասն կերպով ամրագրված են Հիմնադրամի գործունեությունը կարգավորող կանոնակարգերում:

Հոգաբարձուների խորհուրդը (ՀԽ) ՀԳՏՏԶՀ-ի կառավարման բարձրագույն մարմինն է: ՀԳՏՏԶՀ-ի Կանոնադրության հիման վրա Խորհուրդը սահմանում է հիմնադրամի հիմնական քաղաքականությունը և հսկողություն է իրականացնում Հիմնադրամի գործունեության նկատմամբ: Ներդրումային կոմիտեին (ՆԿ), ՀԳՏՏԶՀ-ի ներդրումային ուղեցույցների համաձայն, պատվիրակված է ներդրումային որոշումների ընդունումը: Կոմիտեի գործունեության կարգը և սկզբունքները սահմանվում են «Ներդրումային կոմիտեի կանոնակարգով» ՀԳՏՏԶՀ-ի քաղաքականության համաձայն, տարեկան կտրվածքով ՀԽ-ն վերանայում է ՆԿ-ի անդամների աշխատանքի արդյունքները: Արդյունքում ՆԿ-ի անդամը կա՛մ վերընտրվում է Կոմիտեի կազմում հաջորդ 12 ամիսների համար, կա՛մ թափանցիկ գործընթացով նոր անդամ է ընտրվում:

ՀԳՏՏԶՀ-ի Գործադիր տնօրենը (ԳՏ) պատասխանատու է Հիմնադրամի ընթացիկ գործունեության համար, ԳՏ-ի իրավունքները և պարտականությունները սահմանված են ՀԳՏՏԶՀ-ի Կանոնադրությամբ և ՀԳՏՏԶՀ-ի հետ կնքված հիմնական պայմանագրով: ՀԳՏՏԶՀ-ի անձնակազմը բաղկացած է Ներդրումային և Վարչական խմբերից: Ներդրումային խումբը (ներկայումս բաղկացած է երկու ավագ ներդրումային

մասնագետներից) ներգրավված է ինչպես հաճախորդ ընկերությունների նախաներդրումային վերլուծության, այնպես էլ՝ հետներդրումային գործընթացներում: Վարչական խումբը բաղկացած է գլխավոր հաշվապահից, գրասենյակի կառավարչից, գործավար-օգնականից և վարորդից:

Մարդկային ռեսուրսների տեսանկյունից, ընդհանուր առմամբ, ՀԳՏՏԶՀ-ն համալրված է համապատասխան կադրային ռեսուրսներով, որոնք ՀԳՏՏԶՀ-ի գործունեության առաջին երկու տարիների ընթացքում անցել են մի շարք վերապատրաստումներ (մասնավորապես՝ ՀԳՏՏԶՀ ներդրումային թիմն անցել է վերապատրաստում Դանիական ներդրումային հիմնադրամի՝ IFU (The Industrialisation Fund for Developing Countries) գրասենյակում, ՀԳՏՏԶՀ-ն շարունակել է/շարունակում է համագործակցել IFU-ի հետ՝ փորձի փոխանակման նպատակով: Հարկ է նշել, որ ՀԳՏՏԶՀ-ում արձանագրվել է մարդկային ռեսուրսների հոսունության բարձր մակարդակ (մասնավորապես՝ ծրագրային թիմի՝ ներդրումային մասնագետների շրջանակներում): (Այսպես՝ վերապատրաստում անցած 5 անձից՝ տնօրեն, ավագ ներդրումային մասնագետ և 3 ներդրումային մասնագետ, ներկայումս աշխատում են միայն առաջին երկուսը): Մարդկային ռեսուրսների հոսունության բարձր մակարդակը կարող է պայմանավորված լինել աշխատանքային շուկայում ՀԳՏՏԶՀ-ի ցածր մրցունակությամբ և խրախուսման/մոտիվացիայի ներքին քաղաքականության բացակայությամբ:

Միևնույն ժամանակ, 2010թ.-ին անկախ ֆինանսական աուդիտի իրականացման արդյունքում ՀԳՏՏԶՀ-ին առաջարկվեց իրականացնել որոշ բարելավումներ ներքին կառուցվածքում՝ համալրելով առկա մարդկային ռեսուրսները:

Մասնավորապես՝ աուդիտի անցկացման ընթացքում աուդիտորները հայտնաբերեցին, որ հաշվապահության բաժնի կազմում ներառված է միայն Գլխավոր հաշվապահը և հաշվապահության բաժնում պարտականությունների բաշխում առկա չէ, ինչն իր հերթին մեծացնում է գործարքների գրանցման և հաշվետվությունների պատրաստման ժամանակ սխալ թույլ տալու ռիսկը: Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվել է նախատեսել պարտականությունների բաժանման գործընթացի ներդրումը հաշվապահության բաժնում: Առաջարկվել է նաև Հիմնադրամի գործառույթների հետագա ընդլայնման դեպքում ստեղծել ներքին աուդիտի բաժին՝ ներքին աուդիտորական գործառույթի իրականացման նպատակով (Ներքին աուդիտորական գործառույթը նպատակ ունի աջակցելու ՀԳՏՏԶՀ-ի Հոգաբարձուների խորհրդին և ղեկավարությանը հավաստիացնելու նրանում, որ ներքին վերահսկողության համակարգը գործում է, ինչպես և նախատեսվել էր, գործունեությունն իրականացվում է հաստատված քաղաքականությունների և կանոնակարգերի համաձայն, տրամադրված տեղեկատվությունը վստահելի է, Հիմնադրամը գործում է գլխավոր ֆինանսավորման համաձայնագրերին համաձայն և այն մասին, որ Հիմնադրամի գործողությունները/իրականացված միջոցառումները նպաստում են նպատակներին):

Քանի որ Հիմնադրամի հիմնման նախագծման փուլում, ինչպես հաշվապահության բաժնում մեկից ավելի աշխատակցի անհրաժեշտությունը, այնպես էլ ներքին աուդիտի բաժնի ստեղծումը չի նախատեսվել, անհրաժեշտ բարելավումները կիրականացվեն ՀԳՏՏՁՀ-ի կողմից ներդրումների ավելացման պայմաններում (համաձայն Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրի):

ՀԳՏՏՁՀ-ի գործունեությունը կանոնակարգվում է մի շարք ընթացակարգերով և կանոնակարգերով, որոնք մշակվել և ներդրվել են հիմնադրամի ձևավորման փուլում: Ներքին ընթացակարգերը մշակվել են ՀԳՏՏՁՀ-ի կողմից և հաստատվել Հոգաբարձուների խորհրդի կողմից: Ներկա պահին KPMG Armenia աուդիտորական կազմակերպության կողմից առաջ են քաշվել մի քանի կանոնակարգերի, մասնավորապես՝ պահուստավորման կանոնակարգի պահանջը:

ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականցվող բոլոր կապիտալ և ընթացիկ գնումները, ներդրանքների պարբերական մոնիթորինգն իրականացվում են համաձայն մշակված և ներդրված ներքին ընթացակարգերի ու կանոնակարգերի, որոնք համահունչ են ԳԶՄՀ-ի նախանշված պահանջներին (համաձայն Հայաստանի Հանրապետության և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳԶՄՀ) միջև 08.01.2008թ. կնքված «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրի ֆինանսավորման համաձայնագրի) և ՀՀ- օրենսդրությանը: Ներքին հսկողության և հաշվապահական հաշվառման համակարգերի գործունեության հսկողությունն իրականացվում է տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից: ՀԳՏՏՁՀ-ն իրականացնում է տարեկան անկախ աուդիտորական ստուգում, որի ընթացքում արտաքին աուդիտը ստուգում է ներքին հսկողության և հաշվապահական հաշվառման համակարգերի գործունեությունը և համապատասխանությունը ընթացակարգերին/կանոնակարգերին: ՀԳՏՏՁՀ-ի կողմից տնօրինվող ռեսուրսները կառավարվում են թափանցիկ և հաշվետու ձևով: ՀԳՏՏՁՀ-ն ներկայացնում է ամսական ֆինանսական հաշվետվություններ Ծրագրերի կառավարման գրասենյակ, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններ և գործունեության տարեկան հաշվետվություն Հոգաբարձուների խորհրդին և ԳԶՄՀ-ին: Տարեկան հաշվետվություններում ներկայացնում է ՀԳՏՏՁՀ-ի գործունեության և ֆինանսական վիճակի վերաբերյալ անկողմնակալ ու լիարժեք տեղեկատվություն՝ ներառյալ անկախ աուդիտորական ստուգման և ԳԶՄՀ վերահսկողության առաքելության արդյունքում ներկայացված դիտարկումներն ու առաջարկները, ինչպես նաև դրանց կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը: ՀԳՏՏՁՀ-ի գործունեության և ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է նաև հանրությանը՝ ՀԳՏՏՁՀ-ի կայքի միջոցով (www.freda.am):

Ծրագրի իրականացման համար նախատեսված 5 տարվա բյուջեն կազմում է SDR[26] 4,121,436, 1,680,000 ԱՄՆ դոլար և 91,027,072 դրամ, որից.

- 4,121,436 SDR (6,2 մլն. ՀՀԴ) տրամադրվել է ԳԶՄՀ-ի կողմից, որի 84%-ը ներդրումային գործունեության ծավալման համար, իսկ մնացածը (26%-ը)՝ ՀԳՏՏԶՀ-ի հիմնադրմանն ու կայացմանն ուղղված ծախսերի համար (աղբյուր՝ ԳԶՄՀ-ի կողմից տրամադրված դրամաշնորհ և վարկային միջոցներ):
- 1,680,000 ԱՄՆ դոլար)՝ տեխնիկական աջակցության համար նախատեսված միջոցներ (աղբյուր՝ Դանիայի կառավարության կողմից տրամադրված դրամաշնորհ, որից 150,000 ԱՄՆ դոլար նախատեսված է որպես տեխնիկական աջակցության բաղադրիչի կառավարչական ծախսեր),
- 91,027,072 դրամ ՀՀ Կառավարության ներդրումն է (նախատեսված ՀԳՏՏԶՀ-ի գործունեության ընթացքում հարկերի և տուրքերի վճարման համար):

ՀԳՏՏԶՀ-ի տարեկան բյուջեն մշակվում է և հիմնված է ՀԳՏՏԶՀ-ի աշխատանքային ծրագրի դրույթների վրա: Տարեկան բյուջեն և աշխատանքային ծրագիրը, մինչև նախորդ ֆինանսական տարվա նոյեմբերի 25-ը, ներկայացվում է ՀԳՏՏԶՀ-ի կողմից Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քննարկմանն ու հաստատմանը, այնուհետև՝ ներկայացվում ԳԶՄՀ-ին:

Ընդհանուր առմամբ, ՀԳՏՏԶՀ-ի ընթացիկ/տարեկան բյուջեի բաշխվածությունը նպաստել է ՀԳՏՏԶՀ-ի աշխատանքային ծրագրի իրականացմանը, որոշ սահմանափակումներ ի հայտ են եկել ՀԳՏՏԶՀ-ի գործունեության ընթացքում (օրինակ՝ լրացուցիչ մարդկային ռեսուրսների ներգրավման կամ մինչ ներդրումային տեխնիկական աջակցության մասով սահմանափակումներ), որոնք բխում են հիմնական Համաձայնագրերում ներառված («Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրի և Դանիայի կառավարության կողմից տրամադրված դրամաշնորհ) բյուջեի կառուցվածքից:

4.1.2 Որքանո՞վ են արդյունավետ իրականացվում գործողությունները:

ՀԳՏՏԶՀ-ի գործողությունները/գործունեությունը պայմանական կարելի է բաժանել երկու ուղղությունների.

1. ՀԳՏՏԶՀ ներդրումային գործունեության իրականացում և հետագա զարգացում (ներառյալ ընթացիկ ներդրումային գործունեություն, ներդրումների իրականացման համար նոր ֆինանսական միջոցների ներգրավում,

[26] special drawing rights

տեղեկատվության տարածում, աշխատանքների կազմակերպման կանոնակարգվածության/արդյունավետության բարձրացում),

2. ՀԳՏՏՁՀ կողմից տրամադրվող տեխնիկական աջակցություն՝ ներառյալ.

- **նախաֆինանսավորման աջակցություն** (տարածքային և ոլորտային ներդրումային հետազոտություններ, ցուցահանդեսների կազմակերպում և միջազգային տոնավաճառներին/ցուցահանդեսներին մասնակցություն, ուսումնական շրջագայություններ, միասնական ուսումնական միջոցառումներ, ընտրված կազմակերպություններում հզորությունների ստեղծում,
- **ներդրման աջակցություն և նպաստում** («Due-diligence» ուսումնասիրություններ, տեխնոլոգիայի փոխանցում, մարքեթինգային ուսումնասիրություններ, սննդի ապահովության միջազգային ստանդարտների ընդունում, կառավարման աջակցություն ընտրված կազմակերպությունների համար՝ ներառյալ բյուջետավորումը, հաշվապահությունը, աուդիտը, հարկային համապատասխանությունը, բիզնեսի վերակազմավորումը),
- **հետներդրումային աջակցություն** (ներդրման և ընկերության գործունեության արտաքին սոցիալ-տնտեսական արդյունքների գնահատում, միասնական ուսումնական միջոցառումներ, կազմակերպությունից ելքի ռազմավարությանը նպաստող միջոցառումներ, ներդրման արդյունքների բացահայտում/ հրապարակում և տարածում մյուս նախագծերի վրա)[27]:
- ՀԳՏՏՁՀ հաճախորդ ընկերություններում կորպորատիվ կառավարման ներդրման և բաժնետոմսերի իրացվելիության բարձրացման ու շուկայում ազատ շրջանառվելուն ուղղված քայլերի ձեռնարկում:

Ընդհանուր առմամբ, ՀԳՏՏՁՀ-ն Ծրագրով նախատեսված գործողությունները 2010-2012 թթ.-ի ընթացքում իրականացվել են նախանշված աշխատանքային ժամանակացույցի/ծրագրի համաձայն, սակայն՝ որոշակի շեղումներով:

2012թ.-ի վերջի դրությամբ ՀԳՏՏՁՀ-ն ներդրումային գործունեության արդյունքում տեղաբաշխել է ներդրումային դրամագլխի շուրջ 80%-ը՝ ֆինանսավորելով գյուղատնտեսության արժեքային շղթաներում գործող 9 ձեռնարկությունների: Դրամագլխի մնացած 20%-ը նախատեսված է եղել և տեղաբաշխվել է 2013թ.-ին՝ ֆինանսավորելով երկու ձեռնարկություն: Ըստ Ծրագրի առաջարկում ներկայացված ժամանակացույցի, ներդրումային դրամագլուխը նախատեսված էր տեղաբաշխել 5 տարվա ընթացքում: ՀԳՏՏՁՀ-ն հիմնադրման աշխատանքների հետաձգման արդյունքում ներդրումային գումարները տեղաբաշխվել են ավելի սեղմ ժամկետներում՝ 4 տարվա ընթացքում: Սակայն, ՀԳՏՏՁՀ պլանավորումը գումարների տեղաբաշխման ավելի

---

[27] Տեխնիկական աջակցության ուղղությունների ձևակերպումը բերված է ՀԳՏՏՁՀ-ի Ներդրումների իրականացման և փոխառությունների տրամադրման Ուղեցույցից:

լավատեսական էր քան իրական տեղաբաշխման տնողությունը, ՀԳՏՏԶՀ պլանավորման մեջ հաշվի չէր առնվել ձեռնարկությունների համար անհրաժեշտ ժամկետները համապատասխանեցնելու իրենց կառավարման համակարգը ՀԳՏՏԶՀ Ներդրումային կոմիտեի կողմից առաջքաշվելիք պահանջներին: Այսպիսով՝ ներդրումների իրականացմանն ուղղված գործողությունների պլանավորումն իրատեսական չէր առաջին տարվա համար, քանի որ ՀԳՏՏԶՀ-ն չէր կանխատեսել ձեռնարկությունների պատրաստակամությունը և կարողությունները իրականացնելու բոլոր առաջադրված նախապայմանները, որոնք անհրաժեշտ են ՀԳՏՏԶՀ-ից ֆինանսավորում ստանալու համար: Այսպես՝ եթե գործունեության առաջին տարվա ընթացքում նախատեսվել էր ֆինանսավորել 6 ձեռնարկություն՝ տեղաբաշխելով շուրջ 1,3 մրդ դրամ (ներդրումային դրամագլխի շուրջ 62%-ը), ապա 2010 թ.-ին իրականացվեցին բոլոր անհրաժեշտ գործողությունները և 5 ներդրումային ծրագրի/ձեռնարկության ֆինանսավորումը հաստատվեց Ներդրումային կոմիտեի կողմից (որից երեքինը՝ 2010 թ.-ի դեկտեմբեր ամսին), միևնույն ժամանակ 5 ձեռնարկություններից միայն երկուսը հաջողությամբ կատարեցին հետագա պահանջները և ստացան ֆինանսավորում (430 մլն դրամի, նախատեսվածի 33%-ը), մնացած երեքը ֆինանսավորվեցին 2011 թ.-ին: Նույն միտումը նկատվում է նաև հաջորդ տարիների ընթացքում, ինչը փաստում է, որ թիրախային խմբում ընդգրկված ձեռնարկությունները չունեն բավարար կարողություններ և ռեսուրսներ՝ սեղմ ժամկետներում իրականացնելու ՀԳՏՏԶՀ-ի կողմից առաջադրված պահանջները, ինչը անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային ծրագրի մշակման ընթացքում:

Ստորև հակիրճ ձևով ներկայացված են ՀԳՏՏԶՀ-ի կողմից ֆինանսավորում ստանալու համար անհրաժեշտ քայլերը.

1. Հաճախորդի այցը Հիմնադրամ, Դիմում-նամակի ներկայացնում ֆինանսավորման նպատակով:
2. Հաճախորդի հետ նախնական զրույց, թիրախային խմբին համապատասխանելիության որոշում:
3. Հաճախորդի կողմից դիմում-հայտի լրացում, ԱՔՌԱ և այլ տեղեկատվական բազաներից տեղեկությունների ստացում:
4. Ներդրումային մասնագետի կողմից այցելություն հաճախորդին, փաստաթղթերի և տվյալների հավաքագրում:
5. Ծրագրի նախնական ուսումնասիրություն, իրագործելիության գնահատում, եզրակացությունների կայացում:
6. Due Diligence, հաշվետվության կազմում և ներկայացում:
7. Բիզնեսի գնահատում, հաշվետվության կազմում և ներկայացում:
8. Ներդրումային Ծրագրի կազմում և ներկայացում Ներդրումային կոմիտե:
9. Ֆինանսավորման հաստատում Ներդրումային Կոմիտեի կողմից (կամ լրացուցիչ տեղեկատվության պահանջում):
10. Ֆինանսավորման գործընթաց.

- **Վերակազմակերպում և փաստաթղթերի ներկայացում:** Եթե ձեռնարկությունը չի հանդիսանում բաժնետիրական ընկերություն, ապա կատարվում է վերակազմակերպում փակ կամ բաց բաժնետիրական ընկերության:
- **Ներդրման պայմանագրերի պատրաստում և ստորագրում:**
- **Բանկի հետ եռակողմ պայմանագրի կնքում և հատուկ բանկային հաշվի բացում ու գումարի առանձնացում հատուկ բանկային հաշվի վրա (Escrow հաշիվ):**
- **Բաժնետոմսերի բաժանորդագրման պայմանագրի նախապայմաններին համապատասխանեցում**
- **Բաժնետոմսերի գրանցում:**
- **Գումարի փոխանցում ձեռնարկություն:**

Թեև ՀԳՏՏՁՀ-ի ներդրումային մասնագետների կողմից չեն դիտվել թերացումներ (հարցված ոչ մի հաճախորդ ընկերության ներկայացուցիչ չի նշել, որ ֆինանսավորման ուշացման պատճառը (3-րդ քայլից հետո) եղել է ՀԳՏՏՁՀ-ի աշխատակիցը), որոշ ձեռնարկությունների դեպքում Հաճախորդի՝ Հիմնադրամ այցից մինչև գումարի փոխանցման միջև ընկած ժամանակահատվածը տևել է մեկ տարուց ավելի, որը գրեթե կրկնակի քիչ է քան ՀՀ-ում բաժնեմասնակցային գործիքներով գումարի հատկացման տևողությունն է այլ կառույցների կողմից: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ դիմող կազմակերպությունների համար, ելնելով իրենց աշխատանքների պլանավորման և կազմակերպման առանձնահատկություններից, այդ տևողությունը մեծ է:

Տեխնիկական աջակցության (այսուհետ՝ ՏԱ) ուղղված գործողություններն իրականացվել են նախատեսվածից ավելի քիչ ծավալով, ինչը պայմանավորված է եղել մի շարք հանգամանքներով, մասնավորապես.

- ՀԳՏՏՁՀ-ն չի կատարել Ծրագրով նախատեսված գործողություններն ամբողջությամբ, քանի որ նախատեսված գործողություններն իրագործելի չէին ժամկետի տեսանկյունից (տեխնիկական աջակցության մասով Ծրագրի սկիզբը 2009թ.-ի հունիսն էր, իսկ ավարտը՝ 2011թ.-ի հունիսին, որի ընթացքում ՀԳՏՏՁՀ-ն պետք է մատուցեր 1,1 մլն ԱՄՆ դոլարի տեխնիկական աջակցություն, իր կողմից արդեն ֆինանսավորում ստացած ձեռնարկություններին): ՀԳՏՏՁՀ տեխնիկական աջակցության պլանավորման ընթացքում հաշվի չի առնվել ՀԸ-ներում տեխնիկական աջակցության ընկալման և օգտագործման համար ռեսուրսների (ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ մասնագիտական) առկայությունը:
- 2012 թ.-ին լրացուցիչ բարդություններ են ի հայտ եկել, որոնք ազդել են տեխնիկական աջակցության մասով մրցութային գործընթացի տևողության երկարացման վրա, որի արդյունքում շեղվել է իրականացման ժամանակացույցը: ԳԶՄՀ պահանջների կատարման (մրցութային գործընթացի արդյունքներն ուղարկվում են ԳԶՄՀ-ի հաստատման համար) և ԳԶՄՀ գրասենյակում համապատասխան լիազոր ղեկավար չունենալու պատճառով անցկացվող

մրցութային գործընթացը տևել է զգալիորեն ավելի երկար, քան նախորդ տարիներին:

ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացվող տեխնիկական աջակցության գործողությունների գերակշիռ մասն ուղղված է եղել հաճախորդ ընկերությունների կարողությունների զարգացմանը, ինչը նշանակում է, որ ՀԳՏՏՁՀ-ն կարող է տեխնիկական աջակցության մասով գործողություն իրականացնել միայն արդեն ֆինանսավորում ստացած ձեռնարկությունների մասով (համենայնդեպս, այդպես է ընկալվել/ում ՀԳՏՏՁՀ-ի ղեկավարության և աշխատակիցների կողմից): Ինչպես արդեն նշվել է, ՀԳՏՏՁՀ-ն իր գործունեության առաջին տարվա ընթացքում ֆինանսավորել է 5 ձեռնարկություն, որոնցից 3-ի ֆինանսավորումը Ներդրումային կոմիտեի կողմից հաստատվել է ապրիլ-հունիս ընկած ժամանակահատվածում, իսկ մնացած երկուսինը՝ տարեվերջին՝ դեկտեմբեր ամսին: Տեխնիկական աջակցության մասով նախատեսված ծախսերը (առանց հարկերի) 2010 թ.-ի համար կազմել են շուրջ 126.3 մլն դրամ (կամ շուրջ 409,400 ԱՄՆ դոլար[28]), ինչն իրատեսական չէր և կատարվեց 32%-ով:

Հաջորդող տարիների ընթացքում (2011-2012թթ.) ձեռնարկություններին ուղղված տեխնիկական աջակցության մասով գործողությունների և նախատեսված բյուջեի անհամապատասխանությունը (բյուջեն 2011թ.-ին կատարվել է 26%-ով, իսկ 2012թ.-ին՝28%-ով) ևս պայմանավորված է այն սահմանափակումով, որ տեխնիկական աջակցությունը հասանելի է ձեռնարկություններին միայն ֆինանսավորում ստանալուց հետո, ինչպես նաև տեխնիկական աջակցության պայմանագրերում արդյունքի վրա հիմնված վճարման գաղափարի ներդրմամբ, որի պատճառով խորհրդատուն չէր վարձատրվում, անգամ եթե խորհրդատվությունը մատուցված էր, սակայն ՀԸ-ն չէր կարողացել իրականացնել տրված խորհուրդները՝ սահմանափակ ռեսուրսների պատճառով: Տվյալ հանգամանքը բարդություններ է ստեղծել նաև ձեռնարկությունների համար, օրինակ՝ պարենի անվտանգության միջազգային ստանդարտների ներդրումը (ինչի վերաբերյալ խորհրդատվությունը մտնում է ֆինանսավորում ստացած ձեռնարկություններին առաջարկվող/տրամադրվող «պարտադիր» ՏԱ փաթեթի մեջ) ենթադրում է ոչ միայն խորհրդատվության անհրաժեշտություն, այլև կապիտալ ներդրումներ ձեռնարկության արտադրական գործընթացը համապատասխանեցնելու նշված ստանդարտին: Նշված կապիտալ ներդրումները տեղ չէին գտել ձեռնարկությունների կողմից ՀԳՏՏՁՀ-ն ներկայացված ներդրումային ծրագրերում (քանի որ խորհրդատվությունը ստացել են ներդրումային ծրագիրը ներկայացնելուց և ֆինանսավորումը ստանալուց հետո), ինչի հետևանքով երկարաձգվել է պարենի անվտանգության միջազգային ստանդարտների ներդրումը և տեխնիկական

[28]Հաշվարկի համար հիմք է ընդունվել 2010թ.-ի միջին փոխարժեքը՝ 1 USD=373.7 AMD, (աղբյուր՝ www.armstat.am):

աջակցության տրամադրման ժամանակահատվածը: Հարկ է նշել, որ տվյալ հանգամանքը բացահայտելուց հետո ՀԳՏՏԶՀ-ն ուղղորդել է ձեռնարկություններին՝ ներառելու տվյալ ծախսերը ներդրումային ծրագրում:

Նույնը վերաբերում է ձեռնարկությունների կառավարման աջակցությանն ուղղված գործողություններին: ՀԳՏՏԶՀ-ին դիմող և ֆինանսավորում ակնկալող ձեռնարկությունները պետք է իրականացնեն մի շարք նախապայմաններ՝ ներառյալ կառուցվածքային փոփոխությունները՝ վերագրանցելով ձեռնարկությունը որպես փակ կամ բաց բաժնետիրական ընկերություն: Սա նշանակում է, որ ձեռնարկությունը վերագրանցում է կատարում մինչև ֆինանսավորում ստանալը, իսկ ֆինանսավորում ստանալուց հետո միայն ստանում տեխնիկական աջակցություն նոր կառավարման համակարգ ներդնելու ուղղությամբ և պատկերացում կազմում այն մասին, թե իր ներքին կարողությունները (ներառյալ մարդկային ռեսուրսները) բավարար են, թե ոչ նոր կառավարման համակարգը ներդնելու և գործարկելու համար: Ցածր կարողությունների դեպքում նոր կառավարման համակարգի ներդրման գործընթացն ավելի տևական է եղել, քան նախատեսվել է: Այս ակնհայտ էր ISO 22000 պարենի անվտանգության պահանջների ներդրման ժամանակ, երբ անհրաժեշտ դարձան մեծ ֆինասական ռեսուրսներ հիմնական միջոցների վերազինման և համալրման համար, ինչպես նաև լավ պատրաստված մարդկային ռեսուրսներ՝ վարելու անհրաժեշտ փաստաթղթաշրջանառությունը:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ձեռնարկություններին ուղղված տեխնիկական աջակցության մասով ՀԳՏՏԶՀ-ն չի կատարել Ծրագրով նախատեսված գործողություններն ամբողջությամբ, քանի որ նախատեսված գործողություններն իրագործելի չէին ժամկետի տեսանկյունից: Վերը նշված հանգամանքների արդյունքում ՏԱ-ի մասով ծախսերի կատարողականը 2012թ.-ի վերջի դրությամբ կազմում է շուրջ 44%, իսկ ՀԳՏՏԶՀ-ի տարեկան բյուջեի կատարողականը ՏԱ-ն մասով 2010թ.-ին կազմել է 32%, 2011թ.-ին՝ 26% և 2012թ.-ին՝ 28%: Հաշվի առնելով նշված սահմանափակումները՝ տեխնիկական աջակցության մասով Ծրագիրը երկարաձգվել է մինչև 2014թ.-ի հունիսը, ինչը թույլ կտա ավարտին հասցնել աշխատանքները:

Մշտադիտարկում: ՀԳՏՏԶՀ-ն իրականացնում է իր գործողությունների (մասնավորապես՝ ներդրումային գործունեության) մշտադիտարկումը՝ առաջնորդվելով «Ներդրումների իրականացման և փոխառությունների տրամադրման ուղեցույցով», որտեղ ներկայացված են մշտադիտարկման գործընթացը, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և ձևաչափերը: Մշտադիտարկման գործընթացում ներգրավված են հետևյալ կողմերը՝ Ներդրումային մասնագետը (ՆՄ), որն իրականացնում է բուն մշտադիտարկման գործընթացը, Հիմնադրամի տնօրենը (ՀՏ), որը վերահսկում է

մշտադիտարկման գործընթացը, Ներդրումային կոմիտեն, որը հաստատում է ՀՏ-ի/ՆՄ-ի կողմից ներկայացված մշտադիտարկման հաճախականությունը և կարող է պահանջել մշտադիտարկման հաշվետվությունները, Հաճախորդ ընկերությունը, որը տրամադրում է տեղեկատվություն և փաստաթղթեր իր ընթացիկ գործունեության և ֆինանսավորման արդյունքների գնահատման համար:

Մշտադիտարկման արդյունքում կազմվում է հաշվետվություն (ձևաչափը սահմանված է «Ներդրումների իրականացման և փոխառությունների տրամադրման ուղեցույցով»), որը ներկայացվում է ՀՏ-ին, և ըստ անհրաժեշտության, նաև՝ ՆԿ-ին:

Մշտադիտարկում իրականացնող աշխատակիցը՝ ՆՄ-ը, հանդիսանում է նաև Հիմնադրամի կողմից առաջադրված հաճախորդ ընկերության Տնօրենների խորհրդի անդամ, ինչը թույլ է տալիս ավելի արդյունավետ կատարել մշտադիտարկման գործընթացը, որը պարունակում է նաև կողմնապահության ռիսկ:

Միևնույն ժամանակ ՀԳՏՏԶՀ-ի կողմից ներդրված մշտադիտարկման համակարգն ունի որոշ թերություններ, մասնավորապես՝ մշտադիտարկումն իրականացվում է բավականին բարդ ձևաչափով, որտեղ զետեղված է ձեռնարկության վերաբերյալ ամբողջ հնարավոր տեղեկատվությունը (ինչպես որակական, այնպես էլ՝ քանակական), սակայն առկա չեն տվյալների հավաքագրման հստակ ժամանակացույց, գործիքներ, տվյալների մուտքագրման ձևաչափեր և միասնական բազա, ինչը խրթին է դարձնում հավաքագրված տարաբնույթ տեղեկատվության վերլուծությունը և ներկայացումը (նշում՝ եզրակացությունը բխում է ոչ միայն դիտարկված փաստաթղթերից, այլև սույն Հաշվետվության մաս կազմող, ՀԳՏՏԶՀ-ի ներդրումների սոցիալական արդյունավետության գնահատման ընթացքում ՀԳՏՏԶՀ-ի կողմից մշտադիտարկման արդյունքում հավաքագրված տեղեկատվության օգտագործման փորձից):

Մոնիթորինգի հաշվետվության ձևաչափը ներառում է.
1. Ամփոփ տեղեկատվություն՝ կատարված ֆինանսավորման նպատակը և եղանակը, մոնիթորինգի եղանակը, ժամկետը և այլն,
2. Ընկերության գործունեությունը, կատարված փոփոխությունները,
3. Շուկայի ուսումնասիրություն,
4. Իրավական դաշտի ուսումնասիրություն,
5. Մատակարար-Գնորդ ցանցի ուսումնասիրություն,
6. Հիմնական միջոցներում փոփոխություններ,
7. Շրջանառու կապիտալի կառուցվածքի փոփոխություններ,
8. Պարտավորությունների կառուցվածքի փոփոխություններ,
9. Մարդկային ռեսուրսներին առընչվող փոփոխություններ,
10. Ֆինանսական ուսումնասիրություն,
11. Հիմնական պայմանագրերի ուսումնասիրութուն,
12. Ծրագրի արտաքին սոցիալ-տնտեսական ազդեցությունը, VCMI հաշվարկ:

ՀԳՏՏԶՀ-ի կողմից մշտադիտարկման արդյունքները հիմնականում կիրառվել են որպես գործիք՝ ՀԸ-ի կողմից ներդրումային ծրագրի իրականացման վերահսկման և անհրաժեշտության դեպքում փոփոխությունների իրականացման համար, ինչպես նաև ներդրումային ծրագրի իրականացման ավարտից հետո ՀԸ-ի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման համար: Տեխնիկական աջակցության մասով, մշտադիտարկումը, որպես գործիք՝ գործողությունների իրականացման ընթացքում անհրաժեշտության դեպքում փոփոխություններ իրականացնելու համար, գրեթե չի կիրառվել:

ՀԳՏՏԶՀ-ի կողմից, որպես ծրագրերի կառավարման գործիք կիրառվում է Տարեկան աշխատանքային ծրագիրը, որտեղ ներկայացված են ՀԳՏՏԶՀ-ի նպատակները և խնդիրները տարեկան կտրվածքով, նպատակներին և խնդիրներին հասնելու համար պլանավորված միջոցառումները/գործողությունները, ակնկալվող արդյունքները և արդյունքների գնահատման ցուցանիշները (չափորոշիչները): ՀԳՏՏԶՀ-ն չի կիրառում «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրի տրամաբանական կառուցվածքը (Logframe)՝ որպես իր կողմից իրականացվող ծրագրերի գործիք:

ՀԳՏՏԶՀ-ն իր գործունեության ընթացքում գրանցել է հաջողված համագործակցության փորձ դաշտում գործող այլ կառույցների հետ: Մասնավորապես՝ ներդրումային գործունեության ծավալման ընթացքում ՀԳՏՏԶՀ-ն համագործակցում է մի շարք բանկերի հետ (ներառյալ ԳՖԿ-ի հետ համագործակցող բանկերը): ՀԳՏՏԶՀ-ն իր հաճախորդներին ուղղորդում է դեպի բանկեր, եթե վերջիններս լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների կարիք ունեն, միևնույն ժամանակ այլ ֆինանսական հաստատությունները պոտենցիալ հաճախորդներին ուղղորդում են դեպի ՀԳՏՏԶՀ:

Տեխնիկական աջակցության մասով ՀԳՏՏԶՀ-ն արդյունավետ համագործակցել է Հայկական զարգացման գործակալության հետ՝ հնարավորություն ստեղծելով թիրախային խմբում ներգրավված ընկերությունների համար՝ մասնակցելու Հայաստանից դուրս կազմակերպվող ցուցահանդեսներին: ՀԳՏՏԶՀ-ն համագործակցում է նաև ՄԱԶԾ[29] Նախնական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրի (UNDP VET) հետ՝ հնարավորություն ստեղծելով գյուղատնտեսության և սննդի վերամշակման ոլորտի ապագա մասնագետների (ուսանողների) համար՝ արտադրական պրակտիկա անցնելու ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ընկերություններում (որոնք իրենց հերթին հնարավորություն են ստանում համալրելու իրենց աշխատակազմը երիտասարդ կադրերով): Համագործակցության հաջողված փորձ կարելի է նաև դիտել

[29]ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր

ՀՀ-ում սպանդանոցների հիմնման ուղղությամբ համագործակցությունը: Միավորված Ազգերի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ) դեռ 2009 թ.-ին ՀՀ Գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ մեկնարկեց «Աջակցություն Հայաստանում սպանդանոցների զարգացմանը» նախագիծը, որի շրջանակներում նախատեսված էր 3 տարվա ընթացքում հիմնել 4 մարզային սպանդանոցներ՝ համագործակցելով մասնավոր հատվածի հետ: Սակայն, մասնավոր հատվածի կողմից համաֆինանսավորման բացակայության պատճառով մինչ այսօր սպանդանոցները չեն հիմնվել և ՀԳՏՏՁՀ-ի կողմից առաջարկվող ֆինանսական գործիքների շնորհիվ երկու սպանդանոցի հիմնման նախագիծը կյանքի կկոչվի 2014թ.-ին:

4.1.3 Որքա՞ն արդյունավետ են ձեռք բերվում /նվաճվում/ կարճաժամկետ արդյունքները (Outputs):

ՀԳՏՏՁՀ-ի գործունեության կարճաժամկետ արդյունքներն ընդհանուր առմամբ համապատասխանում են նախատեսված ժամանակացույցին: 2012թ.-ի վերջի դրությամբ ՀԳՏՏՁՀ-ի կողմից ֆինանսավորված ներդրումային ծրագրերն իրականացվել են ամբողջությամբ: Ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքում ի հայտ եկած խնդիրները քննարկվել են ՀԳՏՏՁՀ-ի և հաճախորդ ընկերությունների միջև ու համապատասխան լուծում կամ քայլեր ձեռնարկվել: Բոլոր հաճախորդ ընկերությունները ներդրումային ծրագրերի իրականացման կարճաժամկետ արդյունքները գնահատել են դրական, ներդրումային ծրագրի իրականացման փուլում ի հայտ եղած խնդիրները կտրուկ չեն անդրադարձել կարճաժամկետ արդյունքների վրա և հիմք են ստեղծել երկարաժամկետ արդյունքների ձեռքբերման համար (վաճառքների և արտահանման աճ, մթերումների աճ, նոր աշխատատեղեր և այլն):

ՀԳՏՏՁՀ-ի հաճախորդ բոլոր ընկերություններն ստացել են տեխնիկական աջակցության նախատեսված փաթեթը: Հաճախորդ բոլոր ընկերություններն ստացել են հարկային խորհրդատվություն, ութ ընկերություններին տրամադրվել է խորհրդատվություն հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների կազմման ուղղությամբ, ութ ընկերություններ իրականացրել են ֆինանսական հաշվետվությունների և տնտեսական արդյունքների աուդիտ, յոթ ընկերություն մասնակցել է միջազգային ցուցահանդեսներին, յոթ ընկերություն ստացել է սննդի անվտանգության միջազգային ստանդարտների ապահովման հետ կապված խորհրդատվություն և հինգ ընկերություն՝ սննդի անվտանգության միջազգային ստանդարտների համապատասխանության հավաստագրմանն ուղղված տեխնիկական աջակցություն:

Ընդհանուր առմամբ, ընկերությունների կողմից բարձր է գնահատվել միջազգային ցուցահանդեսներին մասնակցությանն ուղղված աջակցությունը, ինչը թույլ է տվել ստեղծել նոր կապեր և շուկայահանման հնարավորություններ, իսկ ամենացածր գնահատականը ստացել է ֆինանսական կառավարման բարելավմանն ուղղված տեխնիկական աջակցության ծրագրերի արդյունքները:

Դժգոհությունները հիմնականում վերաբերում են հաշվապահական ու հարկային խորհրդատվություններին, որոնց արդյունավետությունը ցածր է գնահատվել ընկերությունների կողմից: Հարկ է նշել, որ դժգոհության պատճառները պայմանավորված են տրամադրվող տեխնիկական աջակցության նույնատիպությամբ (հաշվի չեն առնվել ձեռնարկության առանձնահատկությունները և պահանջները) և ՀԳՏՏԶՀ-ի ու հաճախորդ ընկերությունների միջև հաղորդակցման բացով: ՀԳՏՏԶՀ-ի կողմից ֆինանսական կառավարման ուղղությամբ աջակցությունը տրամադրվել է ներդրումների կառավարումը բարելավելու և ընկերության ֆինանսական կառավարման թափանցիկությունը բարձրացնելու նպատակով, ինչն ընկալվել է որոշ հաճախորդ ընկերությունների կողմից ներդրումային ծրագրի հաստատումից և մեկնարկից հետո:

ՀԳՏՏԶՀ-ի տարեկան աշխատանքային ծրագրի մակարդակով կարճաժամկետ արդյունքները հստակորեն արտացոլված են չափորոշիչներով: Աշխատանքային ծրագրով նախատեսված յուրաքանչյուր միջոցառման համար ձևակերպված է սպասվելիք արդյունքը և սպասվելիք արդյունքի համար սահմանված է հստակ չափորոշիչ: Տարեկան հաշվետվություններում ներկայացված է աշխատանքային ծրագրի կատարողականը՝ ըստ սահմանված չափորոշիչների:

4.1.4 Որքանո՞վ են գործընկերները ներգրավված և աջակցում (ներդրումը):

ՀԳՏՏԶՀ-ի կողմից Ծրագրի բաղադրիչի իրականացման ընթացքում ձևավորվել է արդյունավետ և սահուն համագործակցություն գործընթացում ներգրավված բոլոր կողմերի միջև, ինչպես Հիմնադրամի կառուցվածքում առկա մարմինների (Հոգաբարձուների խորհուրդ, Ներդրումային կոմիտե) և օղակների (Ղեկավար օղակներ, Ծրագրային թիմ, հաշվապահություն/գնումներ), այնպես էլ ԳԶՄՀ-ի, ԾԻԳ-ի և այլ շահագրգիռ կողմերի միջև:

Ծրագրի հիմնական Համաձայնագրում, ինչպես նաև հետագայում ՀԳՏՏԶՀ-ի և ՀՀ կառավարության միջև կնքված համաձայնագրում հստակ ներկայացված են տարբեր կողմերի մասնակցության դրույթները Ծրագրի բաղադրիչի իրականացման ընթացքում,

ինչը թույլ է տվել կազմակերպել ՀԳՏՏՁՀ-ի ընթացիկ գործունեությունն առավելագույնս արդյունավետ և ապահովել է բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը:

Միևնույն ժամանակ ՀԳՏՏՁՀ-ի գործունեության առաջին տարիների ընթացքում, ինչպես ԳԶՄՀ-ն, այնպես էլ Հոգաբարձուների խորհուրդը ձեռնարկել են մի շարք քայլեր՝ բարելավելու մոնիթորինգի և հաշվետվությունների համակարգը և հաղորդակցությունը ներգրավված կողմերի/օղակների միջև:

Գնահատման ընթացքում հայտնաբերված բացը վերաբերում է ԾԻԳ-ի կողմից իրականացվող ՀԳՏՏՁՀ-ի ծրագրերի գնահատման (այցելություններ հաճախորդ ընկերություններ, տվյալների հարցումներ ՀԳՏՏՁՀ-ից և այլն) արդյունքների վերաբերյալ հետադարձ կապի բացակայությունը:

4.2. ՀԳՏՏԶՀ-ի գործունեության արդյունավետության (Effectiveness) գնահատում

Որքանո՞վ է ՀԳՏՏԶՀ-ը հասել իր միջամտության նպատակներին (ՀԳՏՏԶՀ-ի գործունեության երկարաժամկետ արդյունքների (Outcome) Ծրագրի վերջնական նպատակի մակարդակում) կամ որքանո՞վ է ակնկալվում, որ վերջիններս ձեռք կբերվեն:

4.2.1 Որքանո՞վ են գործողությունները/գործունեությունը նպաստում ակնկալվող արդյունքին (Outcomes):

ՀԳՏՏԶՀ-ն իր ներդրումային գործունեության արդյունքների գնահատումը (թիրախային խմբի մակարդակով) իրականացնում է՝ հիմք ընդունելով հետևյալ չափորոշիչները (Outcome indicators)՝ հաճախորդ ընկերության շրջանառության աճ, արտահանման աճ, մթերման ծավալների աճ, նոր աշխատատեղեր:

ՀԳՏՏԶՀ-ի գործունեության թիրախային խմբում ընդգրկվում են ՀՀ մարզերում գործունեություն ծավալող այն ձեռնարկությունները, որոնք զբաղվում կամ զբաղվելու են հետևյալ գործունեությամբ.

- գյուղմթերքների վերամշակում և պահածոյացում,
- կաթնամթերքի արտադրություն,
- գինեգործություն,
- ձկնաբուծություն,
- գյուղական տարածքներում աշխատատեղերի ստեղծմանը նպաստող այլ գործունեություն և այլն[30]:

Ընդհանուր առմամբ, ՀԳՏՏԶՀ-ի կողմից ֆինանսավորված ներդրումային ծրագրերի արդյունքները դրական են վերը նշված չափորոշիչների տեսանկյունից: Միևնույն ժամանակ բավականին բարդ է գնահատել դրանց ձեռքբերման համապատասխանությունը ժամկետի տեսանկյունից: Հիմնական բարդություններն առաջանում են, ինչպես արդեն նշվել է, չափորոշիչների հավաքագրման և վերլուծության միասնական տվյալների բազայի բացակայության պատճառով:

Այնուամենայնիվ, գնահատող թիմը փորձել է գնահատել արդյունքների ձեռքբերումը ժամանակի տեսանկյունից և ստացվել է հետևյալ պատկերը.

[30] Աղբյուր՝ Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական տարզացման հիմնադրամի գործունեության ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

- Համաձայն ՀԳՏՏԶՀ-ի հաշվետվություններում ներկայացված տվյալների՝ 2012 թ.-ի 7 ձեռնարկությունների[31] զուտ շրջանառությունը կանխատեսվել է շուրջ 3,940 մլն դրամ, փաստացին կազմել է 3,484 մլն դրամ (88%):
- Արտահանման ծավալները կանխատեսվել են միայն երկու ընկերությունների համար (453 մլն դրամի), փաստացի 2012 թ.-ին արտահանում իրականացրել են 7 ընկերություններից 5-ը (շուրջ 1,848 մլն դրամի):
- Ֆերմերային տնտեսությունների մթերման ծավալները կանխատեսվել են երկու ձեռնարկության համար (186 մլն դրամի), փաստացի 2012 թ.-ին մթերում է իրականացրել 6 ընկերություն (շուրջ 1,682 մլն դրամի):
- Ստեղծվելու են առնվազն 140 նոր աշխատատեղեր ֆինանսավորված կազմակերպություններում և/կամ նրանց գործընկերների մոտ: Փաստացի ՀԳՏՏԶՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում գյուղատնտեսական մթերքի արտադրության և վերամշակման ոլորտում ստեղծվել է **360 նոր աշխատատեղ, որից 98 աշխատատեղը՝** ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ընկերություններում, իսկ **262 աշխատատեղը՝** հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ՖՏ-ներում:

Հարցման արդյունքները փաստում են, որ ՀԳՏՏԶՀ-ի բոլոր հաճախորդ ընկերությունները դրական են գնահատել ներդրումային ծրագրերի արդյունքները (վերը թվարկված ցուցանիշների տեսանկյունից):

Հարկ է նշել, որ եթե 2010 և 2011 թթ.-ին ՀԳՏՏԶՀ-ն ներկայացնում էր տվյալներ հաճախորդ ընկերությունների զուտ շահույթի և միջին աշխատավարձերի վերաբերյալ, ապա 2012թ.-ի հաշվետվությունում նշված ցուցանիշները բացակայում են:

ՀԳՏՏԶՀ-ի թիրախային խմբում ընդգրկված ձեռնարկությունները բարձր են գնահատում և կարևորում ՀԳՏՏԶՀ-ի կողմից առաջարկվող ֆինանսական գործիքներն իրենց գործունեության զարգացման/ընդլայնման տեսանկյունից: ՀԳՏՏԶՀ-ի կողմից առաջարկվող տեխնիկական աջակցությունը համագործակցության առաջին տարիներին այդքան էլ չի կարևորվել ընկերությունների կողմից. թերևս ներկայումս ընկերությունների գերակշիռ մասը ընկալում է դրա անհրաժեշտությունը և կարևորությունը:

Տեխնիկական աջակցության մասով հիմնականում տեսանելի են **պարենի անվտանգության միջազգային ստանդարտների ներդրման և համապատասխանեցման** ուղղությամբ տեխնիկական աջակցության արդյունքները: Այսպես՝ 2012թ.-ի վերջի

[31]Չեն դիտարկվել 2011թ.-ին ֆինանսավորում ստացած երկու ձեռնարկություններ:

դրությամբ նշված ուղղությամբ տեխնիկական աջակցություն ստացած ութ հաճախորդ ընկերություններից երեքին շնորհվեց «ISO 22000» և «HACCP» որակի հավաստագրեր, ևս երկուսի հավաստագրման փուլը նախատեսված է ավարտին հասցնել 2013թ.-ի վերջին: 2012թ.-ի վերջի դրությամբ ութ հաճախորդ ընկերություններ իրականացրել են ***ֆինանսական հաշվետվությունների և տնտեսական արդյունքների անկախ աուդիտ***:

Մնացած ուղղություններով իրականացված ՏԱ-ի արդյունքները ներկայացված են տարաբնույթ փաստաթղթերում (Խորհրդատուների ծառայության պայմանագրերի տեխնիկական առաջադրանք, Խորհրդատուների կողմից ներկայացված փաստաթղթեր, Ընկերությունների աուդիտի արդյունքներ, Ներդրումային մասնագետների գրառումներ և այլն), սակայն առկա չէ միասնական գնահատման համակարգ արդյունքների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն ստանալու համար:

ՀԳՏՏՁՀ-ի հետ համագործակցության արդյունքում բոլոր հաճախորդ ընկերություններն անցել են ձեռնարկության վերակազմավորման և կառուցվածքային փոփոխության փուլեր [32] : Թեև ՀԳՏՏՁՀ-ի տեխնիկական աջակցության ծրագրերն ուղղված էին նպաստելու ձեռնարկության վերակազմավորման արդյունքում ներքին կառուցվածքային և կառավարման գործընթացների փոփոխությունների սահուն իրականացմանը, գրեթե բոլոր հաճախորդ ընկերությունները դեռ ունեն կառավարման (այդ թվում նաև ֆինանսական) համակարգի բարելավման անհրաժեշտություն: Հարկ է նշել, որ այս փուլում հաճախորդ ընկերությունները գիտակցում են կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված հետագա քայլերի անհրաժեշտությունը:

4.2.2 Հաշվի առնելով Ծրագրի բաղադրիչի/ ՀԳՏՏՁՀ-ի գործունեության միջանկյալ արդյունքները՝ որքանո՞վ է հավանական Ծրագրի/ ՀԳՏՏՁՀ-ի նպատակի իրականացումը:

Հայաստանի գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի գլխավոր նպատակն է օժանդակել աղքատության նվազեցմանը Հայաստանի Հանրապետության գյուղական տարածքների տնտեսական զարգացման միջոցով:

Գլխավոր նպատակին հասնելու համար Հիմնադրամը գործարկում է երկրորդային նպատակները, որոնք են.

[32] ՀԳՏՏՁՀ-ի կողմից առաջարկվող ներդրումային գործիքները ենթադրում են, որ եթե հաճախորդ ընկերությունը չի հանդիսանում բաժնետիրական ընկերություն, ապա կատարվում է վերակազմակերպում փակ կամ բաց բաժնետիրական ընկերության:

- խթանել հարաբերական տնտեսական առավելություններ ունեցող այն գյուղատնտեսական ձեռնարկությունների աճը, որոնք փոխկապակցված են գյուղմթերք արտադրող աղքատ տնտեսվարող սուբյեկտների հետ և կարող են ապահովել նոր աշխատատեղեր գյուղական բնակչության համար,
- ապահովել համապատասխան ներդրումային և ֆինանսավորման գործիքակազմ, որոնք կբավարարեն գյուղական տարածքներում գործող տնտեսվարող սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման պահանջները,
- ապահովել Հայաստանի ֆինանսական համակարգի հետագա զարգացումը՝ բավարարելու համար փոքր և միջին բիզնեսի վարկավորման պահանջները:

ՀԳՏՏԶՀ-ի հիմնական նպատակի համար սահմանված են հետևյալ չափորոշիչները.

- բնակչության եկամտի աճ (մասնավորապես՝ հաճախորդ ընկերություններին մատակարարում իրականացնող ֆերմերներ/տնային տնտեսություններ, ՀԸ-ներում զբաղվածներ):
- **ՀԳՏՏԶՀ-ի ծրագրերի սոցիալական արդյունավետության գնահատում արժեքային շղթայի բազմապատկչի (Value Chain Multiplier Index/VCMI) ինդեքսի հիման վրա:** VCMI ինդեքսը չափում է ներդրումների արդյունքում գոյացած հավելյալ շահույթը/արժեքը բնակչության/տնային տնտեսությունների (ֆերմերներ, ընկերության և ֆերմերային տնտեսության աշխատակիցներ) և հասարակության (հարկային մուտքերի ավելացում պետական բյուջե) մակարդակներում:

ՀԳՏՏԶՀ-ի գործունեությունը լիովին ուղղված է իր նպատակին հասնելու համար: Մասնավորապես՝ ՀԳՏՏԶՀ-ի կողմից ֆինանսավորում ստացած բոլոր ձեռնարկությունները փոխկապակցված են գյուղմթերքներ արտադրող աղքատ տնտեսվարող սուբյեկտների հետ կամ հնարավորություն ունեն ստեղծելու նոր աշխատատեղեր: ՀԳՏՏԶՀ-ի կողմից գրեթե բոլոր ֆինանսավորված ներդրումային ծրագրերը նպաստել են ընկերությունների գործունեության ընդլայնմանը, գրեթե բոլոր ձեռնարկությունները գրանցել են շրջանառության կայուն աճ: Ընկերությունների գործունեության ընդլայնումն իր հերթին նպաստել է նոր աշխատատեղերի ստեղծմանը ընկերության մակարդակով, ֆերմերային տնտեսություններից մթերումների ծավալների աճին՝ ապահովելով կայուն շուկա վերջիններիս համար: Կայուն շուկայի առկայությունն իր հերթին խթան է հանդիսացել ֆերմերային տնտեսությունների ընդլայնման և զարգացման համար (տե՛ս Բաժին 3.4):

ՀԳՏՏԶՀ-ի կողմից առաջարկվող ներդրումային և ֆինանսավորման գործիքակազմը հիմնականում բավարարում է գյուղական տարածքներում գործող տնտեսվարող սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման պահանջներին: Հիմնական խոչընդոտը

հանդիսանում է ՀՀ-ում կորպորատիվ կառավարման մշակույթի ցածր մակարդակը, ինչը խոչընդոտում է թիրախային խմբում ներգրավված ավելի մեծ թվով ընկերություններին արդյունավետ արձագանքելու և օգտվելու ՀԳՏՏԶՀ-ի կողմից առաջարկվող ներդրումային և ֆինանսավորման գործիքակազմից:

Գնահատման ընթացքում չեն բացահայտվել դեպքեր/կամ հնարավորություն, որ ՀԳՏՏԶՀ-ի գործունեությունը ունի/կունենա որևէ անսպասելի բացասական ազդեցություն թիրախային խմբի վրա:

4.3 ՀԳՏՏՁՀ-ի գործունեության Ազդեցության (Impact) գնահատում

ՀԳՏՏՁՀ-ի գործունեության/միջամտությունների դրական և բացասական միջինից երկարաժամկետ ազդեցության հավանականությունը, ինչպես ուղղակի և անուղղակի, այնպես էլ նախատեսված և չնախատեսված դեպքերում:

4.3.1 Ո՞րն է Ծրագրի բաղադրիչի/ ՀԳՏՏՁՀ-ի գործունեության ուղղակի ազդեցությունը (հիմնական նպատակի մակարդակում):

Գնահատման պահին ակնհայտ է, որ ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված գործունեությունը կնպաստի իր նպատակին հասնելու՝ ՀՀ-ի գյուղական տարածքների տնտեսական զարգացման միջոցով աղքատության նվազեցմանը: ՀԳՏՏՁՀ-ի ծրագրերի սոցիալական արդյունավետության գնահատման արդյունքները փաստում են, որ ՀԳՏՏՁՀ-ի ծրագրերի իրականացման արդյունքում.

- Հավելյալ եկամուտ է ստեղծվել գյուղական բնակչության համար, մասնավորապես՝ ՀԳՏՏՁՀ-ի ֆինանսավորած ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում բնակչության կողմից վաստակած հավելյալ համախառն եկամուտը 2010-2012 թթ.-ի համար կազմել է շուրջ 1,181 մլն դրամ, որի գերակշիռ մասը (84%) բաժին է ընկել ՀԸ-ներին մատակարարում իրականացնող ֆերմերային տնտեսություններին, իսկ մնացած 6%-ը՝ ՀԸ-ներում զբաղվածներին:
- ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում գյուղատնտեսական մթերքի արտադրության և վերամշակման ոլորտում ստեղծվել է **360 նոր աշխատատեղ, որից 98 աշխատատեղը՝** ՀԳՏՏՁՀ-ի հաճախորդ ընկերություններում, իսկ **262 աշխատատեղը՝** հաճախորդ ընկերություններին մատակարարումներ իրականացնող ՖՏ-ներում:
- ՀԳՏՏՁՀ-ի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում շուրջ 284 մլն դրամի հավելյալ մուտքեր են իրականացվել պետական բյուջե 2010-2012 թթ.-ի ընթացքում ՀԸ-ների կողմից:

VCMI գործակիցը հաշվարկվել է 9 տարիների համար (մինչև ՀԳՏՏՁՀ-ի ելքը բոլոր ֆինանսավորված ընկերություններից՝ որպես բաժնետեր): ՀԳՏՏՁՀ-ի ծրագրի կողմից **1,791 մլն դրամի ներդրումների** արդյունքում տնային տնտեսությունների մակարդակում գոյացած **Զուտ եկամուտների/Արժեքի զեղչված արժեքը** 9 տարիների համար **կազմում է 5,141 մլն դրամ,** իսկ **VCMI գործակիցը՝ 2.87:** Այսպիսով՝ **կարելի է ակնկալել, որ** ՀԳՏՏՁՀ-ի ծրագրի կողմից իրականացված ներդրումների յուրաքանչյուր դրամի հաշվով տնային տնտեսությունների համար կստեղծվի 2.87 դրամի զուտ եկամուտ (կամ տարեկան միջինը 571 մլն դրամի եկամուտ):

ՀԳՏՏՁՀ-ի ծրագրերի սոցիալական արդյունավետության գնահատման արդյունքները մանրամասն ներկայացված են սույն հաշվետվության Բաժին 3-ում:

ՀԳՏՏՁՀ-ի ծրագրերի ակնկալվող ազդեցությանը (2014-2018 թթ.-ի համար), ինչպես թիրախային խմբի, այնպես էլ սոցիալական մակարդակում, կարող են խոչընդոտել հետևյալ հիմնական արտաքին գործոնները՝ (ա) ՀՀ-ում տնտեսական և բիզնես միջավայրի կտրուկ վատթարացումը (օրինակ՝ ֆիսկալ և/կամ դրամավարկային քաղաքականության կտրուկ փոփոխման հետևանքով), (բ) ՀՀ-ի՝ Մաքսային միությանը անդամակցելու հետևանքները (մասնավորապես՝ միասնական մաքսային սակագների, ապրանքների, ծառայությունների առևտրի ընդհանուր կանոնների, արտարժույթի կարգավորման և վերահսկման միասնականացված համակարգի և այլնի ներդրումը) կարող են բացասական ազդել տեղական ընկերությունների մրցունակության վրա ինչպես ներքին շուկայում, այնպես էլ՝ արտաքին, եթե հաշվի չառնվեն ՀՀ տնտեսության առանձնահատկությունները և որոշ սահմանափակումները (օրինակ՝ Մաքսային Միության այլ անդամ երկրների հետ տրանսպորտային միասնական համակարգի բացակայությունը), (գ) միգրացիայի շարունակական աճը կարող է բացասական ազդեցություն ունենալ գյուղատնտեսության ոլորտի վրա, մասնավորապես՝ գյուղմթերքի արտադրության ծավալների վրա (ներկայումս արդեն ՀՀ որոշ մարզերում, մասնավորապես՝ գյուղական համայնքներում, դիտարկվում է աշխատուժի կտրուկ պակաս, ինչը պայմանավորված է մշտական և սեզոնային միգրացիայով):

ՀԳՏՏՁՀ-ի գործունեությունը նպաստել է հարկային դաշտում բարեփոխումների իրականացմանը, ինչը կարող է խթանել ՀՀ-ում բաժնեմասնակցային գործիքի միջոցով ձեռնարկությունների համար ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը: ՀԳՏՏՁՀ-ից ֆինանսական միջոցների ներգրավում ակնկալող ընկերությունների մեծ մասի կողմից օգտագործվող ակտիվները պատկանում են Ընկերությունների սեփականատերերին և Ընկերությունները միայն օգտագործում են այդ ակտիվները: Տվյալ ակտիվների փոխանցումն ընկերության բաժնեհավաք կապիտալ բերում է ԱԱՀ պարտավորության ծագմանը: Խնդիրը ներկայացվել է ՀՀ Կառավարությանը, որի արդյունքում ՀՀ կառավարությունը նախաձեռնել է փոփոխություններ և լրացումների մտցնել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում և 2010թ. ընթացքում նշված փոփոխությունները ընդունվել և հաստատվել են:

4.3.2 Ո՞ր դեպքում ՀԳՏՏՋՀ-ի գործունեությունը կարող է ունենալ որևէ անուղղակի (դրական կամ բացասական) ազդեցություն:

Ընդհանուր առմամբ, ՀԳՏՏՋՀ-ի գործունեությունը դրական է ազդել **կանանց զբաղվածության և եկամուտների վրա:** ՀԳՏՏՋՀ-ի կողմից իրականացված ծրագրերը դրական ազդեցություն են ունեցել **կանանց զբաղվածության տեսանկյունից**: ՀԳՏՏՋՀ-ի կողմից ֆինանսավորված ընկերություններում ստեղծված նոր աշխատատեղերի 55 %-ը բաժին է ընկել կանանց, ընդ որում՝ կանանց թիվը հաճախորդ ընկերությունների աշխատակիցների ցանկում ավելացել է 122-ից (բազիսային տարի) մինչև 176 (ազդեցության տարի):

ՀԳՏՏՋՀ-ի կողմից իրականացված ծրագրերի դրական ազդեցությունը կանանց զբաղվածության տեսանկյունից պայմանավորված է այն փաստով, որ ֆինանսավորված հաճախորդների գերակշիռ մասը ներգրավված է այն ոլորտներում, որտեղ կանանց զբաղվածությունը բարձր մակարդակ ունի: Այսպես՝ ֆինանսավորված ինը ընկերություններից հինգում, որոնք ներգրավված են մրգի և բանջարեղենի վերամշակման արժեքային շղթայում, մինչև ներդրումային ծրագրի իրականացումը կանանց մասնաբաժինն աշխատակիցների ցանկում եղել է բավականին բարձր (54 %), ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում, ոլորտում ստեղծված 56 նոր աշխատատեղերից 38-ը (68 %-ը) բաժին է ընկել կանանց: Կանանց զբաղվածության բարձր մակարդակ է գրանցվել նաև թռչնաբուծության ոլորտում, որտեղ զբաղվածների կեսը կանայք են: Ձկնաբուծության, կաթի վերամշակման և ոչխարաբուծության ոլորտներում կանանց ներգրավվածությունը համեմատաբար ցածր է, սակայն ներդրումային ծրագրի արդյունքում մի փոքր աճել է: Այսպես՝ կաթի վերամշակման և ոչխարաբուծության ոլորտներում կանանց մասնաբաժինն աճել է 14 %-ից մինչև 24 %, իսկ ձկնաբուծության ոլորտում՝ 21 %-ից մինչև 24 %:

2012 թ.-ին **բանջարեղենի և մրգի արտադրության ոլորտում** (ՀԳՏՏՋՀ-ի հաճախորդ ընկերություններին մատակարարում իրականացնող ֆերմերային տնտեսություններում) ներգրավված վարձու աշխատակիցների թիվը կազմել է շուրջ **4,180 մարդ, որից 71 %-ը կանայք են**:

Ծրագրի ազդեցության շնորհիվ բանջարեղենի և մրգի արտադրության ոլորտում ներգրավված վարձու աշխատակիցների թիվն աճել է **249-ով**, իսկ տարեկան **միջին եկամուտը՝ 6%-ով:**

Կարելի է նաև ակնկալել, որ ՀԳՏՏՋՀ-ի կողմից իրականացված միջոցառումները, երկարաժամկետ տեսանկյունից, դրականորեն կազդեն ՀՀ բնակչության բարեկեցության վրա, մասնավորապես՝ ներքին շուկայում առաջարկվող սննդամթերքի որակական

հատկանիշների բարելավման շնորհիվ (որպես ՀԳՏՏԶՀ-ի հաճախորդ ընկերություններում պարենի անվտանգության միջազգային ստանդարտների ներդրման արդյունք):

4.4 ՀԳՏՏՁՀ-ի գործունեության Կայունության (Sustainability) գնահատում

Ծրագրի ավարտից հետո միջամտության արդյունքների/օգուտների շարունակականության հավանականությունը:

4.4.1 Որո՞նք են ՀԳՏՏՁՀ-ի ֆինանսական/տնտեսական կայունության հիմքերը Ծրագրի ավարտից հետո:

ՀԳՏՏՁՀ-ի հետագա (Ծրագրի ավարտից հետո) գործունեությունն ապահովելու համար, 2011 թ.-ին մշակվել է ՀԳՏՏՁՀ-ի ռազմավարական զարգացման հնգամյա ծրագիր, որտեղ ներկայացված են ՀԳՏՏՁՀ-ի ֆինանսական կայունության ապահովման համար անհրաժեշտ միջոցառումները:

Ռազմավարական ծրագրով նախատեսվում էր, որ 2012 թ.-ի առաջին կիսամյակում կսպառվի ՀԳՏՏՁՀ-ի ներդրումային կապիտալը, և նախանշված էին ֆինանասական միջոցների ներգրավմանն ուղղված կարճաժամկետ և երկարաժամկետ միջոցառումներ:

Ներդրումային գործունեության շարունակականությունն ապահովելու նպատակով, նախատեսված էր տարբեր ֆինանսական աղբյուրներից ընդհանուր առմամբ 7 միլիոն ԱՄՆ դոլարի չափով նոր միջոցներ ներգրավել, միևնույն ժամանակ Հիմնադրամի նոր ներդրումային նախագծերի մի մասի ֆինանսավորմանն ուղղել ՀԳՏՏՁՀ-ի կուտակած շահույթները՝ սկսած փոքր ծավալներից 2012 թ.-ին և հասնելով մոտավորապես 0.5 միլիոն ԱՄՆ դոլարի 2015 թ.-ին:

Տեխնիկական աջակցության մասով նախատեսված էր, որ դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհները կսպառվեն 2012թ.-ին: 2013-2015 թթ. համար նպատակաուղղված քայլեր կիրականացվեն ՀԳՏՏՁՀ-ի կողմից Հիմնադրամի հաճախորդ ընկերություններին տրամադրվող աջակցության գործունեությունը ֆինանսավորելու նպատակով լրացուցիչ դրամաշնորհային միջոցներ ներգրավելու համար: Վերոնշյալի անհնարինության դեպքում ՀԳՏՏՁՀ-ն նախատեսում էր ձեռնարկությունների զարգացման այս կարևոր գործառույթների ֆինանսավորման համար օգտագործել իր սեփական գործառնական եկամուտը:

Ծրագրի նախագծում ներկայացված ՀԳՏՏՁՀ-ի համար ընտրված «հիմնադրամի մոդելը» համապատասխան լուծում հանդիսացավ հիմնադրամի ստեղծման և ձևավորման փուլում: Այն ամուր ելակետ ապահովեց՝ հիմնադրամի ձևավորման փուլից հետո ներդրումային գործունեությունը համեմատաբար սեղմ ժամկետներում սկսելու և իրականացնելու համար: Ներկայումս ՀԳՏՏՁՀ-ն ունի բավարար կարողություններ շարունակելու և ընդլայնելու իր գործունեությունը:

2011 թ.-ից ի վեր ՀԳՏՏԶՀ-ն ԳԶՀՄ-ի աջակցությամբ ձեռնարկել է մի շարք քայլեր ներդրումային գործունեության ընդլայնման համար լրացուցիչ ֆինանանսական միջոցներ ներգրավելու ուղղությամբ, սակայն, հաշվի առնելով այն փաստը, որ առկա ներդրումային դրամագլուխը կսպառվի/սպառվել է 2013 թ.-ին, նոր ֆինանսական ռեսուրսների ներգրավումը նախատեսվել է 2014 թ.-ին: Տեխնիկական աջակցության մասով առկա ռեսուրսները կսպառվեն 2014 թ.-ին:

Հարկ է նշել, որ ֆինանսավորման բացակայության դեպքում ՀԳՏՏԶՀ-ն իր շահույթի հաշվին (ենթադրելով, որ ընկերությունները ժամանակին կիրականացնեն մարումները) հնարավորություն կունենա շարունակելու իր գործունեությունն առկա հաճախորդ ընկերությունների սպասարկման մասով: Մասնավորապես՝ ՀԳՏՏԶՀ-ի շահույթը բավարար կլինի ընթացիկ ծախսերի և սահմանափակ տեխնիկական աջակցության համար, իսկ ստորադաս փոխառության մայր գումարի մարումները կարող են ուղղվել առկա ձեռնարկությունների շրջանառու կապիտալի ֆինանսավորմանը (ստորադաս փոխառությունների միջոցով):

Դիտարկենք հետևյալ գործոնները.

- ներդրումային դրամագլխի գերակշիռ մասն (շուրջ 80%-ը) ուղղվել է հաճախորդ ընկերությունների սեփական կապիտալի ֆինանսավորմանը՝ սովորական և արտոնյալ բաժնետոմսերի գնման միջոցով,
- բաժնետոմսերի ետգնման ժամկետը սահմանվել է ֆինանսավորումից 7 տարի հետո (այսինքն՝ եթե առաջին ներդրումային նախագծերը ֆինանսավորվել են 2010թ.-ին, իսկ վերջինը 2013թ.-ին, հաճախորդ ընկերությունների կողմից բաժնետոմսերի ետգնումից դրամական միջոցները կգոյանան 2017-2020թթ.-ի ընթացքում),
- ԳԶՀՄ-ի տրամադրած վարկային միջոցների մարման ժամանակացույցը սահմանված է 2018թ. փետրվարի 1-ից մինչև 2047 փետրվարի 1-ը է,

Հաշվի առնելով վերոնշյալ գործոնները՝ կարելի է եզրակացնել, որ առկա ֆինանսական ռեսուրսներով ՀԳՏՏԶՀ-ն չի կարող իրականացնել ներդրումներ հաճախորդ ընկերությունների սեփական կապիտալում (սովորական և արտոնյալ բաժնետոմսերի գնման միջոցով) մինչև 2017 թ.-ը:

4.4.2 Թիրախային խմբերի և համապատասխան շահառուների կողմից Ծրագրի բաղադրիչը որքանո՞վ է դառնում սեփականություն (սեփականության աստիճանը):

Ծրագրի բաղադրիչի ինչպես նախագծման, այնպես էլ իրականացման փուլերում հատուկ շեշտադրում է կատարվել ՀԳՏՏՁՀ-ի գործունեության շարունակականության վրա, ինչը բավարար հիմքեր է ստեղծել ՀԳՏՏՁՀ-ի հետագա գործունեությունն ապահովելու համար:

Մասնավորապես՝ ՀԳՏՏՁՀ-ն ձևավորվել է, որպես ինքնուրույն գործող կառույց, դոնոր կազմակերպությունների միջամտությունը սահմանափակվել է կարողությունների զարգացմամբ և ուղղորդմամբ, ինչը թույլ է տվել տեղայնացնել փորձը և ստեղծել ներքին կարողություններ՝ Ծրագրի ավարտից հետո գործողությունները շարունակելու համար:

Ֆինանսական կայունության համար հիմք են հանդիսանում ՀԳՏՏՁՀ-ի ներդրումային գործունեության համար սահմանված հստակ ելքի ռազմավարությունը և վերջինիս հաղորդակցումը թիրախային խմբում ընդգրկված/ պոտենցիալ հաճախորդ ընկերությունների հետ: ՀԳՏՏՁՀ -ի ներդրումային գործունեության ելքի ռազմավարությունը սահմանում է, որ ՀԳՏՏՁՀ-ն պետք է դադարեցնի ձեռնարկության ֆինանսավորումը և օտարի բաժնետոմսերում ներդրումները, որպես կանոն, երեքից յոթ տարվա ընթացքում, եթե որոշակի հանգամանքներից ելնելով այլ խելամիտ ժամկետ չի սահմանվում Ներդրումային կոմիտեի որոշմամբ: Ելքի պայմաններն ու կարգը նախապես համաձայնեցվում են ձեռնարկության փայատերերի հետ՝ ներառվելով ներդրումային գործընթացի մեջ: Ելքի սցենարի սահուն և առանց էական կորուստների իրականացման համար, ըստ ընթացակարգերի, Հիմնադրամի բաժնետոմսերի վաճառքը կարող է իրականացվել երեք սցենարներով.

- Հիմնադրամի և ձեռնարկության միջև համաձայնագրով՝ բաց բաժնետիրական ընկերության վերակազմակերպվելու և հրապարակային թողարկում իրականացնելու վերաբերյալ,
- Հիմնադրամի և ձեռնարկության միջև համաձայնագրով՝ կորպորատիվ պարտատոմսերի թողարկման միջոցով Հիմնադրամի բաժնետոմսերը հետ գնելու և փոխառությունները մարելու վերաբերյալ,
- Հիմնադրամի և ձեռնարկության միջև համաձայնագրով՝ Հիմնադրամի բաժնետոմսերն այլ անձանց (ներդրումային ընկերություններին և հիմնադրամներին, այլ ինստիտուցիոնալ ներդրողներին) օտարելու վերաբերյալ:

(Նշում՝ համաձայն ՀԳՏՏՁՀ-ի և ընկերության միջև կնքվող Բաժնետոմսերի բաժանորդագրման պայմանագրի դրույթների՝ ընկերությունն ունի ՀԳՏՏՁՀ-ի

բաժնետոմսերի ետզնման առաջնահերթություն, ինչպես նաև կարող է ետզնումն իրականացնել սահմանված վերջնաժամկետից շուտ):

ՀԳՏՏՁՀ-ի կողմից առաջարկվող ֆինանսական գործիքներն ունեն պահանջարկ ՀՀ գյուղատնտեսության ոլորտում գործող ՓՄՁ-ների շրջանակներում, քանզի լրացնում են դաշտում առկա բացը:

Միևնույն ժամանակ կորպորատիվ կառավարման մշակույթի ոչ բավարար զարգացած լինելը ՀՀ-ում խոչընդոտ է հանդիսանում ՓՄՁ-ների համար ՀԳՏՏՁՀ-ի առաջարկվող ֆինանսական գործիքակազմից օգտվելու համար: Կորպորատիվ կառավարման մշակույթի ձևավորումը ՀԳՏՏՁՀ-ի առկա և նոր հաճախորդ ընկերություններում պահանջում է շարունակական և հետևողական աշխատանք, քանի որ կապված է ձեռնարկատերերի մտածելակերպի փոփոխության և նոր մշակույթի ներդրման հետ:

4.4.3 Որքանո՞վ է քաղաքականության միջավայրն աջակցում գործողությունների իրականացմանը:

Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած տնտեսական քաղաքականության և աղքատության հաղթահարման հիմնարար սկզբունքները նպաստում են ՀԳՏՏՁՀ-ի գործունեության արդյունքում ստեղծված օգուտները շարունակական դարձնելուն: ՀՀ կառավարության միջանկյալ գործողությունները հիմնված են ՀՀ կառավարության կողմից որդեգրած քաղաքականության առանցքային փաստաթղթերի վրա (ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ կայուն զարգացման ռազմավարության (ԳԿԶՌ, 2010թ.), Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՀՌԾ, 2003թ.), Կայուն զարգացման ծրագրի (ԿԶԾ, 2008թ.)) և ուղղված են մեկնարկած բարեփոխումներին՝ գործարար միջավայրի բարելավման, իրական հատվածին աջակցության, գիտելիքահենք տնտեսության ենթակառուցվածքների զարգացման և, ընդհանուր առմամբ, տնտեսության դիվերսիֆիկացման մեծացման ու արտահանելի հատվածի ընդլայնման ուղղությամբ՝ նպատակ ունենալով բարձրացնել երկրի մրցունակությունը: ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության ռազմավարական և գերակա ուղղություններից է գյուղի և գյուղատնտեսության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, որոնց նպատակը ոլորտի համալիր զարգացումն է, երկրի, հատկապես՝ նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացումը և անհամամասնությունների հաղթահարումը, արտահանման ծավալների ավելացումը, պարենային ինքնաբավության աստիճանի բարձրացումն ու գյուղական աղքատության հաղթահարումը:

ՀԳՏՏԶՀ-ն հանդիսանում է ՀՀ կառավարության գործիքներից մեկը գյուղի և գյուղատնտեսության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացման համար: Համաձայն ՀԳՏՏԶՀ-ի ռազմավարական զարգացման հնգամյա ծրագրի՝ անհրաժեշտության դեպքում ՀԳՏՏԶՀ-ի քաղաքականություններն ու ներդրումային գործունեությունը պետք է լրամշակվեն Հայաստանի տնտեսության և գյուղատնտեսական ոլորտի ընդհանուր զարգացման միտումների համատեքստում: Միևնույն ժամանակ ՀԳՏՏԶՀ-ի՝ որպես զարգացմանը նպաստող պետական ֆինանսավորմամբ հիմնադրամի գործունեությունը պետք է արտացոլի տնտեսական ու գյուղական զարգացման և աղքատության կրճատման Կառավարության որդեգրած ընդհանուր քաղաքականությունները: ՀԳՏՏԶՀ-ի ներդրումային գործունեությունը նպաստում է. (ա) ընդհանուր տնտեսական զարգացման և ՀՀ Կառավարության աղքատության հաղթահարման թիրախների, (բ) գյուղատնտեսական /գյուղական ոլորտի զարգացման և, (գ) զարգացման ու ֆինանսական ոլորտի ծառայությունների տեսանկյուններից:

ՀԳՏՏԶՀ-ի Հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է հանրային (ՀՀ Վարչապետ, ՀՀ Ֆինանսների նախարար, ՀՀ Գյուղատնտեսության նախարար, ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ և այլն) և մասնավոր հատվածի (գյուղմթերքի վերամշակման ոլորտի և այլ ոլորտների առաջատար ընկերությունների ղեկավարներ) ներկայացուցիչներից, ինչը թույլ է տալիս հավասարակշռել հանրային և մասնավոր շահերը ՀԳՏՏԶՀ-ի կառավարման և զարգացմանն ուղղված ռազմավարության մշակման ընթացքում:

4.4.4 Որքանո՞վ է Ծրագիրը նպաստել կողմերի կարողությունների զարգացմանը:

Ինչպես արդեն նշվել է, ՀԳՏՏԶՀ-ն ձևավորվել է որպես ինքնուրույն գործող կառույց. դոնոր կազմակերպությունների միջամտությունը սահմանափակվել է կարողությունների զարգացմամբ և ուղղորդմամբ, ինչը թույլ է տվել տեղայնացնել փորձը և ստեղծել ներքին կարողություններ՝ Ծրագրի ավարտից հետո գործողությունները շարունակելու համար:

Ներկայումս ՀԳՏՏԶՀ-ն ունի բավարար կազմակերպչական կարողություններ, հետագայում իր գործունեությունը ծավալելու համար: ՀԳՏՏԶՀ-ի գործունեության ընդլայնման համար ՀԳՏՏԶՀ-ն ունի տեխնիկական աջակցության կարիք ՝ լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման, գյուղատնտեսության արժեշղթայում ներգրավված շահագրգիռ կողմերի հետ կապերի ամրապնդման, իր գործունեության մշտադիտարկման առկա մեխանիզմների բարելավման ուղղություններով:

5. ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներդրումային գործունեություն, ներդրումային/ֆինանսավորման գործիքներ:

1. Համաձայն Ծրագրի, ՀԳՏՏՁՀ-ն իր ներդրումային գործունեությունն իրականացնում է թիրախային խմբում ընդգրկված հաճախորդ ընկերությունների սեփական կապիտալի ֆինանսավորմամբ՝ սովորական և արտոնյալ բաժնետոմսերի գնման միջոցով: Նշված գործիքի կիրառումը ենթադրում է կորպորատիվ կառավարման մշակույթի/փորձի առկայություն/ձևավորում առնվազն հաճախորդ ընկերությունների մակարդակում, ինչպես նաև ընկերություններում երկարաժամկետ զարգացման ծրագրերի առկայություն, ինչը չի համապատասխանում մեր իրականությանը:

ՀԳՏՏՁՀ-ն իր գործունեության ընթացքում դիտարկել է, որ դիմող բոլոր ընկերությունները պատրաստ չեն արագ արձագանքելու ՀԳՏՏՁՀ-ի ներդրումային ընթացակարգերին/պահանջներին՝ երկարաժամկետ զարգացման ծրագրերի բացակայության (սովորաբար դիմում են ֆինանսավորման, այն պահին, երբ ներդրման անհրաժեշտությունն ի հայտ է գալիս), ինչպես նաև ֆինանսական պլանավորման ու կառավարման ցածր մակարդակի պատճառներով:

<u>Առաջարկություն</u>:

- Հաշվի առնելով թիրախային խմբում ընդգրկված ընկերությունների կարողություններն ու կարիքները և ՀԳՏՏՁՀ-ի փորձը, առաջարկվում է ավելի ճկուն դարձնել ՀԳՏՏՁՀ-ի ներդրումային ընթացակարգերը՝ հնարավորություն տալով ՀԳՏՏՁՀ-ին իրականացնելու փուլային ներդրումներ/ֆինանսավորում: Մասնավորապես՝ հնարավորություն ստեղծել թիրախային խմբում ընդգրկված ընկերությունների համար տրամադրելու կարճաժամկետ փոխառություն և տեխնիկական աջակցություն, որի նպատակը կլինի **նախապատրաստել ընկերությանը** ՀԳՏՏՁՀ-ից սեփական կապիտալում ներդրումների ներգրավման համար:
- Ընթացակարգերի վերանայման ընթացքում հարկ կլինի սահմանել հստակ դրույթներ, որոնք թույլ կտան իջեցնել ՀԳՏՏՁՀ-ի իր հիմնական առաքելությունից շեղվելու ռիսկը:

2. ՀԳՏՏՁՀ-ի ու հաճախորդ ընկերությունների միջև առկա է հաղորդակցման բաց: Մասնավորապես՝ ՀԳՏՏՁՀ-ի կողմից ֆինանսական կառավարման ուղղությամբ աջակցությունը տրամադրվել է ներդրումների կառավարումը

բարելավելու և ընկերության ֆինանսական կառավարման թափանցիկությունը բարձրացնելու նպատակով, ինչն ընկալվել է որոշ հաճախորդ ընկերությունների կողմից ներդրումային ծրագրի հաստատումից և մեկնարկից հետո: (Այսինքն՝ արդյունավետ ֆինանսական կառավարումը հաճախորդ ընկերությունների կողմից չի ընկալվել որպես ՀԳՏՏՁՀ-ի կողմից ֆինանսավորման տրամաբանական պահանջ):

Առաջարկություն:

- Ձեռնարկել քայլեր՝ բարելավելու ներդրումային մասնագետների և պոտենցիալ հաճախորդ ընկերությունների միջև հաղորդակցումը՝ ապահովելով հստակ և լիարժեք տեղեկատվության հասանելիություն պոտենցիալ հաճախորդ ընկերություններին՝ ՀԳՏՏՁՀ-ի ֆինանսավորման պահանջների և որպես հետևանք, ընկերության ներքին կառուցվածքում և կառավարման (մասնավորապես՝ ֆինանսական կառավարման) մեխանիզմներում ակընկալվող փոփոխությունների վերաբերյալ:

3. ՀԳՏՏՁՀ-ի կողմից ֆինանսավորված ներդրումային ծրագրերում բավարար չափով արտացոլված չէ ֆերմերային տնտեսություններից մթերման մեխանիզմները, մթերումների արդյունավետության բարձրացման համար նախատեսվող միջոցառումները:

Առաջարկություն:

- Հաշվի առնելով ՀԳՏՏՁՀ-ի նպատակները և խնդիրները՝ առաջարկվում է **հնարավորության դեպքում** ներառել/նախատեսել ֆինանսավորվող ներդրումային ծրագրերում ֆերմերային տնտեսություններից մթերման մեխանիզմների բարելավմանն ուղղված միջոցառումներ՝ հաշվի առնելով հաճախորդ ընկերությունների առանձնահատկությունները և մթերման մեխանիզմների բարելավման տնտեսական արդյունավետությունը: (Այստեղ խոսքը գնում է, ոչ թե պարտադիր պայմանի մասին, այլ ՀԳՏՏՁՀ-ի կողմից ուղղորդելու Ընկերություններին իրականացնել մթերման մեխանիզմների/ենթակառուցվածքի բարելավում, եթե վերջինս տնտեսապես արդյունավետ է Ընկերության համար):

Տեխնիկական աջակցություն:

1. ՀԳՏՏՁՀ-ն առաջարկում է «ստանդարտ» տեխնիկական աջակցության (ՏԱ) փաթեթ իր հաճախորդ ընկերություններին: Գնահատման արդյունքները փաստում են, որ առաջարկվող ՏԱ-ն «ստանդարտ» փաթեթը միշտ չի բխում

ընկերության կարիքներից և կարևորվում ընկերության կողմից, ինչը իր հերթին բերում է տեխնիկական աջակցության ցածր արդյունքների:

Առաջարկություն:

- Հնարավորության դեպքում համապատասխանեցնել ՀԳՏՏՁՀ-ի կողմից առաջարկվող տեխնիկական աջակցության «ստանդարտ» փաթեթը յուրաքանչյուր հաճախորդ ընկերությանը՝ հաշվի առնելով վերջինիս կարիքները: Համաձայնեցնել հաճախորդ ընկերությունների հետ մատուցվող խորհրդատվական ծառայությունների ժամկետները և ակընկալվող արդյունքները նախապես:

- Վերանայել տեխնիկական աջակցության փաթեթը՝ հաշվի առնելով ՀԳՏՏՁՀ-ի փորձը/քաղված դասերը: (Օրինակ՝ պարենի անվտանգության միջազգային ստանդարտների ներդրման և համապատասխանեցման ուղղությամբ խորհրդատվության առաջին փուլն անհրաժեշտ է տրամադրել մինչև ներդրումային ծրագրի նախագծումը և ֆինանսավորումը):

2. Ֆերմերային տնտեսություններից (ՖՏ) մթերման ծավալները սահմանվել են ՀԳՏՏՁՀ-ի կողմից՝ որպես իր գործունեության արդյունավետության գնահատման հիմնական 4 չափանիշներից մեկը: Սակայն հաճախորդ ընկերություններում հիմնականում առկա չեն ՖՏ-ից մատակարարման հստակ սահմանված մեխանիզմներ, բացակայում է տվյալների գրանցման և վերլուծության պրակտիկան:

   Առաջարկություն:

- Մշակել և առաջարկել ՀԸ-ին ՖՏ-ից մատատակարարումների կազմակերպանն ուղղված տեխնիկական աջակցության փաթեթ՝ հաշվի առնելով, հաճախորդ ընկերությունների կարողությունները և կարիքները տվյալ դաշտում: Հնարավորության դեպքում առաջարկել տվյալ ոլորտում ՏԱ-ը մինչև ներդրումային ծրագրի մշակումը, որպեսզի մատակարարման ենթակառուցվածքում կապիտալ ներդրումների կարիքն (առկայության դեպքում) արտացոլվի ներդրումային ծրագրում:

Մշտադիտարկում:

1. ՀԳՏՏՁՀ-ն ներդրել է իր ներդրումային գործունեության վերահսկմանն ուղղված մշտադիտարկման համակարգ, որը գործում է, սակայն ունի որոշակի բացեր: Մասնավորապես՝ մշտադիտարկումն իրականացվում է բավականին բարդ ձևաչափով, որտեղ զետեղված են ձեռնարկության վերաբերյալ բոլոր հնարավոր

տեղեկատվությունը (ինչպես որակական, այնպես էլ՝ քանակական), սակայն առկա չէ տվյալների հավաքագրման հստակ ժամանակացույց, գործիքներ, տվյալների մուտքագրման ձևաչափեր և միասնական բազա, ինչը խրթին է դարձնում հավաքագրված տարաբնույթ տեղեկատվության վերլուծությունը և ներկայացումը տարբեր շահագրգիռ կողմերին: Միևնույն ժամանակ ՀԳՏՏԶՀ-ն իրականացնում է մշտադիտարկում միայն հաճախորդ ընկերություններից ստացված տվյալների հիման վրա: Ինչպես արդեն նշվել է, հաճախորդ ընկերությունների գերակշիռ մասը չի ներդրել ՖՏ-ներից մատակարարման հստակ սահմանված մեխանիզմներ, բացակայում է տվյալների գրանցման և վերլուծության պրակտիկան: Այսպիսով՝ ՖՏ-ների վերաբերյալ տվյալները հասանելի չեն ՀԳՏՏԶՀ-ին և ներառված չեն մշտադիտարկման համակարգում՝ որպես ՀԳՏՏԶՀ-ի գործունեության արդյունքների գնահատման չափորոշիչներ:

Առաջարկություն:

Առաջարկվում է բարելավել ՀԳՏՏԶՀ-ի կողմից կիրառվող մշտադիտարկման համակարգը, մասնավորապես.

- Մշակել ՀԳՏՏԶՀ-ի գործունեության մշտադիտարկման ծրագիր, որտեղ ներկայացված կլինեն ՀԳՏՏԶՀ-ի գործունեության խնդիրները, խնդիրների իրագործման համար իրականացվող գործողությունների (ինչպես ներդրումային, այնպես էլ տեխնիկական աջակցության) արդյունքների չափորոշիչները, չափորոշիչների համար հավաքագրվող տվյալները և դրանց աղբյուրները, չափորոշիչների հաշվարկի համար օգտագործվող բանաձևերը, մոտեցումները, ենթադրությունները և արտաքին գործոնները, որոնք կարող են ազդել արդյունքի վրա:
- Հաշվի առնելով ՀԳՏՏԶՀ-ի նպատակը և խնդիրները՝ ՀԳՏՏԶՀ-ի գործունեության արդյունքների գնահատմանն ուղղված Մշտադիտարկման ծրագրում հարկավոր է ներառել չափորոշիչներ երեք մակարդակներով, հաճախորդ ձեռնարկության, ֆերմերային տնտեսության, սոցիալ-տնտեսական/հասարակության մակարդակում: (Տրամաբանական է, որ տարբեր մակարդակներում սահմանված չափորոշիչների հավաքագրման հաճախականությունը և գործիքները կլինեն տարբեր, սակայն այս մոտեցումը կհստակեցնի մշտադիտարկման գործընթացը):
- Վերանայել «Ներդրումների իրականացման և փոխառությունների տրամադրման ուղեցույցով» նախատեսված մշտադիտարկման ձևաչափը՝ համաձայն մշակված մշտադիտարկման ծրագրի՝ պարզեցնելով վերջինս և դարձնելով պրակտիկ:
- Մշակել մշտադիտարկման ծրագրով նախատեսված չափորոշիչների հավաքագրման գործիքներ և տվյալների մուտքագրման բազա (այն

չափորոշիչների համար, որոնք հավաքագրվելու են ՀԳՏՏԶՀ-ի ծրագրային թիմի կողմից):

- Ապահովել ելակետային տվյալների առկայությունը Մշտադիտարկման ծրագրով նախատեսված բոլոր չափորոշիչների համար:

Ներքին ընթացակարգեր և կանոնակարգեր:

1. ՀԳՏՏԶՀ-ն իր ներդրումային գործունեության իրականացման ընթացքում առաջնորդվում է «Ներդրումների իրականացման և փոխառությունների տրամադրման ուղեցույցով», որը մշակվել է ՀԳՏՏԶՀ-ի ձևավորման փուլում՝ 2009 թ.-ին: «Ներդրումների իրականացման և փոխառությունների տրամադրման ուղեցույցը» չի վերանայվել մշակումից առ այսօր՝ արտացոլելով ՀԳՏՏԶՀ-ի գործունեության ընթացքում ձեռք բերված փորձը և քաղված դասերը:

   <u>Առաջարկություն:</u>

- Վերանայել և լրամշակել «Ներդրումների իրականացման և փոխառությունների տրամադրման ուղեցույցը», որը չի վերանայվել մշակումից առ այսօր՝ արտացոլելով ՀԳՏՏԶՀ-ի գործունեության ընթացքում ձեռք բերված փորձը և քաղված դասերը, և ներկայացնել Հոգաբարձուների խորհրդին հաստատմանը:

2. ՀԳՏՏԶՀ-ում առկա չէ փաստաթղթավորված մարդկային ռեսուրսների քաղաքականություն, մասնավորապես՝ Հիմնադրամի աշխատակիցների մոտիվացման մշակված և ներդրված քաղաքականություն: Փաստաթղթավորված մարդկային ռեսուրսների և աշխատակիցների քաղաքականության բացակայությունը կարող է հանգեցնել Հիմնադրամում ոչ հետևողական աշխատանքային պրակտիկայի կիրառմանը, ինչը կարող է հանգեցնել աշխատակիցների դժգոհությանը կամ բերել աշխատունակության անկմանը, ինչպես նաև աշխատակիցների արտահոսքին:

- Առաջարկվում է մշակել և ներդնել ֆորմալ մարդկային ռեսուրսների քաղաքականություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով աշխատակիցների մոտիվացման քաղաքականությանը: Առաջարկվում է աշխատակիցների մոտիվացման քաղաքականության մշակման ընթացքում հաշվի առնել ՀՀ ներդրումային կազմակերպություններում, բանկերում կիրառվող աշխատակիցների մոտիվացման պրակտիկան, ինչը թույլ կտա բարձացնել ՀԳՏՏԶՀ-ի մրցունակությունն աշխատանքային շուկայում: